



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 10 1889

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1889 № 10

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Երևո

1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԼԵՏԻՔ . . .	1495	Արդիւնահանդէսը:
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ . . .	1509	Վարդի ծաղիկ (բանաստեղծ.):
3 " " . . .	1510	Նրբէ կո տեղանում եմ... (բանաստ.):
4 " " . . .	1513	Պանդխտի երգը (բանաստեղծ.):
5 " " . . .	1515	Անբաղդի երգը (բանաստեղծ.):
6 ԼԷՕ . . .	1517	Կորածներ (վերջ):
7 Տ. ՄԻՐԱՔԵԱՆՅ ՅՈՎ ՀԱՆՆԷՍ . . .	1577	Ուտա մնար. զխելիքներ (վերջ):
8 ՕՍԿԱՐ ԲԱԿԼԵՅ-ԽՅ՝ ԱՐՄԻՆԵԱՆ . . .	1591	Քանի պաշտու... (բանաստեղծ.):
9 ԱԲԵՂԵԱՆ, Մ.	1592	Ազգային վէպ
10 ԿՐԱՍԻՆԵԿԵԱՆ ԱՐՄԵՆ . . .	1609	Ինչո՞ւ փախչեմ... (բանաստեղծ.):
11 ՊԱԼԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ	1610	Փոխարին տնցա... (բանաստ.):
12 Տ. ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԲԺՇԿ. (ՎԿԸ) . . .	1611	Մանակն. հիւանդութիւնն. (վերջ):
13 Ա., Բ., Տ. Գ., Տ. Ն.	1618	Գրախոս.—Եւրոպ. դրամականութիւն:
14	1631	Թղթակցութիւններ:
15 ԼՈՒՍԻՆԻ	1634	Ամուսն. փրօնիկ. Հալի. Թատրոն:
16 Հ.	1640	Փաղ. տես.— Ֆր. 3-դ Հանրապետ.
17 ԽՄԲ.	1655	— — —

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротшианда, на Гол. просп. соб. г. № 41.

1889

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 10 1889

Հ Ո Կ Տ Ե Մ Ր Ե Ր

1889 № 10

ԱՌԱՐԻՆ ՏԱՐԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՆԻ

1889

Дозволено цензурою Тифлисъ. 20-го Сентября, 1889 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. просп. домъ № 41.

ԱՐԴԻՒՆԱՅԱՆԴԵՍԸ

Ներկայ Թւականի Կովկասեան Արդիւնահանդէսը քննադատելու համար, անհրաժեշտ է գտնել ճիշդ տեսակէտը, որից պէտք է նայել նորա վերայ: Միմիայն ուրիշ երկիրների այժմեան արդիւնահանդէսները ի նկատի ունենալով և նոցա տեսակէտից քննադատելով այժմեան Կովկասեան Արդիւնահանդէսը, մեծ սխալ կը լինէր: Բոլորովին անկասկած է, որ այն ժամանակ մեր արդիւնահանդէսը պիտի զատապարտէր, որովհետեւ նա չէր զիմանալ այն պահանջներին, որ բոլորովին բնական է անել աւելի առաջադէմ երկիրների արդիւնահանդէսներին:

Հանգամանքը սա է, որ այժմ Եւրոպայում արդիւնահանդէսները սարքւում են զլիաւորապէս նորա համար, որ տեղական արդիւնագործական խիւմերը առիթ ունենան իրանց կատարելագործութիւնները ի ցոյց հանել, և այդպիսով աւելի մեծ հռչակ ստանալ երկրի մէջ, դորա հետ միասին ուրեմն և արդիւնքի վաճառահանութեան շրջանը բնագործակել: Մի այլ նպատակն այն է, որ, մի և նոյն տեղը հաւաքւելով, ամեն մի արդիւնագործ առիթ ունենայ իւր արդիւնագործութեան վերաբերեալ տեսնել ուրիշների շինածները և ուրեմն՝ օգուտ քաղել նորանոր զիւտերից:

Սորանից արդէն պարզ երևում է, որ այն, ինչ ներկայացնում են եւրոպական արդիւնահանդէսները, մարդու ձեռքով կերտւածներն են, մարդու՝ անհատական աշխատանքի և զիւտերի արդիւնքներն են, մի խօսքով—արդիւնահանդէսները սարքւում են կատարւած առաջգիմութիւնը տեսնելու ու հաստատելու համար: Մըրցանակաբաշխութիւնը, այդ իսկ պատճառով, արդիւնահանդէսների անհրաժեշտ հետեւանքն է, որովհետեւ կատարւած առաջգի-

մուծիւնը պէտք է յայտնի կացուցանելի, թէ չէ հանդիսի նըպատակին հասած չեն լինիլ: Իսկ որտեղ կայ զնա հատուծիւն, այնտեղ կայ և մրցանակ:

Այժմեան Կովկասեան Արդիւնահանդէսը ոչ իւր բոլոր կողմերով նման է եւրոպական արդիւնահանդէսներին: Մի երկրում, որտեղ արդիւնաբերութեան ամենամեծ մասը ներկայացնում է հին ժամանակներից մնացած աւանդ—այնտեղ նաև արդիւնահանդէսը մեղտալիս է գլխաւորապէս այն, ինչ կայ մեր երկրում, բայց ոչ թէ այն, ինչ մենք պարտական ենք այս կամ այն անհատի ճիգերին, զիւտերին և այլն:

Կովկասի նման երկիրներում, որտեղ ինդուստրիան զեռ ևս զարգացած չէ, գործարանների թիւը սակաւ է, իսկ արհեստների և գիւղատնտեսութեան, երկրագործութեան մէջ ժողովուրդը հետևում է աւանդական օրինակներին, բնական է, որ նաև մրցումը արդիւնաբերողների մէջ չի կարող այնքան մեծ լինել, որ նոքա մեծ կարօտութիւն զգան իրանց արդիւնքները անպատճառ հանդիսաւոր կերպով հրապարակ հանելու: Վերցնենք, օրինակ, զինագործութիւնը: Կովկասի այն բոլոր տեղերում, ուր ընդհանրացած է զինագործութիւնը, վերջինս կատարւում է այն եղանակներով, որպէս կար տասնեակ և գուցէ հարիւրաւոր տարիներ առաջ: Ուրեմն, եթէ Կովկասեան Արդիւնահանդիսում կան հանդէս բերած զէնքեր—զոցանով մենք միայն այսքանը կը հասկանանք, թէ այս ինչ տեղում ժողովուրդը պարապում է այդ արհեստով և ահա թէ այդ ժողովուրդը ինչ տեսակ զէնքեր է պատրաստում: Գորանով մենք, անշուշտ, կը ծանօթանանք երկրի հետ, բայց ինչը կարող էր մղել նահապետական կերպով գործող զինագործին իւր արդիւնքը հանդէս բերել. չէ՞ թէ նոյն տեսակ արդիւնքներ կարող էր հանդէս բերել նաև մի ուրիշը, երրորդը, չորրորդը: Եւ քանի որ մրցանակը տրւում է միմիայն արդիւնքի արժանաւորութեան համար, բնական է, որ այդ մրցանակը պ. Այբին տալը միտք չ'ունի, որովհետև բոլորովին նոյն մրցանակին արժանի կը լինէին պ. Բէնի, պ. Գիմի զէնքերը, եթէ միայն նոքա ուզեցած լինէին հանդիսին մասնակցել:

Բոլորովին այլ բան կը լինէր, եթէ պ. Այբը որ և իցէ կատարելագործութիւն մտցրած լինէր իւր արհեստի մէջ: Այդ

կատարելագործութիւնը կարող էր լինել կամ լաւագոյն արդիւնք դուրս բերելու մէջ և կամ սովորական արդիւնքը աւելի հեշտ եղանակով, աւելի յարմար գործիքներով և մեքենաներով դուրս բերելու մէջ: Քանի որ ոչ մէկը կայ և ոչ միւսը՝ հանդիսին մասնակցելու անհրաժեշտութիւնը մէկի կամ միւսի կողմից—աւելորդ է, աւելորդ նաև նորա կողմից մրցանակ տրանալը:

Քանի որ մեզ արդէն յայտնի է, որ Վովկասի արդիւնաբերութիւնը մեծ մասով նահապետական ձևով է կատարւում, իսկ Վովկասեան ներկայ արդիւնահանդիսում հանդէս են բերւած մեր երկրի բոլոր տեսակ արդիւնքները,—գորանից ուղղակի դուրս է դալիս այն եզրակացութիւնը, որ ներկայ լիակատար արդիւնահանդէսը զբաղւորապէս կարող է ծառայել մէկ նպատակի՝ առիթ տալ այցելուներին ծանօթանալու մեր երկրի արդիւնագործութեան հետ:

Մենք կարծում ենք, որ այսքանովն էլ բաւականաչափ պարզեցինք մեր միտքը այն զանազանութեան մասին, որ կայ եւրոպական աշխարհի արդիւնահանդէսների և մեր երկրի ներկայ արդիւնահանդիսի մէջ: Այնտեղ ամենամեծ դերը խաղում է մրցութիւնը միմեանց մէջ, իսկ այստեղ՝ մրցութիւնը գրեթէ ոչինչ դեր է խաղում: Որովհետև այնտեղ անհատական ոյժերով կատարած առաջընթացութիւնն է ցոյց տրւում, իսկ այստեղ, մեղանում, ցոյց է տրւում առհասարակ ինչ միայն կայ, միեւնոյն է, թէ ցոյց տրւած արդիւնքը ո՛ր ժամանակի ծնունդ է և միեւնոյն է, թէ ներկայացնողը ո՛րքան անհատականութիւն է մտքած ներկայացրած արդիւնքի մէջ:

Ահա՛ այդ միտքը յայտնած կը լինէինք, եթէ ասածներս ամփոփելու լինենք այս խօսքերի մէջ.—այնտեղ, մեծ առաջընթացական երկիրներում, արդիւնահանդէսները ծնւում են նոյն իսկ արդիւնագործ մարդկանց պահանջումից, մինչդեռ մեղանում արդիւնագործութիւնը այն աստիճանի զուրկ է անհատական հանձարի կնիքից, որ մեղանում արդիւնահանդէսը ծնւում է ուսումնասիրողների և ոչ արդիւնագործների պահանջից:

Այս բացատրութիւնը կարեւոր է իմանալու համար, թէ ի՞նչ աչքով մենք պէտք է նայենք ներկայ թւականի Վովկասեան Արդիւնահանդիսի վերայ: Եւ այսպէս, ներկայ արդիւնահանդիսի վերայ պէտք է նայել զլիաւորապէս իրրււ մի առիթի վերայ, որով մենք

կարող ենք տեսնել ու խմանալ թէ ի՞նչ արդիւնազործութիւններ կան մեր երկրում:

Այնտեղ, Ներուպայում, մարդիկ գնում են ուսանելու, մեզանում պէտք է գնան ուսումնասիրելու: Մեզանում ի ցոյց դրւած են շերամի զանազան տեսակներ, թէլ, մանարան, բայց զոցանից ոչ մի շերամագործ և ոչ մի թէլի գործարանատէր դաս չի առնելու, բան չի սովորելու: Բայց զորա փոխարէն, նոքա, որոնք չը զիտեն թէ մեզանում ինչ բոժոժներ կան և ինչ թէլեր են պատրաստում, կարող են արդիւնահանդէսը գնալով, զոցանից տեղեկանալ: Արդիւնահանդիսում դրւած են ցորենի զանազան տեսակներ, բայց ոչ մի երկրագործ չի դուրս գալ արդիւնահանդիսից աւելի մեծ տեղեկութիւններով ցորենի մշակման մասին: Բայց նոքա, որոնք չը զիտեն, թէ ինչ ցորեններ է արտադրում մեր երկիրը, կարող են, արդիւնահանդէսը այցելելով, տեսնել և տեղեկանալ: Դորա հակառակ, Ներուպայում, երկրագործական բաժնում, զուք կը տեսնէք հանդէս բերած երկրագործութեան վերաբերեալ արդիւնքներ և առարկաներ, որոնք մի որ և իցէ նորութիւն են ներկայացնում: Այդպիսով այդ կատարելագործութեան հետ տեղեկանում են ուրիշ երկրագործներ: Ահա՛ ինչու մենք ասում ենք, թէ Ներուպայի արդիւնահանդէսները ծառայում են իբր օրինակ ուրիշներին, մինչդեռ մեր արդիւնահանդէսը ծառայում է և կարող է ծառայել միմիայն իբր մեր երկրի մօտին տեղեկութիւններ հաւաքելու մի լաւ միջոց:

Ահա՛ այս ատանձնայատկութիւնները չը պէտք է մոռանալ, եթէ մենք ուզում ենք արդար լինել դէպի ներկայ Կովկասեան Արդիւնահանդէսը: Այդ արդիւնահանդիսից մենք իրաւունք ունինք պահանջելու միմիայն մի բան՝ լիակատարութիւն: Եթէ արդիւնահանդիսում հանդէս չեն բերւած երկրի արդիւնքների բոլոր տեսակները, — այն ժամանակ մենք իրաւունք ունենք այդ արդիւնահանդէսը չ'աջողւած համարել: Մեր դատողութեան համեմատ, արդիւնահանդիսում պէտք է ցոյց տրւած լինին ոչ միայն մեր երկրի արդիւնքների բոլոր տեսակները, այլ որ առարկաները դասաւորւած լինին ըստ նահանգների և զաւառների և կամ յամենայն դէպս խմայելի, թէ ի՞նչ առարկայ ի՞նչ տեղից է, ի՞նչ արհեստ ո՛ր տեղինն է:

Այդ բոլոր տեսակէանքից՝ ներկայ Կովկասեան Արդիւնահանդէսը

մենք կարող ենք զոնէ մինչ մի յայտնի աստիճանի աջողած համարել: Որպէս վերը ասացինք, Կովկասեան Արդիւնահանդիսում մրցութիւնը մի առանձին դեր չէ խաղում: Այդ պատճառով արդիւնագործներէց չէր կարելի պահանջել, որ նոքա իրանք ձգտէին հանդիսում տեղ բռնել, մինչդեռ եւրոպական արդիւնահանդէսներում, բոլորովին բնական կերպով, արդիւնագործները իրանք են շտապում տեղ բռնել, երեւել: Եւ որովհետեւ պայմանները անտեղ և այստեղ այլքան տարբեր են, մեր արդիւնահանդիսի նպատակին հասնելու համար, պէտք է որ հանդէս սարքողները իրանք աշխատէին ձեռք բերել ամեն բան և ոչ թէ սպասէին արդիւնագործների մասնակցութեանը: Եւ այդպէս էլ եղաւ. մեծ մասը հանդէս դուրս բերած իրեղէններից ոչ այլ ինչ են, եթէ ոչ ժողոված ունեւր, կազմած հանդիսի վարչութեան ձեռքով կամ անմիջապէս և կամ տէրու-նական — վարչական անձերի միջոցով:

Բնական է, որ, ուր չը կայ արդիւնագործների բուռն ցանկութիւնը մասնակցելու, ուր նոքա անհատական շահ չեն գտնում հանդիսի մէջ, — մի ըստ ամենայնի բաւարար հանդէս կազմել՝ չափազանց զգուշ ընդ է և մեր այժմեան վարչական ինտելլիգենցիային այդ կէտ նպատակին հասնելը նոյն իսկ անհնարին է, նամանաւանդ, որ նաև մասնաժողովի կարգադրութեան տակ գտնւած գումարները չափազանց սուղ են եղած: Բայց այն, ինչ ներկայացնում է այժմեան հանդէսը՝ մենք բաւական ենք համարում, որ նորա միջոցով ուսումնասիրողը զազափար կազմէր երկրի արդիւնաբերութեան տեսակներին մասին: Բայց այդ կարող է լինել միմիայն իբր սկզբնաւորութիւն, որովհետև հանդէսը չի տալիս արդիւնքների հետ միասին նաև վիճակագրական տեղեկութիւններ: Աւերջիններս պէտք է կատարւին՝ զիմեով արդէն ուրիշ միջոցներով:

Այս ասելուց չետոյ, զիմենք արդէն այս խնդրին, թէ ներկա Կովկասեան Արդիւնահանդիսում ո՞ր բաժինները ամենից շատ ուսումնասիրելու կարօտ են:

Արդիւնահանդիսում ի ցոյց դրած առարկաները կարելի է երկուսի բաժանել, արդիւնքների, որոնք պարտական են ժողովրդական —

հնաձե արհեստներին և արդիւնքներ, որոնց համար մենք պարտական ենք ներմուծւած արհեստներին:

Ժողովրդական — հնաձե արհեստները ընդհանրապէս կապիտալ պահանջող չեն. ներմուծւած արհեստները, ընդհակառակը, շատ թէ քիչ կապիտալի վերայ են հիմնւած: Վերջիններս ներկայացնում են մեր երկրի առաջդիմութիւնը, ոչ թէ կապիտալի շնորհիւ, այլ աջն պատճառով, որ նոքա վարւում են օտարների ձեռքով, որոնք իրանց հետ բերել են աւելի մեծ հմտութիւն, աւելի կատարելագործւած գործելու եղանակներ:

Բայց ահա մի հանգամանք. հէնց այդ առաջադիմած արհեստները և առհասարակ արդիւնաբերութիւններն են, որոնք շատ չեն կարօտ մեր մամուլի ցուցմունքներին: Նոքա, այդ արդիւնաբերութիւնները, որպէս, օրինակ, նաւթային արդիւնաբերութիւնը, հանքային գործը և այլն, դոքա, ասում ենք, հիմնւած են շատ աւելի առաջադէմ ազգերի փորձերի և գիտութիւնների վերայ, այնպէս որ այդ արդիւնաբերութիւնների տէրերը, ղեկավարները, իրանց գործելու և՛ իմպուլսը և՛ ձեւերը ստանում են մեծ մասամբ Արտասահմանում և կամ նոքա ուղղակի օտար երկրացիներ են:

Այդ տեսակ արդիւնաբերութիւնները մեր մամուլը կարող է միմիայն արձանագրել, բայց նոցա նկատմամբ խորհուրդներ տալու համար տեղական մամուլը անձեռնհաս է, որպէս անձեռնհաս է նաև բժշկականութեան, ինժեներութեան նկատմամբ, որոնք իրանց զարգանալու աղբիւրները առժամանակ Եւրոպայումն են գտնում:

Բոլորովին այլ բան են ներկայացնում ժողովրդական արհեստները և արդիւնաբերութիւնները առհասարակ: Այստեղ մենք ունինք գործ այնպիսի մարդկանց հետ, որոնք ոչ մի տեղից խորհուրդներ չեն ստանում իրանց գործի վերաբերեալ. նոքա շարունակում են իրանց պապերի աւանդածը, առանց համարձակւելու մի թիզաչափ անգամ շեղւելու իրանց տեսածից: Նոքա են կազմում Ժողովուրդը և դոքա են, որ արդիւնաբերում են աջն բոլոր անհրաժեշտ իրեղէնները, որոնք ժողովրդի ինքնապահպանութեանը հարկաւոր են: Զջմարիտ է, դոքա չեն երևում մեծ հրապարակներում, դոցա արդիւնքները չեն մեծ քանակութեամբ արտահանւում Ռուսիա և Արտասահման, բայց դոքա են, որոնց ձեռքերի գործածովը ժողովրդի ա-

հաղին մեծամանութիւնը իւր օրեկան պարէնն է հալթհալթում և որոնց արհեստների կատարելագործութիւնովը մեր երկիրը պիտի զբաւանապէս հարստանայ: Այդ այն արհեստներն են, որոնք կապւած են հողի մշակութեան հետ, անասնապահութեան հետ, անտառների զոյութեան հետ. և այդ այն արհեստներն են, որոնց նրպատակն է ժողովրդի անհրաժեշտ պիտոյքների համար հողից և անտառներից սուած հումքերքերից գործածելի իրեղէններ պատրաստելը:

Այդ արհեստներն են՝ ցորեն, բրինձ, դարի, հաճար և այլ հացահատիկների արտադրելը, մի խօսքով՝ հողագործութիւնը նեղ մշտքով առած: Բամբակաբուծութիւնը, կանեփի և ձիթային սերմերի արտադրելը: Թխապահութիւնը և շերամապահութիւնը, բոժոժ արտադրելը: Այգեգործութիւնը և մտանաւորապէս փազապահութիւնը և զորա հետ կից զինեղործութիւնը: Անասնապահութիւնը և զորա հետ կից՝ բուրդ արտադրելը: Կաշեգործութիւնը և կաթնատնտեսութիւնը, զլիսաւորապէս պանրագործութիւնը: Անտառապահութեան հետ կից է խոտի արտադրութիւնը: Անտառների զոյութեան հետ կից են մի քանի արհեստներ, որպէս փայտից զանազան իրեր պատրաստելը՝ ձեռնափայտեր, չիբուխներ, շրջանակներ և այլն: Արհեստներ, որոնք ընդհանուր ժողովրդականութիւն ունին մեր և առհասարակ ամեն մի երկրում՝ հիւսնութիւնը, պղնձագործութիւնը, կաշեգործութիւնը, ներկարարութիւնը, կոշկակարութիւնը, զլիսարկագործութիւնը, կտաւագործութիւնը, շալագործութիւնը, մոմագործութիւնը և այլն, իսկ շերամապահական շրջաններում՝ նաև թելագործութիւնը:

Ահա՛ ժողովրդական արհեստները, ահա մեր երկրի իսկական հարստութիւնը: Այդ արհեստները մեղանում դեռ ևս մեծ մասով յետամնաց դրութեան մէջ են. բայց եթէ նոյն իսկ այժմեան դրութեան մէջ նոցա արդիւնքները զնահատելու լինինք, կը տառանք բազմաքանակ միլլիոններ և որ զլիսաւորն է՝ նոցանով է, որ կազմում է ժողովուրդը իւր ապրուստի բիւջետը: Ինչ որ ժողովուրդը գնում է իւր կենցաղավարութեան համար, իւր թէ մարմնի և թէ մտաւոր ու հոգեկան սնունդի համար, — այդ բոլորը նա անում է շնորհիւ նորա այժմ բանեցրած արհեստների, միւլենոյնն է թէ ինչ դրութեան մէջ սոքա այժմ են:

Այդ արհեստները, այնպէս ինչպէս նոքա այժմ կան, պէտք է ճանաչել: Պէտք է ճանաչել ոչ թէ նոցա վերայ հիանալու համար, այլ քննադատութեան համար յենակէտ դնելու մտքով: Բաւական չէ ասել՝ այս ինչ բանը յետամնաց է: Այլ պէտք է նոյն իսկ այդ դրութիւնը տեսնել ու ճանաչել, որպէս զի այդ եղածի վերայ բան աւելացնել ցանկացողը իմանայ թէ ի՛նչը կ'աչ և ինչո՛ւմը կարող է կայանալ առաջդիմութիւնը. որովհետեւ առաջդիմութիւնը կայանում է հէնց կատարելագործութեան մէջ, իսկ կատարելագործութիւնը ենթադրում է մի արդէն եղած բան, որը թերութիւններ ունի:

Այսքանով մենք կարծում ենք թէ բաւականաչափ ասացուցած ենք, թէ ժողովրդական արհեստները ինչո՛ւ մեր ուշադրութեան ամենագլխաւոր առարկան պէտք է կազմեն և թէ ինչո՛ւ նոքա պէտք է վայելեն մեր զերադաս համակրութիւնը:

1. Այդ արհեստները արդէն գոյութիւն ունին:

2. Նոքա ծառայում են մեր ժողովրդի ամենաանհրաժեշտ պիտոյքներին:

3. Նոցա արդիւնքներովն է կազմում ազգաբնակչութեան ահագին մեծամասնութեան բիւջեան, որից դուրս նա միայն վաշխառուին է տեսնում:

4. Նոցա զարգացնելովը նպաստած կը լինինք ժողովրդի բիւջեան մեծանալուն և ոչ միայն վաշխառութիւնից ազատելուն, այլ և ժողովրդի կապիտալի մեծացնելուն:

5. Այդ արհեստների արդիւնքները կազմում են մեր երկրի նոյն իսկ դրամական ամենամեծ հարստութիւնը:

6. Նոցա զարգացնելովն է զլիաւորապէս, որ մեր ժողովուրդը կ'ապահովւի զաղթականութիւնից և պանդխտութեան անհրաժեշտութիւնից:

7. Ժողովրդական արհեստները, սերտ կերպով կապւած լինելով մեր ժողովրդական պիտոյքների հետ, նոցա զարգացնելու միջոցներով ամենահեշտ կերպով կը ծաւալւի նաև ժողովրդական կրթութիւնը, կապելով ընդհանուր կրթիչ առարկաների աւանդումը արհեստաղիտութեան հետ:

8. Ժողովրդականացած արհեստներով պարապողները, որոնք և

կազմում են ինքը ժողովուրդը, ընդհանրապէս ազխութեան մէջ գտնուող մարդիկ են, որոնց վերայ հոգար թէ աէրութեան և թէ մամուլի կողմից երբէք պակաս չը պիտի լինի: Մամուլի խելացի յորդորները և ցուցմունքները կազմում են առժամանակ նրանց ղեկավարութեան միակ նշանաւոր աղբիւրը, որովհետեւ նոցա և ընդհանուր լուսաւոր աշխարհի և դրականութեան մէջ կապ չը կայ, հասարակ ժողովրդի անձեռնհասութեան պատճառով հեռաւոր օրինակներից դաս առնել և կատարելագործութիւններ մտցնել իւր բանեցրած արհեստների մէջ: Այդ մարդիկ նոցանից չեն, որ ինքնաջորդոր կերպով կարողանան նորաձեւութիւններ մտցնել աւանդական դարձած արհեստների մէջ. դորա համար նրանց պակասում է թէ մտաւոր հօրիզոնի ընդարձակութիւնը և թէ առհասարակ համարձակութիւնը նորաձեւութիւն մտցնել մի գործի մէջ, որը նոցա աչքում աւանդութեան դրոշմն և սրբութիւնն է կրում:

Բնական է, որ մամուլը չի կարող ժողովրդին արհեստ սովորեցնելու պաշտօնը իւր վերայ առնել, բայց կեանքի երեւոյթների վերայ ուշք դարձնելու պաշտօնը՝ ուղղակի նորա պարտականութիւնն է: Մեր ապացուցածը միայն այն էր, թէ ժողովրդական արհեստները այնքան կարեւոր են, որ նոցա վերայ հսկելը մեր ամենքի սրտին մօտ պարտք պէտք է համարենք: Գործնականութիւն և խելացիութիւն մտցնել մամուլից աւած խորհուրդների մէջ — մամուլի ներկայացուցիչների համար պատուի և պարտաճանաչութեան խնդիր է:

Ներկայ Կովկասեան Արդիւնահանդէսը բաւականին նիւթ է տալիս այդ ժողովրդական արհեստների արդիւնքների հետ ծանօթանալու. բայց արհեստների իրանց հետ ծանօթանալու համար բաւականաչափ յարմարութիւններ չեն ներկայացնում: Միմիայն մի քանի արդիւնաբերութիւնների եղանակների հետ հանդէսը ծանօթացնում է, օրինակ՝ զորդագործութեան հետ, մահուդի վերայ գործաւածքների դուրս բերելու հետ, թել քաշելու հետ. բայց այս վերջինիս հետ միայն շատ թերի կերպով, որովհետեւ հանդիսում թել քաշելը կատարւում է ոչ այն արագութեամբ և առհասարակ ոչ բոլորովին այն կերպ, ինչպէս նա լինում է իսկականում: Միւս շատ արդիւնաբեր-

րուծիւնների և արհեստների հետ հանդէսը բոլորովին չի ծանօթացնում: Վերցնենք, օրինակ, կաթնասնտեսութիւնը: Մենք էլ չենք ասում, որ հանդիսում չը կան կովկասեան կովերի տեսակները, այլ չեն ցոյց տրուում նոյն իսկ, թէ ի՞նչպէս են վարւում զանազան կերպ պանիրներ արտադրելու համար, չը նայած որ պանիրներ կան զրւած ցոյցի համար: Նոյն նկատողութիւնը կարելի է անել շատ ուրիշ արհեստների նկատմամբ: Այն նպատակի համար, որին ներկայ արդիւնահանդէսը պէտք է և կարող է միայն ծառայել, այդ մի մեծ թերութիւնն է, որը առաջացած է ժամանակի և միջոցների սղութիւնից: Յայտնի է, որ ներկայ արդիւնահանդէսը սարքելու համար մատակարարւած է թէ պետական կալւածների մինիստրութեան և թէ Թիֆլիս քաղաքի ինքնավարութեան կողմից և թէ հանդիսի Օգոստովաու Հովանաւորողի կողմից միմիայն մօտ 40.000 ռուբլի: Յայտնի է նաև այն, որ ներկայ արդիւնահանդիսի մասին պատրաստութիւններ սկսելը կարելի եղաւ միմիայն անցեալ տարւանից, մինչդեռ մի այդպիսի մեր վերաբերութեամբ նոր գործի համար, այդ պատրաստութիւնները պէտք է սկսէին տարիներ առաջ: Միմիայն երկար ժամանակամիջոցում և աւելի առատ զբաղական միջոցներով կարելի կը լինէր նախ, ժողովրդի հետու խաւերում հանդիսի զաղափարը ժողովրդականացնել և, երկրորդ, մեր պահանջին՝ ամեն մի արհեստ իւր գործող պարագաներով ներկայացնել — բաւարարութիւն տալ:

Մենք ուզում ենք դորանով ասել, որ ներկայ արդիւնահանդէսը միմիայն իբրև առաջին քայլ կարող է աջողւած համարւել, բայց ոչ որպէս իւր նպատակին լիապէս ծառայող մի հանդէս: Ժողովրդական արհեստները ուսումնասիրելու միջոց չի տալիս նա, բայց զոնէ նա ցոյց է տալիս երկրիս բազմատեսակ արդիւնաբերութիւնների նըմուշները բաւականաչափ լիակատար կերպով: Այդ էլ մի արդիւնք է, որով մասամբ կարելի է մխիթարւել և արդարացնել արդիւնահանդիսի համար գործադրած ջանքերը և մնաւած դուժմարները:

Կովկասեան անդրանիկ Արդիւնահանդիսի զլխաւոր հետաքրքրական կողմը արդէն որոշեցինք: Դա այն միջոցներն է, որ նա տալիս է և կամ պէտք է տար ժողովրդական ամեն կարգի արհեստները ուսումնասիրելու համար: Եւ մենք տեսանք, որ արդիւնահանդէսը իւր

այդ գլխաւոր նպատակին միայն մասամբ է հասնում. բայց անկասկած է, որ նա զոնէ ամփոփ տեսութիւն է ներկայացնում երկրիս արդիւնքների և, զորանով իսկ, նա զարկ է տալու ժողովրդական արհեստների լիակատար ուսումնասիրութեան:

Սակայն, քանի որ Վովկասեան Արդիւնահանդէսը զծագրւած է ժողովրդին դրական օգուտ բերելու հեռւոր նպատակով, բոլորովին բնական էր ծրագիր կազմողների կողմից Վովկասի ժողովուրդներին ոչ միայն արհեստները ճանաչելու միջոցներ տալ, այլև նոյն այդ արդիւնաբերողներին ծանօթացնել արդիւնաբերութեան կատարելագոյն եղանակների հետ: Այդ մի վերին աստիճանի աջող միտք էր արդիւնահանդիսի ծրագիրը մշակողների կողմից՝ հանդիսին հրաւիրել ուսսական և արտասահմանեան Ֆիրմերը, մասնաւորապէս նոցա, որոնք գիւղատնտեսութեան և երկրագործութեան վերաբերեալ գործիքներ և մեքենաներ են շինում:

Նւ արդարև մի հանդիսում, որը «Վովկասեան» անունն է կրում, ըստ երևոյթին անտեղի է ոչ-Վովկասեան արհեստագործների մասնակցութիւնը: Բայց ոչ. արդիւնահանդէսը իւր գլխաւոր նպատակին չէր կարող ծառայել, եթէ նա չ'անէր այդ: Գորանով նա ապացուցեց, որ նորա համար աւելի հետևանքն է կարևոր, քան թէ անունը: Արդիւնահանդէսը պէտք է, մասնաժողովի ծրագրով, ծառայէր ժողովրդի համար իբր մի դպրոց, ուր նա կարողանար այն գործիքներից, որոնք իւր մօտ գործածութեան մէջ կան, լաւագոյնների հետ ծանօթանալ: Ահա՛ այդ մաքով է, որ իցոյց են դրւած ուսսական և արտասահմանեան Ֆիրմերի երկրագործական մեքենաները. կաթնաստեասական բաժինը, ուր դրւած են կաթը սերից բաժանող և տեղն ու տեղը գործող գործիքները—պարտական է նոյն զաղափարին: Նոյնը վերաբերում է նաև բամբակը մաքրող ջիններին, շերամապահական բաժնի մի քանի մասերին, արագ քաշող կատարելագոյն մեքենային, ձիթահան մեքենաներին և այլն:

Ի հարկէ, գիւղական ազգաբնակիւթիւնը հազիւ թէ կարողանայ անմիջապէս օգուտել ի ցոյց դրած լաւագոյն մեքենաներից, բայց պրօպագանդի համար արդիւնահանդիսի կարգադրիչների արածը շատ նպատակաւոր մար է: Այսօր չէ վաղը, այդ մեքենաները արդիւնահանդիսի ասպարէզից կ'անցնեն իսկական գործի գաշտերը: Միտ-

քը, որպէս ասացինք, աջող է, բայց զործադրութիւնը՝ թերի։ Այդ բաժինը՝ օտարների մասնակցութիւնը՝ շատ թերի է ներկայ արդիւնահանգիսում։ Ի՞նչ է պատճառը։— Պատճառը պարզ է. որքան էլ որ օտար Ֆիրմերը աշխատում են իրանց զիցուք երկրագործական և զիւղատնտեսական մեքենաների և գործիքների համար նոր շուկայ, նոր վաճառատեղի գտնել,—բայց մի երկիր, ուր կատարելագոյն գործիքները դեռ ևս գրեթէ բոլորովին զործածութեան մէջ չեն, շատ փոքր հրապոյր կարող է ներկայացնել օտար Ֆիրմերի համար։ Այդ բաժնի թերութեան պատճառներից մէկն էլ անշուշտ այն է, որ օտարները, ճանաչելով ներկայ արդիւնահանգէսը որպէս «Պովկասեան», կարծել են, թէ օտարների համար մուտքը փակ է. իսկ միւս կողմից՝ կարգադրիչ յանձնաժողովը չը կարողացաւ բաւականաչափ ծանուցումներով օտար հրատարակութիւնների միջոցով փարատել այդ թիւրիմացութիւնը։ Բայց, մենք կրկնում ենք, օտարների բաժնի մեծ թերութեան ամենադիւսաւոր պատճառը այն է, որ այդ օտար Ֆիրմերը Պովկասում բաւականաչափ հրապոյրիչ վաճառանոց չեն տեսնում։ Մեր երկրում ամբողջ երկրագործութիւնը և զիւղատնտեսութիւնը գրեթէ միայն և միայն զիւղացիների ձեռքումն են, հակառակ միւս շատ երկիրների, որտեղ բացի զիւղացիներից, զիւղատնտեսութիւնով զբաղւում են զիւղացիներից զատ նաև կալւածատէրերը, և կամ կալւածատէրերից դուրս, նաև բազմաթիւ Ֆերմեր, այսինքն մարդիկ, որոնք կապալով են վերցնում ուրիշների հողերը շատ թէ քիչ մեծ չափերով երկրագործութիւն և զիւղատնտեսութիւն վարելու համար։ Այդ դասակարգը մեղանում չը կայ, որովհետև տեղ-տեղ պատահող բացառութիւնները շատ և շատսակաւ են, այնպէս որ դասակարգ կազմելու հարկաւոր թւից եղածը շատ հեռու է։

Այդ հանգամանքը շատ կարեւոր է մեր երկրում երկրագործական և զիւղատնտեսական առաջդիմութիւն մտցնելու արդարեւ շատ մեծ խնդրի համար։ Անկասկած է, որ այդ առաջդիմութիւնը, ի միջի այլոց, կախած է նորանից, թէ ո՞ր աստիճանի արադութեամբ ու հեշտութեամբ կատարելագործւած մեքենաները և գործիքները, ուրեմն և զոցա հետ կապւած կարեւոր հմտութիւնները, մուտք պիտի գործեն մեր երկրում։ Արդ, բոլորովին միևնոյնը չէ, թէ մի երկ-

բում երկրագործն ու գիւղատնտեսը առհասարակ զիւղացի է միայն թէ զիւղացու հետ է նաեւ մեծ կալաճատէրն և Ֆերմերը: Այս վերջինները, շնորհիւ իրանց աւելի բարձր զիրքին, կրթութեան և զարգացման, աւելի բաց են նոր զաղափարների համար, աւելի և՛ կարողութիւն և՛ պատրաստականութիւն ունին նորանոր զիւտերից օգուտ քաղելու, հետեւելու հեռաւոր երկիրների օրինակներին: Այդպէս չէ զիւղացի մարդը, որը ամուր ձեռքերով բռնում է աւանդութիւնը ու սորան բաց չի թողնում, մինչև որ, ըստ ուղտաց առածին, երկինքը չ'որոտայ, և, ի հարկէ, որոտայ իւր զլիսին: Այդ հանգամանքը ցոյց է տալիս մի բան. նախ, որ Ֆերմերական տնտեսութիւնը մեր երկրում խրախուսանքի մեծապէս արժանի է, և երկրորդ, որ զիւղատնտեսական առաջդիմութիւնը մեր երկրում պէտք է սպասել ոչ բոլորովին նոյն միջոցներից, որոնք գործում են օտար երկիրներում, որովհետև սա ևս մի հաստատ իրողութիւն է, որ այդ օտար երկիրներում, տնտես կալաճատէրը և Ֆերմերը կենդանի օրինակներ են զիւղական բազմութեան համար: Ֆերմը, այսինքն Ֆերմերի կալաճքը և տնտեսութիւնը, կատարեալ զպրոց է զիւղացու համար, որը առաջնի հարեանն է և որը, թէ իբր բանւոր և թէ իբր հարեան, միշտ առիթ է ունենում Ֆերմերի մօտ ընդունեալ կատարելագործութիւնների հետ ծանօթանալու: Քանի որ այդ տեսակ անկախ մեծ տնտեսութիւններ չը կան մեզանում, մնում է տէրութեան և հասարակութեան մտածել խիստին ուսումնարանների վերայ, որոնց միջոցով առայժմ միայն կարելի է մեր երկրում ցանկալի առաջդիմութիւնը մտցնել: Կորանով մենք խնդիրը չը սպառեցինք, այլ միայն շօշափեցինք, վերապահելով մեզ իրաւունք մի այլ ժամանակ նոյն խնդրին վերադառնալ: Առ այժմ այս հանգամանքների մասին խօսելու թելադրողն էր արդիւնահանդիսի այն բաժնի մեծ թերութիւնը, որը պէտք է Կովկասին ծանօթացնէր կատարելագործեալ զիւղատնտեսական մեքենաների և գործիքների հետ: Քանի որ, ասում ենք, արդիւնագործութեան այս մեծ ճիւղը զիւղացիների ձեռքումն է միայն, որոնց դեռ պէտք է համոզել նոր գործիքները ընդունելու, օտար մեքենագործները առ այժմ մեծ ինտերես չեն կարող ունենալ Կովկասեան այժմեան Արդիւնահանդիսին մասնակցելու: Ուրեմն և զորա հոգսն էլ պէտք է ընկնէր հանդէսը սարքողների,

ուրեմն՝ տէրութեան, Պիւղասնտեսական Բնկերութեան և Պիֆլիսի
ինքնավարութեան վերայ. պահանջ, սակայն, որ պէտք է վերապահ-
ւի սպառազին, քանի որ այժմ այդ պահանջը կը լինէր անընդունե-
լի՝ ամենքի զրամական ազատ միջոցների սղութեան պատճառով:

Մեզ մնում է, արդիւնահանդիսի նկատմամբ, յիշատակել նորա
մի բաժինն ևս. դա այն է, որը ներկայացնում է մեր երկրի մեծ
գործարանական աշխարհը: Բայց որպէս մենք առիթ ունեցանք ա-
սելու մեր յօդածի սկզբում, այդ մեծ գործարանական աշխարհը,
որի մէջ առաջին տեղը բռնում է Բաքուի նաւթագործութիւնը,
իսկ յետոյ մնացեալ մեծ գործարանները, դոքա ոչինչ չը պիտի կա-
րողանան դուրս բերել ներկայ արդիւնահանդիսից: Այժմեան արդիւ-
նահանդէսը, իւր փոքր ծաւալով, ոչ մի խրախոյս չի կարող տալ
այնպիսի արդիւնաբերութիւններին, որոնց մասին ձեռնհաս կարծիք-
ներ կարող են արւել միմիայն ընդարձակ հանդէսներում, որպիսին է
մի մեծ աշխարհահանդէս: Եւ, բացի դորանից, այդ գործարաննե-
րի մասին դրականութեան մէջ կան այնքան լիւրջ տեղեկութիւն-
ներ, որ ներկայ արդիւնահանդէսը դոցա մասին մի նոր զաղափար
տալ անկարող է: Նոքա ուշադրութեան մեծապէս արժանի են, բայց
ծանօթ են: Միմիայն պարտք կատարելու համար այդ մեծ գործա-
րանատէրերը մասնակցել են արդիւնահանդիսին, որից նոքա չեն ըս-
պատում ոչ մրցանակներ և ոչ որ և իցէ այլ խրախուսանք:

ԱՒԵՏԻՓ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

ՎԱՅՐԻ ԾԱՂԻԿ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Գեղեցի՛կ, հոտաւէ՛տ դու ծաղիկ լեռնային,
Ո՞ւմ համար դու բուսար, ո՞ւմ համար ծաղկեցիր.
Յըրտերում մեծացար անխընամ, առանձին
Եւ մի օր չը տեսար, ինչպէս որք վըշտակիր:

Կուսական քընքըշիկ ձեռքերով չը քաղւած՝
Կուսական դու կըրճքի զարդարանք չը դառար.
Սնմատոյց այդ լերան կատարին կըռացած՝
Անօգո՛ւտ աճեցիր, անօգո՛ւտ դու բուսար:

Վաղորդեան միայն մէգ, մառախուղ պատեցին
Սյդ մատաղ, աննըման, գեղեցիկ քո պատկեր.
Միայն հողմ ու մըրըիկ քո չորս կողմ սուլեցին,
Եւ գըլխիդ ճայթեցին զայրացկոտ որոտներ...

Ինչպէս խեղճ եւ լըքեալ, քօղարկւած մըշուշով
Կարճեցիր դու քո կեանք անտէրունչ, տըխրագին,
Նոյնպէս խեղճ եւ լըքեալ կը խամրիս դու շուտով,
Գեղեցի՛կ, հոտաւէ՛տ դու ծաղիկ լեռնային:

Մօսկւա, 1889 թ., 25 • գոստոսի:

* * *

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Երբ ես տեսնում եմ, որ մոլեգնաբար
Եղբայր եղբօր դէմ դարան է գործում,
Եւ մարդիկ չընչին շահերի համար
Մատնում են իրար և դաւաճանում.
Երբ ես տեսնում եմ — սիրոյ դիմակով
Ծածկւած անսահման ինքնասիրութիւն,
Իդէալների շողշողուն փայլով
Քողարկւած կոպիտ նիւթապաշտութիւն, —
Այդժամ ակամայ ինձ այցելում է
Յոռետեսութեան մոլեգին ոգին,
Եւ լոյս-աշխարհըն աչքիս ընկնում է
Այդ չարաբաստիկ մըռայլ լոպէին.
Եւ իմ շըրթունքից կարծես ուզում են
Թափւել անէծքներ մարդկութեան վերան,
Ես ապրստամբւում, ալէկոծւում եմ
Անողորքելի ովկեանի նրման:
Ի՛նչ չը կայ այդժամ ինձ համար աշխարհ,
Ուր անկեղծ սիրով մարդիկ են ապրում.
Այդժամ կայ միայն մի վայրի անտառ,
Որտեղ գոյութեան արինուռուշտ կըռւում
Սրիւնածաբաւ գայլեր են վըխտում...

Բայց յանկարծ ահա սրբաբան խորքերից
Լըսում եմ ազնիւ բարկութեան գոչիւն.
«Մէթէ մոռացար Քրիստոսի ճակտից
Առւակի նըման կարկաջող արիւն»,

Մէթէ մոռացար

Այն հազարաւոր մարտիրոսներին,
Որ սուրբ արիւնով, մահով չարաչար
Նորա կըտակը մեզ աւանդեցին...»
Եւ իսկոյն արագ բարձրանում է
Ահա վարագոյրն հեռու անցեալի,
Եւ աչքիս առջև ներկայանում է
Մի սուրբ բազմութիւն նահատակների:

Ահա ներոնի հեթանոսական

Խաւար պարտիզում վառ վառ ճրրագներ—
Զինւորներ են այն Քրիստոսի անուան,
Կենդանի մարդկանց վառուղ մարմիններ,—
Փայլուն վրկաներ մարդասիրութեան:
Ահա կըրկէսի լայն ասպարիզում
Հռովմի զոհերը շարեշար կանգնած...
Պիտի յօշոտին վագրի ճանկերում
Մարդկային սիրով նոքա տոգորւած:
Ահա ճարճատող խարոյկի վերան
Բոցավառւում է կենդանի մարմին—
Մեռնում է յանուն մարդասիրութեան,
Բայց ջերմ աղօթք է նորա բերանին...
Իմ աչքի առջև գալիս անցնում են
Անվերջանալի կորովի գէմքեր
Եւ ջերմ հաւատով նոքա պարպում են
Մահաբեր թոյնով լի-լի բաժակներ,
Եւ իմ սրբաբան մէջ խորը ցայտում են
Նոցա կըշտամբանք, նոցա հայեացքներ...

Ո՛հ, սի՛րտ իմ, սի՛րտ իմ. մեթէ մարդկային
 Զերմ, արի արեւն չէր քո մէջ խաղում,
 Որ այն նենգ, մոլար, չար ոգու ձեռին
 Պըղտորւում էիր և ալեկոծւում...
 Այս չար խաւարում վառւի՛ր դու կըրկին.
 Ոհ, սի՛րտ իմ, ինձ տար դէպ՛ իմ ցանկութիւն,
 Եւ թո՛ղ ուղեցոյց աստղերըդ լինին
 Պայծառ գեղարւեստ և խոր գիտութիւն:

Մ••կւա, 1889 թ., 18 •գոստոսի:

ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳԸ

(Նմանողուն թիւն ժողովրդականին)

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Մատաղ լինիմ ձեզ, իմ որդի՛ք սիրական,
Ես անխնայ ձեզ մեն-մենակ թողեցի.
Խելքս առել ու տարել էր սատանան.
Խենթի նըման կանաչ դրախտը ձրգեցի:
Մի օր ես էլ նամուս, պատիւ ունէի.
Գոնէ ձեզ մօտ դէմքս պարզ էր ու պայծառ.
Թողի թէ չէ մեր երկիրը պապերի,
Լուս-աշխարհը դառաւ խաւար ինձ համար:
Ես քարուքանդ ողջ քաղաքում չը տեսայ
Գոնէ մէկին, որ ունենար խղճմտանք,
Սե օրերս քաշ եմ տալիս ակամայ.
Ողջի համար դառել եմ ծաղր ու ծանակ:

Մատաղ լինիմ պաղ աղբիւրիս ջրերին,
Նրա մարգարիտ կաթիլներին ես մեռնիմ.
Եարաք, Աստուած, կ'արժանացնես ինձ կըրկին,
Որ մուրազիս, իմ մուրազիս ես հասնիմ:
Եարաք նորից կը տեսնեմ իմ գերդաստան
Ու ցաւերս իմ սըրտիցս կը հեռանան...
Ա՛խ, թէ մին էլ Աստուածածնայ սեղանին
Ես չօքէչօք մօմը ձեռիս մօտենամ

Ու Տիրամօր սուրբ պատկերի առաջին
Արտասուքովս ես գետինը լըւանամ,—
Էնժամ էլ հեշ գարդ չի մընալ իմ սըրտում.
Տէ՛ր երկնային, Քե՛զ եմ խընդրում, պաղատում...

Կոտըրւէին իմ ոտները, սիրելի՛ք,
Որ ձեզ անտէր, անտէրական չ'անէի.
Քօռանային իմ աչքերըն, իմ որդիք,
Որ իմ եկած սև ճամբան չը ջոկէի:
Բեռնաւոր եմ, չեմ վաստըկիլ կըրելուց.
Բեռան տակին միտք եմ անում ձեզ համար.
Օր ու գիշեր ձեր կարօտը քաշելուց՝
Ես հալ ու մաշ էլայ, դառայ խեղագար:
Սպասելուց ջուր կտրեցին ձեր աչքեր.
Ձեր աչքերին, որդիք, լինիմ ես զուրբան.
Տէ՛ր, Դո՛ւ լըսես իմ աղաչանք, աղօթքներ,
Ինձ խընայե՛ս, արժանացնե՛ս ինձ իմ տան:

Թեֆլէս, 1883 Թ., 7 յունիսի:

ԱՆԲԱՂԴԻ ԵՐԳԸ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Ո՛հ, թըռի՛ր, գընա՛,
Երջանի՛կ թըռ-չնիկ,
Երկընքում ազատ
Պըտոյտներ արա՛.
Եւ երգի՛ր այնտեղ
Հոգեզմայլ տաղեր,
Թո՛ղ քո ձայնն անոյշ
Փարատէ իմ վիշտ:
Կ՛ուզէի քեզ հետ
Սաւառնել վերև՝
Կապոյտ երկընքի
Կամարի տակին.
Բայց չ՛ուենիմ թեւեր—
Բարձրանամ քեզ հետ,
Թօթափեմ ինձնից
Աշխարհի փռշին:
Կ՛ուզէի քեզ հետ
Միաձայն երգել,
Քաղցրաձայն երգել
Կ՛ուզէի քեզ հետ.
Բայց չ՛ուենիմ ես ձայն

Քո ձայնի նըման,
Կախարդէչ—դիւթիչ
Քո հանճար չ՛ուենիմ,
Որ մաղեմ—մաղեմ,
Ինչպէս զով անձրև,
Աշխարհի վերայ
Դըրախտի ձայներ:
Գոնէ դու, օրհնեա՛լ,
Երջանի՛կ թըռ-չնիկ,
Դառնացած հոգուս
Մըխիթար եղի՛ր,
Երբ պայծառ արև
Երկընքի վերայ
Սևանայ գըլլիս
Խաւարի նըման:

2.

Ո՛հ, էլ մի՛ կանգնիլ,
Իմ սիրո՛ւն թըռ-չնիկ,
Շուտ թըռի՛ր, հասի՛ր
Ծաղկազարդ անտառ,

Զովասուն անտառ:
 Բիւրաւոր ծառեր
 Քեզ այնտեղ անշուշտ
 Ապաստան կը տան
 Սիրալիբ դէմքով.
 Լայն առունների
 Սառնորակ ջրեր
 Խայտալով՝ այնտեղ
 Խոխոջում են միշտ...
 Եւ կանաչ թրփեր
 Նոցա փերին
 Գոյնըզգոյն ծաղկանց
 Ուղարկում են միշտ
 Նազելի ողջոյն,
 Օգային համբոյր:
 Հովանի նոցա—
 Վիթխարի ծառեր՝
 Ախոյեան կանգնած
 Երկընքի տապի՝
 Կըրակի դիմաց:
 Մի ընտիր ստւերում
 Թրփիկի վերայ
 Ոստիկից ամուր
 Կը կապես մամուռ.
 Մանրիկ ոտներով,
 Սըրածայր կըտցով
 Քեզ համար կ'հիւսես
 Դու գողտրիկ մի բոյն:
 Կը ջանայ քեզ հետ
 Քո մատաղ ընկեր.
 Կը սիրէ նա քեզ
 Մըտերիմ սիրով:

Գըթառատ բնութիւն
 Զեզ պարգև կը տայ—
 Քընքըշիկ ձագեր,
 Մըխիթար հոգու:
 Երբ հասնին նոքա,
 Խըմբովին կ'երգէք,—
 Անտառի խորքից
 Կը ձայնեն ձեզ հետ
 Բաղդաւոր ձեզ պէս
 Բիւրաւոր զոյգեր:
 Երջանիկ կ'ապրես,
 Իմ սիրո՛ւն թըռչնիկ,
 Հիւրընկալ բնութեան
 Փայփայտը գըրկում:

3.

Քեզ է՛նչ փոյթ թէ կայ
 Անտառիցը դուրս
 Արեւից այլւած
 Վըշտակիր թըշառ,
 Որ ողբում է միշտ
 Իւր տըխուր օրեր,
 Թառամած հասակ,
 Խորտակած յոյսեր...
 Ե՛հ, սիրո՛ւն թըռչնիկ,
 Սըլացի՛ր, գընա՛,
 Հեռացի՛ր ինձնից...
 Թո՛ղ ես լամ—ողբամ
 Իմ օրեր խաւար.
 Իսկ դու ըշտապի՛ր
 Զովասուն անտառ:

Մօսկա, 1889 թ., 18 մարտի:

Կ Ո Ր Ա Ծ Ն Ե Ր

Լ Է Օ Ի

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

Ը.

Չորս օր էր անցել: Ձիւնը եկել էր, կուտւել:

Մոմի կտորը պլպլում էր իւր պատանդանի վերայ, զարմանալի արագութեամբ էր պլպլում, կարծես ինքն ու ինքը խաղ էր անում: Յաճ ընկած բոցը թեքւում էր այս ու այն կողմ, երբեմն բոլորովին ընկնում էր, քսւում հալւած և տարածւած ճարպին, երբեմն յանկարծ բարձրանում և նորա առաջ գողգողում էին այդ տան երեք հատ բնակիչների զանազան սուերները: Մոմը հանդէլու վրայ էր և իւր այդ օրհասական բոլակին տանում, ման էր ածում սուերները, պատից առաստաղն էր հանում, առաստաղից անկիւնի վերայ թեքում: Բայց նստածներից ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում այդ բոցի վերայ, սուերների այդ խաղի վերայ: Սառան այս երեկոյ իւր զէպի մայրը զարձրած աջ ուսի վերայ չորս անգամ բռունցքի սաստիկ հարւած էր ընդունել և այժմ հանդարտած, խելօքացած, հեռացել էր ամենքից և ամբողջ միտքըն ու ուշքը վերցրած խրել էր մի գործի մէջ, որի վերայ երկար աշխատում էին նորա փոքրիկ մատները. նա գտել էր մի բարակ կարմիր թել և ուզում էր բանալ նորա մի հանգոյցը: Երբեմն ձեռ-

¹⁾ Տե՛ս «Մուրճ»-ի 9-րդ համարը:

քը տանում էր դէպի աջ ուսը, մի բոպէ բռնում էր, երևի դեռ ցաւում էր ուսը, բայց չէր համարձակւում նայել մօր և Բարսեղի դէմքերին, քթի մէջ թեթեւ հառաչում էր և էլի թելը ձեռք առնում:

Բարսեղը դառնացած էր: Նա բարկացել էր Աննայի վերայ: Բարկացել էր, ձայնը բարձրացրել: Ի՞նչպէս կարելի է, խեղճ երեխայի ուսը կոտրեց: Մի անմեղ չարութեան համար այդպիսի պատիժ... Հապա ի՞նչ պատիժ պիտի ստանան նրանք, որ այնպէս խաբում են, մեծ, միրուքաւոր մարդուն երեք ամսեկան մանուկի պէս լացացնում են... Այս վերջին խօսքերը նա չէր ասել: Բայց բարկութիւնն այսպէս էր եկել, գոռալ տւել: Ծեծում է խեղճ երեխային, ուսը կոտորում է և չի լսում աղաչանք, պաղատանք: Աղաչում է երեխան, ճաքում է, տրաքում, արտասուքը ողողել է նորա դէմքը, իսկ ծեծողը հարւածներ է դնում ու դնում: Այդ ժամանակ Բարսեղն էլ չը կարողացաւ լռել, բարձր ձայնով գոռաց. «բաւակա՛ն է»: Աննան, ճշմարիտ է, իսկոյն ձեռքն իրան քաշեց, դադարեց ծեծելուց, բայց ոչինչ էլ պատասխան չը տւեց աղքատին և կարծես թէ չը նկատելով նորան, կարծես թէ հէնց ինքն իւր կամքով դադարեցնելով պատիժը՝ գլուխը կախ արեց, շարունակեց գուլպաները կտրկատել:

Խեղճ, խեղճ Սառա. հայր չ'ունէր, որբ էր և այդպէս կորած էր, անտէր: Ասում են, թէ երեխան հօրով որբ չի մնալ, մօրով որբ կը մնայ: Լաւ չեն ասել. մի երեխայ որ հայր չ'ունենայ, ինչի՞ նման կը լինի: Հա՛յրը չէ, որ պահում է, հա՛յրը չէ, որ ուրախացնում է երեխայի սիրտը, մեծացնում է նորան: Սա՛ էլ մայրը, լաւ մայրը. մայրն ի՞նչ... Կնոջ պէս կը սիրէ, սրտին կը դնէ, գլուխը կը քորէ, բայց հայրն է տան ճրագը, արևը: Հայր չ'ունէր Սառան, անտէր էր և հէնց դորա համար ինքը, Բարսեղը, այնպէս բարկացաւ, ձայնը բարձրացրեց: Լաւ է որ Աննան լսեց. լաւ է որ չ'ասաց թէ քեզ ինչ կայ, քեզ մի անկիւն, մի տեղ են տալիս, վե՛ր ընկիր քեզ համար, քնի՛ր ու վե՛ր կաց, իսկ ուրիշի երեխայի հետ գործ չ'ունիս, երեխան իմն է, ես գիտեմ... Այդ չ'ասաց Աննան. լռեց, հիմա տես՝ ինչպէս է հանդարտ իւր բանն անում: Սրտին դիպել է, խօսք չը կայ. բայց չի խօսում, երևի, հասկանում է, որ նա տղա-

մարդ է, իսկ տղամարդը զուր տեղից չի բարկանալ, իրա-
ւունք ունի... Զէ՛, Սառա, սպասի՛ր, քիչ էլ սպասիր, լաւ կը
լինես:

Բայց մենակ այդ դէպքը չէր Բարսեղի մաղձը խառնել: Նա
այս երեկոյ դռնով մտնելիս էլ իւր գոյնումը չէր. մի բան, երևի,
կար, այդ պատճառով էր նա այդպէս պինդ դէն ձգում իւր ձեռա-
փայտը, այդ պատճառով էր այնպէս շրթունքները սեղմել, մի ու-
րիշ տեսակ «բարի իրիկուն» ասել և անհանգիստ դէս ու դէն էր
նայում: Աննան հասկացել էր Բարսեղի միտքը: Ե՛հ, մարդուս
ճակատն էլ ճակատ է, ամօթ պիտի իմանայ: Աշխարհումս ո՞վ է
ուժ մի կոոր հաց տալիս, իսկ այդ մարդը քանի՞ ժամանակ է
պահում է իրանց, պահպանում է ոչ թէ մի, այլ երկու հոգի: Բա-
ւական չէ՞ր: Գիշերը քնելու տեղ են տալիս, և դորա համար խեղ-
ճը ո՞ր մէկն անէ. հա՞ց բերէ, ճրա՞դ բերէ, թէ ածուխ ու փայտ:
Զէ՛, Բարսեղը խելօք է, շատ բան է հասկանում... Եւ այդպիսի
ժամանակ այդ լակոտը խաղ է անում, գնում, կպչում է Բարսեղին,
որ աւելի ևս զգւացնէ, զայրացնէ, ի՞նչպէս չը ջարդես նորա ուսե-
րը... Այդ պատճառով էր Աննան գլուխը կախ արել, յօնքերը կի-
տել: Ե՛, Բարսեղ, որքան էլ ասես, ի՞նչ անէ Աննան, ո՞ր ջուրն
ընկնէ. կարծում ես թէ ճար ունի, բայց ճար չի՞ անում:

Բայց Բարսեղը, ասացի, ուրիշ ցաւ էլ ունէր:

Երէկ երեկոյ նա տեսել էր Աննայի գլխին մի լաւ աղլուխ: Նո-
րը չէր, բայց վատն էլ չէր: Նա երկար նայել էր աղլուխին, երկար
տնտղել էր թէ ինչպէս էր Աննան կապել իւր գլխին. նորա մտքով
շատ բան էր անցել և միտքը ուրիշ բաներ էր ասել: Բայց վերջը
նա իրան այսպէս էր սիրտ տւել. — ո՞վ գիտէ, կնոջ բան է, զուցէ
իրանը չէ, զուցէ ուրիշինն է, առել է, գլխին դցել, մոռացել է որ
տայ տիրոջը: Եւ այդ օրը, առաւօտեան, դուրս է գնացել տանիցը
մտքումը հաստատ վճռած այնպէս անել, որ Աննայի գլխին իւր
ձեռքով առած նոր աղլուխ լինի: Գնացել էր իւր լաւ ծանօթ կօշ-
կակարի մօտ, որին իւր «հոգեպահուստն» էր յանձնել: Շատ ժամա-
կակար էր բան էր, տարուց աւել կը լինէր, որ այդպէս էր արել. Ա-
տուծու տակ ճար ու ճրագ երկու թուղթ մանէթ էր ունեցել,
պահ էր տւել կօշկակար Ահարոնին, երգումով, հաւատով պնդացրել

էր, որ նա պահէ իւր մօտ, հարկաւոր եղած ժամանակը չետ տայ: Կօշկակարը խոտացել էր յետ դարձնելիս 20 կոպէկ աւելացնել գումարի վերայ իբրեւ շահ:

Դէպի Ահարոնը գնալիս նա մի բանի դժարութիւնն էլ հեռացրել էր, պրծել: Խնչպէս պիտի առնէր աղլուխը, որ չ'իմանան թէ ինքն է առնում: Նա մտքումը դրեց հաւատացնել խանութպանին, որ այդ փողը իրանը չէ, իրան ինչի՞ն է աղլուխը, մի խեղճ կնիկ է փողը տւել իրան, աղաչել որ աղլուխ առնէ: Բայց այդպիսի նախադիժը աւելորդ էր: Կօշկակարի խանութի առջև մի այսպիսի տեսարան տեղի ունեցաւ:

Ահարոնը փողը չէր տալիս: «Խնչի՞դ է, ասում էր, փող է, թող մնայ, մի բան էլ աւել կը բերէ»: Որքան էլ Բարսեղը լեզուն այսպէս ու այնպէս էր շուռ տալիս, ասում, երդում, հաւատացնում էր որ հարկաւոր է, բայց բան չէր դառնում: Նրկու, երեք անգամ Բարսեղը գնաց խանութի առջև կանգնեց, «չէ» ու «չէ» լսեց: Եւ վերջը Բարսեղը—նա էլ մարդ էր—սկսեց պահանջել իւր փողը: Կօշկակարը բարկացաւ և այնպէս խփեց խեղճ անդամալոյծի կրծքին, որ նա մի քանի քայլափոխ յետ ու յետ մղւեց, չը կարողացաւ ձեռափայտերը պահել, թեքւեց մէջքի վերայ, սառած գետնին զարնւեց:

Ոչ ոք դեռ չէր տեսած, որ Բարսեղն այդպէս շուռ ինքզինքը հաւաքէր, շարժէր: Նա խտրոյն վեր թռաւ ընկած տեղիցը, կծկրւած անդամները այդ անգամ չ'ընդդիմացան կամքին, շարժւեցան, ոտի դրին նորան: Առանց մի անգամ իսկ «ո՛հ» կամ «վա՛յ» անելու, նա ոտի կանգնելուն պէս սարսափահար վազեց Կօշկակարի մօտ, նորա ձեռքիցը խլեց մուրճը, բայց չը խփեց, չը պահեց, այլ հանդարտ յետ տւեց նորան և ասաց ստիպողական ձայնով. «Ա՛ռ, Ահարոն, ա՛ռ, կամ սպանի՛ր, գլուխս ջարդի՛ր, կամ փո՛ղս տուր»:

Եւ յետոյ ինչ լա՛ց, պաղատա՛նք... բայց դորանով էլ բան չը դառաւ: Ահարոնի հարեան խանութատէրերը եկան և վերջն այն դառաւ, որ աղքատը գնաց իւր գործին, այս անգամ էլ երդումով կէս հանգստացած և կէս անհանգիստ: Կօշկակարը խղճաց, էլի հաւատացրեց թէ փողը մնում է, ինքը չի ուրանում, կը տայ, բայց այժմ չ'ուռնի:

Բարսեղը իւր կեանքում առաջին անգամն էր այս տեսակ բան տեսել: Մինչև օրը մթնացրեց, հոգին բերանը հաւաքւեց: Գնաց դէպի տուն. բայց ինչ երեսով: Սիրտը ճաքւում էր. ում որ պատմել էր այդ «անաստուածութիւնը», ամենքը լուռ էին մնացել, ոչ «հա» էին ասել, ոչ «չէ»: Ե՛հ, օտար մարդ, օտարի սիրտ... ո՞վ է նորա համար ցաւողը: Նա գնում էր «իրաններին» պատմելու, նա գիտէր, հաւատում էր, որ Աննան կը լսէ ու ծնկներին կը խփէ, կ'ափսոսաց իւր հետ, կ'անիծէ վատ մարդուն, իւր սիրտը կը հովացնէ: Եւ քանի նա մօտենում էր իրանց տանը, զգում էր որ իւր մէջքը ցաւում է, զգում էր որ սրտի ցաւն էլ աւելի և աւելի սաստկանում է:

Դռնով ներս մտնելուն պէս նորա լեզուն պատրաստ էր «ա՛խ» կանչելու: Բայց նորա աչքը մի բան տեսաւ, որ կապեց լեզուն: Աղլուխը դեռ Աննայի գլխին էր: Ուրեմն իրանն էր այդ աղլուխը: Նա նստեց, մէջքի ցաւին դիմացաւ և միայն դէմքի վերայ մի դառն նշան ցոյց տւեց, որ վիշտ, դժբաղդութիւն էր յայտնում. լուռ մնաց և տեսաւ, որ Աննայի հին կարկառած աղլուխը, որ նա միշտ գլխին էր զգում, այժմ Սառայի մէջքին է կապած գօտու տեղ: Ո՞րտեղից էր, ո՞ւմն էր... Նորը չէ, նա չի առել և ինչո՞վ առնէ. և ո՞վ բերեց, ծախեց: Ոչինչ չի խօսում Աննան, ոչինչ չի յայտնում. բայց չէ՞ որ նրանց խօսք ու զրոյցը մէկ էր, չէ՞ որ միմեանցից ծածուկ բան չ'ունէին: Զէ՛, առած աղլուխ չէ: Այնքան էլ հինը չէ, որ մէկը վերցնէ, իբրեւ ողորմութիւն տայ նորան: Ինչքա՛ն լաւ բան է. բացկարմիր գոյն ունի, մեծ է, խոշոր ծաղիկներով նախշած, անպատճառ ունեւոր մարդից է ստացւել:

Այդպէս երկու սրտերը միմեանց չէին հասկանում. երկուսն էլ մոլորւել էին, երկուսն էլ այն չէին հասկանում, ինչ որ կար: Մէջ տեղ պարզող, բացատրող լեզու չը կար. նրանց վերայ բռնացած էր լուռութիւնը, չը խօսելու ցանկութիւնը, իսկ սիրտները կոյրերի պէս դէս ու դէն էին ընկնում, խարխալում, որ ճանապարհ գտնեն, բայց բոլորովին հակառակ կողմեր էին գնում: Նրանք մոռացել էին, որ մամը հանդէլու վրայ է. բոցը մի երկու անգամ էլ ցած ու բարձր գնաց, մեծացաւ, փոքրացաւ և յանկարծ մարեց, խաւարը կլանեց, տարաւ նստածների անշարժ դէմքերն ու մարմինները:

Բարսեղը քարշ ընկաւ, զնաց իւր անկիւնը, փաթաթւեց իւր շորերի մէջ: Խաւարն էլ ոչինչ չը կարողացաւ նորա համար պարգեւ, թէև տիրեց խաղաղութիւնը, թէև շուտով Աննան ու իւր աղջիկն էլ ծածկւեցան վերմակի տակ և լռեցին: Եւ երկար ժամանակ նա զօռ էր տալիս իւր խեղճ գլխին, ձեռքը տանում էր, մէջքն էր շօշափում, բերում էր, սրտի վերայ դնում: Այդ երկու տեղերն էլ սովորականի պէս չէին. մէջքը Ահարոնի անաստուածութիւնն էր վկայում, սրտի մէջ մի բան խթում էր, ծակում, երբ յիշում էր, որ իւր յոյսը կորել է, այն երկու թուղթ մանէթները պիտի ջաղթէին չար սատանայի կամքը... Եւ երբ չար սատանայի մասին էր մտածում, տեսնում էր Աննային հեռու իրանից, իսկ ինքը մնացել է մենակ, Աստուծու անիծած, մարդկանց մէջ շան նման դռներն ընկած: Մի, Աննա, երանի թէ երազ լինի այդ տեսած բանը. նորա ձեռքին է, նա որ ուզէ, կարող է անել, այնպէս անել, որ տան ճրագը վառ մնայ: Վառ կը մնայ ճրագը, ծուխը այդ տանից դէպի երկինք կը բարձրանայ, և Բարսեղը կը շարժարւի, կը տանջւի իւր Աննայի, իւր կնոջ համար: Իւր կնոջ... Բարսեղը էլի ժպտում է, ուրախանում է այս մտքից:

Բայց չէ՛, չէ՛, մենակ Աննայի ձեռքին չէ. այդ աղլուխն ի՞նչ է, ո՞րանդից է: Ով որ տւել է, տւել. բայց ինքը, այդ մարդը, այդ Բարսեղը, նա ինչացո՞ւ է այս տանը: Նա էլ խօսք ունի և մեծ խօսքը իրանն է. և այդ խօսքն այս է. «ինչո՞ւ ես ուրիշին ճանաչում, քոնը ես եմ, ես...»:

— Խե՛ղք արա, Բարսեղ, իսկէք. ո՞րտեղին ես խփում, նո՞ր պիտի ճանաչես զրանց... Շան նման ապրիր, միայն չ՛ասեն թէ անխելք ես, յիմար ես:

Այդ խօսքերը Բարսեղն էր իրան ասում:

Թ.

Քարի՛ է առաւօտը: Երբ սևը կորչում է, գիշերն անցնում, այն գիշերը, որ մարդու գլխին չեղած ցաւն է բերում, որ ուռցնում, մեծացնում է մարմնի վերայ դուրս եկած փոքր բշտիկը ու վտանգաւոր խոց է շինում, այն գիշերը, որ մարդու սիրտը նեղացնում է, հուսկ տալիս, որ մեծացնում է, լացնացնում մի հասարակ վիշտը,

մի փոքր դարդն անգամ,—երբ անցնում է այդ դիշերը և շաղաթաթախ լոյսը ծաղում է երկրի վերայ, զալիս է բարի առաւօտը, կարմիր առաւօտը, ցրւում է մռայլն ու մութը, կենդանութիւն է սաւիտ անհողին, միտիթարում է խեղճին, սգաւորին ու որբին: Քարմ, հանդարտ, զեղաժպիտ առաւօտ ծանր, հեղձուցիչ գիշերից յետոյ... Ոչ մի ժամանակ Բարսեղն այնքան չէր ուրախացել, այնքան չէր զւարթ, ինչպէս այդ առաւօտը:

Գիշերւայ մռայլ սրտերը պարզւել էին, անորոշ, անմիտ ծածկապահոթիւնը, որ մտել էր երկուսի մէջ, այժմ չքացել էր: Նրանք խօսեցին՝ Աննան ու Բարսեղը: Աղլուխը Բաբուշկան էր ընծայել, փա՛ռք Աստուծու: Ինքն էր բերել, կանչել, հեռու էր տարել և երկար ժամանակ խօսացրել էր Աննային, իմացել էր բոլոր հանգամանքները և ասել էր թէ ինքը շատ է ուրախ, որ «խեղճ Բարսեղին» այնպէս լաւ է պահում: Բարսեղը, ասել էր Բաբուշկան, ամեն մարդու նման չէ, խեղճ է, բարեհոգի, և այդ պատճառով նորան շատ էր սիրում ինքը, Բաբուշկան:

—Ուրիշ բան չ'ասա՞ց, հարցրեց Բարսեղը սիրտ առած:

Մի թեթեւ կարմրութիւն եկաւ, անցաւ Աննայի դէմքով. նա ամաչեց, զարմացաւ, աչքերը չռեց, բայց չը կարողացաւ շատ նայել աղքատին, երեսը դէպի պատը դարձրեց: Իսկ Բարսեղը այնպէս սպասում էր... նորա սիրտը թրթռում էր, ականջները մի բռնեցում տաքացան:

—Բաս քեզ մի ուրիշ բան չ'ասա՞ց, նորից հարցրեց նա:

Աննան մի անբնական, զօռով կեղծած հանգստութեամբ «չէ» ասաց ու դուրս գնաց: Բարսեղը գլուխը ծռեց յուսահատ: Ախ, ի՞նչպէս ասէ, ի՞նչպէս յայտնէ այն, որ եռում էր իւր սրտումը: Աննան սառն էր երևում, միամիտ, նորան մօտենալ չի կարելի: Աղքատի ճակատը, յայտնի է, պինդ է լինում, ամօթ ասած բանը քիչ ունի: Բայց և այնպէս, այստեղ, այս առաւօտ նա ամաչեց, ինքզինքը կորցրեց և միայն զգաց, որ մի բան իւր ներսն է ոլորում: Նա լռեց մի հնար զոտնելու համար: Եւ յանկարծ ուրախացաւ, իմացաւ թէ որտեղից սկսէ: Երբ Աննան կրկին ներս մտաւ, նա իսկոյն ասաց.

—Գիտե՞ս, Բաբուշկան ինձ ուղղում է իւր մօտ տանէ:

Աննան ունի չը գտաւ պատասխանելու, զարմացած և նեղացած նայեց նորա երեսին:

— Ասում է՝ մի փոքրիկ տուն տամ քեզ, ապրի՛ր, զուգիւ հանգիստ պահի՛ր:

— Ուրեմն մեզ մօտ վա՛տ է, հարցրեց Աննան թոյլ և նւազ ձայնով:

— Նս «է» ասացի նորան. ասացի՝ չեմ կարող. Աստուծու տւած տունը կայ, էլ ինչ հարկաւոր է, ինձ ո՞վ է զօռում, որ ուրիշ տեղ գնամ:

— Դրանց աչքը թափւի, ասաց Աննան յանկարծ զայրանալով. — ո՛ւմն ենք ինչ արել: Ամենքն են նախանձում, տրաքւում, կ'ասես թէ գնում ենք նրանց ձեռքի հացը խլում: Ապրում ենք միասին, մի կտոր հաց է, ուտում ենք, նստում: Դէ, ի հարկէ, Բարսեղ, ամեն օր այսպէս չենք մնալու, Աստուծու ողորմութեան դուռը կը բացւի, ամեն օր դու չես մեզ համար հաց բերի...

— Աննա՛, Աննա՛, այդ ի՞նչ ես ասում. մեղքի տալով մի՛ աշխարհ: Հացը Աստուծունն է, իմն չէ, քոնը չէ, ես էլ աշխատաւոր եմ: Ո՛ւմ համար եմ աշխատում, այսինքն՝ հայր, մայր չ'ունիմ, որդի չ'ունիմ: Նս Բարուչկին այդպէս էլ հասկացրի, ասացի՝ ինձ օջախ է հարկաւոր, տուն է հարկաւոր, խօ միշտ դռներին չը պիտի՞ մընամ:

Նա ուզում էր շարունակել, բայց բաւական համարեց այդքանը. կնիկ է, կը հասկանայ այդ առաջարկութիւնը: Եւ նա սպասում էր այդ խօսքերի պատասխանին, սրտադող սպասում էր: Աննայի դէմքի վերայ մի առանձին նշան չ'եղաւ, նա մինչև անգամ չը հասկացաւ և միամտաբար մի «ի հարկէ» միայն ասաց: Այդ էլ բաւական համարեց աղքատը:

— Բարուչկան շատ ուրախացաւ, երբ այդ բանն ասացի, երբ ասացի՝ թէ ինձ օջախ է հարկաւոր:

— Հա՞, զարմացած հարցրեց Աննան. — դէ լաւ է, լաւ է որ այդպէս է դառել:

Բարսեղն սկսեց ոլորել բեղերը: Նա մնացել էր զարմացած, յափըշտակւած այսպիսի անակնկալ յաջողութիւնից: Եւ էլ չը խօսեց: Որտեղից որ է, մի բան եկաւ, խրեց նորա մտքի մէջ: Վերջացե՞լ

էր արդեօք թէ ոչ: Վերջի սկիզբն էր, նա այդ հասկացաւ. բայց վերջացնել, միանգամայն պարզել չ'ուզեց: Անոջ առևտուր է, մրտածեց նա, այդ առևտուրը մենակ տղամարդով չի լինում: Այդ միտքը այնպիսի արագութեամբ տեղ բռնեց, լայնացաւ նորա սրտում, որ մի երկու թէ երեք րոպէից յետոյ նա չը գիտէր թէ ինչ անէ: Կիսատ, անորոշ մնաց «առևտուրը»: Լինում են մարդիկ, որ չեն ուզում թէ չեն կարողանում միանգամից զրկել բազդը: Նորա միտքն ընկաւ Բաբուշկան: — Աշխարհի բանը նա է դրստում, մտածեց նա, դնամ, ուղարկեմ, դաջ պարզը խօսէ: Ես ի՞նչ հասկանամ. իմ բանը չէ: Եւ նա վեր կացաւ ու գնաց:

Բայց այդ օրը սովորական Բարսեղի վերայ շատ բան էր աւելացել:

Ջառիվայր, սառած փողոցով գնում էր նա, իւր ձեռափայտերը առաջ էր տանում այնպիսի համարձակութեամբ, որ կարծում էիր թէ նա իւր ամբողջ յոյսը այդ փայտերի վերայ չէր դրած, այլ ունէր հաստատ և առողջ ոտներ, որոնք կարող էին չը դաւաճանել, պահել այդ մարդուն. կարծում էիր թէ նա չը գիտէ, որ առանց զգուշութեան նա ոչինչ է, չի կարող ապրել: Նա երբեմն զուխը ցած էր զցում և ծիծաղում, ժպտում սառած գետնի երեսն ի վեր:

— Լա՛ւ դառաւ, լաւ է, Աստուած օգնի: Ի՞նչ պատասխան է հարկաւոր բանից տեղեկութիւն չ'ունի, ինչ որ ասես, նորա պատասխանը «հա՛» է ու «հա՛»: Այդպիսի կին քիչ կը լինի. և ավր ինձ էլ հէնց այդպէսն է հարկաւոր: Ի՞նչ եմ անում կայքը, բաժինքը, ինչի՞ս է... Խեղճը զեռանփորձ է, ի՞նչ է տեսել այս աշխարհում: Մարդու մեռնելուց յետոյ սոված, ծարաւ ապրել է, ինքն էլ չի իմացել թէ ինչպէս է ապրել: Նստել է իւր տանը, իւր օջախը, իւր երեխային պահել, պահպանել է: Սրհնի՛ նա, շատ լաւ է արել:

Բարսեղն սկսեց հանդարտ գնալ. նա քարշ էր տալիս իւր ոտները, ձեռափայտերի երկաթապատ ծայրերը մի առանձին ախորժանքով էր զարնում փողոցի քարերին: Մօտով անցնող տղան կանգնեց, նայում էր այդ փայտերին և ծիծաղում նրանց չխկխկոցի վերայ: Բայց Բարսեղը ուշադրութիւն չը դարձրեց, մտքի վերայ էր: Բարսեղը տուն, տեղ կ'ունենայ, Բարսեղն էլ մարդու շարք կ'ընկնի: Աստուծու օրհնութիւնը լինի բոլոր լաւ մարդկանց վերայ, որքան

որ կան, նրանց շնորհքովն էլ իւր, Բարսեղի, վերայ. ինչ որ արել էր, չէր արել, չը զիտէր, միայն այն է իմանում, որ իւր կեանքում մի լաւ բան եթէ արել է, հէնց այդ բանն է:

Աշխարհն էլ ցուրտ չէ, արեգակն այնպէս լաւ լոյս է տալիս, տաքացնում, կ'ասես իսկի առաջնայ արեղակը չէ: Իսկ այդ բոլոր տները, որոնց արանքով նա գնում է, ո՛ր, այդ բոլոր տները,—մեծերն ու փոքրները, ցածերն ու բարձրները, բոլորն էլ իրանն են, բոլորն էլ կան, կանգնած են, որ իրան օգնութիւն անեն: «Յրհն ի՛նչ դուք, օրհն ի՛նչ, ասաց նա իւր չորս կողմը նայելով:

Մի պատշգամբի վերայ մի երեխայ էր կանգնած. ցած նայեց, տեսաւ նորան և կանչեց.

—Է՛յ, աղքատ, աղքատ, կա՛ղ աղքատ:

Բարսեղը դէպի վեր նայեց, ծիծաղեց և քաղցր, փափուկ ձայնով պատասխանեց.

—Ի՛նչ կայ, մատա՛ղդ լինեմ. Ատուած պահէ, պինդ ձեռքով պահէ, աջերն ու խաչերը քեզ պահապան, սիրո՛ւն բալա:

Եւ շարունակեց օրհնել, ինչքան լաւ խօսքեր ղիտէր, բոլորը դուրս թափեց: Նրեխան շարունակում էր «աղքատ, աղքատ» կանչել, նա չէր էլ լսում թէ ինչ է ասում այդ աղքատը: Վերջը ձանձրացաւ, վազեց, տուն մտաւ: Իսկ աղքատը կանգնած օրհնում էր, օրհնում...

Եւ յետոյ, երբ նա շարունակեց ճանապարհը, երբ երևաց Բարուշկայի առանձնակի կանգնած տան սրածայր, հին, տեղ տեղ ծակածակած կոուրը, էլի միաքը եկաւ, պաշարեց նորան: Ելի քիչ կանգ առաւ և վերջը էլի սկսեց ծիծաղել: Այսօր ծիծաղն էր նորա բաժինը: «Լաւ դառաւ, ասում էր նա. հա՛... մտքիցս ի՛նչպէս է թըռել: Պարզ խօսք, լաւ է, չ'ասացի: Աղլուխը... հիմա կ'իմանամ... պառա՛ւն է տւել, թէ ով: Ելի կնիկ է, ամեն կնկայ մազից մի մի սատանայ կայ կսխ ընկած...»

Այդ միջոցին ներքեւից դալիս էր մի կոյր մուրացկան առանց առաջնորդի: Փողոցում շատ քարեր կային թափւած և կոյրը մահակով տփուփում էր, շօշափում ճանապարհը, քարերովն էր ընկնում, փափախը ձեռքով պահում, որ ցնցւելուց չ'ընկնի: Այնու ամենայնիւ նա շտապում էր, գնում էր քարի ու արգելքի ուշ չը

դրած: Բարսեղը տեսաւ, մի քանի անգամ ծիծաղելով ինքն իրան
«տե՛ս, տե՛ս», ասաց և երբ կոյրը մօտեցաւ, նա բարձր ձայնով
ասաց.

— Գլուխդ թաղե՛մ, Գրիգո՛ր, ո՛ւր ես գնում...

Կոյրը իւր տափակ դէմքը դէպի նորան դարձրեց, մի երկու
անկապ խօսք ասաց, չէր ճանաչում: Բայց Բարսեղը զնաց դէպի Բա-
բուշկայի դուռը, ծիծաղելով, ինչպէս խաղացող երեխայ:

— Հողո՛ւմ անեմ գլուխդ, Հողո՛ւմ. տես ի՛նչպէս կրակ կտրած է
գնում...

Նւ Բարսեղը մի անգամ էլ յետ նայեց և իսկոյն մտաւ տան
դռներով: Կոյրը ճանաչեց ձայնը, կանգնեց, ասաց թէ ուր է գը-
նում, մի քանի հարցեր էլ տուեց դատարկ փողոցին...

Ժ.

Կէսօրն անցաւ:

Ճմեռւաց պարզ օր էր: Բաւական չէ պարզ ասել, պէտք է
աւելացնել— փափուկ օր: Բոլորովին մաքուր, կապուտակ երկինքը
ժպտում էր սպիտակ տների կտուրների, կեղտոտ փողոցների ու բա-
կերի, խղճալի պարտէզների և ծառերի վերայ: Այդ հրա-
շալի կապուտակութիւնը, այդ քնքոյշ ժպիտը ոչինչ կը լինէր ա-
ռանց փայլուն արեգակի, որ լողալով անթիւ ճառագայթների մէջ,
լոյս, ջերմութիւն էր թափում, առանց այն արեգակի, որ երկնքի
այդ բարի և բարեբար դէմքի հետ միացած դուրս էր կանչել բո-
լոր մարդկանց, բոլորին՝ հարուստին ու աղքատին, մեծին ու փոք-
րին, դուրս էր հանել, փաղաքշում էր նրանց, սիրտ ու մխիթարու-
թիւն տալիս:

Քիչ են լինում այսպիսի ճմեռնային օրեր:

Ձիւնը հալւում է, հալւում, այլ ևս չի դիմանում արեգակի
առաջ, ջուրը ծլծլում է, կաթկաթում, ցեխ դառած վազում է ա-
մեն տեղով. արարած աշխարհ ջրոցող է դառել: Ծանրանում է ձիւ-
նը, լանջիվայր կտուրների վերայ չի մնում, մեծ մեծ հիւսերով
թափւում է, կուտւում շւաքի մէջ և ծանր հալւում է: Ձիւնը
փայլում է արևի տակ, հեռու տեղերում կապուտակին է տալիս,
պսպղում է մանրիկ աստղերի պէս, որոնք անթիւ, անհամար բազ-

մուլթեամբ փռած են միանման սպիտակ, միանման անշարժ և անկենդան հարթավայրերում: Ախորժելի՛ օդ է, քաղցրահամբոյր ջերմութիւն: Մարդը նստում է արևի տակ, ուսերն ու կուրծքը դէմ անում փայլուն արեգակին և զմայլւում է, ծուլանում, թուլանում, երբ ձեռքը քսում է կրծքին և զգում է բնութեան ջերմութիւնը, մի ջերմութիւն, որ երբէք չի կարող տալ ոչ մի տեսակ վառարան: Այդ ծոյլ զգացմունքի հետ զարթնում է յոյսը, կարող ոյժի մօտիկ չաղթութեան յոյսը: Տե՛ս, պարտիզի ծայրում, դէնը, ցանկապատի մօտ, ձիւնը վերացել է, այրւած ու տխուր հողը նայում է կապոյտ երկնքին. և դեղնած, թրջւած ու հողին անյոյս կպած խոտերի միջ արդէն երևում են երկու, երեք, ո՛վ գիտէ, եթէ որոնես, գուցէ և չորս բարակ, մանր, վտիտ, կանաչ խոտեր...

Աննան նստած էր իւր տան կողքին: Նա նոր էր սրբել իւր կտուրի ձիւնը, որ խառն ու կեղտոտ կոյտերով, կոլոր-կոլոր դիզւած էր նորա դրան առջևը: Հին, կիսամաշ թին, որի կոթի կէսը այրւած էր, սևացած, դեռ բոլորովին չէր մաքրւել ձիւնից, թէև նուազ էր, սևացած, դեռ բոլորովին չէր մաքրւել ձիւնից, թէև նորա լայն ծայրի տակից անդադար հոսում էր մի բարակ, թելի չափ բարակ ջուր: Այդ տեսակ բարակ, օձապտոյտ ջրեր ուրիշ տեղերից էլ էին հաւաքւում, գալիս էին ամեն կողմից և կանգ էին առնում մի փոքր փոս տեղ: Աննան նայում էր այդ բազմաթիւ ջրերին, դըլուխը ցածրացրած, ջուխտ ձեռքը ծնկներին դրած: Հալւող ձիւնը սրբելը մեծ ոյժ է պահանջում: Նա յոգնած էր, հանգստանում էր. ձեռքերը կրակ էին ընկել, այրւում, թեթև մրմունջը թեթև կըսկիծ էր պատճառում: Իսկ Սառան կանգնած էր փոքրիկ լճակի մօտ, երկու ձեռքը փորին դրած, մատները միմեանց հետ հիւսած, գլուխը բարձրացրած, իրանց դրան գլխին էր նայում: Այդտեղ, երկու գերանների տակ, շաքում, դողդողում, դէս ու դէն էր երերւում լճակի փայլուն շողքը, որ գոյացել էր արևի ցոլացումից: Տեսնում էր թէ լնչպէս մանր, միայն թեթև տատանմունքներով նկատելի բարակ, թելի չափ բարակ ջրերը թրթռալով խառնւում էին մի տեղ, և ջրի երեսը հանդարտ ծփում էր, գոյանում էին ջրային մանրիկ բոլորակ գծեր, որոնք ոլորւում էին, շուռ էին գալիս տեսակ տեսակ ուղղութիւններով, հիւսւում էին միմեանց հետ, կըտատւում էին միմեանց:

Մայր ու աղջիկ անշարժ էին, անխօս։ Ամեն մէկն իւր ուշադրութեան առարկայի ետեւիցն էր ընկած. և շարժելի, յիւրժ փոխել անկարելի էր։ Այդպէս էր անում արեգակը, որի առատ լոյսը խլովում էր Աննայի դէմքին և Սառայի կողքին։

Այդ միջոցին մի կին շորերը քիչ վեր քաշած, լայն-լայն քայլեր անելով որ ցլխի ու ջրերի մէջ շատ չը խրելի, շարունակ նայելով իւր կօշիկներին, որոնցից ամեն մէկը մի մի մեծ բեռն էր վերցրել ցլից, եկաւ, մօտեցաւ տանը, շուռ եկաւ. նորա ետեւի կողմով և գնաց Աննայի մօտ։ Դա Բաբուշկան էր։

Նա իւր սովորական հագուստում չէր։ Այդ օրը աւելի լաւ և, կարելի է ասել, աւելի մաքուր էր հագնւած։ Վարմիր գոյնզգոյն շալն ընկած էր նորա գլխին, մէջ տեղից ծաււած, և երկու ծայրերը զալիս էին միմեանց վերայ ընկնում կրծքի վերայ. շալի զեղեցիկ ծոպերը շուտ շուտ ընկնում էին այդ կնոջ մասնների արանքը և էլի բաց թողւում։ Վարմիր թաւիշից կարած և սամոյրի նեղ կտորներով զարդարած «բուրք»-ը պինդ գրկած էր նորա մէջքն ու կուրծքը և մետաքսեայ կարմիր գօտին մի տեսակ հպարտութեամբ մի քանի անգամ շրջապատել էր բարակ մէջքը. կրծքի տակ, աջնուղ, ուր գօտու ծայրերը հանգոյց էին կազմում, կախ ընկած էր մի խոշոր ոսկի կոճակ։ Վարձես նոր էր երես լացել Բաբուշկան. այժմ աւելի սպիտակ էր երևում, իսկ յօնքերը միանգամայն սև էին։ Միայն կաուռի աչքերի պէս կոլոր թուխ աչքերն էին, որ սովորականի պէս արագ արագ շարժւում էին, աւելի արագութեամբ բաց ու խուփ լինում։ Վանգնեւուն պէս նա մի ձեռքը խրեց գօտու մէջ, ոսկի կոճակի վերայ։

Աննան տեղից վեր կացաւ, կանգնեց, մի երկու անգամ նայեց նորա դէմքին և էլի աչքերը գցեց գեանին, հարիւրաւոր շարժուն և անշարժ մանր ջրերի վերայ։

— Ե՛կ տուն, ասաց պառաւը սառն հրամայական ձևով և առաջ ընկաւ։ Աննան հետեւեց նորան։

Սառան, որ շարունակ իւր լճալոյժն էր զբաղւած, ոտները թափ աւեց, դեռնին զարկեց, որ քիչ մաքրէ ու ինքն էլ մոնէ տուն. բայց պառաւը խիղջն այդ նկատեց աչքի տալով և ձեռքը թափ տալով, ասաց նոյն սառն, հրամայողական ձևով.

— Խաղդ արա', խաղդ արա'. Ի՞նչ կայ որ դալիս ես:

Աղջիկը սառեց, մնաց կանգնած. բայց իսկոյն գտաւ իւր անկ-
լիքը: Լճակն աւելի մեծացել էր. նա վերցրեց թիւն և սկսեց խառ-
նել ջուրը ու մաիկ տալ դրան գլխին: Այդտեղ ջրի շողքը սկսեց ա-
ւելի կատաղի, խառնուփնդոր գծեր և լոյսեր պտտել, դէս ու դէն
վազեցնել: Ջուրը պղտորեց, արեգակի պատկերը այդ ջրից այլ ևս
այնպէս խիստ չէր ծակոտում աչքերը, այլ, խաղալիք դարձած մանր
ալիքների ձեռքին, իւր տկոյր գէմքն էր խաղացնում նրանց մէջ:
Դրան գլխին նկարւած փայլուն պատկերը հետզհետէ նւազում էր:
Բաբուշկան ներս մտաւ, Աննան նորա ետեւից:

Այդ տունը դեռ այդպիսի բան չէր տեսած. նա ենթարկեց
դանդաղ, բայց մանրամասն քննութեան: Պառաւը զանազան լուռ
շարժւածքներ էր անում գլխով ու ձեռքերով, նայում էր վերև,
նայում էր ցած: Նայում էր և ծանր կերպով ասում.

— Տունս, տունս... տունս ու դուռս, տունս ու տեղս, ներսն ու
դուրսը քեզ մատաղ: Նրեք զերան, չորս տախտակ, մի կոտրած սանտր,
երկու շամփուր, մէկն էլ ծուլած: Պատը չոր, մէջքը կոտրած, տակը
տկոյր, գլուխը ծակ: Սա էլ այսպէս... Սա էլ դուռը, սա էլ, հա',
դուռը, սա էլ լուսամուտը, ի՞նչ կայ, սազում է: Կրակի տեղը, կե-
րակուրի տեղը... Կրակի տեղը կանաչ խոտէ բուսել, կաթսան մնա-
ցել է, մնացել, ջուր չի տեսել, տաք չի տեսել, կանաչել է, ծաղ-
կել, ծաղիկ վերցրել, էգուց էլ պտուղ կը տա, պտուղը կը հասնի:
Այս տունս, այս դուռս քեզ մատաղ...

Աննան շարեւ էր: Կարծես թէ մի մեծ աման տաք ջուր թա-
փեցին նորա գլխին: Նա ինքն էլ նայում էր իւր տան զարդ ու զար-
դարանքին, նա ինքն էլ հետևում էր պառաւի ձեռքին, տեսնում
էր այն բոլոր առարկաները, որ այդ ձեռքն էր ցոյց տալիս: Առաջին
անգամն էր, որ նա ամաչում էր իւր տանը: Սաստիկ ամաչում էր.
պառաւը արժան էլ չէր համարել կօշիկները հանել, այնպէս ցխա-
թաթախ ման էր դալիս տան մէջ: Աննան ջանկարծ միտքը բերեց
իւր հարևան Մարիամի տունը: Օ', այնտեղ այսպէս չէր. ցխի կոոր
ներս տանել անկարելի էր, ո՞վ կը համարձակէր. երեխան էլ, իւր,
Մարիամի երեխան, եթէ չ'իմանալով գուլբաների ծալքը—գուլբա-
ների', ո՞ւր մնաց կօշիկ—ցխաթաթախ ներս տանէր, Մարիամն այն-

պիտի «զալմազալ» կ'անէր, որ չես տեսած: Այնտեղ տան մէջ շորեր կան, կարպետներ կան փռած, իսկ այստեղ չոր հող է, Բաբուշկան ի'նչպէս հանէ կօշիկները. ի'նչ հարկաւոր է: Ամօթը նորա լեզուն ներս քաշեց, խօսք չէր գալիս որ նա ասէր: Իսկ պառաւը գնում, գալիս էր և իւր անհոգ, բաց կծու ձայնն էր արձակում: Այնպիսի հեգնութիւն, այնպիսի ծաղր դեռ մինչև այդ օրը Աննայի սրտին չէր հասել:

—Ըհը', սա էլ զանաւազան, սա էլ շկափը, շարունակեց Բաբուշկան, յետ ձգելով մեզ ծանօթ քարի վերայ կախ արած հին սպիտակ շորը և մտիկ անելով քարի տակ շարած ամաններին: —Պա'-պա'-պա', վարեննի է, ի'նչ է, պիրօժնի, շաքարի հաց է: Բաղդաւո՛ր, ամեն օր չաց ես խմում՝ սուխարով, կաթով լցրած կաթ-նամանդ էլ տեսայ. բե'ր, բե'ր, բերանիցդ հոտ քաշեմ: Աղջիկ, ծամ կորած, Աստուծու տակ մա'րդ կայ, որ այսպէս ապրուստ անի:

Եւ նա կանգնեց Աննայի առաջ, աչք ու յօնքով այդ հարցի պատասխանն էր պահանջում:

—Հա', հա', սա էլ այս է, դուքեց նա յանկարծ, համարեա պարելով գնաց, դրան ճակատից վերցրեց Բարսեղի արխալուղը, որ կախ էր արած մի մեծ բւեռից՝ ցրտի դէմ: Արխալուղը ձեռն առած մօտեցաւ Աննային, սկսեց լուռ մի մի ցոյց տալ նորա անթիւ կարկատանները, պատուտած փէշերն ու մէջքը, երկու մատով ձգեց, պատուեց մի երկու կարկատան, ցոյց տուեց սււացած, կեղտոտ բամբակը: Այդ ամենն անում էր ոչ թէ մի հասարակ կերպով, այլ զլուխը ծանր ծանր թափահարելով, նայում էր տանտիկնոջ դէմքին, փորձում, չափում էր այդ դէմքը մի սառն, ոչնչացնող հայեացքով:

—Սա էլ դրանդ զանաւազան: Սա էլ զաւրդ է, զաւրդ մէջ քէ'ֆ արա:

Աննան վախում էր, չէր կարողանում չընայել այդ կնոջ դէմքին. իւր աչքերը ցածրացրեց, յետոյ բարձրացրեց, յետոյ շուտ ճաշկալով նայեց նորան և... լաց եղաւ: Խոշոր արտասուքները մի վայրկեանում բեռնեցան նորա երկար թերթերունքների վերայ, նա զլուխը կրծքի վերայ կախ արեց և երեսը դէպի հակառակ կողմը դարձրեց:

—Ել ի'նչ ես լաց լինում, ասաց Բաբուշկան. —Աստուած տէրդ

պահէ: Հրէն կաղ Բարսեղը, փառք Աստուծու, ո՞ր օրի է մնացել: Այնպիսի տղամարդ ունեցողը միաք կ'անէ՞, որ դու ես անում: Միայն նորա տեսքը, հասակը, միայն նորա շէնքն ու շնորհքը, քի՞չ է... Ո՛չ ուտեմ, ո՛չ խմեմ, հէնց նորան նայեմ, այդպէս ես մտածում: Աննան երբեմն հեկեկում էր:

— Վա՛յ, Բարսե՛ղ, կոտորատւած, փշրւած Բարսեղ: Երկու լաւ մահակ ունի, կ'ասես թէ իւղից նոր դուրս քաշած: Մէկը կռնատակին, միւսը ձեռքին, գնում է, կ'ասես կաքա՛ւ, կաքա՛ւ:

Եւ պառաւը ձեռքերեց թէ ինչպէս է նա գնում: Ոտները միմեանցից հեռու դրեց, մէջքը քիչ կռացրեց, կուրծքը դուրս ցցեց, զլուխը բարձրացրեց, սկսեց այդպէս շարժել և մէջքն ու կուրծքը աջ և ձախ օրօրել, շարժել:

— Մի ողորմութի՛ւն, բ...ա՛...ջ...ի, մին... ողորմութիւն... Վա՛հ, քո այդ ձայնիդ մեռնեմ, Բարսե՛ղ: Քո այդ ձայնիդ...

Աննան տեղը փոխեց, գնաց պուճախը մտաւ. նա իւր տանը հանգիստ, ապահով տեղ չէր դնում. որտեղ կանգնում էր, որտեղից մտիկ էր տալիս, Բաբուշկան էր և Բաբուշկան նորա առջևը:

— Աա՛ւ, էլ ի՞նչ լաց է, էլ ի՞նչ հարայ է: Աղջի՛կ, չես իմանում, բաղդաւո՞ր, ախր ես խնամախօս եմ եկել: Վեր կա՛յ, ասա՛. խնամի, դու բարով ես եկել, հազար բարով. ուրիշ տեղի հաւան չես, զլխիս վերայ տեղ ունես: Ես էլ ասեմ՝ բարով, հա՛, բարով եմ եկել, հազար բարով, զլխիդ զանձ եմ բերել, օրիդ լոյս եմ բերել: Ինձ զրկել է, զխտե՞ս ով... Բօջն ասես, չինարի, երեսն ասես, չորս օրւայ լուսին. խօսք ու զրոյցն ասես, բլբուլ, բլբուլ: Կ'ասես՝ անունըն ասա՛, կ'ասեմ՝ անունը եօթն թագաւորից բարձր, անունը հըրեղէն... կաղ, կոտորատւած, բերանի ջուրը դնացող աղքատ, հաց հաւաքող Բարսեղ... Նա է ինձ ուղարկել:

Այդպէս ասելով, ձայն տալով, նա գնացել էր կանդնել Աննայի առաջ: Աննան աչքը դեցեց նորա վերայ, մի ժամանակ նայում էր զարմացած, ուշադրութեամբ: Բայց մէկ էլ յանկարծ կուչ եկաւ, երեսը ծածկեց, ձայնը կարեց: Այդ ի՛նչն էր նորան փշրում:— Ինքն էլ չը զիտէր. բայց եթէ գետինը պատուէր և նա մոնէր, խրէր այնտեղ, որքա՛ն լաւ կը լինէր. այդ նա զգում էր:

— Հանաք չ'իմանաս, հանաք չէ... Դէ լա՛ւ, դուեց նա բար-

կացած.—զրուխդ բարձրացրո՛ւ, ինձ նայի՛ր. ինձ համար դու էլ տա-
սըն ու չորս տարեկան աղջիկ չես: Բժ՛, մարդ ես, մարդի աղջիկ...

Աննան բարձրացրեց զրուսը, բաց էլի չէր համարձակում
նայել:

—Վերջը, կտրականը այս է. Բարսեղը եկաւ ինձ մօտ, ասում
է՝ Աննային ուզումեմ, ի՞նչ ես ասում: Սիրտդ նորա վերա՞յ է թէ
չէ. դու այդ ասա՛: Հը՞, քեզ եմ ասում... Միտքդ տալի՞ս է...

Հարցը նեղն էր լծել Աննային: Նորա սիրտը թուլացել էր, նա
սաստիկ վախում էր, չը զիտէր թէ ինչ ասէ:

—Զը գիտեմ, մըմնջաց նա:

—Աղջիկ, ի՞նչ կայ որ... Քո առնը քանդուի—մէկն էլ չը կայ որ
ասէ՝ քանդածի էլ ի՞նչը քանդուի—միտքդ ո՞րտեղ է: Բաս եթէ
ես իմանայի, քեզ այսպէս կը պահէի: Ձեմ իմացել, երկինքը վկայ,
իմ մեղքս է: Թէ չէ, փառք Տէրին, ի՞նչս է պակաս. փէշերիցս
իւղ է կաթում. քեզ պէս քանի՛ խեղճեր եմ պահել, պաշտպանել:
Վարսդ կտրեմ, այս ի՞նչ օր է, այս ի՞նչ ապրուստ է, որի մէջն ես
դու: Նունն իւր շնութիւնով էլի այսպէս չէ: Տե՛ս, տե՛ս, շա՛ն քած,
այս ձմեռ ժամանակ ո՛ւր է փայտդ, ածուխդ. ո՛ւր է, ամեն բան
տեսաց, հաց չը տեսաց: Հո՞ղ էք ուտում, թէ ինչ է: Հող ուտողի
գոյնն է երեսիդ, չե՞մ տեսնում (Բաբուշկան հետզհետէ բարձրաց-
նում էր ձայնը, իսկ այստեղ կատարեալ բարկութեան հասաւ): Տե՛ս,
տե՛ս, կ'ասես հողի միջից է դուրս քաշած: Ձե՞ս ամաչում, ջահէլ
ես, քեզ չե՞ս խղճում: Ի՞նչ ասեմ քեզ, վա՛յ, ես ինչ ասեմ. սեւա-
նա՛յ քո ծնած օրը: Խե՛ղճ, խեղճ: Դեռ աղջիկ էլ ունի, աղջիկ
էգուց, միւս օրը կը մեծանայ: Քեզ նման մարդ չեմ տեսած: Իսկի
իմացե՞լ եմ...

Եւ նա ջուխտ ձեռքերը ծնկներին խփեց: «Իմացե՞լ եմ»...

Տիրեց կարճատև լռութիւն:

—Հիմա ի՞նչ ես ասում, էլի խօսեց Բաբուշկան,—Բարսեղն
ինձանով խօսք է զրկել: Տե՛ս, ասեմ քեզ: Չ'ասես թէ օտար է,
խորթ է, լեզուն խօսում է, սիրտն ո՞վ զիտէ: Ձե՛, որդի՛, այդ չ'ա-
սես. դու ինձ չես ճանաչում, աշխարհս տեսել է ինձ, ճանաչում
է. հէնց նշանածիցդ հարցրո՛ւ (նա ծիծաղեց), իմացիր թէ քանի՛
քանի՛ խեղճերի եմ՝ օգնել: Ես քեզ խղճում եմ, ախանջդ բա՛ց, լա՛ւ

լսիր, կ'ասեմ քեզ ամեն ինչ: Բարսեղի հացի քսակից աւել բանի աչք չը դնես. բերելու է կտոր կտոր հացեր, ո՛րը զեղին, ո՛րը կոշտ, ո՛րը չոր, ո՛րը փափուկ, ես ի՞նչ իմանամ, հարիւր մի տեսակ, պիտի ուտես: Է՛, մի զուրս գնա՛, տես աշխարհումս ինչե՛ր կան. միս կայ, կերակուր կայ, կաթն ու մածուն կայ, տանում են, բերում են, ուտում են, ի հարկէ, զու էլ լսած կը լինես: Դրանց համին կարօտ պիտի մնաս: Շոր, հագուստ... Այդ ի՞նչ է որ հագել ես, շո՛ր է... Կրակի վերայ գցես, կ'աչրէ՞... Ո՞րտեղից պիտի Բարսեղը չոր բերէ, ասա՛, քեզ մատա՛ղ, ո՞րտեղից. ինքն ի՞նչ է թէ իւր կնիկն ինչ լինի: Մի տարի, երկու տարի կ'անցնի, երեխերք կը ծնեն, կը շատանան, չորս կողմից կը նստեն. դէ՛, նրանց բերանը փակի՛ր, հաց տուր, չոր տուր: Այս ամենը լաւ իմացի՛ր, սրտիդ քարը վերցրո՛ւ, ինձ ասա...

Աննան տարուբերում էր. Բաբուշկան հարկադրում էր մի խօսք ասել. վերջապէս նա ամօթից փշրւելով, լացի ձայնով ասաց.

— Ես չեմ իմացել... Դու գիտես...

Պառաւն այդ խօսքերին էր սպասում:

— Դէ՛, ողորմի քո հօրը: Որ ինձ ես գցում, ես ասում եմ. հարկաւոր չէ: Թող գնաց, իւր հացը հաւաքէ: Ես քեզ կը պահեմ, լաւ կը պահեմ: Ես քեզ այնպէս պահեմ, որ ուտելիքդ իւր լինի մէկ էլ մեղր: Ուզո՞ւմ ես...

Աննան էլի լաց եղաւ:

— Քե՛զ մատաղ, Բաբուշկա՛..., ասաց նա խորտակած ձայնով, անձար աղքատի աղաչաւոր, խեղճ ձայնով: — Ես... մի թիքա հալալ չոր հաց եմ ուզում...

— Լա՛ւ, լաւ, սո՛ւս, հրամայեց պառաւը:

Եւ այդ խօսքերով, այդ իսկ հրամանով կայեց, կաշկանդեց Աննային, ինչպէս ուզում էր, կռացնում էր, շարժել էր տալիս, խօսացնում էր, լռել էր տալիս: Նա բոլորովին մօտեցաւ ջահէլ կնոջ, կախ արեց նորա վերայ իւր դէմքը և սկսեց փափսալ: Առաջին անգամ Աննան նստած տեղը չետ ու չետ էր քաշւում, հեռանում էր: Բայց պառաւի գլուխը գնում էր նորա գլխի հետ, մի մազի չափ չետ չէր մնում: Ինչպէս սարդը խրւում է իւր գոհի մէջ, կամաց կամաց, չը շտապելով, իւր զործն է կատարում, այնպէս էլ պառաւը բաց չէր թողնում Աննային, աւելի և աւելի փաթաթւում էր նորան:

Այդ բռնաձի, փաթաթածի գլուխն էր միայն ազատ մնացել, որ մի քանի անգամ բացասական պատասխանի նշան արեց, մի անգամ զրականի և վերջապէս անհասկացողութեան նշան, այս անգամ ուսերի վեր քաշելու հետ միասին:

—Այն օրն էլ քեզ ասացի... Եւ պառաւը էլի շարունակեց փրսփրսալ: Աննան երեսը դէպի պատը դարձրեց, ուզում էր առաջ մղել, գլուխը շուտ դէպի առաջ տանել. բայց ո՞ւր տանէր, պատ էր գլխի առաջ:

—Շա՛ն աղջիկ, ականջդ ծակ չ'ունի՞, խօսքս չե՞ս լսում... Ախր ասած է՝ տրեխաւոր. միւլնոյն է, կամ ձեր աչքը հանած, կամ թէ ձեր ոտի փուշը: Իսկի միտք չ'անե՞ս...

Աննան յետ դարձաւ և այս անգամ էլ ինքը փսփաց:

—Ասում եմ, միւլնոյն է, խօսեց Բաբուշկան ցած ձայնով. —Իմ ձեռքիս է, կ'ուզեմ, կ'անեմ. դուք երեսիդ վերայ փակիր, հինգ Բարսեղ բե՛ր, ճար չի լինիլ, էլի անունդ դուրս կ'ընկնի... Հիմա հասկացա՞ր, անհասկացողի աղջիկ: Թո՛ւհ...

Անհասկացողի աղջիկը մի բան ասաց: Բաբուշկան պազած տեղից կանգնեց: Վերջացել էր: Աննան էլ վեր կացաւ, նստած տեղին նայեց և թեթեւ կերպով հառաչեց: Նա կարծես թէ ազատուել էր մի ծանրութիւնից:

Պառաւը յանկարծ մի բան յիշելով, առաջ քաշեց նորան և սկսեց լաւ տնտղել նորա դէմքը, շօշափեց նորա թեւերը, կուրծքը: Նա ապրանք էր գնահատում. նորա փոքրիկ աչքերը առժամանակ անշարժացել էին, վերին շուրթը աւելի բարձրացել էր, աւելի կուչ եկել: Իսկ գնահատողը կարծես տաք ջրի մէջ էր ընկել. անհամբեր սպասում էր, անշարժ կանգնած էր, սպասում էր թէ ի՞նչ պիտի ասէ գնահատողը:

—Տե՛ս, խօսեց պառաւը բռնելով նորա աջ ձեռքը և մատները համրելով միմեանց վերայ էր դարսում. —այս մէ՛կ, այս երկու, այս երեք, այս չորս... Զո՞րս, լա՞ւ... Զորս, այս էլ հինգ... Մի կապոյտ թուղթ, նախշուն, ճոճուան... Էզուց այստեղ կը լինի:

Նա խփեց նորա գրպանին:

—Հի՛նգ, հինգ... Շա՞տ ես տեսել: Բարսեղդ հինգ տարի դռնէ դուռ ընկնէ, կը կարողանա՞ց հինգ բերել ..

Աննան, վերջապէս, ուղիղ նայեց նորա դէմքին և ժպտաց...

—Առ է՛, գոչեց Բաբուշկան և հինգ մատով ճանգ արաւ, խփեց նորա երեսին:

—Այնպէս կ'անես, ինչպէս ասացի:

—Ձէ՛, Բաբուշկա՛, այդ մէկը դժւար է. —մարդ է, քանի ժամանակ է մեր տանը կենում է, ձեռքի հացը կերել եմ, ինչպէս վեր կենամ...

—Բարսեօ՞ղը... էլ նորա երեսը չես տեսնիլ, գնա՛ց...

Արեգակը մայր էր մտել, ջրերը կանգնել էին անշարժացել, ծածկել բարակ սառուցով: Յեկն էլ սառչում էր. երեկոյեան ցուրտը զնալով սաստկանում էր: Երբ պառաւը դուրս եկաւ տանից, Սառան բախում չէր, զնացել էր հարեանի տունը:

—Լա՛ւ քնացրու, պառւիրեց պառաւը և զնաց:

ԺԱ.

Երեկոյեան ժամասացութիւնը վերջացել էր. ժամաւորները ցրուել էին և եկեղեցու բակում մնացել էին միայն մի քանի երեխաներ, մի երկու ժամկոչ: Բաց ժամից առաջ հաւաքւած աղքատներից ոչ մէկը դիտաւորութիւն չ'ունէր տեղից շարժւելու. բոլորը կանգնած էին դռների մօտ, դեռ մի քանի սպասում էին: Եւ միմեանց առաջն էին ընկնում, անդադար փոփոխում էին իրանց տեղերը, աշխատում էին որքան կարելի է լաւ, յայտնի, բաց տեղ կանգնել: Ամեն տեղ չէր լաւ. այդ պատճառով էլ նրանք հրում էին միմեանց, կոշտ ու սպառնական խօսքեր էին արտասանում, անիծում էին իրար:

Ձմեռնային երեկոն իրան յատուկ արագութեամբ վրայ էր վազում: Բարձր ցցւած զմբէթի և այդ զմբէթը շրջապատող մեծ տըների բարձր, սրածայր կտուրների վերայ արդէն խոտանում էր մութկապտազոյն սոււերը, երեկոյի մոայլը. երկինքը հեռագնա՛տ սևանում էր և դեռ արեգակի վերջին, թօյլ շողերը բոլորովին չէին խորել, անյայտացել երկնքի անհուն բարձրութեան մէջ, երբ մի քանի աստղ ճագմալով, համեստ ու վախկոտ շողշողոց տալով, դուրս լողացին մի անյայտ, անտեսանելի ովկիանոսից: Փողոցներում կատարում

էր զաւառական խուլ քաղաքի օրւայ վերջին սաստիկ շարժողութիւնը: Գնում էին, ցրւում էին, շտապում էին տները մանել, փակել, դրսում միայն ամացի, անկենդան ձմեռնային երեկոն թողնելով: Յուրաքանչեւ կտրում էր, եկեղեցու դռների մօտ սպասողների ուսերը հանգարտ դողում էին: Պարզ և տաք օրը զեղեցիկ արեգակից յետոյ փոխւել էր, իւր վախճանին մօտեցած՝ տարածել էր աշխարհի վերայ սարսափելի խոնաւ ցրտութիւն: Այդպիսի ժամանակն է, ինչպէս ժողովուրդն է ասում, անզղի ձուն բոցի մէջ սառչում, ճաքում:

Աղքատները, վերջապէս, տեսան իրանց սպասածին: Եկեղեցու դռնից դուրս եկաւ մի կոլոր, փոքրիկ և չաղ մարդ, որին հեռւում էր հասակն առած մի կին: Աղքատներից մի քանիսը գտականքը վերցրին, բոլորը, որքան կարելի էր, խղճալի ձայն հանեցին և ձեռքները բարձրացրին:

Այդ մարդն ու կնիկը քաղաքի «իշխան» մարդիկներից էին, նոր էին օտարութիւնից եկել: Առաջին անգամն էր, որ նրանք եկեղեցի էին եկել, և ժամաւորների ցրելուց յետոյ էլ մնացել էին եկեղեցում, համբուրել բոլոր սրբութիւնները, մեծ մեծ մոմեր վառել և ապա երկար հարց ու փորձ էին անում եկեղեցու զրութեան մասին, իմանում էին թէ ինչպէս է եկեղեցին կառավարւում, ո՞վ է բռնել իրանց երկար բացակայութեան ժամանակ մեռած քահանաների տեղը: Նրանց եկեղեցի դալը մի մեծ երեւոյթ էր համարւում. ժամկոչներն ու աղքատները շարունակ դրանց մասին էին խօսում և քաղցրութեամբ, յարգանքով էին յիշում «պարոնի ու աղջիկ-պարոնի» անունները:—Ե՛, դրանց ժամանակները, այն ժամանակները, երբ ոսկին չէին համրում, այլ չափում էին... Ինչե՛ր էին անում դրանք. օր չէր անցնում, որ մարդ, օտար մարդ, չը մոնէր դրանց դռով, չը նստէր, հաց չ'ուտէր... ժամ-պատարագ, խնձոյք, տարւայ մեծ մասը խմբերով էին բարեկամ ու անծանօթ գնում դրանց տունը: Ե՛հ, հիմա չը կայ, մարդ չի մնացել, փշաղաւ քաղաքը. այդպիսի մարդիկ հիմա օտար տեղ են ապրում... Ասում էին թէ աղան հիմա լաւ է և ամենքը կրկնում էին. «Աստուած տայ, Աստուած տայ, որ էլի առաջւանջ լինեն»:

«Պարոնն ու աղջիկ-պարոնը» մուշտակների մէջ պինդ փաթաթւած անցնում էին: Մի քահանայ գնում էր նրանց ետևից, աշխա-

տելով իւր զէմքի վերայ պահել, որքան կարելի է, շատ յարգանք, շատ համեստութիւն:

—Աղա՛, ողորմութիւն, գոչեցին ամենքը:

Աղան ձեռքը տարաւ գրպանը, փող տւեց առաջ աղքատ կնիկներին ու աղջիկներին, ապա տղամարդիկներին: Մի ընկերացի հորան շրջապատեցին թշուառները, աղաղակ աղաղակի խառնեցին, ձեռքեր ձեռքերի: Տիկինն էլ մի քանի փող բաժանեց իրանից:

—Վերջինն է, էլ փող չը կայ մօտներս, ասաց աղան իւր կնոջից մի բան հարցնելով և մի հատ երեք կոպէկանոց դրամ թողնելով Բարսեղի ձեռքում:

Ձը ստացողներ դեռ մի քանիսը կային, որոնք սկսեցին յուսահատ աղաղակներով ողորմութիւն խնդրել: Բայց ոչինչ չը կար. աղան ու տիկինը մի կերպ ամաչած՝ դուռները քաղցրութեամբ շարժեցին դէպի աղքատները, որպէս թէ օմնացէք բարով: Էին ասում:

Մթնել էր. Բարսեղը գնում էր դժգոհ: Այդքան ուշացաւ, օրը մթնացրեց և ինչի՞ համար: Մի այնպիսի բան չը ստացաւ, որ իւր ցաւին դարման անէ: Իսկ ցաւ քիչ չ'ունէր: Չէ՞ որ գործը վերջացած էր, պրծած. չէ՞ որ հարկաւոր էր, վերջապէս, մի բան տունել, գոնէ մի մատանի: Ահարոնն էլի էգուցւան էր գցում, «չը կայ» էր ասում: Ամբողջ օրը մինչև իրիկուն Բարսեղն այդ մասին էր մտածում, և սպասում էր որ գոնէ այստեղից մի բան կը ստանայ, աղքատի ստացածից քիչ աւել: «Ե՛հ...» մրմնջաց նա և իւր մահակները սկսեց բանացնել:

Մեծ մեծ տներով փակւած, սեղմւած փողոցից դուրս եկաւ, մոտաւ լացն հրապարակը: Գլուխը բարձրացնելուն պէս՝ առաջին բանը, որ ընկաւ նորա աչքին, մեծ, փառաւոր Լոյս-Աստղն էր, որ բազմած էր արեւմուտքում, երկնքի այն ծալքին, ուր արեգակն էր մայր մտել: Նա շողշողում էր, լոյս էր տալիս իբրև վառած խարոյկ և այնչափ գեղեցիկ էր, որ Բարսեղը խնդն մոռացաւ իւր միտքը... էլի եկաւ յոյսը, նա թեթեւացաւ, ժպտաց և երեսը շտապով խաշակեց: Ու գնաց դէպի արեւմուտք, դէպի այդ խնկ աստղը:

—Փա՛ռք Քեզ, Աստուած, փառքդ շատ, հաւաչեց նա կանդնելով պառաւ Բաբուշկայի դրան առաջ և երկու անգամ զարկեց մըլըրձը:

Դուրս եկաւ ինքը, պառաւը:

—Հը', Բաբուշկա', ի՞նչ կայ. տղա՞յ ես թէ աղջիկ:

—Բարսեղ, դո՞ւ ես. ե՛կ, ե՛կ, ցուրտ է:

—Գալու ժամանակ չէ. խօսք ասա՛, խօսք լսենք:

—Ե՛կ, ե՛կ, ցուրտ է:

—Հիմա ասա՛ տեսնեմ, շարունակեց Բարսեղը, սենեակի շէմքում կանգնելով:

—Ներս մտի՛ր, լա՛ւ, հօ՛շատ չես վռազ:

—Ձէ՛, գնում եմ, ասա՛. այսօր ի՞նչ դառաւ:

—Ախր ո՞ւր ես գնում, հարցրեց պառաւը, փոքրիկ լամպան ձեռքին բռնած մօտենալով աղքատին:—Ո՛ւր ես գնում, խեղճ: Գընացի էլ, տեսայ էլ... Այս իրիկուն տանը չի լինելու, գնում է, չը գիտեմ թէ ուր...

Պառաւը էլի ձախ աչքը խորհրդաւոր կերպով փակեց, գլուխը շարժեց:

—Բօ՛, բօ՛, ասաց Բարսեղը և պատը բռնեց:—Ճշմարիտն ես ասում:

—Կապո՛յտը վկայ:

Բարսեղը, ինչպէս ասում են, իւր ներսը քաշւեց:

—Փա՛ռք Աստուծու, ասաց նա շուտով, չ'ուզենալով որ Բաբուշկան իւր շիթթուծիւնը նկատէ.—փա՛ռք Աստուծու... Եւ նա ուղղւեց, հազաց:—Լա՛ւ դառաւ, որ իմացայ... Քո հօրն ողորմի, Բաբուշկա': Ախր ես ասում էի... Ե՛, խեղճ Բարսեղ, որ չ'իմանայ: Մեռնելու օրս չեմ իմանում միայն, Բաբուշկա՛. այսինքն... ուրեմն այն աղլուխը....

Նա մատը դրեց ճակատին, երկու անգամ թեթեւ խփեց այդ տեղին: Նա հպարտ էր, նա պարծենում էր:

—Հոգե՛մ դրանց գլուխը, խօսեց Բաբուշկան.—դրանց ցեղից լաւը լինո՞ւմ է: Աշխարհս էլ իմ ու քո տեսածը չէ, Բարսեղ, փոխւել է: Ե՛, եթէ իմանայիր. դեռ ի՞նչ գիտես դու... Եթէ իմանայիր թէ այս աչքերս ինչե՛ր են տեսնում, այս ականջներս ինչե՛ր են լսում: Երէկ գիշեր եկան, ինձ կանչեցին, տարան. ո՞ւր, ի՞նչ կար: Ասե՛մ, ի՞նչ անեմ. գլխիս մատաղ գնան դրանք: Երեխայ է ծնել, ասում են, դեռ աղջիկ, հօր տանը նստած, ծնել է: Վեր առանք, կորց-

բինք... Վա՛յ ինձ, հոգուս էլ մեղք է. բայց ես ի՛նչ անեմ:
— Դրանց, դրանց... նոր չեմ ճանաչում, նոր: Դէ՛, ինձ մի տեղ
տուր, Բարուշկա՛:

Շատ չ'անցած, Բարսեղը մենակ նստած էր պառաւի թոնրա-
տանը, որ առանձին շինւած էր բակի մի ծայրում: Նորա առջև
վառւած էր փոքրիկ ճրագը և մի քանի կրակ կտրած ածուխները
մի կերպ տաքացնում էին նորա կոշտ մատները, որոնք բոլորովին ի-
ջեւ էին, քիչ էր մնում որ կպչէին 'այդ ողորմելի կրակին, ուզում
էին միանգամից բռնել:

Աղքատը նայեց իւր չորս կողմը: Մերկ տունը մնալ էր, ան-
կենդան: Շոր ու փալասի կտոր չէր երևում. ամեն ինչ ցոյց էր տա-
լիս մի սարսափելի մենակութիւն, ցրտութիւն: Բայց Բարսեղը չէր
զգում, զոնէ առաջին անգամից, մենակութիւն, ցուրտ: Նա դեռ իւր
նոր մոքի հետ էր զբաղւած. դեռ կշռում էր և զարմանում թէ
ինչպէս ինքը ճանաչում էր, հաւատ չէր ընծայում այն խոնարհ ու
հեզ դէմքին: Նա մինչև անգամ սկսեց իւր քթի տակ շունչը խա-
ղացնել մի հին թրքական երգի եղանակով. և այդ ժամանակ շատ
կ'ուզէր, որ Աննան այդ թոնրատան մի ճեղքով նայէր իրան, տեսնէր
և ճաքւէր: Կը ճաքւէր անպատճառ. թող հիմա դնա՛, թող տես-
նէ, մեռնի: Նորա մտքովն անցնում էին այն բոլոր երեկոները, որ
նա նրանց տանն էր անցկացրել: Հիմա այդ երեկոները էլ չի տեսնիլ,
կը մնայ կարօտ: Թո՛ղ, շատ լաւ է, այնքան կարօտ մնայ, որ հոգին
դուրս գայ:

— Նա Բարսեղն եմ, ասաց նա և նայեց իրան:

Ու լռեց, մատներն էր տաքացնում: Մի քանի հատ ածուխ էլ
զրեց կրակի վերայ և փչեց, վառեց այդ ածուխներն էլ:

Բայց ցուրտը սաստիկ էր. զանդադ անցնում էին ըոպէները, նա
զգում էր որ մըսում է. և աչք ածեց իւր չորս կողմը, բարակ պա-
տերին նայեց և տեսաւ, որ ոչ մի կրակ այստեղ օգնութիւն անող
չէ, այնքան շատ էին ծակերը, ճեղքերը, այնքան անբնակ տեղ էր.
մարդու շունչ դեռ ևս չէր տաքացրել այդ տեղը: Մութ անկիւնից
մի մուկ դուրս վազեց, առաջ եկաւ, դէս ու դէն ընկաւ, քարշ տա-
լով իւր երկար պոչը, և ապա կրկին վազեց գնաց իւր անկիւնը,
ծածկեց հին, անօգուտ մաղի ետևը. այդտեղ նա կռիւ սկսեց մի

ուրիշ մկան հետ. այդ իմացւում էր նրանց անախորժ, բարակ ծը-
ծըւոցներին:

Բարսեղը զայրացաւ, շրթունքները կծեց. մի երկու սարսափելի
հայհոյանք արտասանեց, այնպիսի հայհոյանք, որ երբեք նորա բե-
րանից դուրս չէր եկած: Հայհոյում էր Աննային:

—Է՛հ, սա է վերջդ, ասաց նա.—ապրի՛ր շան պէս, մենակ
մեռի՛ր, հարցնողն ո՞վ է, փախի՛ր, կորի՛ր, զնա՛: Փառքդ շատ, Աս-
տուած. երևի անարժան էի, երևի ճակատիս այս ես գրել...

Մկներն էլի սկսեցին ծւծւալ, միմեանց հետ կուլել. հին մա-
ղը նրանց շարժողութիւնից կողքի վրայ ծուեց: Բարսեղը մնացել
էր սառած. այդ փոքրիկ ու վախկոտ կենդանիները գրաւել էին նո-
րա ուշքը: Կուլում են, միմեանց քաշքաշում են:—Ի՞նչ էք կոտոր-
ւում, անխճաճներ, ի՞նչ է եկել ձեզ, որ այդպէս վախեցնում էք մար-
դուն: Է՛հ, նրանք իսկի չը գիտեն էլ որ մարդուն վախեցնում են, մե-
նակ մարդուն. ո՞վ է հասկանում նրանց. դուցէ չեն կուլում, դու-
ցէ խաղում են, այդպէս են ուրախանում: Նրանց համար էլ կայ ու-
րախութիւն, Աստուծու ստեղծածներն են. մենակ չեն...

—Փշանա՛ ազգդ, կնի՛կ, բարձրացրեց նա իւր ձայնը.—եթէ
սատանան քո մազերից կախ ընկած չը լինէր, այդքան քաղցր չէիր
լինիլ: Կախ ընկած է, չի հեռանում, որ այդպէս ես: Ա՛յ ես քո...
ի՞նչ ասեմ: Ափսո՛ս, ափսոս Աննա, որ այդպէս դառաւ:

Նա զարձեալ գլուխը իջեցրեց կրծքի վերայ: Ածուխի ծանր
հոտը բարձրանում էր, խփում նորա գլխին. ճակատը սկսել էր ցա-
ւել. աչքերը աւելի և աւելի ծանր էին շարժւում:

—Նորերս մնացին անզգամի մօտ, ի՞նչ անեմ: Գնամ ստան...

Նա սաստիկ յօրանջեց:

—Գնամ, ե՞ս նորա ոտը գնամ. թող կորչեն շորերս Զէ՛, թող
ինքը գայ, ոտս համբուրէ, որ գնամ...

Ածուխի կապոյտ բոցը նորա մարմնի մէջ մի շատ անախորժ
դողոց էր տարածում: Նաո յօրանջելուց աչքերը ջրով լցւել են,
թրջւել. բայց թէև ջուրն այդքան առատ է, աչքերը դժւարու-
թեամբ են շարժւում, ցաւացնում են: Գլուխը տրաքւում է, իսկ
մէջքը չէ տաքանում, կարծես մէջքին ձիւն են մաղում:

Նա զգւում էր իրանից:

Այդ իսկ միջոցին Աննան նստած էր իւր տանը: Նա, կարծես, նոր էր այդ տունը մտել, նոր էր սկսել այդտեղ բնակւել. շուտ շուտ նայում էր չորս կողմը, նայում էր և աղքատիկ, ողորմելի տունը, կարծես, իւր բոլոր ծանրութեամբ ընկնում էր նորա ուսերին, ճընշում էր, յուսահատեցնում: Նա արդէն վերցրել, դէն էր գցել դրան ճակատից կախ արած արխալուղը, թէև ցուրտը գալիս էր լայն ձեղքով, բայց նա ասում էր որ այդպէս է լաւ: Տեսնում էր իւր հագուստը... Փշրում էր ցիւի չորացած կոորները, թափ էր տալիս մաքրում: Արխալուղի ճղած տեղերը ասղով կարել էր, իսկ այնպիսի ճղածները, որ առանց կարկատանի չէր կարելի ծածկել, ձեռքով դրստում էր, կոկում, որ գոնէ այնքան տգեղ չը լինի: Փէշի վերայ մի ճարպակին բիծ կար, ով գիտէ ո՛ր ժամանակից մնացած: Այժմ՝ այդ բիծը չարչարում, տանջում էր նորան. ինչի կպչում էր, ինչի վերայ մտածում էր, չէր կարողանում մոռանալ. և երկար աշխատեց այդ բծի վերայ, մի քանի անգամ եղունգով քերեց, թքեց վրան, տրորեց, մինչև անգամ լիզեց... բան չը դառաւ, նա դառնացած սրտով փէշը ծալեց, դրեց ծնկան տակ... Այդպէս չեն տեսնիլ:

Նա կ'ուզէր, որ մի ինչ որ կարճ ժամանակ անցած լինէր: Որքա՛ն ժամանակ.— մի օր, մի շաբաթ, մի ամիս, թէ մի քանի ժամ... ինքն էլ չը գիտէր. մի ժամանակ էր հարկաւոր նորան, բայց կարճ ժամանակ— երկարին նա չի դիմանալ— և յետոյ ի՞նչ կը լինէր: Այն, որ այլ ևս տունը այնքան չէր ցածրանալ, չէր ընկնիլ նորա ուսերի վերայ. այն, որ իրան էլ մարդ կ'ասեն:

— Նանի՛կ, Բարսեղը չ'եկաւ, ասաց Սառան նորա վզին փաթաթւելով:

— Ուշ պիտի գայ, ուրիշ տեղ է գնացել, քնի՛ր. ընկի՛ր, քնի՛ր:

— Աէ, նանի՛կ, քունս չի տանում. քեզ հետ կը նստեմ, չեմ քնիլ, կը սպասեմ, հա՛:

Փոքրիկը իւր զւարճութեան մասին էր խօսում. նա այնպէս ծիծաղկոտ էր, այնպէս աշխոյժ, որ կարծում էր թէ մայրն էլ պիտի զւարճանայ: Բայց մայրը բարկացաւ:

— Հոգե՛մ զլուխդ, շատ մի՛ հաչիր, քնի՛ր:

Սառան թէև հեռացաւ մօրից, բայց չէր ուզում քնել, այդ:

ճիշդ է: Նա ուսուստում էր, խօսում էր ինքն իւր հետ, երգում էր այդ օրը սովորած իւր մի խաղը:

Երեխայի կեանքում լինում են այդպիսի անհասկանալի ժամեր: Նա այժմ քնած պիտի լինէր, նորա սովորութիւնն այդպէս էր. քաղցած էլ լինէր, յայտնի ժամը չէր անցկացնիլ, չէր ղիմանալ: Իսկ այս երեկոյ ներհակի պէս քունը փախցրել էր, աւելի աշխոյժ, եռանդ էր ստացել: Ասացի ներհակի պէս, որովհետեւ այդ մանկական ոգևորութիւնը բոլորովին հակառակ էր մօր մաքին ու կամքին, հակառակ էր նորա տրամադրութեանը, զայրացնում էր նորան: Նա շարունակ հրամայում էր քնել, անիծում էր, հահոցում. բայց փոքրիկը աւելի սիրտ էր առնում այդ բարկութիւնից, ուղղակի հակառակել էր ուզում և խիստ պատասխաններ էր տալիս. «չեմ քնում, դէ՛, չեմ քնում»:

Իսկ գիշերն անցնում էր և մայրը աւելի և աւելի զայրանում...

Վերջապէս նա համբերութիւնից դուրս եկաւ, տեղից վեր կացաւ: Սառան հասկացաւ: Եւ մինչև մօր մօտենալը, սկսեց բղաւել, լաց լինել:

—Շան աղջիկ, գոչեց մայրը հերսոտեաժ, շրթունքները կծած և սկսեց ծեծել: Վերցրեց նորան, բերաւ, շարտեց, անկողինը գցեց:

Երեխան մոռացաւ իւր վիրաւորած ինքնասիրութիւնը և այժմ թէ գոռում էր, այդ խիստ պատժի դէմ, ցաւի դէմ էր գոռում: Այժմ նորա ձայնի մէջ չը կար յանդգնութիւն, չէր երևում հակառակելու, բարկացնելու ցանկութիւն: Նորա լացը աղաչաւոր էր, զթութիւն ինդրող:

—Դէ՛, սո՛ւս, սո՛ւս... թէ չէ... տե՛ս, խեղդեցի... տե՛ս, ասում էր մայրը խորհրդաւոր ցած ձայնով:

Նա խեղդեց իւր լացը, բերանը դրեց բարձի վերայ. նորա մարմինն սկսեց ցնցւել խուլ հեկեկանքներից:

Մայրը նորա շորերը հանեց, ինքն էլ այնպէս հագնւած պառկեց նորա կողքով և ճրագը փչեց:

Բոպէ չ'անցած, անհանգիստ քունը գրկեց երեխային: Քնի մէջ էլ նա երբեմն հեկեկում էր, ծանր շունչ քաշում:

Անցաւ մի ժամ: Խաւարը, հանդարտութիւնը, տաքացած երեխան մօր վերայ մի քաղցր թմրութիւն բերին: Բայց նա ընդդի-

մանուկ էր այդ թմրութեանը, արթուն մնալ էր ուզում, զլուխը չէր ծածկում վերմակի տակ, մի ձայնի էր ականջ դնում: Երկար սպասեց և յոգնած զլուխը դրեց երեխայի գլխի մօտ: Այդ ժամանակ միայն նա փօշմանեց իւր խստութեան համար և նորա սիրտը դարձեալ ընդունեց իւր մէջ այդ փոքրիկ, թոյլ արարածի ամբողջ գոյութիւնը:

Յանկարծ մի թեթև թրխկոցի ձայն եկաւ: Այդ ձայնը սուր ասղի պէս վազեց Աննայի բոլոր մարմնի վերայ և սկսեց ծակոտել: Բայց նա չը շարժւեց: Այդ տաքութիւնը, այդ հանգիստ թմրութիւնը այնպէ՛ս ակորժելի է, այնքան լա՛ւ... Երեխայի շնչառութիւնը այժմ կանոնաւոր է, նա այժմ քնի մէջն է. աշխարհի մէջ չը կայ աւելի խոր, հանգիստ և անոյշ քուն...

Է՛հ, ի՞նչ կայ, ի՞նչ են լսել, չեն թողնում որ քնէ, հանգստանայ: Ո՛ւր է գնում, լա՛ւ է որ գնում է թէ ոչ: Ի՞նչ իմանայ, ի՞նչ պէս հասկանայ: Մի կարճ ժամանակ է հարկաւոր. եթէ այդ ժամանակն անցած լինէր, պրծած, թող այնուհետև թրխկացնէին, որքան ուզում են: Նորա սրտի մէջ մի շատ թեթև, հաղիւ զգալի դողոց է զոյացել. ա՛խ, եթէ կարելի լինէր չը շարժւել, եթէ այդ թրխկոցը մէկ էլ չը կրկնէր...

Բայց թրխկոցը կրկնեց: Աննան տհաճութեամբ շարժւեց, զգուշութեամբ ծանր վերկացաւ, յետ գցեց վերմակը, պինդ ծածկեց երեխային, ձեռքը նորա թշին քսեց: Նա վախում էր, նորա ծնկները դողդողում էին. կարծեց թէ Բարսեղը քնած է իւր տեղը: Բայց մէկ էլ իմացաւ, որ նա այդ երեկոյ չի եկել. եթէ եկած լինէր, ի՞նչպէս կը գնար ինքը...

Ու նա վեր կացաւ՝ գնաց, դուռը բացեց:

Եթէ Սառայի քունը մանկական չը լինէր, եթէ նա կարող լինէր զարթնել չրխկոցից, ի՞նչպէս պիտի գոռար, երբ Աննան դրսից դուռը կողպում էր...

ԺԲ.

Ու գնաց Աննան, գտաւ իւր ճանապարհը...

Մի դիշեր էր նա անցկացրել այդ ճանապարհի վերայ: Նա էլի նստած է իւր տանը: Լաացել, կոկել է դէմքը, այժմ նայում է

բարձրից, այժմ հասկացած մարդ է, այլ ևս անդէտ չէ, ինքն իրան գտել է: Արդէն երևում է փոքրիկ, անուշահոտ սապոնը, որ զրած է նորա կիսափուլ խրճիթի զրան մօտ: Այդ սապոնով լւացւել է, երեսը լաւ սրբել է և այժմ մի բանի պակասութիւն է զգում: Հարկաւոր է մի հայելի, որի մէջ նա պիտի տեսնէ իրան, զրստէ: Այդպէս են պահանջում, կարգն այդպէս է. եթէ չ'անէ, ո՛րք զնայ. բոլորովին անկարելի է առանց զորան:

Նա մի անգամ էլ ձեռքը տարաւ զրպանը, մի անգամ էլ հանեց թղթի մի ծրար: Գողցողուն ձեռքերով բաց արեց ծրարը, հանեց նորա մէջ դարսած թղթադրամները:

Ասպոյտ թուղթ էր ասել Բաբուշկան, հնգանոց: Բայց նորա ձեռքում այժմ մի հատ կապոյտի տեղ կային հինգ դեղնագոյն մանկածնոցներ և դեռ պարզեւ էր ստացել այն սապոնը: Նա անշնորհք կերպով, կոշտ ու կոպիտ շուռ տւեց այդ թղթերը մէկը միւսի ետեւից, մէկ էլ համրեց և դրեց ծնկան վերայ:

Նորան ուշադրութեամբ նայում էր Սառան, բայց ծպտուն հանել չէր համարձակում: Նախընթաց երեկոյի ծեծը չէր նորան այդպէս կապել. ո՛չ, նա վաղուց էր մոռացել այդ դէպքը: Այժմ բոլորովին օտարոտի, չը տեսնւած բանն է գործում. նա նայում է մօրը և մի բան, որ ոչ վախ է և ոչ ամօթ, այլ մի անհասկանալի սառնութիւն, հարկադրում է հեռուից նայել, չը խառնւել, չը խանդարել: Այդպէս է հրամայում մօր դէմքը:

Մտիկ է տալիս Աննան իւր թղթադրամներին, զողալով շուռ է տալիս նրանց, տնտղում է գիրն ու գոյնը: Եւ չը գիտէ թէ ի՞նչ անէ այդ փողերը. չը գիտէ, չի կարողանում գտնել տեղը, ուր պիտի նրանք մտնեն. հոգան ու կարիքը տւել են նորա դէմքին լրջութիւն, սաստիկ զբաղւածի արտայայտութիւն: Այդ փոքրիկ տան մէջ մի օրում, միայն մի օրում, քանի՜ քանի՜ պակասութիւններ էին ծնւել, խմբւել: Առանց չափի ու կանոնի դարսած պատը իւր բազմաթիւ ծակերով և մանր-մունր խորշերով հարիւրաւոր մաքեր է դնում նորա գլխում: Եւ մի՞թէ միայն պատն է այդպէս: Յատակը, առաստաղը, դուռը, ամեն, ամեն բան կարգին չէ: Անթիւ պակասութիւններ է ստացել այդ տունը մի օրուայ ընթացքում: Ի՞նչպէս շուտ է հասնում նա իւր քայքայման. Աննան չի տեսել, չի նկատել մինչև

այդ օրը և այժմ զարմացած է, այժմ չի հասկանում թէ ո՞րտեղից այդ բոլոր պակասութիւնները եկան:

Իրիկնապահին նոր կօշիկներ բերին նորա համար, թղթադրամների մեծ մասը գնաց:

Անցաւ երեք թէ չորս օր: Գիշերները նա կատարում էր իւր ճանապարհորդութիւնը. ցերեկով մի երկու յանկարծակի դէպք պատահեց, երբ անհրաժեշտ էր Սաւային տանից դուրս անել: Փոքրիկ աղջիկը, ինչպէս միշտ, կատարում էր մօր հրամանը, գնում էր հարեանների տունը, կամ ուրիշ տեղ, մի խօսքով, հեռանում էր, զարմացած անծանօթ մարդկանց վերայ, որոնք գալիս էին ու գնում:

Վերջապէս Աննան հասկացաւ թէ ո՞րտեղից պէտք էր սկսել, հասկացաւ իւր ամենամեծ պակասութիւնը: Դա իւր հագուստն էր: Նա տեսնում էր, որ փողը չի դալիս առանց այդ հագուստի: Նորան առնում էին և բաւական չէր որ նա իրան ծախում էր, դեռ պահանջում էին, որ նա ծախելի վայելուչ զիրքի մէջ, լաւ, սիրուն շորերով: Ճարպալին բիծը, որ նորա փէշի վերայ էր պնդացած, կարկատանները, որ չը նայած նորա ձեռքերի անընդհատ շփումներին՝ կարկատան էին մնում, տանջում, ամաչեցնում էին նորան: Նա կարմրում էր, տրաքւելու աստիճանին հասնում, երբ նորա երեսին էին բռնում այդ կեղտոտութիւնը, այդ ցնցոտիները. կալին աջնալիսները, որոնք երես էին դարձնում նորանից հէնց դրանց պատճառով:

Եւ զուգուել, զարդարւել սկսեց Աննան: Ինչ որ աշխատել էր, տւեց շորեր կարելու, պարտք էլ մնաց: Բայց նորան հաւատում էին, նորան ցոյց էին տալիս կարգն ու կանոնը: Ասում էին՝ այսպէս է հարկաւոր, անել էին տալիս և, շատ անգամ, չը սպասելով նորա յօժարութեանը, բերում էին, տալիս այն, ինչ որ զուցէ ինքը չէր էլ ուզում: Պարապ մարդիկ, որոնք համաձայն են ամենաչնչին աշխատանք իսկ ստանալ, այդպիսի տեղերումն են «վաճառականութիւն» անում: — Մէկին հինգ, մէկին տասն աւելացնելով, ծախում են, աշխատում: Աննան չը գիտէր թէ ինչպէս են մանէթները գալիս, ինչպէս են գնում: Եկածը ձեռքից առնում էին, եկածը թռչում, հալւում էր և նա հաշիւ պահել չէր էլ մտածում: Ձէր էլ կարող մտածել. հաշիւ պահողը պահանջել պիտի կարողանայ. իսկ նա ի՞նչպէս պահանջէր. ո՞վ կը ճանաչէր նորա իրաւունքը, ո՞վ ականջ կը դնէր

նորան, ինչպէս ականջ են դնում մարդուն: Ինչ որ ցնում էր յափըշտակութիւնից, այն էր նորանը: Մնացել էր մի ձեռք նոր հագուստ և մի օղլուխ Սառայի համար:

Նա հագաւ այդ զգեստը: Մի նոր շիշխան չէթի վերնազգեստ էր, նոր ձևի կօշիկներ և մի զօլաւոր շալ գլխին գցելու համար: Նա ման էր գալիս, դրստում էր շորերի ծալքերը, դէպի յետ էր նայում և քէֆը գալիս էր իրանից: Կուտ շուտ դնում էր իւր մի նոր ընկերուհու տունը, ուր հայելի կար. նայում էր հայելու մէջ, դրստում էր ճակատի վերայ հաւաքած մազերը, մատը տանում էր յօնքերի վրայով, կամաց կամաց շոկում էր, կարգի դնում նրանց մազերը. և երբեմն տեսնելով թշի վերայ մի որ և է փոքրիկ բիծ, զգուշութեամբ մատի ծայրը թացացնում էր լեզուի ծայրին դիպցնելով և խնամքով անհետացնում էր անախորժ բիծը:

Այդպիսով Աննան աւելի ևս գեղեցկացաւ. նորա դէմքն այժմ ապիտակ էր, թեթեւ կարմրութիւնը հրապոյր էր տալիս թշերին, շրթունքները խոտակ, աչքերը աւելի ևս փայլ էին ստացել: Սուտ չեն ասել՝ թէ մարդի կերածից ու խմածից է աչքի լոյսը գոյանում: Նա այժմ լաւ ուտում էր. իրիկուն, առաւօտ թէյ էր խմում այդ ընկերուհու տանը, որովհետեւ ինքը դեռ հեշտաեռ չ'ունէր:

Մի անգամ նորան հայելու առաջ կանգնած տեսաւ Բաբուշխան, որ եկել էր նորա ընկերուհուն մի հրաման տալու: Պառաւր մօտեցաւ Աննային և հինգ մատը չռած նորա երեսին խփեց ու ասաց.

—Առ է, հաց ուզողի կին էր դառնում: Հիմա ինչպէս է:

Աննան չը պատասխանեց, այլ յետ դարձաւ և Բաբուշխայի ծոռփն ընկաւ, թեւերը նորա ուսերով տարաւ, մէջքը գրկեց և ինքը սեղմեց նորա կրծքին:

—Մի, Բաբուշկա՛, ասում էր նա հանդարտ, խոնարհ ձայնով և գլուխը շարժում՝ նորա կրծքի վերայ:

—Դէ՛ լաւ է, լաւ, բաւական է, ասաց վերջապէս պառաւր ծիծաղելով:

Բայց նա պոկ չէր գալիս. կպել էր այդպէս և պառաւին դէս ու դէն էր տանում, շարժում և կրկնում փաղաքշական ձայնով. «Բաբուշկա՛, Բաբուշկա...ջան...»

—Բերանը ծուռ, մէջքը կոտրած Բարսեղին էր գնում. լաւաշի կոտորները կը բերէր, կը թափէր...

—Է՛հ՛է՛... երկար, բայց ոչ բարկացած բացականչութեամբ ընդհատեց Աննան այդ յիշողութիւնը և գլուխն աւելի խոր թաղեց պառաւի ծոցում:

Բայց այդ փաղաքշանքն էլ բարկացրեց Բաբուշկային:

—Դէ՛, ասացինք լա՛ւ է, անգգամ, բա՛ց թող:

Խիստ, հրամայական էր այդ ձայնը: Աննան իսկոյն հեռացաւ, փօշմանած նստեց մի ինչ որ կոտրած աթոռի վերայ և իւր խոնարհ հայեացքը տանում էր Բաբուշկայի ետեւից, ուր որ շարժւում էր սա:

Այդպէս էին անցնում օրերը: Աննան չը գիտէր թէ ինչպէս էր մթնացնում, լուսացնում այդ օրերը: Կարճ ժամանակին, որը նորան այնքան հարկաւոր էր, առաջին օրերը խիստ անհամբեր էր սպասում. բայց հետզհետէ ժամանակը դադարեց նորա համար կարճ կամ երկար լինելուց: Նա համարեա բոլորովին կտրել էր իւր յարաբերութիւնները հարեանների հետ. յաճախ տեսնւում էր իւր նման մի քանիաների հետ. խօսում էին, և նա սովորում էր իւր դրութեան նպաստաւոր շատ և շատ բաներ: Սրէցօր նորա հագուստի վերայ մի բան էր աւելանում. և որքան աւելի շատ էին այդպիսի բաներ, այնքան նա շատ էր կտրւում պարզ ու լոյս աշխարհից: Ակզբում նա ինքն էլ շատ զարմանում էր որ այդ այդպէս է: Այն, ինչ որ նա նոր էր սկսել այդպէս ջերմ կերպով սիրել, այդ հագուստը, որին այնքան նայում էր և չէր կշտանում, որի համար նոր նոր սովորացնում էին նորան շարժողութիւններ, գլուխ թեքելու, հայեացք նետելու կերպերը, այդ իսկ հագուստը նորա ճակատին էր կպցրել օրհասական վճիռը: Աննան լաւ էր, դրացի էր այն ժամանակ, երբ անճոռնի ցնցոտիներով էր պատած, երբ ապրում էր կեղտոտ և շնորհքով երկու խօսք ասել չը գիտէր, երբ գնում էր ուրիշներին մի բուռն ածուխ փոխ առնում: Այն ժամանակ նա մարդ էր, մարդի աղջիկ էր: Այժմ ապրում է լաւ, ունի մաքուր շորեր, ունի գեղեցկացրած դէմք և ոչ ոքի դուռը չէր գնում փոխ ուղեւոր: Բայց այժմ ի՞նչ էր:—Հանդիպում էր հարեանի կնիկը, յօնքերը կիտում էր, մթնում և մի խօսք անգամ չ'ասելով երեսը շուռ էր տալիս, քթի տակ բարկացած փնթփնթալով ճանապարհն էր

փոխում, ուրիշ տեղով գնում: Տեսնում էր հարեանի մարդը, մի ծանրը և ատելի հայեացք էր ուղղում նորա ետևից և ապա երեսը հակառակ կողմն էր դարձնում և բարկացած ասում.

—Թի՛ւհ, քո ծիծը... Շան երես տեսանք...

Զարմանում էր Աննան այդ ամենի վերայ. բայց զարմանում էր սկզբում. քիչ քիչ սովորեց, քիչ քիչ ինքն էլ սկսեց ծռել ճանապարհը, լսել ամեն խօսք, լսել և ասել թէ չի լսում: Նա լաւացրել էր իւր ապրուստը, այդ գիտէր ինքը միայն, և այդ ապրուստը խփեց նորան, սաստիկ զարկով ուղղեց նորան դէպի այն խոր, մթին, մարդկանց զգւանքի տակ անյայտացած աշխարհը, ուր չէին խօսում, ուր կիրքը ստեղծել է բոլորովին ուրիշ պահանջներ, ուր էգերը թողեցին առ ու ծախի են ենթարկւած և անում են, կատարում են այն, ինչ որ պահանջում է արուի կամքը, կեղտոտ, բռնակալ կամքը:

Աննան աւելի և աւելի խոր էր խրում այդ իսկ աշխարհի մէջ:

ԺԳ.

Երեկոյ է: Մի հասարակ լամպա, որ այնքան մեծ չէր, բայց շատ կեղտոտ և իւզոտ, պատուհանում դրած՝ իսկապէս իւր պաշտօնը չէր կատարում, այլ շարժարւում էր: Նա ծխոտում էր իւր վերայ դրած ապակին և նորա արնագոյն բոցը հազիւ անցնելով այդ տեղ տեղ կարմրած, տեղ տեղ սևացած ապակու միջով, մի տխուր, քնացնող լոյս էր տալիս նեղլիկ ու երկար սենեակի չորս տկոթ ու սևացած պատերին, անկարող լինելով մինչև անգամ իրանից մօտիկ անկիւնում մի որոշ բան անել, կամ լոյսի պէս լոյս տալ, կամ թէ խաւարի պէս խաւար թողնել: Օգը խեղդւած էր, նեխւած, շնչառութիւնն էր արգելում. ծուխը տարածւել էր տան մէջ, հասնում էր ամեն մի տեղի, և այդ ծուխը երկաթի վառարանից չէր, որ վաղուց չէր վառւում, որովհետև դարուն էր, թէև անձրևաշատ, ցելսով ու մշուշով առատ դարուն. այդքան ծուխ հաւաքւել էր այն փոքրիկ պապիրօսներից, որ շուտ շուտ վառւում էին այդ սենեակում եղած երեք կանաչ: Նրանցից մէկը միայն այնքան շատ չէր ծխում, և, ինչպէս երևում էր, գեռ սովոր էլ չէր ծխախոտից պապիրօս կո-

լուել. նա վառում էր երեսայի անփորձութեամբ, անշորհք կերպով շրթունքների մէջ էր դնում՝ աւելի երկու ծխողներից յետ չը մնալու համար:

Երեք կանանցից մէկը այդ տան տէրն էր, որ Մաշա էր կոչւում: Նա ընկած էր մահճակալի վերայ, թւերը շուտ շուտ դնում էր գլխատակին, շուտ շուտ հանում էր, ձեռքը ճակատին դնում, շփում: Երբեմն և հանում էր պապիրոսը բերանից, շրթունքները բարձրացնում, ծուխը բերանից բաց թողնում: Ծուխը գալարւելով, օղակներ կազմելով անշարժանում էր դեռ չը հեռացած և այն ժամանակ այդ կինը ցուցամատը մեկնում էր և սկսում էր խառնել այդ օղակները, դէս ու դէն տանել, զւարճանալով թէ ինչպէս ծուխը մի վայրկեան կալւում է մատին և դանդաղ կերպով մլլում, դէպի մի կողմ քաշւում: Նորա մօտ դրած էր ջրով լիքը շիշը. մի փոքրիկ պնակի մէջ կանգնած էր մի փոքրիկ, գեղեցիկ սրւակ, որ ըստ երեւոյթին անուշահոտ ջուր պիտի պարունակէր: Նորա մօտ ընկած կար մի կծած խնձոր և բացւած էր ծխախոտի կաշեայ գեղեցիկ ամանը:

Նորանից քիչ հեռու, դրան կողմի անկիւնին քիչ մօտ, դրած էր մի ուրիշ թախտ, որի վերայ էլ սարքած կար մի անկողին. իսկ այդ թախտից մի քիչ էլ ցած, անկիւնում, թափւած կար մի քիչ ածուխ, դրած էր ջրի կուժը և նորա մօտ—հեշտակուր: Կժից ու հեշտակուրից գնացած ջուրը, խառնւելով ածուխի փոշու հետ, մի սև հեղուկ էր զոյացրել մերկ յատակի վերայ: Այդ տեղի տէրն էր երկրորդ կինը, որ սենեակի մէջ յետ ու առաջ էր գնում երրորդ կնոջ հետ և որի անունը Հերիքնազ էր, կամ Արինա, որ Հերիքնազի թարգմանութիւնը պիտի լինի: Իսկ երրորդ կինը, այն, որ քիչ էր ծխում և շէնքով շնորհքով պապիրոս շինել չը գիտէր, Աննան էր:

Ղրսում սոսկալի խաւար էր տիրում. մանր անձրեւ անընդհատ շաղում էր. կարծես թանձր ու խիտ մշուշը, որ այնքան առատութեամբ թափւել էր երկրի վերայ, թուի ջրի մէջ է մտել, սևացել և այդպէս ծածկել ամեն տեղ, թափում էր իւր վերըրած ջրերի աւելորդը: Մռայլ և անհրապոյց էր սենեակը, բաց ինչպէս որ լինի, այդտեղ կանայք էին ապրում և դրանք ջանք էին խնայել զարդա-

րելու, եթէ ոչ ամեն տեղ, գոնէ մահճակալները. և որքան անկարող, յուսահատ լինէր լամպան, այնու ամենայնիւ պարզ նկատելի էին մահճակալների սպիտակ շորերը: Վերի կողմի պատից կախ արած էին այդ կանանց գունաւոր զգեստները, խնամքով դարձրած աստառի վերայ, որովհետեւ ամեն օրւայ համար չէին նշանակւած:

Մաշան, վերջապէս, ձանձրանալով օղակների հետ արած խրխաղից, շուռ եկաւ կողքի վերայ, դէմքը դէպի լամպան դարձրեց և երկու թւերը միմեանց վերայ կախ անելով մահճակալից, աչքերը թեթեւ կերպով խփեց և ասաց.

—Ոհո՛ւհո՛ւհո՛ւհո՛... ճաքեց, ճաքեց... պատուեց գլուխս:

Երկու միւս կանայքը չը պատասխանեցին, շարունակեցին ման դալ:

—Որքան ուղում եմ բանի տեղ չը դնել, մոռանալ, շարունակեց Մաշան, բան չի դառնում. ո՛ւհ...
Բայց նորա ընկերուհիները մի խօսք էլ չը պատասխանեցին,

կարծես չէին լսում:

Մաշան բաց արեց աչքերը, նրանց նայեց:

Դա մի բարակ կազմւածքի տէր կին էր, դէմքը նիհար, մինչև անգամ թշերի վերայ նկատելի էին երկու փոսեր, որոնք վկայում էին նորա չոր ու թոյլ կազմւածքի մասին: Բայց և այդպէս, զարմանալի կանոնաւոր էին այդ դէմքի գծերը. գոյնը սպիտակ, առանց կարմրութեան քիչ թէ շատ նկատելի հետքերի, քիթը բարակ և գեղեցիկ, բերանը փոքր: Բայց ամենից շատ նորա աչքերն էին խօսում: Այժմ էլ, երբ նորան տանջում էր սաստիկ գլխացաւը, այդ աչքերը իրանց ծանր ու ծոյլ շարժողութիւններով, իրանց մարած, վրհատեցուցիչ, գլուխ ցաւեցնող արտայայտութեամբ գրաւիչ էին, ձգում էին ոչ թէ վառւիւռն ջերմութեամբ, այլ հանդարտ, նոյն խի սառն վշտի զօրութեամբ: Նորա այդ նուրբ, բարակ կազմւածքը ցոյց էր տալիս, որ այդ կնոջը շատ են գզւել, շատ են քնքշութիւններով վարակել. այդ պատճառով էլ այդքան վաղաժամանակ (նա այնքան էլ մեծ չէր տարիքով) անկարող է դարձել, մի էակ, որ պատկերացնելով զօռով սպանած, ջախջախած կեանքը, այժմ ասլորում էր անցեալի թոյլ նշաններով, անցեալի երգերով և անցեալ կեանքի սպանման միջոցին ձեռք բերած զրգոող, կիրք չարուցանող միջոցներով:

Հերիքնազը նորա հակապատուկերն էր: Սա մի գէր ու փափուկ, հաստ ու կոպիտ կլին էր, տուգած կարմիր թշերով, կարծիկ քթով, հուպ եկած բերանով և գորշ, ապականման աչքերով: Մանր ծանր էին շարժում աջ աչքերը, կոպերը դանդաղ էին ճաճալում: Նա ունէր ծանր, ոնգալին շնչաուլթիւն և մի բարակ, բայց դուրեկան ձայն: Սա ենթարկող, մաշող պտուղ էր. սորա ամբողջ կազմածքը, ոտից մինչև գլուխ, արտայայտում էր դէն հրող բթուլթիւն, ինքնասիրութիւն այն դէպքում, երբ մի սովորական կլին էր, իւր կանացի շրջանում, դեռ վաճառքի չը դուրս եկած:

—Ախ, ինչո՞ւ էիր ինձ ծնում, իմ մա'յր... լաւեց կրկին Մաշայի տխուր, մեղամաղձալին ձայնը, որին հետեց մի երկար յօրանջոց:

—Ի՞նչ անենք, հարցրեց Աննան իւր ընկերուհուց:

—Ի՞նչ պիտի անենք, պատասխանեց Հերիքնազը. —գլխացաւ է, ի՞նչ մեծ բան է: Մեր ամենիս գլուխն է ցաւում, ո՞ւմն ենք սպանում: Դա հէնց այդպէս է միշտ. կոտորաւում է, չը գիտէ թէ իրան ինչպէս ծախէ...

Մաշան բողոքեց այդ խօսքերի դէմ, բողոքեց մի թոյլ տնքոց հանելով: Իսկ Հերիքնազն ու Աննան կանգնեցին պատից կախ արած զգեստների առաջ:

—Զէ', սա է լաւը, խօսեց Աննան մէկի փէշը յետ տանելով. — գոյնն էլ, ձենն էլ հաւանում եմ:

—Գիտե՞ս ինձ վերայ ինչ է նստել, հարցրեց Հերիքնազը իւր յամբաշարժ աչքերը նորա վերայ շուռ տալով:

—Ի՞նչ է նստել:

—Քսան և եօթն մանէթ, այն էլ հազար աղաչանքով:

—Պա'-պա'-պա', բաս ես ե՞րբ պիտի կարողանամ առնել: Միշտ սրանում (նա քիթը վերքաշած ձգեց իւր չթիվերնազգեստի փէշը)... Պարտք էլ ունեմ... Ե՛հ... Ութ մանէթ պարտք ունեմ:

—Ես կոպէկ պարտք չ'ունեմ, ասաց Հերիքնազը հպարտութեամբ:

—Երանի՛ր քեղ... Ի՞նչ անեմ, հազար ցաւ կա՛ց գլխիս. տունս այնպէս, սիրտս չի տալիս որ մէջին նստեմ: Խոր խրւածք է թէ այդ հաւաքոյնն էլ չը թողնէր, լաւ կ'անէր: Հիմա ի՛նչ է... Ե՛, ո՞ր մէկն ասեմ...

—Աղջիկդ որտեղ է:

—Տանն է մնում, պատասխանեց Աննան սառնու թեամբ և շտապով:

—Տանն է մնում: Լաւ աղջիկ է, ես ու իմ հոգին: —Մնում է ու դու մա՞ն ես գալիս:

—Ինչո՞ւ չը պիտի մնայ. թողում եմ, գալիս, սովորել է, կօնֆէտից, բանից, տալիս եմ, պրծնում:

—Լաւ է որ լաց չի լինում, ետեիցդ չի գալիս, ասաց Մաշան իւր օխուր ձայնով. —վարսդ կորեմ, Աննա՛, այնպիսի երեխային ի՞նչ պէս ես մենակ թողում:

—Ի՞նչ անեմ, Մաշա՛:

—Եթէ մի երեխաս լինէր, սրտիս վերայ կը պահէի:

—Մենք հօ դէն չենք գցում... Ես որ մթնելու վրայ էր եկայ, անկողինը գցեցի, ասացի որ պառկէ, քնէ: Աչքը հօ չեմ հանում, թող տանը վեր ընկնի:

—Վա՛յ, մրմնջաց Մաշան և շուռ եկաւ մէջքի վերայ ու բռնեց ճակատը:

Այդ միջոցին դուռը բացւեց և ներս մտաւ մի պատանի: Դա Բաբուշկայի թոռն էր, կօշկակարի աշակերտը:

Յերեկը այդ տղան խանութում հաղնում էր իւր արհեստի պահանջած կեղտոտ, սևացած շորերը. և լուռ էր լինում, խոնարհ իրանից մեծերի առաջ: Բայց երեկոները և կիրակի օրերը Բաբուշկան նորան զարգարում էր իւր սրտի ուղածին պէս, իւր ձեռքերով. հազցնել էր տալիս սև մահուկի չուխան, սև շալի արխալուղը՝ սև պսպղուն կոճակներով զարդարած. մէջքին կապել էր տալիս բարակ ու նեղ արծաթի քամարը, գլխին դնել էր տալիս բարակ ու կարճ լիկ փափախը, որի վերին մասում դնում էր կարմիր աղլուխը. այդ փափախի դնելու ձևն էլ մի քանի անգամ ցոյց էր տւել Բաբուշկան, մինչև որ նա սովորել էր. պէտք էր դնել ծուռ, զէպի աջ ականջը թեքած: Այդ հագուստը, այդ ձևը թրքական աշխարհի վերջին մօդան է: Թուրք ազգն էլ մօդա ունի, մօդա, որ իւր երկրպագու երիտասարդներին պիտի փայլեցնէ հպարտութեամբ, գոռոզութեամբ միայն և... ծուլութեամբ: Այդ բոլորը հագուստի պահանջն է, առանց որի միայն ծաղրի է արժանանում երիտասարդը: Եւ այդ պատճառով արհեստավորի աշակերտը ճաքւում էր երեկո-

ներն ու կիրակի օրերը, փքւում էր, որ իրան հասակից բարձր ցոյց տայ, որ ամենքին զարմացնէ: Նորա ձախ կողքից միշտ կախ արած էր փոքրիկ խէնջարը, որով ամեն մէկին սպառնալիք էր կարգում:

Նա հէնց որ ներս մտաւ, ձեռքի մէկը ղրեց կողքին, խէնջարի կոթին և անհոգութեամբ ասաց.

—Մաշա՛, ետեիցդ մարդ է եկել, վեր կաց դնա՛:

—Ես հիմա մեռնում եմ, պատասխանեց Մաշան տնքալով: Հերիքնազն ու Աննան խիստ հետաքրքրած մօտեցան կոշկակարին:

—Ո՞վ է, Եփրե՛մ, ո՞վ է կանչում, հարցրին նրանք:

—Ձե՞զ ինչ... զուտաց Եփրեմը և խէնջարը պատեանից հանելով՝ գնաց դէպի նրանց: Նրանք ծիծաղելով փախան, բաց որպէս զի ցոյց չը տան թէ չեն վախում, սկսեցին աղաչել: պաղատել:

—Ոտներիդ տակի հողը դառնամ, Եփրե՛մ, զլխիդ մատաղ... ասում էր ամեն մէկը: Իսկ նա վազելով նրանց ետեից, հալածում էր, երբեմն երբեմն հայհոյելով: Եւ երբ բաւական պտոյտներ արեց սենեակի մէջ, բաւական ժպտաց նրանց աղաչանքների վերայ, կանգնեց և հպարտ հպարտ ասաց.

—Կարող եմ մի անգամ այսպէս խփելով մէջիցդ երկու անել:

Ապա Մաշայիցն էլ լսելով աղաչանք և հարց՝ թէ ո՞վ է կանչողը, նա ասաց.

—Նասիր-բէկն է, մարդ է ուղարկել:

—Հաստ Նասիր-բէկը կը լինի, խօսեց Հերիքնազը մի անկիւնից:

—Դէ՛, բարկացած ձայն արձակեց Մաշան.—Ես ո՞ւր կորչեմ: Ո՞րտեղ է:

—Հիւրանոցում քեզ սպասում է:

—Քո արեւը, Եփրե՛մ, զլուխս ցաւում է, այնպէս է ցաւում, որ աչքերս ուղում են տրաքւեն: Որ գնամ, կը մեռնեմ: Թող Հերիքնազը գնայ:

—Քե՛զ է ուղել, Բաբուշկան էլ ասել է՝ որ դու գնաս:

—Գլխիդ, արեւիդ մեռնեմ, Եփրե՛մ, բաս ես խեղճ չեմ... բաս ես քո Մաշան չեմ. ես մեռնեմ, ինձ տար թաղիր... Ես քոնն եմ, ասաց Մաշան աղաչելով և երկու մատով բռնելով իւր ծնօտի ծայրը:

—Դէ լա՛ւ... գոչեց Եփրեմը զայրացած և մօտեցաւ նորան,

որպէս թէ կամենում էր խփել: Մաշայի թոյլ աղաչանքը որպէս թէ կանգնացրեց նորան:

—Աղջիկ, լաւ է, լաւ, քեզ մի' սպանիր... Հա', իմացանք է', իմացանք. քեզ սիրում են, մեզ կոտորե՞նք, մէջ մտաւ Հերիքնաղը: Գլուխս ցաւո՞ւմ է, մե'ռնում եմ:

Այդ վերջին երկու նախադասութիւնները արտասանեց Մաշայի ձայնին նմանեցնելով. նորան ծաղրում էր:

—Ով որ ինձ չի հաւատում, ասաց Մաշան դառն կերպով, նա էլ իմ օրն ընկնի, որ ես էլ իրան չը հաւատամ:

—Հա', ալըպէ՛ս, փշշացրեց Հերիքնաղը. —մի՞տդ է, զլխիս մատաղ գնացած, մի՞տդ է այն գիշերը. ես այնտեղ, այն թախտի վերայ ընկած մեռնում էի, դու այստեղ քէ՛ջ էիր անում, երգ էիր երգում, մի՞տդ է:

—Լաւ միտս է...

—Դէ' այս էլ միտդ պահիր:

—Նա'տ հարկաւոր է, ցաւս քաղես. ի՞նչ ուզում ես, ասա՛: Եփրեմը հայհոյանքով մէջ ընկաւ:

—Լաւ, չե՞ս գնում, ես էլ կը գնամ Բաբուշկայիս կասեմ թէ չի ուզում:

Եւ նա դէպի դուռը գնաց:

—Տեսա՞ր, հարցրեց Հերիքնաղը, — դէ գնա', պատասխանը տո՛ւր:

Երեքեանն էլ մի ակնթարթում միացան, միաբերան խնդրեցին Եփրեմին որ չը գնայ, չ'ասէ:

Մաշան տնքալով նստեց, իջաւ մահճակալից, գնաց դէպի լամպան: Նորա ամբողջ մարմինը տատանւեց, նա ուզում էր պատուհանում նստի, բայց զօռ արեց իւր վերայ, չը նստեց. ձեռքերը անօգնականի պէս դէպի առաջ պարզեց, հաւասարութիւնը պահեց: Պատից վերցրեց իւր լաւ զգեստը, սկսեց հագնուել: Նա և հագնւում էր և տնքում:

Վերջացնելով այդ գործը, նա վերցրեց անձրևի հովանոցը, գնաց դէպի դուռը, որի մօտ կանգնած էր մի տղայ, որ աննկատելի կերպով ներս էր մտել:

—Գնա՛նք, գնա՛նք, ասաց Մաշան, փոխելով իւր ձայնը:

—Մաշա՛, արի՛ սնդուկդ կողպիր, կանչեց Հերիքնազը. —էգուց կ'ասես զողացել էք, այս է կորել, միւսն է կորել:

Մաշան յետ դառաւ, սնդուկը կողպեց և էլի գնաց: Նա թէև երբեմն անքում էր, բայց աշխատում էր աշխոյժ ձևանալ, մինչև անգամ իւր երեսը բոլորովին մօտեցնելով Եփրեմի հետ եկած տղայի երեսին (հիւրանոցի ծառան, նորա համար մի շատ հարկաւոր մարդ), թուրքերէն մի երգ երգեց: Երգում էր ինքը, զլիսացաւը, մարած, տաղտուկ, բայց զօւով մեղմացրած ձայնով.

«Աչքերդ ումի՞ն են սպասում,

«Արցունք են թափում, ումի՞ն սպասում:

—Արտէ՛մ ջան, ինձ լա՛ւ կը տանես, թեև թեի տւած, ասաց այդ զլիսացաւը երգից յետոյ:

—Աչքիս վերայ, պատասխանեց Արտէմը:

—Հողե՛մ գլուխդ, ասաց Հերիքնազը նորա ետեւից. —մեռնի էլ, չի թողնիլ նասիր-բէկին, բայց նազ է ծախում: Միշտ այդպէս է, նորանն էլ այդ է:

—Լաւը նա է անում, պատասխանեց Աննան քիչ լռելուց յետոյ. —լաւ է անում... Այդպէս է, որ սնդուկը լիքն է պահում... Անուն ունի, քեզ պէս, ինձ պէս չէ:

Այս ժամ չ'անցած, բակի կողմից լսելի եղան ցիւի մէջ շարժւող ոտների ձայները: Քայլերը զալիս էին ղէպի տուն, անկանոն էին, բարձր ձայներ էին հանում. լսւում էին և սաղի ծանօթ բարակ հնչիւններ: Երկու կնիկները վեր կացան, ղէպի դուռը գնալ ուզեցին: Բայց մինչև դրան հասնելը, ներս ընկան երկու հոգի, որոնք կանգ չ'առնելով առաջ եկան ցխոտ կօշիկներով: Առաջին անգամից պարզ երևաց, որ երկուսն էլ խմած են: Սազ ածողը մի կարճ լիկ, կոլոր մարդ էր, որի զլխին դրած էր փափախ: Նա զեռ լաւ էր, պահում էր կանգնած տեղը: Միւսը, որ կպած էր նորա ձախ թեւին, մի երկարահասակ երիտասարդ, անդադար շարժւում էր, զլուխը յետ ձգած, ազատ ձեռքը երբեմն տանում էր ղէպի բերանը որպէս թէ երգելու համար. բայց խմիչքն ու խոնավութիւնը, ինչպէս երևում էր, նորա կոկորդը քերել էին, տաշել և նա միայն մռնչալ էր կարողանում:

Հերիքնազն ու Աննան առաջին վայրկեանները քնացել էին սա-

առած, վախեցածի պէս միմեանց երեսն էին նայում, զլուխները շար-
ժելով լուռ հարցնում էին թէ ո՞վքեր պիտի լինին սրանք: Բայց
չը կարողացան ճանաչել. իսկ սազ ածողը փոխեց եղանակը, պարի
եղանակ սկսեց և միևնոյն ժամանակ իւր հաստ փափախը դէպի
առաջ շարժելով, «գլխով անելով», պարելու հրաւիրեց: Նորա
թևից կախ ընկածը իսկոյն ձգւեց, ուղղւեց, մի վայրկեանում, ինչ-
պէս այդ յատուկ է հարբածներին, հասկացաւ թէ ինչ է ուզում
իւր ընկերը, յարձակեց երկու կանանց վերայ և մէկ մէկ նրանց
վզակոթին տալով, առաջ զցեց:

—Պա՛ր, պա՛ր, աղաղակեց նա կորուած ձայնով:

Հերիքնազն ու Աննան ծիծաղեցին և մի կողմ քաշւեցան:

—Ասում եմ պա՛ր, գոռաց հարբածը.—քէ՛՛՛՛ պիտի անենք...

մի... մինչև... լոյսը քէ՛՛՛ է:

Եւ իւր ձեռքերը խաղացնելով, պարելու և ծափահարելու նշաններ
անելով, առաջ անցաւ, զնաց դէպի նրանց: Հերիքնազն իսկոյն ձեռ-
քերը բարձրացրեց, սկսեց պարել: Բայց Աննան չը գիտէր, դեռ իւր
օրումը չէր պարած: Եւ այնու ամենայնիւ, տեսնելով իւր ընկերու-
հուն և հարբածին, նա էլ սկսեց կոտրատուել, պոռոյտներ անել ան-
շնորհք կերպով, ինչպէս ասում են, ցեխ կոխ տալ:

—Ա՛յ ջան, ա՛յ ջան, գոռում էր հարբածը, սաստիկ ուրախու-
թիւնից նայում էր առաստաղին, ահագին ձեռքերը միմեանց էր
զարկում, ծափ տալիս:

Փոքրիկ սազը փոքրիկ, բարակ ձայներ էր հանում. պատերի
վերայ սահում էին պարողների սուերները, որոնք կուլ էին գնում
պուճախների խաւարի մէջ և էլի դուրս լողում: Անկարգ ծափը
երբեմն բոլորովին խլացնում էր նաև պարողների ականջը: Եւ այդ
բոլորին պատուհանից նայում էր սևացած, արնագոյն լամպան:

Մանրաշարժ, հաստլիկ Հերիքնազը մի անգամից փոխւել էր:
Նորա պարը հասարակ պար չէր. նա խառնում էր այդ պարի հետ
այնպիսի շարժւածքներ, որ առանց ամօթի կարող են անել միայն
իւր պէս կանայք: Օրօրւելով, փշրւելով նա գնում էր, շուռ էր
զալիս հարբածի չորս կողմը, աչքերը բարձրացնում, նորա վերայ էր
տնկում և զլուխը կամ ուսերը թեթև շարժելով՝ իրան միայն հաս-
կանալի մոքեր էր իմացնում: Հարբածը մի քանի անգամ ընկաւ

նորա ճտովը, մի քանի անգամ պինդ համբուրեց նորան և էլի բաց թողեց, էլի սկսեց ծափահարել: Ոգևորութիւնը հեռոցհեռէ սաստկանում էր. Հերիքնազը բաց թողեց լեզուն, սկսեց զանազան բացականչութիւններ արձակել, աւելի մոլեղնաբար շարժւել, ցոյց տալ իւր անսանձ ազատութիւնը, որ միայն այսպիսի տեղ, այսպիսի դէպքում ռենէր իւր անձը առաջ քաշելու համար:

Իսկ Աննա՞ն: Օ՛, սա դեռ անտաշ գեղջկուհի էր: Թէև զիտէր «կարգ ու կանոններ», բայց այդ դեռ քիչ էր. այս անակնկալ դէպքում նա միանգամայն անփորձ էր: Գլուխը կրծքի վերայ կախ էր արել, մէջքը դուրս ցցել, թւերը ուղիղ մեկնել անգղի պէս և շարժւում էր, և գնում, զալիս էր, երբեմն կանգ առնում, որպէս թէ պարի նրբութիւնը ցոյց տալու: Բայց այդ շարժւածքները, այդ ձևը այնքան կոպիտ էին, անպէտք, որ այդ տղամարդկանց աչքը համարեա միայն Հերիքնազի վերայ էր մնում: Տակից դէպի վեր պլշած աչքերով Աննան տեսաւ, որ հարբածը թողեց ծափահարութիւնը, ձեռքը գրպանը տարաւ և մի մանէթանոց հանելով, կպցրեց Հերիքնազի ձակատին: Այդ որ տեսաւ, ինքն էլ սկսեց բոլորել հարբածի շուրջը, անդադար նայել նորա աչքամէջին՝ գլուխը զէս ու դէն ծումելով: Սակայն հարբածի ձեռքը էլ չը մտաւ գրպանը: Եւ տաքացաւ Աննան, հոգի առաւ: Թողեց իւր ընկերուհու շարժւածքներին նմանելը, մոռացաւ չափ ու կանոն և սկսեց ցատքսուել, ուտոտալ, մէկի կամ միւսի վզից կախ ընկնել: Նա էլ լեզու բաց արեց, նա էլ խօսում էր, կանչում. բայց այդ ամենում այնպիսի ծայրայեղութեան հասաւ, որ Հերիքնազը յետ կանգնեց: Մի րոպէ նա խլեց իւր ընկերուհուց ասպարէզը և այդպէս կարողացաւ ինքն էլ մի մանէթ գջլել:

—Քէ՛Ք, քէ՛Ք, զոչում էր հարբածը:—Բաւական է, բաւական է, հրամայեց իւր ընկերին և խլեց նորա սազը, դէն զցեց:—Նստի՛ր, նստի՛ր, հիմա էլ մի քիչ այս շան քածերի հետ խօսենք... այս դարդ ու կրակների հետ...

Տեսարանն այժմ փոխեց: Եւ շուտով պատուհանում դրած լամպան ազատեց իւր շարժարանքից, իւր յուսահատ զոզողուն լոյսից: Թանձր, հանգիստ խաւարը ծածկեց այս բորբոսնած ճահիճը...

Այդ իսկ երեկոյ, Մաշայի գնալուց առաջ, մի փոքրիկ աղջիկ կանգնած էր քաղաքի մի անծանօթ տան դրան առջև, հանդարտ չխկչխկացնում էր:

Դուռը բաց արեց մի կին, դուրս նայեց: Աղջիկը յետ քաշեց, կուշ եկաւ և լռեց:

—Կոտորւի՛ք դուք, մրթմրթաց կիներ, հասկանալով թէ ով կը լինի այսպիսի երեխան.—կէս գիշեր է դառել, էլի ոտ չեն հեռացնում մարդկանց դռներից:

—Հա՛ց չեմ ուզում, ասաց աղջիկը հազիւ լսելի ձայնով:

—Բաս ի՞նչ կաջ, ինչո՞ւ ես դուռը ծեծում:

—Աստուած քեզ պահէ՛, մի տեղ տո՛ւր, որ քնեմ:

—Ինչո՞ւ, դուք քանդւած չ'ունի՞ք...

—Մայրս տանը չէ, շարունակեց աղջիկը ողորմելի ձայնով,— գնացել է ուրիշ տեղ:

—Ո՞րտեղ է գնացել, ո՞րն է ձեր տունը:

—Ձեռ ճանաչիլ, եթէ ասեմ, մենք այն կողմին ենք կենում:

—Իսկ մայրդ ո՞ւր է գնացել:

—Ես չը գիտեմ:

Մանր անձրեւը, որ անդադար մաղում էր, դողացնում էր փոքրիկ աղջկանը: Նորա շլինքը բոլորովին բաց էր. փոքրիկ աղլուխն այնպէս չէր կապած, որ կարողանար ամբողջ գլուխը ծածկել:

Այդ դողդողոցը տեսնելով, կինը նորա կռնից բռնեց և ներս տարաւ: Տան մէջ նստած էին մի տղամարդ և երկու չափահաս տղաներ: Կինը պատմեց, որ մի խեղճ երեխայ է, գիշերելու տեղ է ուզում. և նստացրեց աղջկանը դրան մօտ, պատի տակ:

Նորից սկսեց հարց ու փորձը, նորից ուզեցան իմանալ թէ ո՞վ է նորա հայրն ու մայրը, ո՞րտեղ է նրանց տունը: Փոքրիկը պատասխանում էր վախվախելով, գլուխը կախ գցած. այնպէս որ տան բնակիչները շատ քիչ բան հասկացան:

Ամբողջ երեկոն երեխան անշարժ նստած էր իւր տեղը լուռ ու մունջ, կուշ եկած. երբեմն միայն աչքերը քիչ բարձրացնում էր և վախկոտ հայեացքներ էր գցում տան պատերին և նստած մարդկանց, որոնք խօսում էին, վիճում էին, ծիծաղում: Հաց ուտելիս նորան

չը նստացրին իրանց մօտ. կինը մի կտոր բերեց, տւեց նորան և նա իսկոյն սկսեց ուտել:

Քնելիս տղամարդը մօտեցաւ նորան, երկար տնտղեց և ապա ասաց իւր կնոջը.

—Ա՛ կնիկ, աչքդ վերան պահիր. գիտե՞ս, սա էլ նրանցից մէկը կը լինի, ձեռքը վատ սովորացրած: Ո՞վ է իմանում, ընկածը կը տեսնէ, կը վերցնէ:

Երեսան այդ խօսքերի ժամանակ աչքը գցել էր տղամարդի աչքին: Նա լսում էր ոչ թէ զարմացած, այլ մի անորոշ բան արտայայտող ուշադրութեամբ: Երբ տղամարդը վերջացրեց խօսքը, երեսան իսկոյն աչքը անցկացրեց տանտիկնոջ վերայ, որպէս թէ անհամբեր սպասում էր նորա պատասխանին:

Տանտիկինն էլ այսպէս պատասխանեց.

—Քա՛ր կտրի աջնպիսի մայրը, նորա վա՛րսը կոտորեմ, այս պիսի փոքրիկ երեսային ի՞նչպէս է դռնէ դուռը գցում, ինքը կորչում:

Նստած տեղն էլ քնեց այդ երեսան: Մի հին կարպետի կտոր գցեցին նորա վերայ:

Այդ երեսան—ընթերցողս ճանաչում կը լինի—Սառան էր:

Նորան այլ ևս առաջւայ պէս չէին ընդունում հարեանները: Ամենքը ատում էին սորա ծծած ծիծը: «Շան ծիծ է ծծել», ասում էին և չէին ուզում իմանալ, որ այդ Սառան առաջւայ Սառան է: Նա էլ էր փոխւել, նորա վերայ էլ երբեմն երբեմն երևում էին նոր շորի կտորներ, երբեմն նորա ձեռքին տեսնում էին շաքարահաց կամ կօնֆետ. և չէին կարողանում պարզ նայել նորա դէմքին: Արդէն թաղի երեսաներին արգելւած էր նորա հետ խաղալ. ամենքը թէև պարզապէս չէին վռնտում, բայց սառն, շա՛տ սառն կերպով էին թողում որ զայ, տուն մտնէ. կոշտ և միշտ կոշտ խօսքերով էին նորան պատասխանում, և երբ նա համարձակւում էր մի թեթեւ չարութիւն անել, ահաբիւն աղմուկ էր բարձրանում. նորան դեռ ծեծում էլ էին: Եւ անօգնական էր Սառան: Չը կար մէկը, որի մօտ գնար լաց լինելով, որի բարութիւնը շարժէր իւր արտասուէքներով, որի մէջ իւր աչք զրութեամբ պաշտպանող ցամառն պատճառ դնէր:—Թո՛ղ, ասում էին հարեանները, ինքը պահէ իւր լա-

կոտոր. մենք դորա տէրը չենք: Այդպիսով դեռ կարծում էին, թէ պատժում էին «անգամ մօրը»:

Եւ այդ պատճառով Սառան դռնէ դուռն ընկաւ: Ամենքը մէկ էին նորա համար: Երբ նորա մայրը մի մի անգամ տանն էր մնում, ինքն էլ մնում էր տանը. բայց երբ օրերով կորչում էր, երեխան վեր էր կենում, ինքն էլ մի կողմով էր գնում: Ինչպէս մենակ մնար: Գիշերները, իբրեւ մոլորած թռչնակ, որոնում էր լոյս եւ մարդկանց երես:

Իսկ մայրը իւր հետ չէր տանում նորան: Երկու կողմով փնաս էր. մէկ՝ որ նա այժմ ամաչում էր որ երեխայ ունի, վախում էր՝ մարդկանց մօտ ցոյց տալ նորան. այն մարդիկը, իրան ճանաչած մարդիկը, կը հեռանային նորանից, զին չէին տալ, եթէ իմանային թէ որդի էլ ունի: Մէկ էլ այն՝ որ նա չէր ուզում որ Սառան իրան այդպէս տեսնէ: Նա դեռ բարոյականութեան մասին էլ էր մտածում:

ԺԴ.

Այդ օրից երկու տարուց մի բան աւել ժամանակ էր անցել:

Գաւառական քաղաքը մի ամառնային գեղեցիկ օր թողեց իւր առօրեայ մանր-մունր զրոյց ու հաշիւները: Եթէ մինչև այդ գեղեցիկ, պարզ օրը ամեն մէկը զլուխ ունէր միայն իւր եւ իւրայինների համար, այդ օրը ամենքը մի կարճ ժամանակով փոխեցան, յետ կանգնեցին, թողեցին որ անսովոր անցքը լացն շրջան տալ, շատ տարածւի: Անցքն էր մի հարուստ աղայի մահը:

Մեծ կարողութեան տէր մարդ էր հանգուցեալը. արել էր, աշխատել էր մինչև ծերութեան օրը, հեռու էր մնացել ամենքից, չէր խառնուել ոչ ոքի գործին, չէր հետաքրքրուել ոչ մի բանի մասին, որ իւր գործերի շրջանից դուրս էր: Հանգիստ, աննկատելի մէկն էր, զլուխը կախ արած իւր բանին ու գործին էր:

Ուրեմն լաւ մարդ էր, երանելի խաղաղասէր էր, անփնաս: Եւ յանկարծ այդ գեղեցիկ մարդը մի օրուայ ընթացքում հալւեց, գնաց: Առաւօտը տեսել էին նորան սովորական կերպարանքով շրջելիս, իսկ միւս օրը, շատ վաղ առաւօտեան, տարածւեց նորա «աւ համբաւը»:

Մեռել էր, այդ փաստ էր: Եւ խօսք ու զրոյց, հետաքրքրու-

Թիւն ընկաւ զաւառական անշարժ մեռելութեան բոլոր խաւերը: Խնչ էր, ի՞նչպէս էր. խօսել կարողացել է արդեօք. կտակ Թողել է. ի՞նչ տեսակ կտակ է, ո՞րքանի է հասնում կարողութիւնը: Այդ հարցերը ամենքին տանջում, չարչարում էին. և որովհետեւ դրանք, այդ տեսակ հարցերը, միանգամից որոշ, զրական պատասխան չեն ստանում (ո՞վ է կարող իմանալ թէ ի՞նչ կայ այդ տեսակ մարդու ընտանիքում), ուստի մարդիկ իրար էին անցնում, միմեանց առանձին առանձին մի կողմն էին քաշում, հարցնում, խօսում էին, փրփրում: Այդ բոլորի հետեանքն այն եղաւ, որ աղայի Թողած կարողութեան թւանշանը մեծացաւ, մեծ չափ ընդունեց: Խօսք ընկաւ, թէ աղան իւր եկեղեցուն հարիւր բուբլի է կտակել: Այդ մասին երկար խօսեցին, հասան այն եզրակացութեան, որ ժամանակը քիչ է եղել, եթէ մի երկու ժամ էլ լեզուն տեղը մնար, շատ բաներ կ'անէր աղան:

— Աղորմի՛ հոգուն, ողորմի՛ իրան, քիչ չէ, դա էլ լաւ է, ասում էին շատերը: Եւ ամիսոսանքը աղայի տարածած մահւան մասին հեռագհտէ մեծանում էր, շատանում: Ափսո՛ս մարդ, խեղճ մարդ, պակասութիւն է, քաղաքի համար պակասութիւն է, որ այդպիսի մարդը գնաց, էլ յետ չի դառնալ: Եւ ամեն մի լսող կըրկնում էր մէկի ասածը, թէ ճիշդ որ քաղաքի հրապարակը կորցրել է այժմ իւր շնորհքը, քանի որ աղան չը կայ: Եւ պատմում էին թէ ինչպէս էր նա ման դալիս, ինչպէս էր խօսում, ինչեր էր ասում:

Բայց կար մի դասակարգ, որ չէր հետաքրքրւում այդ խանձող հարցերով, այլ, ընդհակառակն, իմանալով, որ հանդուցեալը հարուստ է եղել, ծեր է եղել, ուրախ-ուրախ, հանաքներ անելով, պատրաստւում էր նորա թաղման: Այդ դասակարգը մուրացկանների դասակարգն էր:

Լուսացաւ թաղման օրը: Նեւ վաղ առաւօտից սգատան մօտերքում թափառում էին մենաւոր մուրացկանները, դալիս անցնում էին տան մեծ դռների մօտով, նայում էին, հոտոտում: Հաղւազիւտ պատու էր նրանց համար և զգուշութիւնը հարկադրում էր ականջները սրած պահել չը զրկւելու համար:

Երբ թաղման հանդէսը տխուր ու դանդաղ ճանապարհ ընկաւ եկեղեցուց դէպի գերեզմանատուն, պատառոտւած մարդկանց և կա-

Նանց մի բազմութիւն ցիր ու ցան զիմեց զէպի ննջեցեալի տունը։ Օրը տաք էր, ինչպէս հարկաւոր է որ լինի ջուլիսում։ արեւը հեռագհետէ հասնում էր իւր կատաղի ջերմութեան աստիճանին։ Այդպիսի ժամանակ զով շաքից էլ ի՞նչ քաղցր, սիրելի բան։ Եւ հանգուցեալի տունը այնքան բարձր էր, այնպէս յարմար էր կանգնած, որ, մինչև արեգակի թեքւիլը, մի լայն ու մեծ շաք բռնած էր նորա առջևի նեղ փողոցի մեծ մասը։ Նրկար ձգւած պատի տակով շար ընկան աղքատները, թափւեցան անկարգ, անկանոն։ Մէկը պառկած էր կողքի վերայ, միւսը փափախը վերցրած, զմայմունքով քորում էր իւր ճաղատ զուլալը։ մի ուրիշը կարծիկ չիբուխից թունդ ու կծու ծուխն էր ծծում, կամ թէ ծալապատիկ նստած, իւր քսակը խնամքով յարգարում էր իւր առջև, սփռոցի նման, սպասելով թէ երբ հաց կը բերեն, կը բաժանեն, որ նա զնէ այդտեղ և ուտէ։ Նրեք թէ չորս կանայք մի տեղ էին հաւաքւել և լուռ, միմեանց չը նայելով անգամ, կուչ էին եկել։

Նրանցից քիչ հեռու նստած էր Բարսեղը։ Նա հանել էր իւր չուխան, տաք էր, ձեռնափայտերը դրել էր երկու կողքին։ Սովածների անկարգ, ազահ ամբոխի իրարանցումը, միմեանց հրելը, աղմուկն ու աղաղակը նորան զայրացնում էր։

— Տեսքանդնե՛ր, բաւական չէ, ի՞նչ էք լսել, մարդի տուն էք եկել, մարդ էք, մարդու ծնունդ էք։ Ձեր տունը քանդւի..., ասում նա բարկացած, զգւած նայում էր ամեն տեղ, բայց համարեա ոչ ոքին չէր տեսնում, ամենքից բարձր էր պահւում։ Նա կ'ուզէր ամենքին կարգի, կանոնի դնել, կ'ուզէր որ ամենքը իրան լսեն։ Բայց ո՞վ էր լսողը. միմեանց, կարծես, ուզում էին ուտել, շատերը դեռ ոչինչ չը ստացած, բաժնի մասին էին վիճում։

Այդ իրարանցումի, այդ խառնակութեան մէջ, Բարսեղի աչքովն ընկաւ մի փոքրահասակ աղջիկ, որ դէս ու դէն էր վազվզում մարդկանց մէջ, ձեռքին բռնած քսակը շարժելով։ մի գլխաբաց ու բորբիկ աղջիկ, որի մազերը խառնւած էին, անկարգ թափւած ուսերի վերայ, որի դէմքը կեղտոտ էր, կուրծքը բաց։ Նա աշխատում էր թաղնւել, աշխատում էր պաշտպանւել մի տղայից, որ նորան հալածում էր։ Այդ տղան նորա հասակակիցը կը լինէր, բայց, ինչպէս երևում էր, դասակիցը չէր, մուրացկան չէր, այլ փողոցում ապրող մէկը։ Նա վճռել էր անպատ-

ճառ բռնել աղջկան և զայրացած որ չի կարողանում, անտանելի հայհոյանքներ էր տալիս. իսկ աղջիկը անդադար ծիծաղում էր և այդ տեսակ հալածանքը իւր սովորական խաղերից մէկը համարելով, չէր էլ ուզում փախչել, հեռանալ: Ընդհակառակը, կանգնում էր մէկի ետքում, սպասում էր. և երբ տղան մօտենում էր, ձեռքը ձգում որ բռնէ, նա յուսահատական ճիւղ էր արձակում, բոլոր ոյժերը միացրած ցատքում էր, մի ուրիշի ետքում ծածկւում և քըրքըջում իւր յաղթութեան վերայ: Գոգոհութիւն ընկաւ աղքատների խմբի մէջ. ամենքը բարկացան, հայհոյեցին, իսկ մէկը մինչև անգամ փայտը շարժեց նրանց վերայ:

Բարսեղը, որքան չէր ուզում, ճանաչեց Սառային և էլ աւելի զայրացաւ:

Բայց աղջիկը անարգել շարունակում էր իւր խաղը. նա տաքացել էր, մոռացել ամեն ինչ. նա ծիծաղից տրաքւում էր, կարմըրել էր, քրտնել: Այդչափ ուրախութիւնը, վերջապէս, անտանելի թւաց աղքատներին. երկու հոգի բռնեցին նորան, սաստիկ ձգեցին մազերից. բարկացան հալածող տղայի վերայ և սա զօռով հեռացաւ, հեռուից էլ չիշոցներ էր տալիս:

Այդ միջոցին մի պառաւ կնիկ, որ նստած էր փողոցի միւս կողմին, վեր կացաւ, դանդաղ քայլերով մօտեցաւ Բարսեղին և նստեց նորա առջև:

— Բարսե՛ղ, քեզ մատաղ, սկսեց նա ծա՛նր կերպով, ամէն մի խօսքը զգուշութեամբ արտասանելով. — սա այն Աննայի լակոտը չէ՞:

Բարսեղը գլխով դրական պատասխանի նշան արեց:

— Օ՛, կրա՛կ է, կրակ, ի՞նչ երեխայ, Բարսե՛ղ, քեզ մատաղ:

Բարսեղը ոչինչ չ'ասաց. նորա գէմքը պարզ ցոյց էր տալիս, որ նա չի ուզում խօսել: Բայց պառաւ մոռացկանը թէև խօսում էր զանդադ, ծանր ծանր շարժելով իւր աչքերի թերթերունքներից զրկւած կարմիր կոպերը, խօսակցութիւն սիրող պառաւ էր: Նա շարունակեց.

— Այդպիսի երեխան դռներ դցելու երեխայ չէ. ամենևին... մարդկանց սիրտն ու գութը սառցնում է: Զը զիտես է՛, Բարսե՛ղ, դու ո՞րն ես տեսնում: Մի օր գնացել է մի տանից հաց ուզել, չեն տւել. դէ՛հ, ի՞նչ անենք, չի եղել, չեն տւել. բայց նա ճակատը

շան ճակատ է շինել, պնդացրել թէ ես եմ, որ պիտի առնեմ: Տան տէրը դուքս է եկել, ոտը գետնին խփել, հացհոցել, փախցրել է դուռն: Եւ ի՞նչ: Դա փախել, գնացել է, բացց էլի յետ է եկել, հասկանում ես, էլի այն տունը. տան երեսայի ձեռքին հաց է եղել, հացն էլ խլել է, երեսային էլ ծեծել: Այնքան ասում եմ, ասում... Ասել եմ, մազերդ սււր կոխեմ, այդպէս չի լինիլ, խեղճ կա՛ց, ամօթով կա՛ց. քեզ մատաղ, Բարսե՛ղ, ասել եմ, քո շունը դառնամ, մի քանի անգամ եմ ասել:

— Գիտեմ, գիտեմ... պատասխանեց վերջապէս Բարսեղը և իւր մտքի մնացած մասը գլուխը թափահարելով յայտնեց պառակին: Նա մի վայրկեանում հպարտացաւ, նորա աչքերը բաւականութիւն յայտնեցին:

— Հա՛, այդպէս է, քե՛զ մատաղ, այդպէս է: Կամ թէ մայրը չի՞ տեսնում, ինչո՞ւ է թողնում:

Բարսեղը մի վայրկեանական անհանդիսս շարժողութիւն արեց, որպէս թէ ուզեց ձեռափայտը վերցնել, գլուխը շուռ տեց, տեղը լաւացրեց, մէկ էլ նայեց պառակի աչքերին:

— Է՛, Մարգարի՛տ, ինչե՛ր ես խօսում... Խե՛ղճ չէ հոգիդ, բերանդ է զալիս...

— Քե՛զ մատաղ, մրմնջաց պառաւը, գլուխը ցաւակցաբար օրորելով: Նա թէև չը զիտէր թէ ինչ պիտի ասէ իւր խօսակիցը, բացց ցաւակցութիւն յայտնել ամեն մի դէպքում նորա սովորութիւնն էր: Այդ ցաւակցութիւնը Բարսեղի սրտում տեղ զրաւեց և նա կարողացաւ շարունակել.

— Ի՛նչ անեմ... Ե՞ս եմ այդպէս արել. հօ ե՞ս չեմ արել: Մի խեղճ, կորած հոգի ունէի, հազիւ կարողացայ ազատել. կնկայ ձեռք պիտի ընկնէր հոգիս, չաւիտենական անդունդի բաժին պիտի դառնար: Փա՛ռք Աստուծու, պրծայ. իսկի գիտե՞ս ինչ կը լինէր խեղճ հոգիս, լաւ է դնաս, հօրդ ու մօրդ սպանես, քան թէ կնկայ ձեռքին խաբւես...

— Վա՛յ ինձ, հառաչեց պառաւը, երկու մատով քթախոտ մօտեցնելով իւր կեղտոտ քթածակերին:

— Մաղս սպիտակել է, խօսեց դարձեալ Բարսեղը, բռնելով իւր կարճլիկ միրուքը, որի մէջ, ճշմարիտ, երևում էին սպիտակ մազեր: —

Սպիտակել է, բայց աշխարհումս ի՞նչ եմ տեսել. իսկի տեսնելու բան էլ չը կայ... բայց էլի՛... Այրու՛մ, փոթոթու՛մ եմ, երբ արած-ներս միտս է գալիս: Երկու, երկու ամիս եղած չ'եղածը փչացրի, որ ի՞նչ է, ես էլ տուն դառնամ... է՛հ...

—Ելի՛, քեզ մատաղ, Բարսեղ, վե՛ր առ, սանձը ձգի՛ր, քաշի՛ր, մի՛ թողիր: Խեղճ է, ի՞նչ անէ. ճար չ'ունի, լակոտ է:

Բարսեղը թոյլ-թոյլ ծիծաղեց:

—Ե՛ս, ե՛ս, հարցրեց նա.—այդ ի՞նձ ես ասում. ե՛ս գալլի ճուտը վեր առնեմ... Ձե՛ս լսել... Մի անգամ մի շինական մի գալլի ճուտ է բռնում, բերում, կանչում է թէ լաւ կաթնատու եմ ծախում. ասում են՝ աղբէր, տա՛ր, տար, իւր տւած կաթը իրան հալալ լինի, թող մեր կաթնատուներին չը դիպէ: Հիմա էլ դա է:

Պառաւն էլի տմբամբացրեց գլուխը. նորա դեղնահոգի գոյն ունեցող դէմքը, որի մեքը ծալծալւած էին, բարակացած, ոսկորներին կպած, արտաշայտեց մի տեսակ մեղմ սարսափ, մի տեսակ թեթեւ զզւանք:

—Հա՛, այդ եղել է, ճշմարիտ է, այդպիսի խօսք եղել է, քե՛զ մատաղ: Ե՛հ, որ արել է, ի՞նչ է շինել: Մի թող մոխիր է դառել աշխարհի մէջ, հիմա քաղցած չի՛ սատկում: Այն օրը լսեցի որ նորա շորերը գողացել են. սնդուկումն էլ փող է ունեցել, փողն էլ են տարել... Քեզ մատա՛ղ, ի՞նչ իմանամ. մազս թան է դառել, չեմ լսած, չեմ տեսած: Հարիւր մի մարդ է ճանաչում...

Նա էլի քթախոտը տարաւ դէպի քիթը, ներս փչեց և մատը իւր կողքին քսելով շարունակեց.

—Հարիւր ու մի մարդ է ճանաչում, քեզ մատա՛ղ, Բարսե՛ղ. անդգամի բանը ի՞նչ կ'իմացւի... Ա՛ե՛ր են առել, գողացել, տարե՛լ են, դէ, ի՞նչպէս ճարես: Լաց լինելով, ինքն իրան սպանելով դէս ու դէն է ընկել... Ո՛ւր գնայ...

Բարսեղը լսում էր այդ խօսքերը և նորա մէջ դառնութիւնը խառնում էր հպարտ ուրախութեան հետ... Նա զգաց մի ինչ որ ծանրութիւն իւր սրտի վերայ, մի բույժական, վաղանցուկ ծանրութիւն, որ ինքն էլ լաւ չը կարողացաւ հասկանալ. բույժն անցաւ, նա ուղղեց, կուրծքը աւելի դէպի առաջ ցցեց, մինչև անգամ երեք մատը մի քանի անգամ ցրւած բեղերի վրայով տարաւ:

—Պա՛հ, քո տունն Աստուած շինի, ասաց նա ծիծաղելով.—
ի՞նչ կայ նորա համար, կը գտնէ, շո՛ւտ կը գտնէ. չե՞ս հաւատում,
գտած, պրծած է. թող ման գայ, փնտռէ, թող դեռ շատ փնտռէ,
կը գտնէ...

Պառաւն էլ դառն, հեգնական կերպով ծիծաղեց:

Այդ միջոցին Սառան դուրս թռաւ մարդկանց մէջ, մի զլուխ
փաղեց դէպի տան՝ դռները: Ասում էին՝ թէ աղքատներն հացը բա-
ժանում են:

— Որ ասում եմ, որ ասում եմ, Մարգարի՛տ, խօսեց Բարսեղը
նորա ետեւից նայելով.— շան ծիծ ծծա՞ծ է, թէ չէ:

— Հօ՛, հո՛ղը խրի դա... պատասխանեց պառաւը այս անգամ
խի որ դառնացած և աղջկայ ետեւից ճանդ արեց: Ժամանակն է
վատացել, Բարսե՛ղ, քեզ մոտադ, սևանայ ժամանակը. փչացել է,
մեր զլխին պատիժ դառել: Ո՞վ է տեսել...

— Հա՛, ճշմարիտ է: Հիմա բոլորն են վատ, բոլորն են զզւելի.
չը կայ, իսկի մէկը չը կայ. պառաւ կնիկ, ջահէլ աղջիկ—բոլորն իշ-
խանութիւնն եթէ ինձ տային՝ զիտե՞ս ինչ կ'անէի: —Նը կոտորէի,
բոլորն կը կոտորէի, կ'ածէի ձորը. այն ժամանակ աշխարհս կը
հանգստանար:

Բայց պառաւը չը դիմացաւ մինչև այդ խօսքերի վերջը. նա
էլ ընկաւ հոսանքի մէջ, վեր կացաւ, մի ինչ որ բան փնթփնթալով
քթի տակ, գնաց դէպի դռները, գրպանից հանելով կեղտոտ դեղ-
նած աղլուխը և պատրաստելով, որ նորա մէջ փաթաթէ ստացած
բաժինը:

— Խու՜նկ ու մո՞մ դառնաք, ձեզ էլ չեմ հաւատալ, ա՛յ պա-
ռաւներ. նա էլ պառաւ էր, այն «բարեհոգին», որ ինձ խաբեց,
տունս քանդեց... Կոտորէ՛ք...

Նւ Բարսեղն էլի զզւեց, ձեռքը թափ տւեց, երեսը դէպի միւս
կողմը դարձրեց:

Իսկ այնտեղ, մեծ դռների մօտ, իրարանցումը սաստկացել էր:
Մարդիկ սեղմնել էին դռներին, միմեանց հրհրում էին, աշխատում
էին միմեանց հեռացնել դռներից: Բայց ոչ ոք ներս չէր մտնում,
որովհետև ներս մտնելու հարկաւորութիւն էլ չը կար, դեռ ոչինչ
չէին բերիլ բաժանելու, դեռ մէկը մի կտոր հաց չէր ստացել, բայց

այդպէս միմեանց վերայ էին ընկնում, այդպէս ամեն մէկն աշխատում էր մօտենալ, բոլորովին կպչել դռներին: Պատճառն այն էր, որ սոված մարդիկ զիտէին որ ժամանակն է, զիտէին որ հիմա, մի րոպէից, ինչպէս որ լինի, հաց ու խաշած միս զուրս կը բերեն, դեռ գինի էլ... Առաջին կտորները մեծ մեծ են լինում, առաջին բաժակները լիք լիք են լինում. և ամեն մարդ առաջ էր ձգւում:

Այդ տեսակ մարդիկ սովորական աղքատների խմբից չէին: Նրանք նոր էին եկել և բերել էին իրանց հետ ամենքի սպասած ժամանակը: Իրանք այն միշտ սարքւած, միշտ սպասող ծոյլերն ու անգործներն էին, որոնք անխորի ամենքի համար պատրաստ են գերեզմանատուն գնալ, երբ քելէիս ուտելու իրաւունք բանեցնելն է գալիս: Ննջեցեալի և ոչ էլ նորա ազգականների ու ծառաների ծանօթն ու բարեկամը չեն, բայց աշխարհի վիշտն ու սուգը իրանց վերայ վերցրած, բռնում են դազաղից, «աշխատաւոր» են անուանւում և երբ թաղումից յետ են դառնում, իրաւունքով են առաջ գրնում: Նթէ տունը խեղճ տուն է, մանում են, նստում են բարձրում և ուտում են նախանձելի ախորժակով, աչք են ածում ամեն տեղ, ջոկում, վերցնում են, ինչ որ կարելի է, քննութիւն են բաց անում մսի կտորների լաւութեան մասին. մի խօսքով, արձակ օգուտ են քաղում նորանից, որ այդ օրը, այդ ժամուն տալը, բաժանելն է համարւում միակ օգտաւէտ բան, որ միայն կարող է թեթեւացնել այդ սգի աղն ու դառնութիւնը:

Բայց այդ օրը թաղած աղայի տունն այդպէս չէր: Երբ գերեզմանատնից յետ դարձան բոլոր մարդիկ, ծառան կանգնեց դռների մօտ և ներս թողեց միայն նրանց, որոնք «աշխատաւորների» տեսք չ'ունէին, մնացածները զրտւում մնացին: Նւ համարեա բարկացած, տրտնջում էին, որ այնքան շատ են պահում իրանց, պահանջում էին, որ շուտ անեն, ինչ որ բերելու են, բերեն: Աղքատներն էլ նրանց ետևից էին խմբւել:

Սառան խփեց այդ բազմութեան մէջը, երեսը պնդացրած, աչքերը պլշած, բայց մի խօսք անդամ չ'ասելով, սորա ու նորա երեսին էր նայում, ինքն էլ էր լուռ մասնակցում բազմութեան սնահամբերութեանն ու տրտնջին: Երբեմն նորան հույ էին տալիս, սաստիկ սեղմում. նա ճշում էր, բարձր աղաղակ հանում, որպէս թէ

խեղդում է և երբ ճնշողները քիչ «իրանց պահում էին», նորահամար ազատ քիչ տեղ էին պատրաստում, նա չէր հեռանում, այլ օգուտ քաշելով այդ դեպքից էլ առաջ էր խրուում, աչքը տնկած իրան շրջապատողների վերայ:

Վերջապես եկան քելէիս բաժանողները, բերին աղքատների բաժինը: Հեռու պատերի տակ կանգնածներն էլ մօտեցան, ամբոխը բուրեց, մեծացաւ: Սկսեցին բաժանել «թիքաները», մի մի ամբողջ լաւաշ, որի մէջ փաթաթւած էին մսի կտորներ, պանիր: Իրաւունքի տէր մարդիկը, «աշխատաւոր» քելէիս ուտողները, այլ ևս մարդ ու արգելք չ'իմացան, զրոհ տւին, առաջ դնացին, մի մի «ողորմի» առնացին, ստացան իրանց բաժինը, մի մի բաժակ էլ զինի խմեցին ու յետ դարձան: Իրարանցումը, աղմուկը, հայհոյանքը, իրար կոխ տալը աւելի սաստկացաւ:

Սառան հոսանքի հետ երկու, երեք անգամ յետ տարեցաւ մինչև յետին շարքերը և էլի առաջ ընկաւ, մարդկանց կռնատակերովը անցաւ, մօտեցաւ բաժանողներին: Վերջապէս, ահա՛, նա կանգնած է դռան պատի մօտ. թէև նորան ճնշում են, բայց նա ամենինչ մոռացած նայում է բաժանողներին, աչքերով չափում է կողոված լաւաշները, որոնք անհետանում են ստացողների թւերի տակ:

—Աստուած պահի... Աստուած... մրմնջում է նա խեղճ, ցած ձայնով և ձեռքը մեկնում է: Դողդողում է այդ ձեռքը, նա ամբողջ մարմնով առաջ է թեքւում: Բայց բաժանողները ձեռքով յետ են քշում նորան և մեկնած ձեռքը կրկին սեղմում է կրծքին:

—Աստուած պահի...

Աղքատներն էլ գիտեն կոտրատուել, զուցէ ակամայ: Լինում են այնպիսիները, մանաւանդ անդամալոյճներից, որոնք կարծես թէ նազ անելով են մօտենում ողորմութիւն տուող ձեռքին: Ըստ երևոյթին ինչ դժւար բան է. հաց է, տալիս են, մարդն էլ ձեռքեր ունի, թէև քիչ թոյլ ձեռքեր, ընդունի՛ր ու գնա՛: Բայց չէ՛: Նա մօտենում է օրօրւելով, կանդնում է, գլուխը կախ անում, բռն թ ու անզգաց երեսը դէպի մի կողմն է ուղղում, ձեռքերը թուլացնում, կախ տալիս: Որպէս թէ շա՛տ խեղճն է, շա՛տ անանկը, նորան սուածը կորած չէ, նա այնպէս անօգնական է, այնքա՛ն անզօր: Այդ է ուզում, որպէս թէ, հասկացնել: Պէտք է ինքը, բաժանողն առաջարկէ, ին-

քը զնէ եթէ ոչ նորա ձեռքում, զոնէ կռան տակին, որ նա յետ դառնայ, լուռ ու մունջ գնաց:

Այդպիսի մէկին էր հասել ստանալու հերթը: Նորա կողքին էր կանգնել Սառան: Եւ երբ բաժանողը թիքան զնում էր նորա թոյլ, փշուածի պէս կախ ընկած ձեռքերում, Սառայի ձեռքը մի աղին-թարթում բռնեց հացի ծայրը: Մի վայրկեան ընդդիմութիւն չ'եղաւ, թոյլ էր հացը և աղջիկը քաշեց դէպի իրան, բռնեց երկու ձեռքում: Աղքատը իւր ծանրաշարժ ուսերի վերայ սառած զլուխը համարեա աննկատելի կերպով քիչ թեքեց դէպի նորա կողմը, կախ ընկած շրթունքները կարծես շարժեցան մի բան ասելու համար: Բաժանողն այդ տեսաւ, խլեց հացը նորա ձեռքից և մի քանի անգամ էլ գլխին հասցնելով՝ դռնեց:

— Կորի՛ր, շա՛ն լակոտ. իրան նայի՛ր, մարդի ձեռքից բան խլելուն նայիր:

Սառան յետ ու յետ քաշեց, աչքերը ճաճպաց, կասեա թէ ուզում էր լաց լինել, բաց լաց չ'եղաւ և խեղճ-խեղճ նայեց իրան խփողին:

— Երեսին նայի՛ր, երեսին, ասաց միւս բաժանողը, բռնեց նորա կռնից և աջնպէս յետ մղեց, որ նորա ետևում կանգնածներից մի քանիսն էլ յետ ու յետ գնացին: Մի զարկ էլ ստացաւ Սառան և լսեց թէ ինչպէս այդ մարդն ասաց. «մի կորր, մի փշրանք էլ չես ստանալ, շա՛ն երես... կորի՛ր»:

Բաց նա չը կորաւ. էլի կանգնեց, էլի զլուխը թոյլ կերպով ծամռեց, քիչ էլ սպասեց և էլի ձեռքը մեկնեց: Քիչ մարդ էր մնացել, մեծ մասն ստացել էր, յետ քաշել: Նորան ոչինչ չը տւին: Վերջին ստացողներից մէկը Բարսեղն էր. երբ նա յետ էր դառնում և բաժանողները հեռացան, Սառան դէս ու դէն վազեց զժի պէս, արտասուեց և վազեց դէպի Բարսեղը:

— Բարսե՛ղ... ինձ չը տւին...

Ասաց ու սկսեց հեկեկալ, բռունցքներով աչքերը տրորել:

Բարսեղը կանգ առաւ, նայեց նորան, ուշադրութեամբ նայեց: Նորա գէմքի մի քանի ջղերը ձգւեցան, կծկւեցան. ձեռքերը դողում էին:

— Լաց մի՛ լինիր, լա՛ց մի լինիր, ասաց նա մի կոշտ ձայնով

և ձեռափայտերից մէկն իւր կրծքին նեցուկ արած, կտրեց իւր բաժնի կէսը և տւեց նորան:

Աղջիկը ստանալուն պէս կծեց: Արտասուէնքները կանգնեցին, չէին թափուում և պսպղում էին նորա սև աչքերի անկիւններում:

—Նաբաթ օրն էլ պատարագ է, ասաց Սառան.—հաց պիտի տան:

Բարսեղը նոր իմացաւ, որ կանգնած է մնացել. իմացաւ այդ և պատասխանեց աղջկան զօռով ծածկած մի դառն քնքշութեամբ:

—Հա՛, լսել եմ, պիտի տան:

Նորա լեզուի ծայրին դեռ ասելու մի կամ երկու խօսքեր էլ կաշին, բայց Սառան արագ քայլերով, երբեմն և ոստոստալով, դնաց, հեռացաւ:

—Նզո՛վք չար սատանային, միտքս տե՛ս ինչե՛ր էին գալիս... Բաւական չէր, էլի խաբւել էի ուզում: Քանզի՛ այս աշխարհը...

Այդպէս ասաց Բարսեղը և իւր ճանապարհը փոխեց: Նա բարկութեամբ էր խփում իւր ոտները դեմնին, շտապում էր և զայրանում, որ շուտ չի գնում:

ԺԵ.

Էլի նոյնն է Մարութի տունը: Էլի նոյնպէս պազած է նա լանջիվայրի գլխին, անօգնական ծուռած է մի կողմի վերայ, ամբողջ կարողութիւնն ու յոյսը ետքի մեծ քարերին դրած, որոնց վերայ այնպէս պինդ յենւել է նա: Էլի նոյնն է նորա շրջակայքը, նա վերջին տունն է, նորանից դէնը էլ շինութիւն չը կայ, դատարկ քարքարոտ լանջիվերն է, որ բարձրացած է քաղաքի դիմաց:

Այդ տան դուռը շուտ շուտ չի բացւում, կրնկի վերայ ամբողջ օրերով փակ է մնում: Երբեմն երբեմն տունը կենդանութիւն է ստանում, երբ հովանաւոր գիշերը գալիս է. վառւում է ճրագը, լսւում են խօսք ու զրոյց, ծիծաղ, երբեմն և երգի ձայն: Այդ տեսակ ուրախութիւններ թէև շատ քիչ են պատահում, բայց միշտ չափից դուրս զօրեղ, անզուսպ են լինում. և խղճուկ, ծուռած տունը, կարծես, չի կարողանում տանել այդ աստիճան շատ ուրախութիւնը, որի ձայներն ու աղաղակները նա դուրս է թողնում մի տեսակ հեծկրլտանքի, մի տեսակ վաշմաշոցի եղանակով:

Վերջերումը Աննան մի ամբողջ շաբաթ անհետացել էր. նորա ընկերուհիներն էլ հարց ու փորձ էին անում, բայց չէին իմանում նորա տեղը: Վերջապէս նա լոյս ընկաւ մի օր մաշած, անքուն, աչքերը խորն ընկած, շրջապատուած կապոյտ գծերով և փոսերով: Լոյս ընկնելուն պէս նա առել էր մի հին, կռները անճոռնի կերպով ցցած հեշտաեռ, առել էր երկու թէ երեք բաժակ և որոնում էր լաւ կտոր, որից հագուստ պիտի կարել տար: Շորերը հնացել էին, ձևից ընկել: Շորի հոգսից պրծնել չէր կարողացել Աննան. նորա սնդուկն արդէն լիքն էր տեսակ տեսակ շորեղէններով, բայց միշտ մի բան պակաս էր լինում:

—Ախ, ասաց նա մի օր Մաշային. — այս պակասութիւններից ե՞րբ պետք է պրծնեմ: Միշտ այսօր, էգուց ասելով մի բան չի դառնում. գնալով գնալով՝ ցաւը շատանում է. փողը զալիս է, զալիս, աչքս մի բան չի տեսնում...

—Ե՛հ, հողե՛մ գլուխդ, պատասխանեց Մաշան քիթը վերքաշելով. — ի՛նչ փող է, շա՛տ շատ է:

Այդ մասին Աննան չէր մտածել, հաշիւ տալ չը գիտէր: Եւ այդ խօսքերը նորա համար հետզհետէ զգալի դառնութիւն դարձան: Նա մի մի չիշում էր իւր անցրած օրերը, տեսնում էր որ իւր առաջնայ երազները, իւր ծաղիկ յոյսերը կորած են կամ կորչելու վրայ են: Նա շատ փող չէր տեսնում: Նա շատ ցած տեղից էր սկսել իւր արհեստը, այդ նա հասկացաւ շուտով: Նորան առաջ էր մղում կատարեալ աղքատութիւնը և նոյն շորերը, որոնք հէնց սկզբից փախցրել, հեռացրել էին նորան ընկերից ու հարեանից, հարկադրում էին մի սոսկալի եռանդով աչտեղ ու այնտեղ ընկնել, համաձայնել ամեն ինչի, միայն թէ կարելի լինի մի բան ձեռք բերել: «Ի՛նչ փող է», հեղնութեամբ ասում էր Մաշան: Ճշմարիտ էր ասում. նա, Աննան, միշտ զրկւած էր, ինքն էլ չը գիտէր թէ այդ ի՛նչ է, ի՛նչ վախճան կ'ունենայ: Եւ ձեռքը թափ տալով ամեն ինչի վերայ, «ինչ որ կը լինի՝ թող լինի» ասելով, շարունակեց իւր ճանապարհը: Վերջերումը նա Սառայի մասին չէր էլ մտածում. տարել էր նորան, տւել մի որբւայրի անդամալոյժ կնոջ, խնդրել էր պահել, խոստացել էր օգնել նորան: Իւր տունը թափուր պահելը նորան շատ էր հարկաւոր...

Նաբաթ օր է: Օրը հասնում է կէսօրեայ պահին, դարձեալ պարզ և տաք ամառնային օր է:

Աննայի դուռը բաց է, արևի շողերը լուսաւորում են մէկին, որ անկողնի մէջ փաթաթւած, կծկւած, զալարւում է օձի պէտք: Անկողնի մօտ կանգնած է Հերիքնազը, որ լուռ ու մունջ նայում է այդ տագնապալից շարժմունքներին, ոչինչ բան չ'ասող, ասլակիայ աչքերով է նայում: Անկողնի մօտ անկարգ, անկանոն թափւած են կանաչի շորեր, մի ծուռ դրած կարմիր սնդուկ կայ, որի վերայ դրւած են երեք հատ գեղեցիկ սրւակներ փայլուն, ոսկենկար նշաններով. կողքի վերայ ընկած են մի ջուլտ փոքրիկ, բաց ոչ հասարակ, այլ նորաձև կօշիկներ. կողքի վերայ ընկած է և հին, տեղ տեղ կանաչած հեշտաւոր, որ յուսահատութեամբ ցցել է իւր կուները:

Անկողնում պառկածը պինդ ծածկել էր իւր գլուխը վերմակի տակ. բաց հանգիստ մնալ մի րոպէ չէր կարողանում, անդադար շուռ էր գալիս մի կամ միւս կողքի վերայ, խեղդւած հեկեկանքի ձայներ էր հանում. երբեմն և ունում էր, մոնչում բարակ և թանձր ձայնով:

Իսկ Աննան էր: Նորա շորերը, փողը գողացել էին, և երբ ի դուռ լաց լինելուց վերջապէս ձանձրացել էր, ասել էին թէ այդ բանը բացի իւր ծանօթ երկու սրիկաներից ոչ ոք անել չէր կարող: Դրանց անուանում էին Բուտում և Գիւրջի: Աննան գնացել էր նրանց մօտ որ աղաչէ, պաղատէ, արիւն-արտասունքով յետ ստանայ: Բայց վատ ժամանակ էր պատահել այդ ծանօթներին. նրանք սաստիկ հարբած լինելով, թափւել էին նորա վերայ և անողորմ կերպով ծեծել: Այնքան ծեծել էին, որ նա ուշաթափ ընկել էր. մի տղայ իմաց էր տւել Մաշային և Հերիքնազին և սրանք երկու մըշակ էին դրկել, որոնք շալակել էին նորան ու տուն տարել: Այդ անցքը պատահել էր նոյն իսկ մեր ցիշած շաբաթ առաւօտը:

Յանկարծ հիւանդը հանեց գլուխը, բաց արեց իւր կարմրած, քրտնած դէմքը, վերմակի ծայրը քաշեց ծնօտի տակը և ուժգին շնչառութիւն սկսեց քթածակերով, շատ յաճախ, շատ սաստիկ շնչառութիւն, որ հեռուից էր լսւում. կարծես նորա սիրտը լցւած էր կայծաղած, բորբոքող օդով և նա օրհասական ջանքով դուրս էր թափում այդ օդը: Բոպէ անցած՝ նա չրմիացրեց իւր չոր լեզուն,

բաց ու խուփ արեց բերանը, քթի շնչառութիւնը ընդհատեց և աչժմ սկսեց բաց բերանով թանչել:

—Հը', հը'...մեռ...ռնում եմ... Աստուած... Աստ..., արտասանեց նա խուլ և թոյլ ձայնով, աչքերը խփած:

—Վա՛յ... գոչեց խիստ բարձր... վա՛յ...

—Ձո՛ւ, չո՛ւ, ասաց Հերիքնազը դժգոհութեամբ երեսը դէպի դուռը շուռ տալով.— քոռանա՛յ աչքդ, որ այդպէս էիր:

Հիւանդն սկսեց հեկեկալ: Իսկ Հերիքնազը նկատեց մի կանացի զգեստ, որ երկու անգամ մօտեցաւ դրսից դրանը և էլի հեռացաւ: Նա դուրս գնաց և տեսաւ, որ այդ կինը Մաշան է: Սա աւելի ևս գունաթափ էր, աւելի ևս տխուր, մտատանջ էր երևում:

—Աչքդ դուրս գայ, ասաց նա, բաւական է, ինձ սպանեցիր...

—Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, Մաշա՛:

—Դեռ հարցնում էլ է... Ինչո՞ւ ես այստեղ ընկել, մեխել... Այնքան վախեցել եմ, էլ չեմ իմանում, սիրտս տեղը չի կանգնում: Եւ նա բարձրացրեց գլուխը, ձգեց իւր բարակ և սպիտակ կոկորդն ու ձեռքը դրեց կրծքին:

—Մարդ չի՞ եկել, հարցրեց նա:

—Ձէ', մարդ չեմ տեսել:

—Դէ՛ լաւ է, գնա՛նք, էլ մի բոսկէ էլ մի՛ մնար: Թող իսկի չ'ասեն էլ թէ մենք իմանում ենք դորա մասին. հիմա պրիստովը կը գայ, կը հարցնէ: Մենք... ես ու դու ոչինչ չը զիտենք, հասկանո՞ւմ ես... Հարցնեն թէ ուղտը տեսե՞լ ես, ասա՛ իսկի ուղտի հետքն էլ չեմ տեսել:

Հերիքնազը նոր էր հասկանում:

—Գնա՛նք, գնա՛նք... Մենք ոչինչ չը զիտենք, մենք ոչինչ չենք էլ լսել: Բուստամ կ'ասեն, Դիւրջի կ'ասեն, ճանաչո՞ւմ ես. մեզ կտոր կտոր կ'անեն...

Նրանք շտապով գնացին, հեռացան:

Աննան մնաց մենակ: Ամառնային ջերմութիւնը տարածել էր իւր հեղձուկ լուութիւնը: Եւ այդ լուութեան մէջ միայն մեծ ճանճն էր թանձր ձայնով բզզում և զարնւում էր այս ու այն անկիւնին, զարնւում էր, ձայնը մի վայրկեան կտրւում և էլի յետ դառնում էլի ձայնում...

Անցաւ կէս ժամ:

Սառան դատարկ քսակը կոնատակին դէպի բարձր էր գնում: Նորան հետեւում էին երկու զզղւած, բոբլիկ երեխաներ, որոնք քիչ հեռաւորութիւն պահելով իրանց և նորա մէջ տեղը, յիշոցներ էին տալիս զւարճանալու համար: Այդ յիշոցները թէև փոշոցում միշտ են լսում, բայց աղսպիսի փոքրիկների բերանից դուրս գալով, սարսուռ էին ազդում մարդու վերայ, այնքան վատ էին, այնքան լիրբ: Սառան գնում էր, գնում, յետ էր նայում, ձախ ձեռքի երկու մատներով յետ էր տանում աչքերի վերայ թափւած մազերը, ջօնքերը կիսում էր, շրթունքները կախ անում, աչքերին կատաղի, չար տեսք էր տալիս և խուլ, անասորժ ձայներով ասում էր նրանց. «չա՛ն որդիք»: Այդպէս էր նա հագնում մուրացկանի կոշտ, խոշոր փշերը, որոնցով էլ պաշտպանւում էր: Պատասխանը տալուց յետոյ նա էլի դէն էր դնում այդ փշերը, շարունակում էր իւր ընթացքը, շուտ շուտ կռանում էր, ծանապարհին ընկած մանր, անպէտք բաներն էր հաւաքում, նայում:

Իրանց թաղին մօտեցած լինելով, նա քայլերը ուղղեց դէպի իրանց տունը: Երկու սղանները երբ տեսան որ աղջիկը գնաց, շէմքին մօտեցաւ, կանգնեցին. մէկը իւր կուռը տարաւ միւսի վզովը զցեց և նրանք երկուսը գլուխները բարձրացրած, կրծքները ուռցըրած վերջին անգամ կրկնեցին իրանց իմացած ամենախիստ յիշոցը համարեա երգելով և ամեն մի բառը առանձին առանձին արտասանելով: Այս անգամ էլ Սառան յետ դարձաւ, հպարտ ու բարձր ձայնով «չա՛ն որդիք» գոչեց և դէմքը դարձրեց, նայեց իրանց բաց շէմքից:

Աննան ընկած էր նոյն դրութեան մէջ, փոթոթւում էր, կծկւում, մռնչում: Սառան կանգնած տեղը սառեց, շէմքին կպաւ: Նա տեսաւ անկողնի մօտ անկարգ թափւած իրերը, կանացի նոր, մաքուր զգեստը և նայեց դրան ճակատին, կարծես ուզում էր իմանալ՝ զա՞ է իրանց տունը: Երկիւղը, կասկածը, անհասկացողութիւնը կաշկանդել էին նորան:

Այդ միջոցին Աննան շուռ եկաւ, երեսը դէպի դուռն արեց, աչքերը բացեց և էլի չմտադնելով լեզուն չոր բերանի մէջ, սրմնջաց.

—Սառա՛... քեզ... մաա... տաղ... մի... կաթ ջո՛ւր... թոքս խորով... ւում է...

Եւ նա աւելի սաստիկ չրմիացնելով լեզուն, ձեռը հանեց վերմակի տակից, մատը դէպի բերանը տարաւ:

Սառան շտապով ներս մտաւ, դէս ու դէն ընկաւ, բայց ոչ ջուր գտաւ, ոչ էլ ջրաման: Շտապով դուրս վազեց, գնաց դէպի հարևանը ջուր ուղեւոր:

Գնալիս նա դէպի ցած նայեց և սկսեց ծանր քայլել: Քաղաքի մեծ մասը փռւած էր նորա առջև. երևում էին հարիւրաւոր տեսակ բարձր ու ցած զառիվայր կտուրներ, որը կարմիր, երկաթէ, որը հասարակ փայտեայ: Կտուրների այդ բազմութեան վերայ բարձրանում էին եկեղեցիների խաչերը, որոնք շողշողում էին տաք ու պայծառ առեգակի տակ:

Սառան կանդ առաւ, էլի երկու մատով մազերը հեռացրեց աչքերից, մտիկ էր տալիս մի քանի փողոցներին, որոնք ծուռ ու մուռ լի էին պէս ձգւած էին տների արանքով դէպի զանազան կողմեր: Նորա աչքի առաջն եկաւ մի փողոց: Այդ փողոցում, մի բարձր տան առաջ, հաւաքւած էին մարդիկ. շաքում նստածներ չը կային, բոլորը խմբւել էին մեծ դռների առաջ և շարժւում էին, յետ ու առաջ գնում. մի քանիսները այդ փողոցի ներքին ծայրից դէպի այդ տունն էին գալիս, երկուսը շատ էին շտապում, համարեա վազում էին:

Տունը մեռած աղայի տունն էր: Սառան, կարծես, նոր չիշեց որ այդ օրը շաքաթ է, որ այնտեղ ժամ-պատարագ է:

Սի վայրկեանում նա համ ժպտաց, համ էլի իւր փշերը հագաւ, դէպի յետ նայեց: Եւ իսկոյն գլուխը դէպի ձախ ուսը թեքեց, տաքացած ձիու նման արեց, ոստոստաց, թռչկոտալով, իւր բորլիկ ոտներով թող բարձրացնելով՝ վազեց դէպի այն մեծ տունը:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՑԵՂԱՓՈԽԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅՈՒ:

(Շարունակութիւն և վերջ ¹)

Իդէան աչքով տեսնել կարողացողը մէջ
մի հրաշալի սէր կը բռնկէր զէպի նա:

ՊԼԱՏՈՆ:

Դաստիարակե՛ր, ձեր սաները մտքի շըբ-
ջանի վերայ ազդեցու զօրութիւն ձեռք
բերէ՛ք և այն մտմանակ զուք կ'ունենաք
ազդեցութիւն և՛ նորա արտադրութեան՝
կամքի վերայ:

ՅՐԵՅԼԻԻ:

2. ԲՆԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ:

Հալրենագիտութիւնը տարրական բուսաբանութեան, կենդանաբանու-
թեան, հանքաբանութեան, բնագիտութեան և աստղաբաշխութեան հետ
մանկան ռուսցանում են, թէ ինչպէս դրանք բոլորը մեզ բնակարան,
կերակուր և հագուստ են տալիս, թէ ինչպէս նրանց կեանքն էլ արեղակի լու-
սից, ֆերմութիւնից, ջրից և այլն կախում ունի: Ինչ վերաբերում է վեր-
ջիններին զօրութեան աչք կամ աչք կերպ զործագրելուն՝ նրանց աչք ան-
հատանելի է, ինչպէս իրանց կեանքի ամենաառաջին տարիներում ծնողնե-
րի խմաստութիւնը տնարարութեան մէջ, որոնցից բարձր էակ չէին կարո-

1, Տե՛ս «Մուրճ»-ի Ծ-րդ համարը:

ղացել երևակալել: Այն արտեղ մանկան մէջ բուն են դնում կրօնական զգացմունքների արդ նախազգացական մտապատկերները, որոնք ապագային կրօնական համոզմունքի աստիճանին են հասնելու:

Եթէ բնական գիտելիքների դասաւանդութիւնը կանոնաւոր է, այն ժամանակ ուսուցիչն աշխատում է այս գիտելիքներից ստացած վերոյիշեալ մտապատկերների համախմբութիւնները և զաղափարները հիւսել բարոյագիտական աւարկանքից ստացածների հետ: Առհասարակ մենք ընդմիջապէսք է մեր աչքի առաջ ունենանք կենդրոնացման երրորդ զլխաւոր սկզբունքը, որ ապացուցանում է կրթական ուսումնարանի բոլոր գիտելիքների կենդրոնացուցման կարեւորութիւնը կրօնական-բարոյական շուրջը: Իսկ եթէ մարդու մտաւոր կեանքի զանազան շրջանները սերտ չարաբերութիւն ունին միմեանց հետ, այն ժամանակ, երբ նորա գիտակցութեան մէջ մի միտք է բարձրանում, մի աղքատութիւն միտքով վերարտադրում է իրան հաղորդակից կալարանները (նման հեռագրականին) և որոնք համախմբելով գիտակցութեան շուրջը՝ խորհուրդ են կազմում՝ չարուցած խնդրին, ցանկութեանը և այլն նպատակաւարմար վճիռ տալու համար: Զորօրինակ՝ եթէ կրօնագիտութիւնը իւր տեսակէտից է խօսում Աստուծոյ նախախնամութեան մասին՝ բնական գիտութիւնները նորան օգնութեան են հասնում իրանց գիտական և համոզեցուցիչ փաստերով:

3. ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ:

Բնութեան երևութների հրաշալի կարգ ու կանոնաւորութիւնը հասկանալու և նրանցով հիշնալու համար՝ կարեւոր է մաթեմատիկայի (մանկական հասակում՝ թւաբանութեան) վերին աստիճանի ճիշդ քննական ոգին: Հերբարտը մի անգամ իւր սանի մասին վերջինիս հօրը տեղեկութիւն գրելիս՝ այսպէս է խօսում մաթեմատիկայի բարոյական ուժի մասին.

«Բայց նա (աշակերտ Լուդվիգը, որին ընտանեկան դաստիարակութիւն էր տալիս) պէտք է կարիք զգալ նաև մարդկային չարաբերութիւնների կապակից և լիակատար նկարագրութեան: Եթէ մեր յոյսը հիմնուած է նորա հասկացողութեան վերայ, այն ժամանակ բարոյական կանոնութեան պատէրները պէտք է նորան հարկադրեն (գործելու) իրանց հաւաստիութեամբ: Բարոյական պատէրները պէտք է նորան սիրելի լինին իրանց պարզութեամբ և Լուդվիգին նրանց մասին ունեցած լիակատար համոզմունքով (Einsicht): Առաքինութիւնը պէտք է ընդունելի լինի իւր կանոնաւորութեամբ, անարդարութիւնը պէտք է նորան ատելի լինի իբրև անմտութիւն (Ungereimtheit): Այդ կողմն է տանում և մաթեմատիկայի ուսումնարանի միջից անցնող ճանապարհը: Այն ժամանակ նա կը զգալ, որ նա ինքը, իւր սեպհական համոզմունքն է, որ գործնական բարոյականութեան (Moralität) ուսուցում:

Ներքե օրէնքի է վերափոխուամ. միայն անպէս նա կարող է բարոյապէս բարի լինել, եթէ ոչ՝ մի ուրիշը կը լինէր, որ նորա միջոցով, ինչպէս մեքենայի՝ կը գործէր»:

Կանաւը նոյնպէս ան կարծիքին է, որ մաթեմատիկական մեծութիւնների անհամար չարաբերութիւնների միջի խիստ կարգն ու հարմոնիան մարդու բնական հրաշալիքներից պակաս չէ հիացնում ¹⁾:

Առ այժմս արքանովս բաւականաւորով մաթեմատիկայի մասին, տեսնենք, թէ թւաբանութիւնն ինչպէս է ներդրածում մանկան վերստ առաջին տարիներում:

Մանուկները ծանօթանալով բնական երևոյթներին՝ նրանց հիացումն աւելի և աւելի կը լինի, երբ նրանք նոյն իսկ սկզբնական թւաբանութեան միջոցով հետզհետէ զիտակից կը լինին իրանց սիրելի բոլսերի, կենդանիների և հանքերի մասերի և չափութիւնների զարմանալի զուգաչափութեանը և կանոնաւորութեանը: Նրանց մէջ անշուշտ կը ծագի մի նախազգացում ան խալի մասին, որ անիմանալի իմաստութեամբ տնօրինել է աղ երևոյթները: Եւ նոյն իսկ թւաբանական չորս գործողութիւնների անպաւնան ճշդութիւնը, առաջարկած խնդրի ճիշդ լուծման հասնելու անսկզբունք ներքին ձգտումը մանուկներին հէնց վաղ ժամանակներից կ'ուսուցանէ մտքերի կենդրոնացում և կը սովորեցնէ սկսած աշխատութիւնն իսկութեամբ զուխ հանել: Թէ որքան զօրաւոր ուժ է մաթեմատիկան կամք և բնաւորութիւն զարգացնելու կրթական ամենածանրակշիւ գործում, արժէ միայն վիշել, որ նա բոլոր գիտելիքներից ամենաշատ լարւած ուժն է պահանջում: Միայն թէ մաթեմատիկայի դասաւանդութեան մեթոդն ուղիղ լինէր, ան ժամանակ մտքի այս վերին աստիճանի լարումը ոչ թէ ծանրութիւն, այլ հրճանք կը պատճառէր աշակերտին, ինչպէս որ մենք՝ ուսուցիչներս շատ անգամ՝ իբրեւ աշակերտ և ապա՝ դաստուռ, փորձել ենք:

Առաջին շրջանում դեր խաղացող առարկաներից մնացին լեզուն, երգը և նկարչութիւնը գրութեան հետ: Որովհետեւ այս առարկաները դեռ

1) Իմ մանկական մտածմունքներն այս խնդրի մասին, որոնց, կարծեմ, ինչպէս շատերը կարող էին ենթադրել, թերեւ հետաքրքրութիւնից զուրկ չը լինէին: Երբ ես ուսայ թւաբանական ամենախոք քանակութիւնների տարական 4 գործողութիւնները, ինձանում այսպիսի հարց ծագեց. եթէ տէրտէրն ասում է, թէ Աստուած ամենա կարող է, մի՞թէ այդ Ամենա կարողը չի կարող այնպէս անել, որ 2×2 չորս չը լինի, $10:2$ անպատճառ չը լինի և այլն: Չը գիտեմ այս հարցի վերջերումն էր թէ պատանեկանիս սկզբներում, որ ես սկսեցի գալ այն համոզմունքին, որ իմաստուն Աստուածը այդպէս անմիտ բան չի կարող կամեալ: Եւ քանի աւելի ընդարձակեց բնական երևոյթներին յարակից իմ մաթեմատիկական մտաւոր շրջանը, այնքան ևս աւելապաւ իմ հիացումը:

ևս անկարող են այս շրջանում իրանց ոլժերը ամբողջ բազմակողմանիութեամբ զործելու, ուստի այստեղ մենք նրանցով պարապելու ենք դեռ հարեանցի կերպով:

4. ԼԵՁՈՒԻ ԵՒ ԳԵՂԱՐԻԵՍՏՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ

ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ:

Լեզուն, իբրև արտապատիչ զանազան գիտելիքների՝ զտուժմարդում է մանկան ներքին աշխարհը: Մտքեր ու զգացմունքներ, երբ նրանք ընտիր ու պարզ արտապատիվ լինելից զուրկ են, այն ժամանակ նրանք ինչպէս որ լսողի և ընթերցողի վերաջ խոր ապաւորութիւն չեն գործում, նույնպէս էլ նրանց արտապատիվ ներքին աշխարհը մի անորոշ, խառն գրութեան մէջ են թողնում: Մտքեր ու զգացմունքներ, կարծես, միայն այն ժամանակ են կեանք առնում, երբ նրանք արտապատիվ են: Պարզ է, որ միայն կենսալի մտքերն ու զգացմունքները կարող են մարդու կեանքին ուղեցոյց լինել:

Լեզուն իւր ընտիր ընթերցարանի միջոցով, որ կազմւելու է համաձայն կենդրոնացուցման սկզբունքին՝ հարստացնում ու կատարելագործում է միւս գիտելիքներից ստացած մտաւոր շրջանները: Սկզբնական ընթերցանութիւնը, որ պահանջում է մտապատկերների որոշ շարաւարտութիւն և դեռ մեքենայականութեան չէ հասած՝ պակաս չի նպաստում կամքի և հետևաբար բնաւորութեան զարգացմանը:

Գրութիւնն ու նկարչութիւնն առաջին տարում հեռու են գեղարւեստից: Մանկան թույլ ձեռքը դեռ անկարող է գեղապրութեան ու խեղճական նկարչութեան: Այնու ամենայնիւ մենք տեսնում ենք, որ մանաւանդ «պատկերահանութիւնը» մանկանը առանձին հրճանք է պատճառում. նորան իւր խղբղած կատուն, կարծես, աւելի մօտ է երևում իրականին, քան ձիթանկար պատկերը: Հէքիաթաբանական կեանքի շրջանն է սլո, որ ապրում է աւելի երևակալութեամբ՝ քան իրականութեամբ:

Նրբն էլ առաջին տարում աւելի իւր համաչափութեամբ է մանկանը հրճանք պատճառում: Որքան էլ նա պարզ լինի, այնու ամենայնիւ երգող մանկանը ոգևորում ու նորա մտքերը թարմ հոսանքի է ենթարկում:

Նրկրորդ և երրորդ տարիներում այս առարկաները հետզհետեւ աւելի գեղարւեստի կերպարանք են ստանում: Բարդական և գեղարւեստական զգացմունքներն իրանց ամենազլխաւոր լատիւթեամբ միմեծն աղբիւրից են ծագում, որ է համաչափութիւնը (սիմմետրիա): Բնաւորութեան սէր մարդու ներքին կեանքն իւր արտապատիվ լինենքով նման է չափած ու ձեռած, գեղարւեստական նախադժով կառուցած մի հիմնալի շինւածքի, որի իւրաքանչիւր մասը թէ հաւասարակշռութեան և թէ գեղարւեստական

ամբողջութեան համար իւր սեպհական նշանակութիւնն ունի: Բնաւորութեան տէր մարդու իւրաքանչիւր վարմունք, իւրաքանչիւր գործ իւր որոշ նպատակն ունի: Ինչպէս որ մի գեղարւեստական շինւածքի մի մասը տեսնելով՝ միւսի վերաբերմամբ արդէն որոշ գաղափար կազմել կարող ենք, աչնպէս էլ բնաւորութեան տէր մարդու աչս կամ աչն դէպքում բռնելիք զիրքը մեզ կարող է նախապէս չափնի լինել:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՒԱՔԼԿԱՆ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԵՐՏՏՆԵՐԻ Բ. ՇՐՋԱՆԻ՝ 4—8-Տ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՅ:

Ուսումնարանական կեանքի աչս շրջանում դեռահաս մարդը, թողնելով լոկ վաղելական հակումները՝ թեկոխում է մի աւելի բարձր կեանք, ընտրողութեան (ժողովրդական ուսումնարանի միջին դասարանի) և զիտաւորութեան (բարձր դասարանների) աստիճանը: Մինչդեռ ժողովրդական ուսումնարանն իւր սաներին 15 տարեկան հասակում կրթութեան վերջաւորութեան է մօտեցնում և շտապում է մաքսիմի աստիճանին հասցնել, միջնակարգ ուսումնարանն աւելի դանդաղ և հիմնաւոր ընթացքով է չառաջ մղում իւր աշակերտներին իւրաքանչիւր աստիճանի զարգացումը:

1. ԿՐՕՆԱԴԻՏՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ:

Աչս շրջանում սրբազան պատմութեան ուսուցումն արդէն առաջնակարգ տեղ է բռնում: Նրորոգ տարւանից սկսած լինելով Հին-Ուխտի պատմութիւնը, չորրորդից՝ դասարանի ուշադրութիւնը և ամբողջ ուսուցումը կենդրոնացնելու է Նոր-Ուխտի պատմութեան շուրջը:

Ի՞նչ է սպասում դատախարակութիւնն աչս նիւթից: Հարկաւ, աչն չէ նորա սպասելիքն աչս աստուածաշունչ պատմութիւններից, ինչ որ ցարդ, հազապիւտ բացառութեամբ, մեր ուսումնարաններում «բերան անել տալուց» է առաջանում: Ամենաաջողակ դէպքերում աչդ պատմութիւնները կարող էին (եւր կրօնուսուցչին չաջողում էր զգացւած սրտով և ճարտար լեզուով պատմել) միաչն առժամանակեալ ցնցումներ չառաջացնել, որոնք սակաչն, ինչպէս մեր հոգեբանական վերլուծութիւնը ցուց տւեց, հոգեկան կեանքի անցողական շարժումներ լինելով՝ չէին կարող նորանում մնաչուն գրութիւններ բառաջացնել: Աչ բան է, եթէ դասաւանդութիւնը կանոնաւոր է: Մանուկն և աղա պատանին աչս շրջանում կանգնած է լինում ընտրողութեան և ապա զիտաւորութեան աստիճանների վերաչ: Ահա Քրիստոսի հարուստ և բեղմնաւոր կեանքն իւր ողորիչ վարդապետութիւններով նոր հոսանքի է կենթարկում աշա-

կերտի ներքին կեանքը: Նթէ դասաւանդութիւնը տաղակացուցիչ է, ալ կատարուում է քրիստոնէական վարդապետութեան առաջին Ուսուցչի ոգով, ալն ժամանակ նաև աշակերտը կը զգայ իրան նոր մտաւոր աշխարհում աղնպէս, ինչպէս Քրիստոսի ունկնդիրները լսելով Նորա խօսքը՝ սթափուում էին խաւարից ու հիանում: Պատանին, որ ղեկավարուում է ընտրողութեան և զիտաւորութեան (սուբեկտիւ կամքի առաջին և երկրորդ աստիճաններով) ցուցմունքներով, ալժամ սկսում է ալզ հոգեկան զործառնութիւնները ոչ միայն իւր առտնին կեանքի նպատակներին ծառայցնել (որ է խելօքութեան և նպատակաւարմարութեան աստիճանը), ալ և նոր վարդապետութիւնից առաջացած զգացմունքները զանազան ուղղութեամբ մտապատկերների ցանցը հետզհետէ կը կապեն պատանու զիտաւորութիւններն ու ձգտումները նորան ոգևորող բարոյական գաղափարների հետ: Բարոյական գաղափարներն արդէն ուսումնարանական առաջին տարիներից իրանց հիմնական մտապատկերներն ստանալով՝ հետզհետէ, շնորհիւ մի նախադած կանոնաւոր դասաւանդութեան, ուր հարկ էր լինում, բիւրեղի (կրիստալի) նման իրանց էին քարշում համանման մտապատկերները, (ինչպէս բիւրեղը կրիստալիզացիայի ժամանակ՝ համանման մասնիկները): Ինչպէս որ մտապատկերներից դատողութեան միջոցով գաղափարներ էին կազմում, նոնպէս էլ գաղափարներից նոն ևզանալով՝ ալժամ մաքսիմներ: Նւ ալսպէս՝ ժողովրդական ուսումնարանի աշակերտը մօտենում է իւր ուսումնարանական կրթութեան վերջին, իսկ միջնակարգին՝ շտապելու հարկ էր զգալով պատրաստուում է սկզբունքներին՝ աստիճանի համար:

2. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՁ ԱԶՂԵՅՈՒԹԻՒՆԸ:

Կրօնագիտութեան հետ զուգընթացաբար լառաջ են գնում ընդհանուր և ազգային պատմութիւնը, որոնց նշանակութիւնը կրթական ուսումնարանի համար գլխաւորապէս պէտք է ոչ ալնքան փիլիսոփայական-պատմական, որքան բարոյական կրթական տեսնող և նց ի առնենալ:

Այս շրջանում պատանին ալ ևս ալնպէս էի գրաւում հէքիաթի և զիւցաղներդութեան մտացածին պատմութիւններով. նա արդէն սկսում է քննական հալեացքով նալել իւր մանկական հասակին հաւանելի և գրաւիչ պատմութիւնների վերալ: Ալժամ նորա մէջ ըտուեն ձգտում կալ՝ ծանօթանալու և բարեկամանալու իրական կեանքում գործող հերոսներին հետ: Պատանին, որ սիրում է արդէն խորասուզել և մտապատկերների ամբողջ շարքեր կազմել, ամբողջ հիւսւածք ապազալ հաւանականութիւններ և զէպքերի, աւելի և աւելի է սկսում պտուել իրան ոգևորող աղնիւ գաղափարների հերոսներին: Իւր ալս սիրելիներին՝ նա ուղեկցում է բոլորով սրտիւ, նրանց մէջ ուղում է մարմնացած տեսնել իւր

իղձերն ու փափաղները: Նրանց չաղթութիւնն՝ իւր չաղթութիւնն է, նրանց պարտութիւնը՝ իւր պարտութիւնը: Եւ այսպէս սգեորւած բարոյական զաղափարներով ու խրախուսւած նրանց իրազործելու չղսերով՝ առանձին զաղափարներից մաքսիմներ են պատրաստուում:

3. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ:

Բնագիտական առարկաներն ու աշխարհագրութիւնն, եթէ, մանաւանդ առաջին երկու տարիներում, հայրենագիտութեան կերպարանք ունէին, արդ նրանք միմեանցից զատուելով՝ առանձին և ինքնուրույն համակարգութիւններ են կազմում:

Առաջին տարիներում հայրենագիտութիւնն իւր այս բազմակողմանի տարրերի միջոցով աստուածալին նախախնամութեան և նորանից կախման մէջ լինելու մտքերը ծնեցրեց մանկան մէջ՝ իսկ հիմա վերջինս խորասուզւելով իւրաքանչիւր գիտելիքների մէջ՝ գիտակից է լինում բնական իրերի հրաշալի բազաղրութիւններին, ձևերին ու կեանքին: Բնական իրերի դասաւանդութիւնը կանոնաւոր կերպով չառաջ ընթանալով՝ պատանուն կ'ուսուցանէ հանքալին, բուսական և կենդանական թագաւորութիւնների փոխադարձ շարաբերութիւններն ու նրանց վերաբերութեամբ նախասահմանաւ տնօրինութիւնները: Եւ ահա՛ վրա է հասնում քիմիալի և ֆիզիկալի վերին աստիճանի հետաքրքրական գործունէութեան ուսուցումը հանքալին, բուսական և կենդանական թագաւորութիւններում: Մարդու միտքն աւելի ևս բարձրանում է, զբաղւելով հետազոտութեամբ և ականատես ու գիտակից լինելով բնութեան բխրաւոր հրաշալիքներին: Նրբ մարդու հոգին գիւրպզաց է լինում բնական երևոյթների վերաբերութեամբ, սիրում է բնութիւնը ոչ թէ շահագիտական, այլ ճշմարիտ հարցասիրական տեսակէտից, աչն ժամանակ, մենք ինչպէս տեսանք մեր հոգեբանական վերլուծութիւնից, նա աչս տրամադրութեան մէջ ալ ևս չի կարող ընդունակ լինել ստորակարգ հակումների և ձգտումների: Խօսելով հողերանական լեզուով՝ նորա զգալարանական ստորակարգ ցանկալիքներն արդէն աչնքան ճնշւած են լինում գիտակցութեան հօրիզոնում, որ անհնարին կամ գոնէ շատ դժւար կը լինի նորան ալ ևս երևան գալու և մտապատկերներին ու կամքին ուղղութիւն տալու: Այսպիսով և բնական գիտութիւնների կանոնաւոր ուսուցումը հետզհետէ կենդրոնացնում է աշակերտի մտապատկերները, հակումները, ձգտումները և սրանցից առաջացած զգացմունքները բարձր զաղափարների շուրջը: Այս բարձր զաղափարները կամ իդէաները դառնում են կենդրոնական կալարաններ, որոնցից կամքը հրահանգներ է ստանում:

Եթէ բնական գիտելիքները՝ նոյն իսկ հայրենագիտութիւնից սկսած՝

կանոնաւոր մեթօդով են աւանդուած, հինց մանկական տարիներէն մարդս ընտելանում է բնութիւնը բնախողի աչքով տեսնելու և սորա սուր մտքով ըմբռնելու: Եւ սոն բնութիւնը նորան կրեւում է ոչ թէ իբրեւ խառնիճազան՝ իրերի և երևոյթների հրապարակ, այլ միմեանց հետ առնչական գոյութիւն շարունակող իրերի հիանալի աշխարհ: Իւր մտածմունքներին ենթարկելու սովորած գլուխը վերառնելով, օրինակ՝ մի ամենաչնչին արարած՝ և քննելով նորա կեանքի ծագման պայմանները, զարգացումն, ազգադան և ալլն՝ հետամուտ է լինում մտածմունքների մի անվերջ շարաշարութեան, մի անսահման պատճառականութեան, որի սկզբնապատճառը միայն մի բարձրագոյն կենդրոնական էակ կարող էր լինել, որի խմատութիւնը նորան անհասանելի է, որին նա անքննելի Աստուած է կոչում: Մենք սոն աչս ուղղութեամբ խորհրդածելով էլ եկանք այն եզրակացութեան, որ նաեւ բնական գիտութիւններն ընդունակ են կրօնական-բարոյական զգացմունքների կենդրոն ստաջացնելու, կենդրոն, որից մենք մեր ամեն բարի գործերին խրախուս սնք սպասում և վստութիւններին՝ պատիժ:

4. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱԶԻԵՑՈՒԹԻՒՆԸ:

Իսկապէս ասած՝ մենք կարող էինք բուսականին գծարութեան մէջ ընկնել, եթէ մեզ առանց այլ և ալլութեան առաջարկէին աշխարհագրութեան բարդալիւթիչ ազդեցութիւնը բացատրել: Սակայն հարկ չը կա՞ վհատելու. եթէ մենք ուշի ուշով հետեւենք այս աստիկալի մտաւոր շրջանի թելերին, մենք կարող ենք պատահել այնպիսիներին, որոնք ուղղակի կամ կողմնակի ճանապարհներով մեր նպատակին կը հասցնէին:

Ի՞նչ է աշխարհագրութիւնը և ի՞նչ նորա բովանդակութիւնը: Այս հարցը մեր ուշադրութիւնը դարձնում է այն գիտելիքների վերաջ, որոնք կապակից են աշխարհագրութեանը: Մենք խիտն վիշում ենք, որ մեր պատմական, բնագիտական և մաթեմատիկական գիտութիւնները գեղարուտականի հետ խիտն օգը կը ցնդէին, եթէ նրանց զրկէինք սաքի տակի հողից: Աշխարհագրութիւնը ոչ միայն մատակարարում է ալլ գիտելիքներին՝ հիմնական մտապատկերներն, այլ և նա կապակցում է նրանց միմեանց հետ, ուրեմն նա ամենալաւ կենդրոնացողութիւնը գորութիւնն ունի, որ այնքան կարեւորութիւն ունի բնաւորութեան կազմակերպութեան համար:

Ինքն ըստ ինքեան աշխարհագրութիւնն այն չէ, ինչ որ հինց առաջին օրից փակւած գատարաններումն են ուսուցանում, որ մի սրամիտ գերմանական մանկավարժ Papiergeographie (թղթաաշխարհագրութիւն) է անուանել: Աշխարհագրութիւնը չոր ու ցամաք թւարի ու անունների թղթի վերաջ ցոյց տալն ու նկարելը չէ, որ միայն տաղտակ կարող է պատճա-

ռել։ Նա միայն ալն ժամանակ հրճանք կարող է պատճառել, մարդու
մտաւոր հօրի գօնը բնական կերպով, երբ աշակերտը աշխարհագրա-
կան տեղեկութիւնները մի ճանապարհորդի պէս է ընդունում.
կամ որպէս զի մանուկը և բնական պոթեամբ ճանապարհորդել կա-
րողանալ, նորա ֆանտազիան պէտք է բազմակողմանի փորձնական տեղե-
կութիւնների ունենալ հայրենի քաղաքի կամ գիւղի ու նրանց շրջակայքի
աշխարհագրական երեւոյթների մասին։ Նրբ մարդու միտքը կը հարստա-
նալ հայրենի աշխարհից ստացած իւրացուցիչ մտադրտկերներով ու դա-
զադարներով, միայն ալն ժամանակ և նորան հնարաւոր կը լինի օտար երկ-
րի մասին նկարագրութեան միջոցով դադափալ կազմել։ Ապա թէ ոչ,
եթէ օրինակ՝ աշակերտը լեռները նկարների և կադաւրաների (մօդէլների)
կիջոցով է ճանաչում, նա կարող է մօտեացի օրիւրի պէս՝ լեռ տեսնելիս՝
միջոցով է ճանաչում, նա կարող է մօտեացի օրիւրի պէս՝ լեռ տեսնելիս՝
գարմանալ ու բացականչել. «Мама, мама, натуральныя горы!» (մայրիկ, մա-
րիկ, բնական լեռներ)։ Այսպիսի ընթերցողը, որ, ի հարկէ, նաև գադափալ
չի ունենալ նորա մասին, թէ որքան ժամանակ և ուժ է գործադրում,
օրինակ՝ մի վերստ անցնելու համար, նա խնչ գադափալ պէտք է կազմէ
ալս կամ ալն ճանապարհորդութիւնների նկարագրութիւնները կարդալու
ի հարկէ, կը համաձայնէր աշխարհագրութեան դաստոտն, որ սլս
գիտելիքը մարդու ներքին աշխարհը բոլորովն ալ կերպ կը քեղափոխէր,
եթէ նա բովանդակէր ընտիր քաղաքական, անտեսական, բնագիտական և
մաթեմատիկական տեղեկութիւններ, սրանցով լուսաբանէր և սրանց լուսա-
բանէր ինչ ասել կ'ուզի, որ մի այսպիսի հիմնաւոր ու բազմակողմանի
աշխարհագրական տեղեկութիւնը և՛ սլս երկրի անցեալ պատմական կեան-
քի հասկանալուն մեզ շատ նպաստամատուց կը լինէր։

5. ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻԶ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ:

Մաթեմատիկան արդէն ստորին դասարաններից սկսել էր իւր դերը կատարել: Միջին դասարաններում նա արդէն մոտաւատկերների ամբողջ համակարգութիւններ է զբաղեցնում: Հանրահաշիւը (ալգեբրան), երկրաչափութիւնը, եռանկիւնաչափութիւնն իրանց քանակութիւնների և ձևերի հիմնալի հարմօնիալով աւելի և աւելի են պատանուը զմայլեցնում: Եթէ մաթեմատիկական այս ճշմարտութիւնները դռնէն են աշակերտների սեղ հակաւն ջա նք եր ով (հանկանալի է՝ ուսուցչի՝ օժանդակութեամբ) և նրանք մինեոյն ժամանակ այդ ճշմարտութիւնների միջոցով դիտա-կից են եղել բնական իրերի և երևոյթների զարմանալի լարաբերութիւն-ներին, աչն ժամանակ մաթեմատիկալի դասաւանդութիւնը հասել է իւր կրթիչ նպատակին: Մաթեմատիկան, անշուշտ, հաւած ոլւոք է համա-րել իւր վերոյիշեալ նպատակին, որովհետև այս մեթոդով աւանդւելիա՝ ճա-անպատճառ զարգացրած կը լինէր սովորւն կամք և բնութեան սքան-

չեւիքների գիտակցութիւն, որ է և՛ աստուածային էութեան ճանաչողութիւն, որքան մեր մարդկային միտքը նորան իւր գործերից ճանաչել կարող է:

6. ՄԱՅՐԵՆԻ ԵՒ ՕՏԱՐ ԼԵՂՈՒՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ:

Միջին դասարանների մայրենի և օտար լեզուների նիւթը բարոյական տեսակէտից արդէն աւելի լուրջ և կրթիչ չարաբերութիւններ է պարունակում: Մայրենի և օտար լեզուների ձևական և մտաւոր առանձնաչափութիւնների համեմատութիւններն արդէն հանում են պատանուն հայրենի նեղ շրջանից և երևակայութեամբ այլ երկիրներ տանելով՝ ընդարձակում են նորա մտքի հօրիզոնը և նախապատրաստում բնաւորութիւնը, որովհետեւ «հայրենիք և աշխարհ պէտք է նորա վերայ աղղեն»: Պատանին երևակայութեամբ կեանքի հոսանքը մտնելով՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ տեսականապէս փորձառութիւններ է անում. նա երևակայութեամբ հանդիպում է զանազան ղուգաղիսութիւնների, որոնց բարոյական տեսակէտից ընտրողութիւնը կաղմակերպում է նորա մէջ մտապատկերների դիւրասահ շարքեր. այս դիւրասահ շարքերն են, որոնք, իրական կեանքում նմանօրինակ դէպքերում մի հարց ծագելիս, կարծես, հեռագրաթելերի նման մի ակնթարթում կարենորը հաղորդում են պատշաճաւոր կենդրոններին: Եթէ մտապատկերների վերոյիշեալ շարքերը սերտ չարաբերութեան մէջ չը լինէին, այն ժամանակ, մի հարց ծագելիս՝ դեռ շատ ուղղութիւնների պէտք է նա դիմէր, մինչև որ իրան վերջնական վճիռ տուող կենդրոնը գտնէր: Իսկ հոգեբանութիւնը մեզ ուսուցանում է, որ մտապատկերների շարքերը քանի չաճախ վերարտադրին, այնքան ևս առաւել նրանք կը սերտանան: Ապա ուրեմն, եթէ սաների ստացած գաղափարները մեռած գանձ պէտք է չը մնան, նրանց պէտք է առիթներ տալ՝ զանազան ուղղութիւններով վերարտադրելու և միշտ կենդանի մնալու: Այսպիսի մտաւոր թարմութիւն հնարաւոր է, ինչպէս իմ ուսուցիչ ընթերցողներից մի մասին լսեցի կը լինի, «ձևական աստիճանների» և «կենդրոնացման» մեթոդների դործադրութեամբ:

7. ԳԵՂԱՐԻԵՍՏԵՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ:

Գեղարւեստներից նկարչութիւնը, որով պարտաւերա փափաքը իսկապէս հենց մանկական կեանքի առաջին տարիներից է պարզանում, պատանեկական հասակում արդէն հրապուրիչ է դառնում: Նախ՝ գործելու բուռն զրգիւն էր «նկարիչ-մանկան» ձեռքը շարժողը, իսկ պատա-

Նին արդէն զմալլու է դեղեցկութեամբ: Ի հարկէ, ես մտածում եմ ան դասաւանդութեան մասին, որ ոչ թէ մեքենայական արտանկարելով է պարապեցնում, այլ իսկական ինքնուրոյն նկարելով: Այն ժամանակ կարելի էր տեսնել, որ փոքրիկ աշակերտներ, զրաւած հայրենի ճարտարապետութեան նկարչութեամբ՝ դասամիջոցին փոխանակ նախաճաշելու և խաղալու՝ եկեղեցու դուռն են վաղում՝ նկարը շարունակելու և զրանք հալկական հասարակ բնտանիքի դաւակներ էին: Զմալլեցուցիչ և միանգամայն միլիթարիչ չէ՞ միթէ ալս երևոյթը: Մի՞թէ ալսպիտի աշակերտը կարող է ալ ևս հակում ունենալ դէպի ստոր ու լպիրշ աւարկաներն ու երևոյթները:—Նրանց մէջ արդէն վառւել է աստուածային հուրը, ցնծում էի ես, որ այրում է ամեն նիսած ու վարակիչ մտածմունք:

Նրդեցողութիւնն ալս շրջանում ձալնագրական համաշարիութիւնների միջոցով մի առանձին դիւթիչ դեր է խաղում: Նա ոգևորում է երգչին ու նորա եղանակը իմաստի հետ բազմաթիւ մտաւոր թելեր (մտապատկերներ շարքեր) ու կապարաններ (զաղափարներ) է թրթռացնում: Նթէ մի երգ երգւել է աշակերտի ալնպիտի տրամադրութեան ժամանակ, որ ալդ նորա ոգուն համապատասխան է եղել, ալդ երգի կրկնութիւնը, մինչև անգամ շատ տարիներ փտող, մի ակնթարթում վերարտադրում է բաղմաթիւ մտածմունքներ ու զգացմունքներ, զորօրինակ՝ «Նորահրաշ պսակաւոր...» խօսքերը վարդանանց տօնին:

Ալս ուսումնարանական նշանաւոր շրջանի դիտելիքների բարոյակըրթի տարրերը հետազօտելով՝ մենք փշեցինք նրանց միայն ականաւորները: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ առանց հոգեբանական ճիշդ մեղօթի մաքսիմներ կամ վարւեցողութեան կանոններ կազմելն, եթէ չ'ատենք անհնարին է, զոնէ շատ կցկտուր և թերի կարող էր լինել: Վերացական զաղափարներ, որոնք ընդունակ լինէին մարդու գործողութիւններին ուղղութիւն տալու, կարող են միայն թանձրացեալից (կենդանի օրինակների համեմատութիւններից) վերացուցման միջոցով հոգու մէջ հետզհետէ կազմակերպւիլ: Նթէ զաղափարը միշտ թարմ հաղորդակցութեան մէջ է իւր աղբիւրների հետ՝ ան ժամանակ կողր կամ մեռած Փրազ չէ (որով վարակածներ քիչ չեն պատահում), ալ կենսալի և գիտակից հոգեկան կալան, որ մեզ ոչ թէ կուրօքէն է առաջնորդում, ալ լիակատար գիտակցութեամբ:

Գ. ՇՐՋԱՆ 8—11 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՍԿԶԻՆԱԻՐՈՒԹԵԱՆ:

Գեռահաս մարդն անցնելով մտաւոր կազմակերպութեան հետեւեալ ա. մտապատկերների, բ. մտապատկերների համալամբութիւններին,

դ. ընտրողութեան, դ. ղիտաւորութեան, և և. մաքսիմի աստիճանները՝ վերջապէս հասնում է վերջին՝ դ. սկզբունքներին աստիճանին: Մինչև հինգերորդ, աչխնքն՝ մաքսիմի աստիճանը, նա ղեկավարում էր նախ ոտորին ղզալարանական հաճութեանով, ապա նպատակադարմարութեան միտումներով, որոնք տողորւած էին եսականութեամբ (էգօիզմուս): Իսկ երբ նորանում կազմակերպւում են մաքսիմներ ու սկզբունքներ, աչն ժամանակ բարոյականութիւնն է, որ նորան ուղեցոյց է լինում ¹⁾:

Տարաբաղդարար շատ աղղութիւնների ղեռահատ սերնդի մի սուար մասը ղրկւած է լինում ուսումնարանական դաստիարակութիւնից, իսկ արժանայածների էլ մեծամասնութիւնը չքաւոր լինելով՝ հաղիւ կարող է մաքսիմի աստիճանին հասնել: Ուրեմն նաև ներկալ դարու քաղաքակրթեալ համարւած աղղութիւնների նոր սերնդի մեծագոյն մասը ղեռ. թերուս կամ անուսում և աղբալէս անպատրաստ է կեանք մտնում: Հասկանալի է, որ աչալէս նոր սերունդը նոյն չափով ապարաղղ է, որչափով աղէտ ու անբարոյական է նորան իրական կեանք ընդունող հասարակութիւնը: Աչ ուղղութեամբ մտածելով՝ մենք տեսնում ենք, թէ նոյն իսկ «քաղաքակրթւած աղղերին ղեռ. ո՛րքան մտաւոր, բարոյական ու տնտեսական ուժերի կենդրոնացում է հարկաւոր, որալէս ղի նրանք մի ժամանակ լիովին արժանի լինէին աղ խորհրդաւոր կոչմանը:

Թէ ժողովրդական և թէ միջնակարգ ուսումնարանի ընթացաւարտը կեանք մտնելով՝ ղեռ. շատ կարօտութիւն ունի բարոյալէս կատարելագործւելու: Թէև կան հասարակական կրթիչ հիմնարկութիւններ, սակաչն ղրանցից ոչ ամենը անպալման նպաստում են աչ ծանրակշիւ գործին:

Նա աւելորդ ևս համարում ալ ևս խօսել, թէ ինչալէս են կաղմակերպւում սկղբունքները դասարանական գիտելիքների միջոցով, որովհետև ևս մաքսիմների մասին արղէն խօսած լինելով՝ մեր խնդրի աչս ընդհանուր տեսութիւնը վերջացած ևս համարում: Սկղբունքները կաղմում են մաքսիմների համախմբութիւններից. սկղբունքը նմանօրինակ մաքսիմների հաւաքական եղրակացութիւնն է:

¹⁾ Նս յոյս ունիմ, որ իմ ընթերցողը հոգու. ղարգացման աչս աստիճանները իմաստը չը պէտք է տաւացի հասկանայ: Աչս աստիճանները տւած են՝ մարղկային հասակի տիպիկական երեւոյթներն ի նկատի ունենալով: Բնչալէս որ մարղկանց և ամբողջ աղղութիւններին ղանաղան տեսւերամեհու են վերաղբում, չը նայելով որ նոյն իսկ անհնաւորութեան կեանքի մէջ ըիւրաւոր երեւոյթներ հալասում են նորա ընդհանուր տեսւերամեհոյն: Աչալէս՝ մենք տկանատես ենք լինում, որ արղէն մանկալուն վաղ հասակում 3-4 տարիներում, երեան են ղալխու բարոյական դաղալարներ ու սրանցից աւաղացած ղղացմունքներ, թէև ամեն ղէպքում ղրանց թեղութեանը չը պէտք է հաւատալ:

Վերջին 1—2 դասարանները աւելի պարագում են զիտելիքները սիստեմաների տակ դնելով, որ միևնույն է թէ՛ ընդհանուր սկզբունքներ մշակելով: Եթէ վաճառան գիտելիքների սկզբունքները միմեանց հետ կապ չ'ունին, նրանք նաև կհանքի մէջ մտաւուն են ատանձնացած: Ներքին կենդրոնացումից զուրկ մարդը ողորմելի է, որովհետև նա իւր ամբողջ կեանքում եղեգնի նման տատանւելու է:

Իւրաքանչիւր անգամ, երբ ես մտածում էի թէ՛ մալիս մասին, իմ տեսութեանը, քանի գնում, աչքան ես առաւել պաշտառ գոչներով երևան էին դալիս երկու հետաքրքրական տեսարաններ: Ես կը ցանկալի եմ իմ ընթերցողին նրանց ներկայացնել. սակայն, երբ զրիչը ձեռքս եմ առնում, զգում եմ, որ միայն մի ազատ լուս պէտք է կարողանամ նրանց վերադասել: Ինձ նաև ալս լուս էին ներկայանում են երկու պատկերներ, մի-նը գերմանական և միւսը հայկական ուսումնարանից: Առաջինում՝ ես պարագել էի միևնուս ուսանողների հետ մեր մանկավարժական իդէալին մօտ ծրագրով, իսկ երկրորդում՝ ես պարագել էի մի կցկտուր ծրագրով: Եւ ահա իմ գերմանացի դասարանի մտաւոր աշխարհն ինձ ներկայանում է, իբրև մի գեղեցիկ մշակւած երկիր, բազմապիսի քաղաքներով, գիւղերով, հիմնարկութիւններով, գործարաններով... Բնական կենդրոններ չարժուում են, կարծես միմեանցից անկախ, բայց երբ մօտենում ես նրանց, տեսնում ես, որ բոլորը մի ընդհանուր նպատակի են ծառայում, բոլորը միմեանց հետ սերտ կապերով են կապւած: Նրանց մտքերն ու զգացմունքները շարունակ հաղորդւում են հաղաբաւոր հեռագրաթիւերի, հեռախօսների և երկաթուղիների բնարտադրիկ հիւսւածքներով: Եւ եւրոպական կեանքին կամ պատւին վերաբերեալ մի ձայն, մի խնդիր է առաջարկւում նորա լուծմանը, և ահա մի ակնթարթում բոլոր կալարանները աներևակալելի շարժման մէջ մտան: Ամբողջ երկիրն զգացւած է և մի սիրտ ու մի հոգի է դառնում:

Հիմա իմ աչքը դարձնում եմ իմ հայկական դասարանի կողմը, և ես տեսնում մտաւոր կեանքի աշխարհը քանի գնում, աւելի ու աւելի պարզւում է ինձ: Ես քննում եմ ալդ հոգը՝ նա թարմ ու պարարտ է: Մօտենում եմ նորա գործունէութեան կենդրոններին՝ ինչ եւս տեսնում. նրանք կամ մարած են կամ հոգեւորքի մէջ են: Եթէ ինձ պատահում են քիչ թէ շատ զօրեղ կենդրոններ, տեսնում եմ, որ նրանք հարկան կենդրոններին հետ հաղորդակցութիւնից զուրկ լինելով՝ զուրկ են նաև նրանց օժանդակութիւնից. հաղորդակցութեան միջոցներ կամ չը կան և կամ թէ չէ՝ կտրատւել ու խախտւել են: Ահա մի ձայն հասաւ կենդրոններէից մէկին. ոստատանւեց, զգաց, որ անգոր է բազմակողմանի վճիռ տալու: Նա շտապում է ալս ու աչք կողմը հրեշտակներ (մտապատկերների շարքեր) ուղարկել, բայց սրանք՝ կամ ճանապարհ չը գտնելուց վտակ են դառնում և կամ մահաւան են դատապարտւում (հակառակ մտապատկերներից):

Ո՞ւր մնաց ալդ անձնաւորութեան «մի ուրտ ու մի հողին» — ես նորան չը դատէ:

Վերջացնելով ներկալ հետադարձութիւնը՝ ես ինձ նպատակիս հասած կը համարեմ, եթէ կրթական գործին նւիրած անձնաւորութեանը սորանով առիթ տւած լինէի աւելի խորը մտածելու ուսումնարանական գիտելիքների բարդակրթիչ զօրութեան մասին: Եթէ բարդական կեանքի զարգացման օրէնքներին աւելի ուշադրութիւն դարձնենք և մեր ուսուցիչներին պատրաստութիւն և ժամանակ տանք նրանց հասկանալու և գործադրելու, ալն ժամանակ պէտք է հաստատապէս չուսալ, որ մեր կրթական գործն անհամեմատ աւելի ուրախալի կերպարանք կը ստանալ, քան մինչև այսօր էր:

* * *

ՕՍԿԱՐ ԲԱԴՎԻՑԻՅ

Արժիւեանի

Քանի պայծառ, գեղատեսիլ ինձ ժպտում է պարզ երկինք,
ես չեմ խորհում թէ կան մռայլ նան ամպ ու փոթորիկ,
ձակատու բաց՝ լառաջ կերթամ ես անվհատ, անսասան,
Քանի կեանքը դեռ չէ դրոշմել ճակտիս կնիք ծերութեան...

Թող մօտալուտ անկեանք աշուն բերէ իւր հեռ մերկութիւն,
Ծաղիկն անհոգ՝ միշտ կը փթթի, չ'սպասելով նրա գալուն.
Երբէք աստղը չէ մտածում՝ ցոլալով կէս-գիշերին,
Թէ ինքն անհեռ հանգչելու է արշալոյսի վառ ժամին:

Մօսկւա. 20 • դոստոսի, 1889 թ.

ԱԶԳԱՅԻՆ ՎԷՊ

Մ. ԱՅԵՂԵԱՆԻ

«Սասունցի Դաւիթ» կամ «Մերի դուռ», Կ. Պոլիս, 1874, եւ «Դաւիթ եւ Մեր»,
Շուշի, 1889, ժողովրդական պատումներն իբրեւ կէս-պատմական եւ կէս-դի-
ցազնական հին վէպ:

Ա.

Հալոց ժողովրդական բանահիւսութիւնն ընդհանրապէս աղքատ է համարուում բանաստեղծական արդիւնքներով, մանաւանդ վէպերով. և մինչև վերջին ժամանակներս ժողովրդական բանահիւսութեան անծանօթութեան պատճառով կարծուում էին իսկ, թէ մեր ժողովուրդը ի բնէ բանաստեղծական չնորհք չէ ունեցել: Մոխէս Խորենացին իրանից առաջ եղած և իւր ժամանակի հայերի համար ասում է. «Որպէս ալժմ՝ և առ հինոն Հայաստանեայց լեալ անսիրելութիւն խմաստութեան և երգարանաց բանաւորաց» (ա. գիրք, գ. զլ.): Բանահիւսական արդիւնքների սույն անսիրելութիւնը կրկնած են և շատերը, երբ որ խօսք է եղել մեր հին և նոր ժողովրդական բանաստեղծութեան աղքատութեան մասին: Բայց այս կարծիքը—թէ հայերը բանաստեղծութեան սէր և չնորհք չեն ունեցել—ընդունելով հանդերձ՝ խորհրդածուները զարմանում էին միանգամայն՝ թէ ինչպէս կարելի է, որ մի արևելեան հին ժողովուրդ, որ ապրում է Հայաստանի նման բնութեամբ հարուստ մի աշխարհում, չ'ունենար իւր որոշ ատիւժանի երևակայութեան ուժը և չ'արտադրէր ստեղծագործական արդիւնքներ: Զարմանքն արդարացի է. բայց եթէ պտուելու լինինք զարմանքի պատճառները, կը տեսնենք, որ բնութիւնը հէնց սկզբից աչքան էլ չէ զլացել բանաստեղծութեան ձիրք տալու հալ ժողովրդին, որ աչնպէս մեծ անտարբերութիւն չէ ունեցել զվրէժ բանահիւսական ստեղծագործութիւնը, ինչպէս Խորենացին բարկացած ա-

տում է, երբ որ իւր պատմութեան համար չէ գտնում նախնի թագաւոր-
ների թողած դրաւոր, պատրաստի լիշատակաբաններ:

Ամենից առաջ պէտք է նկատել, որ մեր հին ժողովրդական բանա-
հիւսութիւնը, զրի չ'առնելով, մեզ չէ հասել. իսկ ժամանակակից բա-
նահիւսութեան նկատմամբ՝ մենք չը գիտենք թէ մեր ժողովրդի մէջ աչժմ
որքան երդեր և վէպեր կան. մենք ծանօթ չենք մեր ժողովրդա-
կան բանահիւսութեան աղբատութեան կամ հարստութեան աստիճանին:
Թէպէտև, որքան կապնի է, մեր կողմից ժողովրդի մէջ չատ էլ չը կան
հալերէն լեզուով երգեր և վէպեր, բացի հէքիաթներէից, բայց և աշնպէս
կարծում ենք, որ՝ եթէ մեր ժողովրդի, աւելի տաճկահայերի, բանահիւ-
սական արդիւնքները բոլորը հաւաքւելու լինին, դեռ ևս չատ զանձեր կը
գտնեն, որոնց մասին տեղեկութիւն չ'ունինք, և որոնք կարող են մի
պատուաւոր հարստութիւն տալ մեր ժողովրդական բանաստեղծութեանը:

Հեթանոսութեան ժամանակ, չը նաչելով Խորենացու գանգատին,
նոյն իսկ Խորենացուց և ուրիշ մատենադիրներից արդէն կապնի է, որ
հայերս ունեցել ենք զիցաբանական, զիւցաղնական և պատմական մեծ
վէպեր, որոնք ժողովրդի բերանում կենդանի են եղել մինչև և. դարը,
երբ որ, թէպէտև քրիստոնեայ վարդապետները հակառակն էին քարոզում,
ժողովուրդը դեռ ևս սիրով երգում և լսում էր հեթանոսական ժամանակի
վիպասանութիւնը և հաւատում էր նորան: Այդ վէպերը մինչև Ժ. և ԺԱ.
վիպասանութիւն չեն մոռացւել, այլ շարունակւել են պատմւել, եթէ
ոչ ամբողջութեամբ, գոնէ հատ ու կտորներով: Բայց հէնց այդ ժամանակ-
ներից սկսած, շնորհիւ պատմական հանգամանքներին, հաջ ժողովրդական
բանաստեղծութիւնը հետզհետէ ընկնում է, հին վէպերն ու երգերը մոռաց-
ւում են և նրանց տեղ նորերը չեն ստեղծւում, և եթէ ստեղծւում էլ են՝
ոչ առաջինների չափ և նրանց գեղեցկութեամբ, մինչև որ ժողովրդական
բանաստեղծութիւնը, աչնպէս աղքատանալով, արդի դրութեամբ հասնում
է մեզ:

Սորա պատճառները զլիսաւորապէս պատմական չորս հանգամանք-
ների մէջ կարելի է տեսնել. ա) քաղաքին կեանքի նեղ վիճակը, բ) օտար
լեզուների տիրապետութիւնը հալոց լեզուի վերայ, գ) քրիստոնէութեան
աղբեցութիւնը և դ) գաղթականութիւնը:

Ամենահին ժամանակներից սկսած, երբ որ մեր աղղը նոր
էր մտնում իւր բանահիւսութեան զարգացման պատմական շր-
ջանի մէջ, երբ որ նոր ստեղծւած պատմական վէպերի հետ հին
զիւցաղնական վէպերը ժողովրդի բերանում դեռ ևս կենդանի էին մնում,
կապնի է, որ մեր ժողովուրդը շարունակ ենթակալ է եղել աշնպիսի զըժ-
բաղղ հանգամանքների, որոնք թող չեն տւել, որ նա մի փոքր թեթե-
ւունջ առնէ և աղատ բոլիներ ունենալ իրական աշխարհից մի փոքր վեր-
գաղափարական աշխարհը բարձրանալու: Ժողովուրդն աշնքան նեղ, ճնշւած

և աղքատ վիճակի մէջ է եղել, որ առօրեայ կեանքի հոգսերից աչք չէ բաց արել և հոգևոր սկսածանքի վերայ մտածելու միջոց չէ ունեցել: Միւս կողմից՝ զիւցաղնական և պատմական վէպերի համար հարկաւոր է իրական կեանքից վերցրած սիրադործական նիւթ, հարկաւոր են ժողովրդական հերոսներ, իսկ մեր պատմական կեանքը, մանաւանդ միջին և նոր դարերում, արդեօք տւել է հերոսներ, որոնք արժանի լինէին ժողովրդի ընդհանուր սքանչացմանը, և ժողովուրդն իւր չափաւորութեան բոլորներում հիանալով պատմէր և երգէր նրանց արարքների մասին: Մեր պատմութեան մէջ միայն հեծեծանք, աւերմունք, մատնութիւն, պարտութիւն և դերութիւն ենք տեսնում, հազիւ անգամ մանր քաջագործութիւններ, մեծ մասամբ տխուր ու ցաւալի դրութիւն, որ կարելի է միայն լուս մրմունջներով սղալ, և ոչ պանծալի զիւցաղնեղութեան նիւթ չլինել: Եւ մենք իրօք տեսնում ենք, որ միջին դարերի և նոր ժամանակների ժողովրդական բանաստեղծութիւնը հարուստ է աւելի մանր ողբական երգերով:

Օտար թաթարական և թիւրքական տարրի ճնշումն և աղղկեցութիւնն աչքքան է եղել մեր ժողովրդի վերայ, որ նույն իսկ հաւերէն լեզուն, քիչ է մնացել, որ առնւի ժողովրդի բերնից, և եթէ չէ առնւել, լեզուի բանաստեղծական, գեղեցիկ կողմն առնւել է, և մնացել է աչն, որ առօրեայ նիւթականն է վերաբերում: Ժողովուրդը, չ'ունենալով իւր սեպհական սրտադործութիւնները երգելու համար նիւթ, իւր չնչին խնդութիւններն ևս, սէբը, սկսել է երգել օտարին նմանելով, որովհետև ինքն իւր նեղւած կեանքի մէջ լիտ է մնացել և եթէ երբէք աչքը բաց է արել մէկ մէկ և ուղիւ է չալանել իւր սրտի զգացմունքը, տեսել է, որ իւր հետ ապրող օտարն արդէն վաղուց չալանել է նոյնը և աւելի գեղեցիկ կերպով, ինքն ևս աչն ժամանակ ահամալ ենթարկւել է օտարի աղղկեցութեանը, ահամալ սկսել է նմանել օտարի արտապատութեան եղանակին: Այս ենթարկութիւնն ու նմանողութիւնն աչն աստիճանին է հասել, որ արտապատութեան լեզուն անգամ մեր ժողովուրդն օտարից է վերցրել, որովհետև օտարի լեզուն իւր մալրինի լեզուի չափ ծանօթ է եղել իրան, և այս նորա համար, որ իւր լեզուն բանաստեղծութեան համար չառ լիտ է մնացել, աչն ինչ օտարինը զարգացած է եղել և ունեցել է բազմաթիւ պատրաստի ձևեր: Ո՞վ կարող է ասել, որ մեզանում եղած աչն բազմաթիւ երգերն ու վէպերը, որոնք ընդհանուր են հալին և թուրքին, մեծ մասամբ հալ մարդու մտքից չեն ստեղծւել, միայն օտար լեզանակով և լեզուով: Միթէ մեր աչքի առաջ նոյնը չէ կատարւում, որ հալը թուրքերէն է իւր զգացմունքներն երգում, որ ամբողջ հալ զիւղը հաւաքւում է ահանջ դնելու հալ աշուղի թուրքերէն լեզուով պատմած վէպին: Ինձ պատահել է հարցնել մի հալ աշուղի թէ ինչո՞ւ նա՝ հալ մարդ է՝ և իւր երգերը հալերէն չէ ասում: Որովհետև, պատասխանեց նա, — հալերէն լաւ չի դուրս գալիս, իսկ թուրքերէն թէ լաւ է լինում և թէ հեշտ եմ

հանում:—Ահա ժողովրդական բանաստեղծութեան աղքատութեան ակըն-
չալտնի պատճառը, ահ՜ որ ժողովրդական լեզուն չէ մնացել իւր զար-
դացման մէջ:

Հալոց լեզուն տիրապետող է եղել միայն ընտանիքի մէջ, բայց ըն-
տանիքի մէջ էլ կճռջ բերնով չեն արտասանում բանաստեղծական մեծ
երգեր և վէպեր. կընը սղը մարդուն հաւատար չէ եղել բանաստեղծական
և առհասարակ մտաւոր արդիւնքների մէջ. դորա համար և մենք ունինք
կանանց չօրինած միայն փոքր և թեթիւ երգեր, ջան-դիւլումներ և ալն,
որոնք հաւերէն լեզուով են:

Բայց եթէ նոր բանահիւսական ստեղծագործութիւններ չէ արել մեր
ժողովուրդը, գոնէ հին վէպերը պիտի սլահէր բերնէ բերան աւանդելով:
Դորա համար պէտք է ասել, որ հին վէպերի (հեթանոսութեան ժամանակի)
ժամանակը և մեր ժամանակը երկար միջոցով է բաժանւած. որքան և
ժողովրդի լիշողութիւնը զօրեղ լինէր, նրանք դարերի ընթացքում դար-
ձեալ մոռացութեան պիտի տրւէին, չը նորոգւելով ժաճանակակից տար-
բերով, մանաւանդ որ մեր պատմութիւնից չալտնի է՝ թէ կրօնաւորական
դատը ինչպէս թշնամաբար է վերաբերւել հեթանոսական ժամանակից ե-
կած ժողովրդական բանահիւսութեան արդիւնքների նկատմամբ: Կրօնա-
ւորներն ամենայն ջանքով աշխատել են մոռացութեան տալ ժողովրդին
հեթանոսական լիշատակները, դժբաղդաբար առանց դրի առնելու. և ալդ
մեծ մասամբ չաջողել է նրանց, մանաւանդ որ մեր ժողովուրդը Ս. դարից
սկսած հատաստ կապերով ամրացած է եղել եկեղեցու հետ: Սա-
կալն, եկեղեցու ալդ ազդեցութիւնը բոլորովին ոչնչացնող դեր
չէր կարող կատարել. նորա ազդեցութեան տակ հին վէպերը մասամբ
կարող էին քրիստոնէական ձև ստանալ և դարձեալ կենդանի մնալ, եթէ
չը լինէր մի ուրիշ հանգամանք—դադրեցականութիւնը:

Որպէս զի մի հին պատմական երգ կամ վէպ կենդանի մնալ, հար-
կաւոր է, որ նոյն խակ ժողովուրդը մնալ իւր տեղում, իւր հողի վերայ:
Վէպի անցքը, իրողութիւնը, սերտ կերպով կապւած է իւր աշխարհագրա-
կան տեղի հետ: Մեր ժողովուրդը մի փոքր զաւառում անգամ, չենք կա-
րող ասել, որ ամեն մի դարում չէ տեղափոխւել տեղից տեղ, թէ Հալաս-
տանի մէջ մի զաւառից միւսը և թէ հայրենիքից դուրս դէպի օտար եր-
կիրներ և դարձեալ նորից գէպի իւր հայրենիքը: Մենք չենք կարող մի
զաւառ, քաղաք կամ գիւղ անդամ ցոյց տալ, որի բնակիչները վկա-
լէին իրանց երեքհարիւր տարւալ հնութեան մասին: Մենք չատ ունենք
քաղաքներ և գիւղեր, որոնց անունները հին են, բայց բնակիչները միշտ
փոխւել են, հները զնացել են, և նորերը եկել: Քանի քանի գիւղեր կան,
որոնք իրանց կողքի մի աւերակ չը գիտեն թէ ինչ է, թէպէտ և ալնաւոր
բնակիչները բաւականի հնութիւն են վկայում. բայց նրանք ինչքան և հին
լինէին, նրանց նախնիները նոյն գիւղում եկել բնակւել են, երբ որ աւե-

րակն արդէն աւերակ է եղել, ապա թէ ոչ, անկարելի էր, որ ժողովրդի մէջ կենդանի չը մնար աւերակի վիշատակը: Ինչո՞ւ ժողովրդի մէջ, իւր կրած լեղափոխութիւններից լետու անգամ, ղեռ կենդանի են հեթանոսական հաւատալիքները, իսկ աւերակի վիշտութիւնը պիտի մեռնէր:—Միայն նորա համար, որ հեթանոսական վիշտակը տեղի հետ կապած չէ, ժողովուրդն ուր գնում է, իւր հետ տանում է, իսկ աւերակն ալնալիսի վիշտութիւն է պահանջում, որ կապած է աշխարհադրական տեղի հետ:

Այսպէս և զիւցաղնական, պատմական վէպը կապած է իւր տեղի հետ. տեղից բաժանւեցաւ թէ չէ, չի անցնիլ երկար ժամանակ, որ վէպը կամաց կամաց մոռացութեան կը արւի և կամ կը դառնայ աչն բաղմաթիւ զիւցաղնական հէքիաթներից մէկը, որոնք չըջում են մեր ժողովրդի մէջ, և որոնք սկզբնական ձևով անշուշտ մի զիւցաղներիութիւններ են եղած:

Եթէ մեր երկրում կա՞ց մի գաւառ, որ սակաւ գաղթականութիւն է ունեցել, դո՞նէ պատմութեան մէջ չէ լիչում, ալք Տօրոսեան լեռների ճիւղերն են, իրանց անմատչելի դիրքով,—Սասուն, Շատախ, Մոկաց երկիր: Եթէ Հալաստանում կա՞ց մի տեղ, ուր աւերմունքն ալնքան մուտք չէ գործել, և ուր ազգալին անկախութեան կտրիճ ոգին կենդանի է մնացել քիչ ու շատ,—մեր պատմութեան մէջ լիչում են Սասունը և Տօրոսի լեռները՝ Վանաշ լճի հարաւային կողմերում, ուր հալին դրացի է միայն քուրդը, որ չէր կարող հալի վերայ ալն բարոյական ազդեցութիւնն ունենալ, ինչ որ թուրքը: Եւ ահա մենք զարմանքով տեսնում ենք, որ ազգալին ժողովրդական բանաստեղծութեան կենդրոն են հանդիսանում ալն կողմերը, որոնց հալ բնակիչների մէջ պտտում են թէ նոր լօրիւնած և թէ հնուց աւանդւած շատ երգեր և վէպեր: Սասունցիք ունեցել են իրանց վէպերի համար նիւթ, որովհետեւ նրանք հերոսական կռիւներ են տւել թաթարների և թուրքերի դէմ. Սասունցիք և Մոկացիք պահել են իրանց բանաստեղծական լեզուն, որովհետեւ թուրքի ազդեցութեանը շատ չեն ենթարկւել. նրանք պահել են իրանց հին վէպերը, որովհետեւ իրանց հալրենիքում են մնացել և, չնորհիւ իրանց երկրի ամուր դրութեան, աւանձնացած կեանք են վարել և պահպանել են ազգալին աւանձնութիւնները:

Բ.

Հնութիւնից եկած մի զիւցաղնական ընդարձակ վէպի մնացորդ է և Հալաստանի ալք մասում բնակւող ժողովրդի բերանում եղած Աբամելիքի, Դաւթի և Մհերի վէպը: Ալք վէպի սկիւրը շատ հին պէտք է եղած լինի, մինչև անգամ քրիստոնէութիւնից շատ առաջ. և պէտք է նա բաւական ընդարձակութիւն ունեցած լինի, քանի որ նորա արդի դրութիւնն իսկ աւելի մեծ ընդարձակութիւն է ցոյց տալիս, ալն է, ինչպէս ասում

են, ապա վէպը բաղկացած է քառասուն ճիւղից և պատմում է Աբամելի-
ֆից ու Սանասարից սկսած որդէց որդի պապազատող իշխան զիւյաղուն-
ների պատմութիւնը մինչև անժառանգ Մհերը, որով վերջանում է զիւ-
յաղների թիւը: Ավսոս որ վէպի բոլոր ճիւղերը, որոնց թիւը ժողովուրդն
իւր սիրած քառասունին է հասցնում, իրանց վարիաններով չեն հաւաք-
ւած. մենք ունինք միայն վէպի սկիզբը՝ Աբամելիք և Սանասար (հ. Սըր-
ուանձաւ. վարիանում), ահուհետև Մեղքիւթ քահանայի և Բաղդասարի
անունները միայն, որ, մեր վարիանտի պատմող Մոկացու ասելով, առան-
ձին ճիւղեր են, Թուրան Կաթից մի փոքրիկ հատւած և Թլօր Դաւթի և
Մհերի պատմութիւնը. ընդամենը վեց ճիւղ, որոնցից երկուսի միայն ա-
նունները, իսկ վէպի սկիզբն և վերջը բաւականի ընդարձակ: Թէպէտ և
ազգայէս աղքատիկ հաւաքածու է, բայց ապա աղքատութեան մէջ ևս երե-
ւում է վէպի հնութիւնն և ընդարձակութիւնը: Վէպի նիւթը հե-
տևեալն է.

Բաղդատու հղօր խալիֆան արշաւանքներ է անում Հալաստանի վե-
րալ. նա մի արշաւանքի ժամանակ դերի ստրած մի հալ աղջկալ հետ ա-
մուսնանում է և նորանից ունենում է երկու որդի՝ Աբամելիք և Սանասար:
Խալիֆան ուղում է իւր որդիներին զոհ մատուցանել իւր մեծ կուռքին. նրանք
իրանց մօրից իմանում են ապա և փախչում են Հալաստան. զիմում են
Արդրումի և Կարսի ամիրաներին, որ իրանց ընդունեն, բայց նրանք Բաղ-
դատու խալիֆայից վախենալով չեն ընդունում. վերջը զիմում են Կա-
պուտկոյի թագաւորին, որը նրանց ընդունում է իւր ծառայութեան մէջ:
Առ ժամանակ անցնելուց փոքր, թագաւորը երկու եղբայրներին տալիս է
քառասուն տուն ժողովուրդ և թուլ է տալիս, որ նրանք գնան Կանգնեն
իրանց բերդը, որի հիմքը՝ Դրեւէին իրանց փախստից փոքր, դեռ ամիրա-
ներին չը զիմած, և ահետեւ բնակեն:

Իւրդը կանգնում են. թագաւորն իւր աղջկան տալիս է Աբամելիքին
և քեռի Թորոսի հետ գալիս է երկու եղբայրների բերդը, որի անունը
դնում է Սանսուն—Սասուն: Երկու եղբայրները հետզհետէ տիրում են Սա-
սունի չրջակալ երկիրներին: Աբամելիքը սպանում է Մարալ թագաւորին
և ամուսնանում է նորա կնոջ վերալ, որից, դեռ Մարալ թագաւորին չը
սպանած, սպորինաբար ունեցած է լինում Մարամելիք որդին: Մարամե-
լիքը մեծանում, նստում է Մարում, իսկ Աբամելիքը՝ Սասունում: Սան-
սարը, քանի դեռ Աբամելիքը Մարում էր նստում, վերադառնում է Բաղ-
դադ, և սպանում է կոտտան մէջ իւր հօրը, երբ որ սա իւր մեծ կռքին
երկրպագութիւն էր տալիս, և ինքը նստում է Բաղդատում: Աբամելիքը
Կապուտկոյի թագաւորի աղջկանից ունենում է մի քանի որդի, (Յուան
Վէգի (Վէրգո), Ձէնով Զովան, Ճնճղափոքրիկ, Խորդուսան), որոնց մէջ ամե-
նից փոքրն ու զօրեղը Դաւիթն է:

Ազգային վէպի առաջին ճիւղի բովանդակութիւնն այս է. ահուհետև

գալիս է միւս ճիւղը՝ Դաւիթը, որից երկու վարիանտ ունենք. մենք կը բերենք երկու վարիանտից միացրած համառօտ բովանդակութիւնը:

Դաւիթը երկրորդ վարիանտում Աբամելիքի որդին չէ, այլ նորա սեւորունդից է. Ձէնով Յովանը և Յուան վէրդօն նորա հօրեղբայրներն են. իսկ Մարալ քաղաքի իշխող Մարամելիքը Սասունին թշնամի մի տիրապետ է: Դաւիթի հայրը մեռնում է. մայրը գնում է Մարամելքին, Մարալ քաղաքի իշխողին: Ձէնով Յովանը Դաւիթին տանում է իւր մօտ: Դաւիթը, դեռ երեւիս, դուրդ խաղալու ժամանակ Մարամելիքի ձգած գուրդը բռնում է և նորան ամօթով թողնում: Մարամելիքը Դաւիթի վերադ կասկածում է, և մայրը նորան լետ է ուղարկում Սասուն, Ձէնով Յովանի մօտ¹⁾:

Ձէնով Յովանը Դաւիթին գառնարած է կարգում. նա գալի, աղէտ, նապաստակ հաւաքում, խառնում է դառներին, բերում քաղաք: Յետոյ նա հորթարած է դառնում (Ն. Սրուանձաւ, վարիանտ) և ընկերութիւն է տանում ռամկի հորթարածի հետ: Մէկ օր նա գնում է ռամկի ցամառն ժամի հարիսալի կաթսան ամբողջ վերցնում, բերում է իւր եղբայր հորթարածի համար, որ չէր կերել հարիսալից. նորա բացակայութեան ժամանակ քառասուն հարամի դեեր գալիս, հորթերը չափաւորում, տանում են. Դաւիթը հորթերի հետքով գնում է դեերի ալըր. բոլորին կոպալով կտորտում է. միւս օրը քեռի Թորոսի հետ նրանց կողոպուտ վերցրած բոլոր կարողութիւնն ալրից հանում է: Դաւիթին նախորդ են դարձնում. նա մեծ մեծ գաղաններին է հաւաքում, բերում քաղաք. քաղաքացիները վախենում են և նրանց խնդրքով Ձէնով Յովանը Դաւիթին նախորդութիւնից հանում է, և տանը հիւրընկալ է կարգում: Դաւիթը չէ կատարում Ձէնով Յովանի կոնջ՝ Սաւի կամքը և սորա զրպարտութեամբ Ձէնով Յովանը նորան տնից դուրս է անում: Նա ապրում է մի պառաւի մօտ, որ իւր հօր սիրականն է եղած, և որսորդութեամբ է պարապում:

Այդ ժամանակ Մարամելիքն ուղարկում է Կողբաղնին (Խօլբաղի), որ աղատ Սասունից հարկ առնէ: Դաւիթը, պառաւի խորհրդով, Կողբաղնի ժարդկանց կոտորում է և Կողբաղնին խալտառակաբար ճանապարհ է գնում դէպի Մարամելիքը: Մարամելիքը զօրաժողով է լինում, և գալիս է Սասուն վերադ: Դաւիթը Ձէնով Յովանից զօրով ստանում է իւր հօր Մարութալ բանձրիկ Ատուաբաժին, խաչ-պատարաղին, ինչ վար աջ թևին, Քուռկիկ-Ջալալին, թուր կէծակին, գլխու դեօտին, կապէն խարուկին,

1) Ն. Սրուանձաւեանի վարիանտով Մարամելիքը Աբամելիքի յանձնադրութեամբ է, Աբամելիքի մահից յետոյ, Դաւիթին և նորա եղբայրներին, եւրեմեմ եղբայր, տանում իւր մօտ պահելու. բայց քեռի Թորոսը, իբրև աւելի մեծ իրաւունքի տէր, գնում է, նրանց բերում է Սասուն: Այնտեղ ևս Մարամելիքը կասկածում և վախենում է Դաւիթից, որ իւր դիւցազնութիւնը ցոյց է տալիս Մարամելիքի թրի տակով չ'անցնելովը և իւր ոյժովը:

քամարն ի մէջքին», և մենակ դուրս է գալիս Մարամեղիքի դէմ կուգի: Ճանապարհին լողանում է իւր հօր կաթնաղբիւրում և կտտարեալ զիւցաղնի փոխում, ապա իւր ութը ճանապարհին տնկած երկաթէ սեան վերայ փորձելուց փոռէ, սարի վերայից Մարամեղիքի բանակին ևրդով իմաց անելով, բարձակում է գործում և կոտորածն սկսում: Զօրքի միջից մի աւելոր խորհուրդ է տալիս Մարամեղիքի հետ մենամարտել և իրանց չը կոտորել, որովհետև Մարամեղիքն իրանց զօրով է կռիւ բերել: Դաւիթը գնում է Մարամեղիքի կանաչ վրանը: Մարամեղիքին զօրով քնից հանում են, նա Դաւիթին հիւրասիրում է (հ. Սր. վար.), բայց վերջը ձգում է առաջուց պատրաստած թակարդի մէջ:

Ձենով Յովանը երազի մէջ իմանում է Դաւիթի նեղ դրութիւնը և Սև ձին նստելով մի ակնթարթում ելնում է սարի գլուխը, որտեղից բարձր ձաղնով Դաւիթին հասկացնում է խոչ-պատարաղինի վերընական զօրութիւնը: Դաւիթը հորից դուրս է գալիս և Մարամեղիքի հետ մենամարտելով, նորան սպանում է և ակրելով Մարալ քաղաքին, նստում է աշնտեղ:

Ձենով Յովանը Դաւիթի համար նշան է գնում Չմէլիկ Սուլթանին, բայց աղջ ժամանակ Կաղզուանու տիրոջ աղջիկ խանգուլթ խաթունը, որ աւելի վեղկցիկ էր, երկու գուսան է ուղարկում, որ իւր գովքն անեն Դաւիթի մօտ և Դաւիթը զալ իրան ուղի: Գուսանները գալիս են Սասուն և խանգուլթ խաթունին գովում: Գուսաններին ծեծում են և Սասունից դուրս քշում. նրանք հօտաղներից խանում են, որ Դաւիթը Մարում է, գնում են Մարալ քաղաքը: Դաւիթը, լսելով խանգուլթ խաթունի գովքը, գալիս է Սասուն և իւր հօրեղբօրը բախում է, որ խանգուլթ խաթունին պիտի ուղէ: Նա ճանապարհ է ընկնում դէպի Կաղզուան. ճանապարհին երկու անգամ լծում է գուլթանին և գոմէշների փոխանակ ինքը քաշում է գուլթանը: Նրբ որ Դաւիթը հասնում է Կաղզուան և խանգուլթ խաթունը պատուհանից նշան է տալիս Դաւիթին, միւս հարսնախօս փահլուանները նախանձում են Դաւիթի վերայ և խնջուքի ժամանակ ուղում են նորան սպանել, բայց չի կաջողում: Դաւիթը նրանց սպանում է: Նա գիտում է խանգուլթ խաթունի հետ և ուղում է իւր քաջութիւնը ցոյց տալ խանգուլթ խաթունին. թշնամիները, Հալաբայ թագաւորի առաջնորդութեամբ, պաշարում են Կաղզուանը. Դաւիթը չտղթում է նրանց: Թշնամիները խաբէութեամբ Սասունից բերել են տալիս Յուան Վէրդօգի որդի Պարոն-Ստողկին, որ Դաւիթի հետ կուգի. Դաւիթն ակամայ սպանում է Պարոն-Ստողկին:

Խանգուլթ խաթունն և Դաւիթն ամուսնանում են և ճանապարհ են ընկնում դէպի Սասուն: Չմէլիկ Սուլթանը գալիս է Դաւիթի առաջ և ուղում է իւր անպատուութեան վրէժը կուտով առնել Դաւիթից: Դաւիթը նորանից ութ որ միջոց է ուղում, որ իւր կնոջը տանի Սասուն և նոր գալ,

կռիւ անի, և երդում է խաչ-պատարադինի վերայ. բայց չա Սատուեում ութ տարի շարունակ մոռանում է իւր սուած երդումը:

Ծնւում է Գաւթի որդի Մհերը, որի մի ձեռքը խփւած է. միայն հայրը կարողանում է բանալ որդու խփւած ձեռքը, որի մէջ մի կաթ ա-
րիւն է լինում: Մհերը դիւցազնաբար արագ մեծանում է և երկխալութեան
ժամանակ իսկ պատիժ է դառնում Սատուեցիներին գլխին: Նա հօրը չէ
ականջ դնում: և երբ հայրը նորան մի ապտակ է խփում իւր չինած կամբը-
ջով Սատուեցիներին նեղելու համար, նա, ութ տարեկան հասակում, հօր
հետ կռիւ է մոռնում: Հայրը նորան անիծում է, որ զաւակ և մահ չ'ունե-
նալ, և տեսնելով, որ խաչ-պատարադինն իւր թնի վերայ սեպեւ է, վի-
շում է Չմշկիկ Սուլթանին սուած երդումը և դնում է նորա մօտ: Չմշկիկ
Սուլթանը նորան սպանում է, ետևից ծածուկ խփելով կրակացրած գու-
թանի խոփով, երբ որ նա աւաղանում լողանալուց լիտոյ դուրս եկել, չո-
րերն էր հաղնում: Խանդութ խաթունը թողն է խմում և մոռնում ¹⁾:

Մհերին Ձէնով Յովանը գուրս է անում Սատուեից. նա իւր հօրն ու
մօր գերեզմանների վերայ լաց է լինում և նրանց ուրակահեծների խորհրդ-
դով ճանապարհ է ընկնում դէպի Հալաբալ քաղաքը: Ճանապարհին պա-
տահում է Գոհար խաթունի մօրը, որ խոտտանում է իւր աղջկի տալ
Մհերին: Մհերն և Գոհար խաթունը կոտորում են Հալաբալ թաղաւորի բանակը,
որ եկել էր Գոհար խաթունին թաղաւորին կնութեան տանելու: Գոհար խա-
թունի մահից լիտոյ Մհերը շարունակում է վահլուանութիւն անել. բայց վերջն
ինքն ևս ձանձրանում է իւր կեանքից, որովհետև իւր չափազանց ուժից
ոտները խրում էին գետնի մէջ և որսորդներն ու ուրիշ վահլուանները
նորան նեղում էին: Նա Խլաթալ ալրի սակ երկար տարիներ աղօթք է ա-
նում Աստուծուն և Աստուած նորան մարմնաւոր կերպով ձգում է վանալ
այրը, ուր գտնւում է մինչև ալթմ կենդանի:

Գ.

Մ. Խորենացին իւր պատմութեան ա. գրքի բ. գլխում վիշատակում
է. «Իւրաքանչիւր տանց առանձնականութեանց... դոտանին ամբաւ զրու-
ցաց մասեանք, մանաւանդ որ ի սեփական իշխանութեան պապազատու-

¹⁾ Հ. Սրուանձտեանի վարկանտով խաթցիներն են Գաւթի աւաջ գուրս զա-
լիս, երբ Գաւթը Խանդութ խաթունի հետ Սատուե էր գալիս: Գաւթը խաթցի-
ներին երդում է, բայց սխալելով, փոխանակ սանրի վերայ երդւելու, ս. Նշանի
վերայ է երդւում: Խաթցիները նեղն են լծում Գաւթին. և երբ Գաւթը, նրանց
ձեռքից փախած, լողանում էր Լօխօրայ ջրում, Աբամեղիքի ցեղից (ապօրինաբար
սերւած) մի աղջիկ թաքկացած տեղից նետով խփում, սպանում է նորան: Մհերն, իւր
հօր մահւան վրէժն առնելու համար, աւերում է Խլաթը:

թիւն»։ Խորհնացու աչս խօսքերից երևում է, որ Ե. դարում գրեթէ մեր բոլոր նախարարական տներն ունեցել են իրանց առանձին պատմութեան գրաւոր մատեններ, որոնց մէջ գրւած են եղել իշխանական տների մասին զրուցներ, նրանց իրար հետ ունեցած կռիւներն ու զաշինքները և ինչ որ վերաբերում է նախարարական տների պալատապետութեան (լաջորդութեան)։ Մեր նախարարական տների չափերի ծագումն ալնքան հին է եղել, երբոր Հալաստանում գրի գործածութիւն ամենեւին չէ եղել. եթէ Ե. դարում գրւած են եղել նրանց մասին զրուցներ, ապա զրուցների հին մասն անշուշտ սկիտի վերցւած լինէին ժողովրդի և իրանց՝ աղնւական տների մէջ եղած բերանացի աւանդութիւններից։ Թէ իշխանական տների մասին բերանացի վէպեր եղել են մեզանում, ապա արդէն չափն է, բայց ապա վէպերից Խորհնացին իւր պատմութեան մէջ հատուածներ է բերում միայն աչս վէպերից, որոնք վերաբերում են թագաւորոջ հարստութեանը կամ Արարատեան մեծ իշխանական տանը. իսկ մասնաւոր նախարարական տներին համար նա բաւականանում է վիշելով միայն համառօտ խօսքերով նրանց ծագումը, առանց չափոնելու, սակայն, թէ ո՛րտեղից է վերցնում, թէպէտև տեղ տեղ նա սկսմալ, կարծես, ստիպւում է ցոյց տալ, որ նախարարութիւնների ծագումը և նրանց պատմութիւնն ևս վերցնում է բանաւոր աւանդութիւններից։

Աղալիսի մի աւանդութեան կտոր նա բերում է Արծրունեաց մասին. «Թողում զառասպելեացն բաջաղանս, որ ի Հաղամակերտին պատմին. մանկան նիրհելոյ անձրև և արև հակառակեալ, և հովանի թռչնոյ պատանւոյն թալկացելոյ» (բ. գր. է. գլ.)։ Նոյն Արծրունեաց և Աղծնեաց բղեշխութեան ծագման մասին Խորհնացին, իրրև թէ Մարաբասից քաղելով, ասում է. «Ձոր (զՍենեքերիմ արքայ Ասորեստանեաց) սպանեալ որդւոց նորա Ադրամելայ և Սանասարայ, եկին փախտական առ մեզ. չորոց զմինն չարեմոյց հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկադրդին մեր քաջ նախնին, ալսինքն զՍանասար. և ի սմանէ սերեալ լցին զՍինն կոչեցեալ լեառն։ Իսկ սերճքն և զլիաւորքն ի նոցանէ զետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ, բղեշխութիւն կողմանցն (Աղծնեաց բղեշխութիւն) արժանացան առնուլ իսկ Արգամիւղանն (Ադրամել) չարեւից հարաւոյ նորին կողմանն բնակեալ, ի սմանէ, ասէ պատմագիրն (Մարաբաս) լինել զԱրծրունիս և զԳնունիս» (Խոր. ա. գր. իգ. գլ.)։ Մի ուրիշ տեղում ասում է. «Ձնարաշան ի տանէ Սանասարայ հատաւտէ բղեշխ մեծ և կուսակալ չարեմոյց հարաւոյ, լեզեր սահմանացն Ասորեստանի, առ ափն Տիգրիս գետոյ, դաւառս պարգեւելով զԱրձն, որ շուրջ զնովաւ, և զլեառն Տաւրոս, ուր և Սին, և զԿղեսուրն ամենայն» (բ. գր. Ը. գլ.)։

Ադրամելի և Սանասարի Հալաստան գալու մասին վիշատակւած է և Աստուածաշնչի մէջ. «Մինչդեռ Երկիրպաղանէր (Սենեքերիմ արքայ) ի

տան Նեսրաքայ աստուծոյ իւրում, Աղրամելէք և Սարասար որդիք Նորա հարին զնա սրտի, և ինքեանք զերծան լերկիրն Արարատայ (Չորր. թագ. ԺԹ. գլ. 37): Ս. Գրքի և Խորենացու պատմութիւնը զրեթէ նոյնանում են անուններով. Սարասար մինեոյն Սանասարն է, իսկ Աղրամելէքը—Աղրամել, որ Խորենացին մի քիչ ներքեում Արգամոզան է անուանում, որ կամ Աղրամելի աղաւաղումն է, կամ ուրիշ կոչումը:

Այսպէս Խորենացուց մենք ունենք Աղծնեաց բղէշխութեան և Արծրունեաց ծագման պատմութիւնը. Աղծնեաց բղէշխները Սանասարի, իսկ Արծրունիք Աղրամելի սերունդներն են և բնակւել են Սիւմ սարում և Նորա հարաւային արեւելեան կողմերում:

Աղծնեաց բղէշխների աշխարհը մեր պատմութեան մէջ չաղանի է Աղծնիքը, որի հիւսիսային կողմը կտրուած է Տօրոսեան լեռներով, որոնց մէջ է գտնւում Սասունը, Սիւմի հարաւային կողմում. իսկ Արծրունեաց երկիրն աւելի արեւելք է ընկնում, վասպուրական աշխարհում: Բայց, ինչպէս երևում է, Արծրունիք էլ սկզբում աւելի արեւմուտք, Աղծնեաց սահմաններում էին բնակւում, ինչպէս գրում է Խորենացին՝ «չարեւելից հարաւոյ նորին կողմանն», այսինքն՝ Սիւմ լեռան: Թոմա Արծրունիին գրում է. «վասն բնակութեան նախնեաց նոցա (Արծրունեաց) Աղրամելայ և Սանասարայ Արդն (Արդն) կոչեցին Արծրունիք» (Կ. Պ. տպ. եր. 46): Այս ցուցմունքներից երևում է, որ, ինչպէս Աղծնեաց բղէշխների, նոյնպէս և Արծրունեաց բնագաւառն եղել է Արդն, Արծն գաւառը, որ Աղծնիքում է, Սասնու հարաւային կողմերում:

Այսպէս պատմութիւնից տեսնում ենք, որ Աղրամելէքի և Սանասարի սերունդները արեւել են Տօրոսեան լեռների ճիւղերում, Աղծնեաց, Մոկաց, վասպուրականի և Տուրուքերանի սահմաններում, և հին ժամանակներից կաղմել են Հալառաւանի հզօր նախարարութիւններից երկուսը, արեւմուտքում Աղծնեաց բղէշխութիւնը, իսկ արեւելքում՝ Արծրունիք: Այս նախարարութիւնները մեր պատմութեան մէջ մեծ դեր են խաղացել, սկզբում Աղծնեացը, իսկուց Արծրունեացը, և քանի որ մեր նախարարութիւններից չափերի մասին կապին զրուցներ, սպասելի էր, որ ալի ցեղակից նախարարութիւնների մասին ևս լինէին ժողովրդի մէջ զրուցներ: Արծրունեաց մասին եղած մի զրուցի բովանդակութիւնը, որ վերը բերեցինք, փնտրում է Խորենացին. բայց Աղծնեաց մասին հին զրուցների փշատակութիւն չը կալ. սիւսն ԺԱ. դարու պատմիչ Արիստակէս Լաստիվերացու մէջ գտնում ենք մի կտոր. «Իջին զօրքն ի լեռնէն Սիւմ կոչեցեալ, զոր մարդկան սովորութիւն Սանասունք ասեն ըստ անուան նախնոյն իւրեանց» (Լաստ. իա. գլ.), որից երևում է, որ ԺԱ. դարում Սասնու կամ Սիւմ լեռան ժողովուրդը զեռնու ունեցել է կենդանի զրուցներ իւր նախնիքների մասին, և մինչև անգամ՝ լիւելիւ են եղել, որ Սանասունք, այժմեան Սասուն, անունը դուրս է գալիս իրանց նախնուց, հաւանականօրէն Սանասարից, որ, ըստ Խորենացուն, Աղծնեաց բղէշխների նախահայրն է:

Այդ աւանդութիւններն անշուշտ հնութիւնից, Սասունցոց նախնու ժամանակից, եկած, հասած պէտք է լինէին մինչև Վատրիկերացու ժամանակները. և որովհետև Տօրոսեան լեռներում բնակող հաջ ժողովուրդը, ինչպէս վերևում նկատուի ենք, պակաս տեղափոխութիւններ ևն կրել և աւելի ևն պահել իրանց նախնական առանձնութիւնները, ուստի և մենք պիտի սպասէինք, որ մինչև մեր օրերն իսկ պահւած լինէին աշխարհի գէթ սոսկ աւանդութիւններ իրանց նախնիքների մասին, որ ևն Աղձնեայ բլուրները և նրանց ցեղակից ու սկզբում մօտիկ ապրող Արծրունիները: Եւ մենք ալ մի գտնում ենք ոչ լոկ աւանդութիւններ, այլ ամբողջ ժողովրդական վէպ, որ, չը նախելով գարերի ընթացքում կրած փոփոխութիւններին, ակնյայտնի կրնում է, որ նոր վէպ չէ և վերաբերում է վերալիշուալ երկու իշխանական տների ծագմանը և նրանց սերնդին:

Դ.

Այս ենթադրութիւնը՝ թէ ալժմեան Աբամելիքի և Սանասարի, Գաւթի և Մհերի վէպը Արծրունեաց և աւելի Աղձնեաց բղնէիների ծագման և սերնդի մասին է ¹⁾, աւելի բացառւած է վէպի առաջին ճիւղից՝ Աբամելիքի և Սանասարի պատմութեան մէջ: Վէպի Սանասարը միևնոյն խորենացու Սանասարն է կամ Աստուածաշնչի Սարասարը. իսկ Աբամելիքը Աստուածաշնչի Աղբամելիքը կամ խորենացու Աղբամելը (Արգամոզան): Հերոսների անունների նոյնութիւնից դատ, վէպի ամբողջ ընթացքն իւր աշխարհագրական տեղերի հետ միասին նոյնանում է Աստուածաշնչի և խորենացու պատմութեանն և տեղերին:

Բաղդադու խալիֆան ներկայանում է փոխանակ Ասորեստանի (Նինուէի, որից հարաւ ընկնում է Բաղդադը) Սենեքերիմ թագաւորին, որ կռապաշտ է, ինչպէս և վէպի մէջ Բաղդադու խալիֆան: Ժողովուրդը Նինուէի թագաւորին անուանում է Բաղդադու խալիֆայ, որովհետև Նինուէն և իւր թագաւորութիւնը, խորին հնութիւն ունենալով, ժողովրդի վիշողութիւնից զուրա ևն եկել և նրանց փոխանակել է աւելի նոր ժամանակների Բաղդադու մահմեդական խալիֆայութիւնը. բաց միանգամայն ժողովուրդը վէպի մէջ չէ մոռացել, որ այդ կողմերում նստող (Նինուէի) թագաւորը կռապաշտ է եղել, այն ինչ Բաղդադու խալիֆաները կռապաշտ չեն եղել: Այսպէս տեղն և անունը ժամանակի ընթացքում փոփոխութիւն ևն կրել— թէպէտ և տեղը Նինուէից չատ էլ չէ հեռացել—բաց կռապաշտական կեանքը նոյն հինն է մնացել, թէպէտ և ոչ հայերի համար, որովհետև ժողովուրդը չէ հաւատում, թէ երբ և իցէ հալքորստոնեաները կարող էին կռապաշտ լինել: Վէպի մէջ փշուում է և Բաղդադու խալիֆաների արշաւանք:

¹⁾ Տե՛ս պ. Ս. Մանուկեանի «Աղբային Դիւցազնական Աշխարհի» յաւելւածը:

ճերը դէպի Հայաստան. իսկ պատմութիւնից չափն է, որ Ասորեստանի թագաւորները շատ անգամ արշաւել են Հայաստանի վերաջ և մինչև անգամ նրանցից մէկի, Թակկատ-Պալասարի արձանը դանել է արևմտեան Տիգրիսի վերին հովիտներում, Տօրոսեան լեռները մէջ, Հայոց չարաբերութիւնը Ասորեստանցոյ հետ թէ Խորենացոյց և թէ սեպագրութիւններից չափն է:

Վէպի մէջ Սանատարն և Աբամելլիքը իրանց հօր ձեռքից փախստական դալիս են Հայաստան. նրանք զխում ևն Արդրումի, Կարսի ամիրաներին, որոնք չեն ընդունում նրանց, վախենալով Բաղդադու խալիֆայից. նրանք դալիս են վերջապէս Կապուտկողի թագաւորի մօտ, որ նրանց ընդունում է: Հետաքրքիր է այստեղ աչն կէտը, որ վէպի մէջ Հայաստանում ալի հին ժամանակներում դուրս է գալիս մի թագաւոր՝ Կապուտկողի թագաւորը, և միւս քաղաքներում՝ Կարսում և Արդրումում նստող հասարակ ամիրաներ, որոնք միևնոյն հին նախարար-իշխաններն են, միայն ժողովրդի փշոգութեան մէջ միջին դարերի պատմական կեանքի ազդեցութեան տակ ամիրայի փոխած: Սոյն իշխանական դրութիւնը եղել է Հայաստանում և ալի հին, սեպագրական ժամանակներում, — մի մեծ իշխան և երկրորդական բազմաթիւ իշխաններ, որոնք աւելի թուլ են եղել և ենթարկւած մեծ իշխանին: Ասորեստանցոյ հետ ունեցած չարաբերութեան մէջ զլիաւոր առաջնորդը եղել է մեծ իշխանը, ինչպէս և վէպի մէջ նախարար-ամիրաները չեն համարձակուում տեղի ապաստանի տալ Ասորեստանի թագաւորի փախստական որդիներին, իսկ թագաւորը տալիս է: Այսինս որ վէպի մէջ չէ փշած Կապուտկողի թագաւորի անունը, որ տեսնէինք թէ մնացած կը լինէր արդեօք մեծ իշխան Սկաւորդու անունը, որին է տալիս Խորենացին Սենեքերիմի որդիներին ընդունելը: Սկաւորդի անունն իսկ մի վիպական կոչում չէ, որ առնած է այսպիսի վէպերից: — Խորենացու պատմութեան մէջ Սկաւորդին թագաւոր չէ անուանում, բայց նա հայրն է Պարուրի, որ առաջին պսակաւոր թագաւորն է Հայկազանց թագաւորների մէջ, որով և վէպի մէջ եղած թագաւոր կոչումը շատ չէ հեռանում պատմութեան մէջ վիշտակած հայոց թագաւորութեան ժամանակից: Միայն մի տարբեր կէտ կալ պատմութեան և վէպի մէջ, աչն է, որ վէպի մէջ Կապուտկողի թագաւոր է լինում, իսկ պատմութեան մէջ մեր առաջին մեծ իշխանները և թագաւորներն Արարատում էին նստում, թէպէտ և նրանց ենթարկւում էր և Հայաստանի հարաւային մասը: Կապուտկող կամ Կապուտոյն կամ Ընձաքիարս լեռներն ընկնում են Վանալ լճի հարաւային կողմը, լճի մէջ խորը մտնող հրաւանդանի վերայ: Ժ. և ԺԱ. դարերում Կապուտկողին մօտիկ, դէպի արեւելք՝ Ռչտունեաց Ռստանում և Աղթամարում նստում էին Արծրունեաց կամ Վապուրականի թագաւորները, որոնց ձեռքին էին ալի կողմերը: Կարելի է կարծել, որ վէպի և պատմութեան այս աշխարհագրական տարբերութիւնն ևս ժամանակի ընթացքում կրած փոփոխութիւն է, որով ժողովուրդը թագաւոր-

քին նստեցնում է ամսուհղ, որ իրան առելի մօտ է և ուր առելի մօտիկ ժամանակներում նստել են հալ թաղաւորներ:

Կապուսկոյի թաղաւորը Սանասարին և Արամեւիքին տալիս է քառասուն տուն սամիկ ժողովուրդ, որոնց բնակեցնում են իրանց նոր շինած բերդում, որ թաղաւորն իրեն կալած նրանց էր բաշխել. բերդի անունը դնում են Սանսուն, Սասուն, որ Սիմ լեռան հարաւային կողմում է ¹⁾: Երկու եղբայրներն իրանց իշխանութիւնը հետզհետէ ընդարձակում են Սասունից դուրս դէպի հիւսիս. «Սև-սարի բոլոր ու չուր Ծծմակալ-քիթ՝ Մշու վերիով պատան քաշած եղած են չուրի Սեղանսըրու գօտինը վի ձապաղջրու դուրան ու զըզ բիթուն լէ զաւթեց (Արամեւիք)... որ մ' լէ զարկեց զնայ չուրի Մըսըր, ու Մըսըր լէ զաւթեց» — Սև-սարը միննոյն Սիմ լեռն է. սորա հիւսիսային ճիւղերից մէկն է Ծծմակալ-քիթ սարը, որ Մշու արևելեան կողմում է, մօտ երեք ժամ հեռու Մշուց ²⁾ և որի վերայ Դաւիթը գութանին լծելով քաշեց մինչև Մառնիկ գիւղը, որ Մշու հարաւային արևելեան կողմում է, Սիմ լեռից հիւսիս: ձապաղջուրը ընկնում է Արածանու աջ ափին՝ Բալուից արևելք, Բինգեօլ լեռների հարաւային-արևմտեան կողմը: Սեղան-սարի գօտին, վէպի նկարագրութեան համաձայն, պիտի ընկնի ձապաղջրի մէջ, ու Կարապետի վանքից արևմուտք և պէտք է Յինդեօլից դէպի հարաւային-արևմուտք ձգւող ճիւղերից մէկը լինի: Իսկ Մըսըրը կամ Մսուրը, Մսրալ քաղաքը, որ վէպի մէջ շատ է լիւշում և որ կազմում է Սասունին թշնամի մի տէրութիւն, սխալ լմացութեան տեղիք կարող է տալ իւր համանունութեամբ Եղիպատսի Մսրը կոչման հետ: Մինչև անգամ պ. Ս. Մանգինեանը իւր դատադրքի մէջ (Ազգ. Գիւցադն. Աշխարհ) Մսրըրը դարձրել է Մուսուլ (Մոսուլ), որ հին Նինուէի տեղերումն է, Տիգրիս գետի վերայ: Բայց Մուսուլը, որ Հայաստանից դուրս է, չի կարող Մսրալ քաղաքը լինել. հէնց վէպի նկարագրութեան ընթացքից

1) Պ. Գարագաշեանն իւր Խորենացու խիստ քննադատութեան մէջ ամեն կերպ փախալով ապացուցանել թէ Խորենացին իւր պատմութիւնը (չին մասը) մեծ մասամբ իրանից է յերկւրում, իբրև փաստ բերում է և այն, որ իբրև թէ Խորենացին Սանասարին Սիմ լեռան կողմում է բնակեցնել տալիս, միայն Սիմ և Սանասար անունների նմանութիւնից հանելով. Խորենացին «Տայ նմա (Սկայրդւոյ) բնակեցուցանել զՍանասար, Սիմ և Սանասար անուանեց ձայնի նմանութեան նայելով (?)» Սիմ լեռան, այսինքն Աղձնեաց կողմը... Խորենացին Սիմն անունն ի Սանասարայ կը թուի հանելը (Գար. քնն. պատմութիւն Հայոց): Թէ Խորենացին այս պատմութիւնն իրանից չէ հնարել և ունեցել է աղբիւր, եթէ ոչ զբաւոր, զէթ ժողովրդ ահան, բունաւոր, դրան վիայ է մինչև այժմ կենդանի մնացած վէպը, որով Սանասարը Սիմ լեռան հարաւային կողմը, Սասունում է բնակում: Սիմ և Սանասար անունների մէջ, ինչպէս պ. Գարագաշեանը նմանութիւն չէ գտնում, Խորենացին ևս չէր գտնել, բայց իսկ նմանութիւն Սանաս-ար և Սանաս-ունք (Սասուն) անունների մէջ:

2) Տեղագրութիւնք ի Փ. և ի Մ. Հայո՝ Հ. Սարգսեանի. եր. 227:

Երևում է, որ Մըսրըր պիտի ընկնի Տօրոսեան լեռների հիւսիսային կողմը, ճապաղջրից արևմուտք, որովհետև վէպը որոշում է Աբամելիքի իշխանութեան հիւսիսային սահմանները արևելքից արևմուտք, որ են՝ Ծածմակալ-քիթ, Մշու հիւսիսային կողմի պատ քաշած լեռներ, Սեղան-սարի դօսի, ճապաղջուր և վերջապէս՝ ամենից արևմուտք՝ Մսրը, կամ Մսրալ քաղաք, որպիսի կոչմամբ միշտ վիշուում է մեր վարիանտում։ Փառաօս Բիւզանդի մէջ կալ մի աղսպիսի կոտոր. «Էջ (հայր Մարդպեան) լափն զետոն հոսանացն Եփրատու, հովիտն թանձրախոռոն անտառին, ի զետախառնունն երկուց (հիւսիսային և արևելեան Եփրատ) ... որ ի տեղւոջն ի հնոցն իմն չինած քաղաք՝ զոր չինեալ Վանատուրկ արքայի, որում անում տեղւոյն Մ ծ ու թ կոչի» (Բիւզ. չորր. դպ. ժդ. գլ.)։ Այժմ հայտն տեղում Արածանու աջ ափում, հիւսիսային Եփրատի խառնուրդին մօտիկ, ընկնում են Մնծուր լեռները։ Փ. Բիւզանդի վիշած սոյն Մծուր գաւառը, իւր քաղաքով, պիտի լինի և Մըսրըր կամ Մսրալ քաղաքը (Մծրալ քաղաք). խիւրքական արտասանութեան ազդեցութեան տակ ծ. տառը հեշտութեամբ փոխուում է շ.-ի կամ «-ի. մանաւանդ թէ լաւ ստած, քրդերի մէջ բնակող հայերը ծ չ'ունին, այլ միշտ շ կամ « փոխանակ ծ-ի ¹⁾։

Սանատարի և Աբամելիքի կալւածների իրրև պարզև ստանալը թագաւորից և ալը կալւածների ընդարձակումը վիշատակում է ալսպէս և ժողովրդական վէպի մէջ, պատմական վիշատակութիւնից ալն տարբերութեամբ միայն, որ պատմութեան մէջ Աղձնիքում և դէպի արևելք է վիշուում, իսկ վէպի մէջ Տուրուբերանում և դէպի հիւսիս։ Այս տարբերութիւնը լաւաջանցած պիտի լինի նորանից, որ միջին դարերում Սասունցիք շարարութիւն ունէին աւելի հիւսիսային կողմերի տիրապետների հետ, և, է. դարից սկսած, մինչև անգամ Սասունն արդէն միացած էր համարում Տարօնի հետ ²⁾ և զոնում էր Մամիկոնեանց ձեռքին մինչև Ժ.Բ. դարը, երբ որ Աղձնեաց լղէշխութիւնն ալ հա չը կար, իսկ Արծրունիք Վասպուրականում էին։ Կարելի է ասել և ալն, որ հ. Արուանձտեանի վարիանտի պատմողը, Մշու կողմերից լինելով, վիշատակում է Մշու մօտիկ աշխուհաղրական անուններ. և թէ մեր Մսկացու պատմածի մէջ հա Աբամելիքի և Սանատարի պատմութիւնը լինէր, թերևս անտեղ դէպի հարաւ և արևելք, ալսինքն դէպի Մոկաց կողմերը ընդարձակելը պատմէր, որ աւելի հին ժամանակին կը վերաբերէր և պատմութեան վիշատակութեան համեմատ կը լինէր։

Ստուումաձանչի մէջ Վարաուրն և Աղրամէլէքն ասաջ իրանց հօրն

¹⁾ Այժմ ևս Արածանում, աջ ափում հիւս. Եփրատի խառնարանից քիչ արևելք, կայ Մեղրէ յայտնի աւանը։

²⁾ Յովհան Մամիկոնեան, Վեհեւ. եր. 13. և Մատ. Ուուհայեցի Մս. Բ. հատ. 74։

սպանում են և լետուց փախչում Հալատտան. իսկ վէպի մէջ հօրը սպանողը միայն Սանասարն է, որին «իւր պապու (հօր) կռքեր չըն թողի որ ըզի (Սասուն) սըթըէր ու ելաւ խըստ էրեց ուր պապուն ու մամուն ու գնաց Բաղդադ»։ Այնտեղ Սանասարն իւր հօրը, կըր որ սա երկրապագութիւն էր տալիս իւր մեծ կռքին, սպանում է. «ու հեղմ՝ է՛ վերոր կճաւ պապ, տըղէն... կուրդ մի իշաւ ու զպապ խալիֆէն եօթն գաղ զետին վար իջուց»։ Սանասարն իւր հօրն սպանելուց վետուց Բաղդադում նստում է իւր հօր աթոռը, իսկ Աբամեկէքը մնում է Սասունում։ Ժամանակի աչս տարբերութիւնը, ինչպէս և Սանասարի կրկին Բաղդադ վերադառնալը, հարկաւ, կարող էին հաղարաւոր տարիներին ընթացքում, բերնէ բերան աւանդելով, չեղաչըջւիլ։

Յեղաշարժելու։
Թէ ինչո՞ւ Անեւքերթիմի որդիքը Հայաստան և ոչ ուրիշ երկիր են փախել, պատմութեան մէջ չէ վիշաճ, թերեւ նորա համար, որ Հայաստանն ապաւինելու համար աւելի ապահով տեղ է եղել իբրեւ Ասորեստանցոյ հետ պատերազմող և նրանց չը հպատակող երկիր։ Վէպի մէջ կա՞ն և մի ուրիշ հանգամանք, որ հայրասպան եղբայրներին Հայաստանում է ապաւինել տալիս. այդ աչն է, որ Բաղդադու խալիֆայի կինը հաջ է եղել, ուստի և Աբամե-լիքն ու Սանասարը աւելի Հայաստանում իրանց մայրական ազգականնե-րի մօտ կարող էին չուսալ ապաստան գտնել, քան ուրիշ երկիրներում, որոնք բոլորը Բաղդադու խալիֆաների մեռելներից էին փախչում, ուր մնաց կենդանիներից։ Թէպէտև վէպի մէջ Հայաստանի ամիրաներն ևս վա-խենում են և Վապուտկողի թաղաւորն ընդունում է նրանց, չ'իմանալով թէ նրանք Բաղդադու խալիֆայի որդիներն են, բայց այդ վէպի ազաւազունն է միայն, որովհետև վէպի ետեի մասից երևում է, որ երկու եղբայրները թաղաւորի ազգականն են. «Մենք քու աւաւտն ենք» — ստում են նրանք Վա-պուտկողի թաղաւորին։ Բացի այդ կա՞ն մի անձնաւորութիւն, որ Աբամելիքի և Սանասարի քեռին է. քեռի Թորոսը, որ թաղաւորին մօտիկ մարդ է՝ դուրս դա-լիս, նորա հետ զնում է Սասուն, Աբամելիքի մահից փառլ նա է կառա-վարում Սասունը, Աբամելիքի երեխաները նորանն են և նա է հոգ տա-վարում Սասունը, Աբամելիքի երեխաները նորանն են և նա է հոգ տա-նում նրանց մասին։ Գատաստանը նրանց քեռի Թորոսին է հասցնում քան թէ Մարամելիքին, որ նրանց խորթ եղբայրն էր ¹⁾։ մի խօսքով նա ներկայա-նում է իբրեւ Աբամելիքի տան խնամակալը և թաղաւորին մօտիկ աղատ, ազնւական մարդ, իշխան, որով և երկու եղբայրները մալրը, որ Թորոսի քոյրը պիտի լինէր, թաղաւորին մօտիկ ազնւական ցեղից է եղել, նորա համար և երկու եղբայրները հալոց թաղաւորի մօտ են ապաստան գտել։

Այն վէպի բոլոր փախուստիւնները դուրս ձգենք, կը ստանանք

1) Հ. Սրբունձտեանի յժարիանտում թէպէտեւ Մարտիկէքը Աբամէլէքի սրբէն է, բայց դարձեալ դուրս է դաշին երբեւ օտար, թէնամը անձ:

հեռուեալ բովանդակութիւնը, որ նուցանում է Աղձնեաց բղէշները և Արծրունեաց ծագման մասին եղած պատմական ցուցումների հետ.

«Ասորեստանի Սենեքերիմ թագաւորն (Նինուէ, Բաղդադու խալիֆայ) արչաւանքներ է անում դէպի Հալաստան: Մի արչաւանքի ժամանակ հալոց թագաւորի ազգականներից, կամ ազատ տնից գերի տարած մի արջը կալ հետ ամուսնանում է. նորանից ունենում է երկու որդի՝ Սանասար և Աբամելիք: Սրանք իրանց հօրը կուտան մէջ, երբոր նա երկրպագութիւն էր տալիս իւր մեծ կռքին, սպանում են և փախչելով Հալաստան, ապաստանում են հալոց թագաւորի մօտ, որ իւրազգիւնը տալիս է Աբամելիքին և կալած ու ժողովուրդ բաշխելով, իրանց քեռի Թորոսի հետ նրանց բնակեցնում է Սիմ լեռան հարաւային կողմերում, ուր հիմք են դնում Սասունին: Աբամելիքի և Սանասարի սերունդներն աջնտեղ աճելով, տիրում են Սիմ լեռան շրջակայքին և կազմում են հալոց հզօր նախարարութիւններից մէկը, որ ինչպէս մեր շատ նախարարութիւնները՝ ծագմամբ օտար է»:

(Կը չարունակւի)

ԻՆՉՈՒ ՓԱԽՉԵՄ...

ԱՐՍԷՆ ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԻ

Միշտ նախանձում եմ այն ուրախ մարդկանց,
Որոնք թւում են ինձ գոհ, երջանիկ.
Եւ կարօտում եմ, որ մի օր քընից
Արթնանամ զըւարթ ինչպէս մի մանկիկ.
Բայց միշտ տրուած չար երազներից,
Եւ ցնցումներից թույլ ամբողջ մարմնով.
Օ՛հ, ես զգում եմ այդ տեսակ կեանքից,
Ապրել չեմ ուզում վրդովւած հոգով...

Բայց ինչո՞ւ ծովը մըրիկներից,
Դարերից յուզւած չէ ուզում ցամքել.
Կամ թէ երկնքում ամպից, կալծակից
Ինչո՞ւ աստղերը չեն ուզում կորչել...
Եւ ինչո՞ւ փախչեմ այս կեանքի վշտից,
Փնտռելով հանգիստ մայր հողի ծոցում.
Կամ ինչպէս թողնեմ չքնաղ սիրուհիս
Լացով — արցունքով աշխարհի միջում...

Բաքու. 1889 թ., յունւարի 31-ին:

* * *

ԵՐՈՒԱՆԴ ՊԱԼԵԱՆԻ

~~~~~

Փոթորիկն անցաւ... ցրեցան ամպեր,  
Շտապելով իրանց հանգիստն անմեկին.  
Նրանց վերջին շղթան յոգնած ու երբեր  
Վազում է ուժգին....

Փոթորիկն անցաւ... բալց դեռ ևս հեռուն  
Պատած է մէգի թանձր ծածկոցով,  
Խո՛ւլ որոտում են ամպերն տննրկո՛ւն,  
Վայրի՛ բողոքով...

Ի՞նչ է այդ արդեօք... անցած փոթորիկի  
Վերջին անգոր ճիգ ու վրիժակ ձայներ,  
Թէ՛ շուտ պատրաստւած մի նոր հարւածի  
Գուժկան մահաբեր...

Վաղարշապատ. 1889 թ., յունիսի 1-ին:



**ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆ-  
ԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ:**

ԲԺՀԿ. ԴՐ. ԳԱՍ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ (ՂԱՍՐԵԻ)

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

**ԲԱՐԱԿ ԱԳԱՔԵՆԵՐԻ ՅԱՆԿԱՐԾԱԼԱՍ ԿԱՏԱՐ (Հարինք):**

Այս կատարի գլխաւոր յատկութիւնը այն է, որ կղկղանքը մեծ քանակութիւնով է դուրս գալիս, լինում հեղուկ, ջրալի. սկիզբը մոլք դոյն ունի, յետոյ կանանչաւուն դեղին, վերջապէս անդոյն, ինչպէս ջուր: Կերակուր ընդունելուց մի փոքր յետոյ սկսում է խիթքը (շահաւ) և ապա ձայնով և ուժգնութիւնով, ինչպէս խցանը հանած տակաւից, դուրս է խփում կղկղանքը: Հիւանդը սաստիկ ծարաւ ունի, մէղի քանակութիւնը շատ փոքր է: Հիւանդութիւնը ըստ մեծի մասին չառաջ է գալիս միևնոյն պատճառներից, որոնցից չառաջ է գալիս դիսպէպսին. ուստի, հիւանդութեան առաջն առնելու համար, հարկաւոր է այն կանոնները ճիշդ պահել, որոնց մասին արդէն խօսեցինք: Եթէ հիւանդութեան պատճառը ծծից կտրելն է, խիտն պէտք է ծծմայր գտնել. այս կը լինի ամենալաւ բժշկութիւնը և դեղորայքը աւելորդ են: Իսկ եթէ ծծմայր գտնել չէ կարելի, այն ժամանակ մի քանի օր պէտք է կովի կաթը անպատճառ թողնել և ոչ մի կերպ չը գործածել, այլ նորա փոխանակ տալ արաբական խէժի (համե տրեբեհամ) ջուր, որը պատրաստում են

1) Տե՛ս «Մուրճ»-ի 9-րդ համարը:

այսպէս:—Վեր են առնում մէկ բաժակ եփ տւած և սաւցրած ջուր և մէջը տրորում են կէս կամ մէկ թէյի զգալ արաբական խէժի փոշին այնքան՝ մինչև որ լուծւի: Կամ տալ ձէի սպիտակուցի ջուր ուսմով՝ մէկ կամ երկու թէյի զգալ ուսմ մէկ թէյի բաժակ հեղուկի հետ, կաղնիի պողի սուրճ, սովորական թէյի կամ վարսակի շողիաւոր ջուր: Այս բոլորը պէտք է տալ անպատճառ առանց կաթի: Երբ կղկղանքը կը թանձրանայ և աւելի ներկած գոյն կը ստանայ, ծարաւը կը պակասի, մէզի քանակութիւնը կ'աւելանայ, այն ժամանակ հարկաւոր է փոքր առ փոքր չիշեալ հեղուկների հետ կաթ խառնել, պահպանելով վերը չիշած կանոնները: Փարաւի վերայ հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձնել, վասն զի հիւանդը շատ հեղուկ է կորցնում կղկղանքի միջոցով, արիւնը սկսում է թանձրանալ, վերջինս կարող է շատ տխուր հետևանք ունենալ: Մի անգամից շատ չը պէտք է խմացնել, որովհետև եթէ հիւանդութեան պատճառը ծծից կորելն է, այն ժամանակ շատ հեշտութիւնով կարող է երկտաների խօլերա յաւաջ գալ: Պէտք է թէյի զգալով ուսմի ջուր տալ, մէկ կամ երկու թէյի զգալ ուսմը խառնել մէկ թէյի բաժակ սաւը ջրի հետ կամ ածել մէկ թէյի բաժակի մէջ սօղալի ջուր, կէս ժամ թողնել, որ կանգնի, ապա խառնել նորա մէջ մէկ կամ երկու թէյի զգալ կոնեակ. այդ խառնուրդների մէկից երբեմն երբեմն թէյի զգալով տալ հիւանդին: Եթէ երեխայի երեսը՝ սկսում է սուր կերպարանք ստանալ, գաղտունը (Քծնորանել) փոս է ընկնում, ձեռքերը և ոտքերը սառչում են, այն ժամանակ ուսմը կամ կոնեակը աւելի պէտք է վեր առնել: Հիւանդի փորին՝ հէնց հիւանդութեան սկզբից՝ հարկաւոր է տաքացնող կոմպրեսներ դնել. այն է, վեր առնել մի կտոր կտաւ, չորս ծալել, սաւը ջրում թաց անել, ապա լաւ քամել, փռել երեխայի բոլոր փորի վերայ, նորա վերայ փռել մոմած կտաւ, սորա վերայ մի կտոր ֆլանել և ապա այդ ամենը փորի վերայ պնդացնել մի լաջն երեսսրբիչով: Երեք ժամը մի անգամ հարկաւոր է թաց կաւը նորոգել, այսինքն՝ նորից թաց անել, քամել և յետոյ փորին կապել: Մոմած կտաւը և ֆլանելը ամեն կողմից պէտք է լաջն լինեն թաց կտաւից:



## ԲԱՐԱԿ ԱՂԻՔՆԵՐԻ ԵՐԿԱՐԱՏԵԻ ԿԱՏԱՐ:

Այս հիւանդութիւնը յառաջ է գալիս բարակ աղիքների յանկարծահաս կատարի մի քանի անգամ կրկնւելուց կամ երկար ժամանակ տւելուց և սովորաբար այդ մանուկները միևնոյն ժամանակ խոզախտով (*սկրոֆուլէօզ*) հիւանդ են կամ արդէն ոսկրակակղութիւն (*ստիֆթիս*) ունեն: Հիւանդութիւնը, ըստ մեծի մասին, տարածւում է նաև հաստ աղիքների վերայ (սորա մասին յետոյ): Փորի մորթը փայլ է ստանում, փորը փքւում է, փքած աղիքների դժագրութիւնը պարզ երևում է և կարելի է ձեռքով շոշափել: Կզկզանքը ջրալի է, սարսափելի հոտ ունի, երեխան արտալիժում է սաստիկ ցաւեր զգալով կարճ ժամանակամիջոցում մի քանի անգամ միմեանց ետևից և ապա մի քանի ժամ հանգստանում է: Այս երեխաները սովորաբար շատ նիհարում են, սակաւարիւն են դառնում, նոցա երեսի մորթը ծերերի պէս ծալծւում է ինչպէս կնճիռներ: Այստեղ ամենից առաջ, ինչպէս համընթաց դիսպեպսիի ժամանակ, որչափ կարելի է, խիստ պէտք է լինել կերակրելիս, այն է՝ փոքր քանակութիւնով որոշեալ ժամանակամիջոցներում: Այդ հիւանդների վերաբերութեամբ մանաւանդ պէտք է խիստ լինել, որովհետև սոքա սաստիկ քաղց են զգում և ագահաբար ահազին քանակութիւնով հաց կամ այլ ալիւրիդէն կերակուրներ են կուլ տալիս՝ փնասելով իրանց մարտդութեան հիւանդ զործարաններին: Եթէ մաշքը չի կարող ծիծ տալ և ծծմաջը գտնելը դժւար է, այն ժամանակ պէտք է կովի կամ այծի լաւ կաթ գտնել: Առաջ պէտք է եփ տալ, ապա սառցնել և այնպէս ուտեցնել. երեք հացի զգալ կաթ, երկու հացի զգալ եփած ջուր, մի հացի զգալ կրի ջուր (որը ամեն դեղանոցում կարելի է ստանալ և անուանւում է աքւա կալիցիս): Այս քանակութիւնը հարկաւոր է երկու ժամը մի անգամ տալ կամ սորա կէսը՝ մի ժամը մի անգամ: Եթէ երեխան ծարաւ ունի, հարկաւոր է փոքր քանակութիւնով (*թէյի զգալով*) երբեմն երբեմն ջրախառն գինի տալ: Եթէ կաթը փնասում է, հարկաւոր է շճուկ տալ, որը պէտք է պատրաստել տրոխիսցի սերիսլարի ալումինատի միջոցով: Վեր են առնում սորա մի հատը և մէկ ու կէս թէյի բաժակ եռացող կաթի մէջ լուծում են, պանիրը տակը նստելուց յետոյ քա-

մում են, սառցնում են և հեղուկը տալիս են երեսային: Ոչ մի կերպ ալիւրեղէն չէ կարելի տալ երեսային, ոչ եզիպտացորեանի (սիմինդրի) ալիւր (մօնդամին), ոչ արբուրուտ և ոչ լեզումինաւոր: Աւելի շուտով կարելի է փորձել շիշի մէջ եփած տաւարի մսի արգանակը: Երբեմն օգտաւէտ է լինում փորին թաց կոմպրեսներ կապելը, որոնք չորս ժամը մի անդամ պէտք է փոխել:

#### ՀԱՍՏ ԱՂԻՔՆԵՐԻ ՅԱՆԿԱՐԾԱՀԱՍ ԵՒ ԵՐԵՍԱՏԵՒ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ:

Այս հիւանդութիւնը զլիսաւորապէս հաստ աղիքների մէջն է: Յանկարծահաս ձեւերեւան է գալիս միանգամից, կարծես թէ առանց պատճառի: Յանկարծ մեծ տաքութիւն, խիթք, արիւնխառն շողիւտ կղկղանք և սաստիկ նքոց — այս է հիւանդութեան սկիզբը և կարող է մի քանի օրում մահով վերջանալ: Կամ երեսան կարող է առողջանալ, այն է՝ նա աւելի և աւելի ուշ է արտավիժում, արիւնը և շողին կղկղանքի մէջ կամաց կամաց պակասում են, կըղկղանքի գոյնը և խտութիւնը դառնում են բնական: Երբեմն այս հիւանդութիւնը յառաջ է գալիս երկարատեւ զիսպեպսից կամ բարակ աղիքների երկարատեւ կատարից, երբ հիւանդը ջրալի կղկղանքի փոխանակ աւելի և աւելի շողի է արտավիժում: Երեսան արտավիժուց առաջ անհանդիստ է, յանկարծ դունատում է, կարծես թէ ցաւերից հողին տալիս է և արտավիժածը միայն շողի կտորներ են և այն էլ փոքր քանակութիւնով: Կղկղանքը սկզբում անհոտ է լինում, իսկ մի քանի օրից յետոյ սկսում է սաստիկ հոտ ունենալ, բայց հետը միշտ փոքր քանակութիւնով արիւն կոյ խառնած և երբեմն թարախ և այլ թաղանթի նման կտորներ: Այս երկրորդ ձեւը շատ անգամ տաքութիւն չ'ունի:

Յետոյքի շուրջը, ազդրները, կրունկները կղկղանքի կծուութիւնից վէրքեր են կրում իրանց վերայ, փորը տափակնում է. մորթը գունատ և թառամած է լինում, առանց առաձգականութեան: Նթէ շատ ժամանակ չէ, որ երեսային ծծից կտրել են, իսկոյն հարկաւոր է ծիծ տալ, ապա թէ ոչ, ոչ մի կենդանու կաթը՝ ոչ կովինը, ոչ այծինը՝ այդ հիւանդները չեն կարողանում մարսել: Ինչ կ'ուզեն կենդանու կաթի հետ խառնեն, միւսնոյն է, հիւանդները չեն մար-



տում: Այդ իսկ պատճառով, հարկաւոր է վերը յիշած կերակուրներին դիմել:—Արաբական խէժի ջուր, վարսակի շողի, սովորական թէյ, կաղնիի սուրճ: Իսկ յետոյ փոքր առ փոքր հարկաւոր է սկսել կաթ խառնել: Այս հիւանդութեան մէջ ամենից օգտաւէտ է Նեստլէի երեխաների ալիւրը: Առաջ վեր են առնում մի հացի գդալ ալիւր և իննը հացի գդալ ջուր, մի քանի ժամանակից յետոյ, երբ երեխայի կղկղանքը աւելի լաւ կերպարանք է ստանում, սկսում են կաթ ևս խառնել, զորօրինակ՝ մի մասը ալիւր, եօթը մասը ջուր և երեք մասը լաւ կաթ, յետոյ ժամանակով մի մասը ալիւր, հինգ մասը ջուր և հինգ մասը կաթն և վերջապէս կարելի է ալիւրը ուղղակի կաթնով եփել: Երեխայի թոյլութեան (նուազութեան) առաջն առնելու համար հարկաւոր է տալ ռոմի կամ կոնեակի ջուր կամ նոցա վարսակի շողիի հետ խառնել և այնպէս տալ: Երկու թէյի գդալից մինչև չորս թէյի գդալ վեր են առնում ռոմ կամ կոնեակ և խառնում են մի թաս լիքը վարսակի շողիի հետ և այդ քանակութիւնը մի օրուայ մէջ խմացնում են:

#### Գ Ի Զ Ն Ն Տ Ե Ր Ի:

Այս հիւանդութիւնը սկսում է յանկարծ, մինչդեռ երեխայը սորանից առաջ փորկապութիւն ունէին:—Տաքութիւն, փորացաւ, սաստիկ խիթք, նքոց և արտավիժումն: Հիւանդը սկզբում միմեանց ետեից շուտ շուտ է արտավիժում, բայց փոքր քանակութիւնով: Կղկղանքը շողիի, դողողի պէս է, ապակիի նմանութիւն ունի և միմեանց կպած կտորներից է բաղկացած, գիշերուայ անօթի մէջ կամ սաւանի վերայ դողդողում է: Երեխան իւրաքանչիւր անգամ արտավիժելու համար շատ ժամանակ է գործ դնում: Շուտով կղկղանքը փոխում է, շողիաւոր կտորների հետ խառնած են արիւննաղանքը փոխում է, շողիաւոր կտորների հետ խառնած են արիւննախառն մուք-կանաչ կոյտեր, որոնք, եթէ արիւնը շատ է լինում, ինչպէս գորշ-կարմիր կտորներ են երևում, ջարդած մսի նմանութիւն ունին: Մոթը սաստիկ գունատւում է, երեխան սաստիկ նիհառում է և կերակուրից հրաժարւում, մարմինը սառչում է և զօրութիւնը պակասում: Երբեմն երկրորդ օրից կղկղանքը փոխւում է, արտավիժածը շողեայ թաղանթի խոշոր և միմեանց հետ կպած կտոր-

ներից է բաղկացած, սորանից յետոյ սաստիկ նքոցով դուրս են գալիս արիւնասառն շողիի կտորներ: Նստ քիչ անգամ պտտահում է, որ եթէ հիւանդութիւնը երկարատե է լինում, կղկղանքը աւելի թարախ պարունակող կտորներիցն է բաղկացած, որոնց հետ խառն են չափաւոր քանակութիւնով թաղանթի կտորներ, առանց նքոցի են դուրս գալիս, իսկ ինքը կղկղանքը սարսափելի հոտ ունի: Այս հիւանդները արագութեամբ նիհարում են, կապտում, նոցա արիւնը թանձրանում է կամ վախճանում են կամ հիւանդութիւնը երբեմն դէպի լաւն է գնում, երբեմն դէպի վատը, նոքա կենդանի են մնում, բայց ոչ առողջացած:

Ամենից առաջ հիւանդի շուրջը խիստ մաքրութիւն պէտք է պահել: Ծծի երեխաներին օրը երեք անգամ, իսկ մեծերին օրը երկու անգամ լողարանի մէջ պէտք է լանալ  $27^{\circ} - 28^{\circ}$  Բ. հնդից մինչև տասն րոպէ տեղողութիւնով. աւելի սառը ջուրը սաստիկ վնասում է այս հիւանդներին. լացքը, գիշերւայ անօթը, կղկղանքը՝ իսկոյն սենեակից պէտք է հեռացնել և եռացող ջրով լանալ: Հաստատուն կերակուր (հաց, միս) մինչև անգամ հասակաւոր երեխաներին չը պէտք է տալ: Կաթը կրի ջրի հետ կամ կաղնիի սուրճի հետ խառն, սովորական թէյ գաղջ, եթէ երեխան թոյլ է, մի քիչ ուռնով. մեծ երեխաներին ս՛ա գօ զինով շինած, մսի արգանակ շիշի մէջ պատրաստած՝ հացի զգալով — ահա սոքա են հիւանդների իսկական կերակուրները: Թաց կոմպրեսներ նոյնպէս կարելի է գործածել, բայց աւելի լաւ է հիւանդի փորը փաթաթել տաքացրած չոր ասուեղէն կամ բրդեղէն շորերով. սոքա երեխաներին շատ դուրեկան են, ցաւերը ամբողջում են և հանգստացնում:

#### ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՕՒՆՐԱ:

Երեխաների խօլերան կամ յսուաջ է գալիս աղիքների վերը չիշած հիւանդութիւնների մէկից կամ բոլորովին առողջ երեխան սկսում է արտավիժել ահագին քանակութիւնով անզոյն կղկղանք, միևնոյն ժամանակ մէկ մէկու ետեւից փսխել, տաքութիւնը և ծարաւը ահագին են, շուտով հիւանդը զօրութիւնից ընկնում է, գազտունը փոս է ընկնում, զլխի ոսկորները իրանց զրութիւնը փոխում են,



երեսը քաշուում է, մորթը կապտում, շնչառութիւնը սառչում է և դժւարանում: Այդ իսկ պատճառով հարկաւոր է շտապել երեխային օգնութիւն հասցնել: Ամենից առաջ պէտք է դադարել երեխային կերակուր տալուց, մինչև անգամ մօր կամ ծմօր կաթը չը տալ, քանի որ երեխան փսխում է և փորլուծութիւն ունի: Երեխային հարկաւոր է օրը երեք անգամ լողացնել 28<sup>0</sup>—32<sup>0</sup> Բ. տաքութիւն ունեցող ջրի մէջ, լողացնելու ջրի մէջ խառնում են մանանեխի հիւթ. վեր են առնում երեք հացի գլալ մանանեխ, կապում են անձեռոցի մէջ, կապածը թաթախում են սառը ջրի մէջ և քամում են լողարանի մէջ, այնքան անգամ թաց են անում և քամում, մինչև դուրս եկող ջուրը այլ ևս գեղին գոյն չ'ունենայ: Երեխային պահում են լողարանի մէջ 5—15 րոպէ: Լողարանից հանելուց յետոյ երեխայի մարմինը չորով ցամաքեցնում են՝ շիւելով, և ապա փաթաթում են Ֆլանելի կամ բրդի վերմակի մէջ: Հարկաւոր է երեխայի ծարաւը ամոքել, բայց ոչ գինով, որովհետև դինին երբեմն փսխելը սաստկացնում է. այլ սօղալի ջուրը ածում են մի թէյի բաժակի մէջ և աւելացնում են նորա վերայ մէկ կամ երկու թէյի գլալ կոնեակ, թողնում են մի քանի ժամանակ և ապա ամեն տասն րոպէին տալիս են երեխային մէկ թէյի գլալ: Սօղալի ջրի փոխանակ կարելի է վեր առնել սովորական սառը թէյ կամ սև սուրճ՝ նոյնպէս սառը և երկուսն էլ կոնեակի հետ խառնած կամ ձւի սպիտակուցի ջուր՝ նոյնպէս կոնեակով: Կոնեակի փոխանակ կարելի է ոռմ վեր առնել. իսկ եթէ սառուց կայ, կարելի է մանր կտորներ կամ առանձին տալ երեխային, որ կուլ տայ կամ նոյն իսկ ըմպելիքների հետ խառն: Բայց ոչ մի կերպով ոչ մէկ կերակուր չը տալ, ոչ շողիււոր հեղուկ, ոչ ծծի կաթ և ոչ այլ ինչ, քանի երեխան շարունակում է փսխել և լուծել: Իսկ երբ կը տեսնենք, որ երեխան ամբողջ մի օր էլ չի փսխում և լուծում, այն ժամանակ հարկաւոր է սկսել կամ ծիծ տալ կամ կաթի խառնուրդ, վերջինս սառցի վերայ սառցրած՝ համեմատ այն կանոններին, որոնց մասին արդէն խօսած ենք. սակայն, այժմ ևս կրկնում ենք՝ փոքր քանակութիւնով երկու կամ մի ժամը մի անգամ:

## Գ Ր Ա Ւ Օ Ս ՈՒԹ Ի Ի Ն

ՌԻՏՏԵՐ, ԿՈՆՍՏ., ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻԻՆՆԵՐ ՊԼԱՏՕՆԻ ՄԱՍԻՆ: (Untersuchungen über Plato): Իսկութիւնը և ժամանակագրութիւնը Պլատոնի գրածքների և մի յաւելած՝ Մտքերի ընթացքը և հիմնական հայեցածքները Պլատոնի—Theätet. Նոռւողարտ, 1888 թ., Kohlhammer տպար. (XI+187 երես, ութածալ). գինն է 2 մարկ 50 ֆենինգ (1 բուբլի). (Գերմաներէն):

Հեղինակը կամենում է ծալիւ ի ծալի և իւր բոլոր հետեանքներով Գիտտեներեդերի ալ մտքին հետեւել լեզուական նշաններով որոշել Պլատոնի գրածքների ժամանակագրութիւնը և իսկութիւնը: Հեղինակը ուզաւոր է լեզուական նշաններից աւելի արդիւնք, քան ուրիշ նշաններից: Պլատոնի գրածքների մէջ նշմարւած են 40 լեզուական դարձւածներ: Հեղինակը, իւր միակողմանիութեամբ, բաւորովին աչքի չէ առնում այն, ինչ իւր առաջադրած խնդրի նկատմամբ արեւ են Տալսմիւլլեր, Դամպերց և Յիլլեր: Այս մեթոդի պակասութիւնը նորանումն է, որ լեզուական դարձւածների պահանջութիւնները կարող են բոլորովին զրոյի կամակաւորութիւնից:

Իւր ալս աշխատութեանը հեղի-

նակը տալիս է որպէս նախապատրաստական աշխատութիւն Պլատոնի վարպարտութեան ընդարձակ տեսութեան համար: Այդ զործը հեղինակը համարում է հարկաւոր, որովհետեւ նա ալս համոզմունքին է եկած, թէ Պլատոնի մասին ալսմ իշխող պատողութիւնը չափազանց աղղւած է Արիստոտելից: Որպէս մի նմուշ իւր աղաղալ աշխատութիւնների Պլատոնի մասին, հեղինակը, մի քանակւածի մէջ, ներկայացնում է Theätet-ի մտքերի լաջորդութիւնը և հիմնական մտքերը:

Յալունի է, որ 12-րդ դարում Պլատոնի երկերը հալերէն թարգմանած պիտի լինին, որոնք, սակալն, մեր ձեռքը չեն հասնում. իսկ որ հալմատեւաղիւնները զրաղւում էին Պլատոնի ֆիլոսոֆալութիւնով, դրա



վիպութիւնները ունինք 5-րդ դարուց, | կան ուղղութեան, որի հիմնական  
ուր՝ աստուածաբանական ճշմարտու- | զաղափարները առնաժէյն Պլատո-  
թիւնները հաստատուելու համար՝ դի- | նից:  
մում էին մանաւանդ նոր պլատոնա- | Ա.

ՆԻՒՄԱՆ Վ. Լ. (Newmen), ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:  
Մի ներածութիւնով, երկու առաջաբանով և նկատողութիւններով.  
Հատոր I և II, Օքսֆորդ, 1887 թ. (Անգլիերէն):

Առաջին հատորը աւելի է մի | շատ մանրամասն բացատրութիւննե-  
նախապատրաստութիւն Արիստոտելի | րով, և նոյնպիսին «Հոգու մասին» զըր-  
քաղաքականութեան համար. երկ- | քի վերաբերեալ՝ էջովին վալլասի:  
րորդը զբաղուած է Արիստոտելի զըր- | Նիւմանի զիրքը նոյա շարքում ար-  
քի ձեռագիրներով: Հեղինակը իրան | ժամաւոր տեղ է բռնում: Մեր հա-  
լաւ ծանօթ է ցոյց տալիս Նիւթի | հասարակութեան արդէն չափնի է,  
մասին եղած նաև օտար գրականու- | որ նոյն Արիստոտելի ուսումնասի-  
թեան հետ: Որպէս երևում է, գիւ- | րութեան համար մեր կողմերը եկաւ  
ուրիշ հատորներ պիտի չաջորդեն ա- | անցեալ տարի Օքսֆորդի համալսա-  
ռաջին երկուսին: Արիստոտելի խիստ | րանի մի ալ պրօֆէսոր՝ պ. Կօնի-  
զիանական քննադատութիւնը Անդ- | բեր, որը կարծում է, թէ Գաւիթ  
լիադի գիտնականների մէջ նկատելի | Անգլիայի հայերէն թարգմանութիւ-  
ատաջղիմութիւններ է անում: Մենք | նը միջոց պիտի տալ Արիստոտելի  
ունինք արդէն մի հիւանալի հրատա- | հեղինակութիւններէ մի քանի մութ  
րակութիւն Արիստոտելի Nikoma- | սեղերը պարզելու:  
chische Ethik Ալէքսանդր Գրանտի | Բ.

ՇԱՍԼԵՐ, ԴԸ. ՄԱՔՍ, ՄԱՐԴՈՒՍ ՇԱՔՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ (Shasler,  
Onthropogonie): Ընդհանուր մարդկայինը, նորա էութիւնը և ե-  
ռապարր զարգացումը, կամ՝ «Ծագումն լեզուի, բարոյականութեան  
և արւեստի. Լալպցիդ, 1888 թ., տպ. Ֆրիդրիխ (XV+220 էր.),  
զինը՝ 6 մարկ: (Գերմաներէն):

Այս զբաղքում արդէն 70 տա- | թիւնը (profession de foi). Նորա-  
րեկանին մօտ ֆիլոսոֆան տալիս է | նում նա շօշափում է գիտակցու-  
լըր, մի տեսակ, հաւատի զաւանու- | թեան բոլոր խնդիրները՝ իմացակա-

նութիւնը, բարոյականութիւնը և ար-  
ւեստը: Ամբողջ մարդը պէտք է հաս-  
կացի իւր բնական և հոգեկան  
կեանքով՝ որպէս մի միութիւն: Նո-  
րա քննադատութեան եղանակից իս-  
կոյն երևում է Հեգելի խորը ազդե-  
ցութիւնը հեղինակի վերայ, թէպէտ  
և նա իւր ուսուցչի ստորակ հը-  
կըրդագոյն չէ, այլ նորանից ան-

գամ վեր է ուղում բարձրանալ:  
Գրածքը պարունակում է բազմա-  
թիւ շատ աջողած մանրամասնու-  
թիւններ. մանաւանդ ուլ ծանօթ է  
Շաղլերի էսթետիկական գրածքնե-  
րի հետ, գեղարւեստին վերաբերեալ  
հատուածը շատ կը գնահատէ: Այդ  
հատուածը պարունակում է նուրբ  
նկատողութիւններ:

ՏՐՅՈՒՆԵՐ, ԴՐ. ՕՍԿԱՐ, պրօֆ., ԼԻԿԵԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ: Հ. Կիպեր-  
տի մի քարտէզով: Շտուտգարտ. 1887, Kohlhammer. (XII+247  
երես, մեծ ութածալ):

Փոքր ասիական թերակղզին,  
թէպէտև հնումը բնակավայր էր  
շատ ազգերի, ունեցաւ սակաւ հին  
դարերի մեծագոյն շրջանում մի  
պատմութիւն, սկսած պարսիկների  
նւաճումից մինչ Ալէքսանդր Մեծի  
լաջրողները և Հռովմի նւաճելուց  
մինչ Օսմանցոյ գալը: Բաց նախ  
քան այդ պատմութեան գրելը,

պէտք են պատրաստական մասնա-  
ւոր աշխատութիւններ: Մի ազգալի-  
սի աշխատութիւն տալիս է հեղինա-  
կը Լիկիացոյց մասին, որոնց պատ-  
մութեան համար հեղինակը իւր 20-  
ամեայ ուսուցչութեան աղատ ժա-  
մերը գործ է դրել նիւթեր հաւաքե-  
լու: Գործը կատարւած է օրինակելի  
բարեսխզնութեամբ:

ՇՄԻԴՏ, ԴՐ. ԷՄԻԼ, դօցենա, ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՕԴՆԵՐ: Ուղե-  
ցոյց դիտելու ու ժողովելու զործանոցի և ճանապարհորդութեան  
համար: Բազմաթիւ նկարներով բնագրի մէջ: Լայպցիգ, 1888 թ.,  
ուպարան Veitet (IV+336 եր. imp. 12), գինը՝ 6 մարկ (Գեր-  
մաներէն):

Այս գիրքը հմուտ մարդիկ խորհուրդ  
են տալիս ձեռք բերելու նորան, ուլ  
մարդարանական (անթրօպօլօգիա-

կան) հետազօտութիւններով է զբաղ-  
ւած կամ ուլ դոցա համար նիւթեր  
է ժողովում: Հեղինակը ինքը մի



Նշանաւոր մասնադէտ է և քաջ տեղեակ դործին վերաբերեալ գրականութեան: Այդպիսի կատարեալ գրածք չը կալ ոչ գերմանական և ոչ մի օտար գրականութեան մէջ: Ի՞նչ բան և ի՞նչպէս պէտք է գիտել կենդանի մարդու թէ միւռածի վերադ—անո՛ւ առաջագրած խնդիրը: Գիրքը պարզ կեր-

պով ծանօթացնում է դործիքների հետ, որոնցով պէտք է չափել, և չափելու մեթոդների հետ աշխատ, որ մասնադէտը բաւական է միւռած, իսկ ոչ մասնադէտը հմտանում է դործին, եթէ միայն անատոմիական անուններին ծանօթ է:

Տ. Գ.

ՄԵՐԿԵԼ, ԴՐ. ՅՈՎ.Է., ՊՐՕՖ., ՈՒՍԻԱԾՔՆԵՐ ՀՈՌՎՄԷԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻՅ: Տեար III. Հռովմէական ծառայողների ուժիկների ծագման և Հռովմէական դատարանական վճարումների մասին: Հալլէ Չալի վերայ. 1888 թ., տպ. Նիմայէր, 174 եր., մեծ ութածալ, գինը՝ 4 մարկ:

Հատուած I-ում խօսւում է հանրապետական ժամանակի մասին (ոռձիկներ քահանաներին, զինւորներին, ապագարիտօրներին և դառաւական դատաւորներին): Հատուած II-ում՝ Օդոստտի և Նորա լաջորդների կարգա-

դրութիւնների մասին: Հատուած III-ը տալիս է մի տեսութիւն ծառայողների ոռձիկների պաշտօնների մասին Գիօկլեոփանտոյից մինչ Յուստինիանոս:

Ա.

ԲՐՈՒԽՄԱՆ, ԴՐ. ԿՈՒՐՏ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍԻԱԾՔՆԵՐ ԼԵԶՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ: Լայպցիգ, 1888 թ., տպ. Ֆրիդրիխ, X+358 երես, մեծ ութածալ. գինը՝ 9 մարկ:

Գիրքը ունի բարաբրութիւն լեզուագիտութեան, հոգեբանութեան, բանաստեղծութեան և գրական պատմութեան հետ: Լեզուն շատ ծանր է, նիւթերի դատաւորութիւնը՝ խառն: Ի միջի աչոյց հետաքրքրական օրինակներ և բերած, թէ ինչպէս իմաստից զուրկ բառեր լեզուի մէջ

գործ են ածւում, հէնց որովհետեւ լեզուն նոյա պահպանած է: Մանաւանդ հետաքրքրելին ալն մասն է, որտեղ դժագրւում է Հին-Լատկարանի ազդեցութիւնը կրօնական բանաստեղծութեան լեզուի վերայ մինչ մեր օրերը:

Ա.

ԱՆԳԻՈՒԼԻ, ԱՆԴՐԷԱՍ, պրօֆ. Նէապօլսի Համալս.: ՖԻԼՍՕՖԱՅՈՒ-  
ԹԻԻՆԸ ԵՒ ԴՊՐՈՅՐ:

Դրածքը, մի առաջաբանից  
դուրս, չորս բաժին ունի. 1) Ֆիլո-  
սոֆալութեան ինդիրները, 2) Փոր-  
ձառութեան քննադատութիւնը ու  
գիտակցութեան ուսմունքը, 3) Ուս-  
մունք արեգեղբի դարգացման մա-  
սին, 4) Ուսմունք բարոյագիտութեան  
մասին:

Հեղինակը պարզ կերպով վեր-  
լուծում է ամենակարեւոր ինդիր-  
ները, որոնք երևան են գալիս հոգե-  
բանական, բարոյագիտական, սոցիա-  
լական, կրօնական և մանկավարժա-  
կան ասպարէզների վերաւ: Հեղի-  
նակը համադրուցիչ կերպով բացատ-  
րում է մի գիտնական բնազանցա-

բանութեան (մեթաֆիզիկայի) անհրա-  
ժեշտութիւնը, որը պէտք է լինի, որ-  
պէս զի գիտակցութեան աչն անժըխ-  
տելի պահանջը լրացնելի, որին մաս-  
նաւոր գիտութիւնները բաւարարու-  
թիւն տալ չեն կարողանում: Նոյն-  
չափ աջող է աչն տարրերի վերլու-  
ծութիւնը, որոնք զուացնում են փոր-  
ձառութիւնը և որոնց սահմանափա-  
կելը հոգու գիտակցական երևոյթների  
չըջանակով և առհասարակ անձնա-  
կան չըջանով՝ հեղինակը մեր-  
ժում է:

Բ.

ԿՆԱՊՊ, ԳԵՈՐԳ ՖԻԴԻԻԽ, ԳԻԻԴԱՅԻՆԵՐԻ ԱԶԱՏՈՒՄԸ ԵՒ ԳԻԻԴԱ-  
ԿԱՆ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ՊՐՈՒՍԻԱՅԻ ՀՆԱԴՈՅՆ ՄԱՍԵՐՈՒՄ:  
Նրկու մաս. Լայպցիգ, 1887, տպ. Դունկեր և Հումբլտ. VП+352  
և V1+473 երես. զինը՝ 16 մարկ:

Պարոն Կնապպը Սարասբուրգի  
համալսարանի քաղաքական գիտու-  
թիւնների պրոֆեսսորներիցն է և ցա-  
ւորմ լայտնի էր որպէս ստատիստիկոս:  
Բայց նորա լսողները գիտեն, որ նա  
զրազում է քաղաքաւանասական  
ինդիրներով առհասարակ, մասնա-  
ւորապէս Գերմանիայի զիւղական  
հանգամանքների և օրէնդրութեան  
ինդիրներով: Վէրը վիշաժ գրքով նա

հանգիստանում է արդէն որպէս քա-  
ղաքաւանասու և աչն՝ վերին ատտիճա-  
նի աջողակ կերպով: Ներկազ գիրքը  
պատկանում է ամենակարեւոր աշխա-  
տանքներին, որոնք ցաւժմ լուս են  
տեսած Գերմանիայի հասարակական  
հանգամանքների դարգացման մասին:  
Հեղինակը աշխատում է պատասխա-  
նել սպ հարցին, թէ ի՞նչպէս հիւսի-  
սալին և արեւելեան Գերմանիայի մե-



ծագողն մասում նախկին ոչ-աղատ (ճորտապան) աղագրեակութիւնը փոխւեց ալժմեան մանր կալածատէրերի և օրավարձ բանւորների: Այդ փոփոխութեան ակնկալունի պատճառները օրէնսդրութեան մէջ պէտք է որոնել, որի նպատակն էր զիւղական աղագրեակութեան ճորտութիւնից աղատելը: Պետական ալժ օրէնքների մասին հեղինակը տալիս է շատ ճիշդ և հիմնաւոր հաշիւ: Եւ իւր ալժ առարկան հեղինակը երկու ձևով է ուսումնասիրում: Ամենազիջաւոր բուպէները և ֆալկիսները համար՝ նա զիմում է մի տեսակ զիպլոմատիական պատմագրութեան, որի համար

ամենակարևոր գիւանական թղթերը բառ առ բառ առաջ է բերում. դուրան է նւիրած պրքի երկրորդ մասը: Առաջին մասը նւիրած է բուն լուսաբանութեան: Այդտեղ նա մանրամասնօրէն խօսում է հին հանդամանքների մասին և թէ ի՞նչպէս սոքա փոխակցին և ի՞նչ դրութեան մէջ է ալժմ ալժ գիւղական բանւոր դատակարգը. նա շօշափում է անգամ խնդիրներ, որոնց լուծելը միայն ապագային է վիճակած: Բնաորոշ է հեղինակի սառը պատմական եզանակը, որով նա խօսում է ամենապրոգ խնդիրների մասին:

Ա.

ԶԻՏՏԱՐԴ, ՅՈՎԱԷՓ, ՈՒՍԻԱՍԹԵՆԵՐ ՆԻ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ. 3 հատոր, Համբուրգ, 1889 թ., տպ. Ֆոս, իւրաքանչիւրը 8 մարկ. (Sittard, Jos, Studien und Kritiken):

Այս խորագրով՝ լատնի երաժշտական գրող Զիտտարդը հրատարակել է լոգւածների մի շարք, որոնք արժանի են երաժշտագէտների ուշադրութեան:

Առաջին հատորում, որը խորագրած է՝ «Խառն թերթեր» (Bunte Blaetter), ղեկավարած են բաւականին լոգւածներ աւելի ընդհանուր և պատմական բովանդակութիւնով, որոնց մէջ աւելի աչքի են ընկնում «Բարբելութեան նամակներ» և մի քանի հաղատութիւն վիլհելմի լատնի կրթական իշ. Հանսլիկի գրքի՝ կոնցերտների և կոմպոնիստների մասին: Ընդունելով խի նորա ծառայութիւն-

ները, հեղինակը նորան մեղադրում է աչառութեան և միակողմանիութեան մէջ: Կարդալու արժանի է նաև «Պարի պատմութիւնը Գերմանիայում»:

Երկրորդ հատորը՝ «Արեւատագէտների բնորոշումներ» — կոնցերտի դասակարգի (Künstler—Charakteristiken. Aus dem Concertsaal) տալիս է նախ մի շարք լոգւածներ ներկայիս արեւատագէտների մասին, որոնցից նոքա, որոնք վերաբերում են վաղներին և Լիստին, Ֆոն Բիւլօլին և Յոլհաննէս Բրահմսին՝ ընդհանուր հետաքրքրութիւն են շարժում: Հեղինակը ալժ երաժիշտների զիմաց միանգա-

մայն անաչառ է. նա ընդունում է նաև լիատի աղնիւ մտադրութիւնը իւր չարարերութեան մէջ գէպի վաղները, որպէս նաև Ռիխարդ վաղների մեծ ծառայութիւնը ներկայիս ինտարումնետացիալի և օպերայի վարդապետան համար, առանց քողարկելու նորա անձնական պակասութիւնները: Միւս կողմից հեղինակը մեծ չարգող է Յովհաննէս Բրահմսի և ծաղրալի վաղներականներին իրանց թշնամութիւններով լիտ է քշում: Քննադատութիւնների մէջ որպէս ամենից աջողւած պէտք է վիշատակել Ռուբինշտէյնի սիմֆոնիան A—moll և Բրահմսի E—moll, որպէս նաև ընդարձակ քննադատութիւնը Մաքս Բրուկնի «Ալբիլէտո»:

Երրորդ հատորի վերնագիրն է «Հին և նոր օպերաները, երաժշտական վիշատակելի օրեր, աֆօրիզմներ», որի մէջ դանում ենք քննադատական անալիզներ մի քանի նոր օպերաների: Սոցա թոււմ «Ալէօպատրալի մի գիշերը» Վիկտոր Մասսէի, «Փշալի վարդիկ» Ֆերդինանդ Լանգերի, «Արդը» Մասսենէի, «Մարտին» Կարլ Գլոգմարկի և «Յովելլոն» Վերդիի: Մասսէի մուզիկալին արժանաւորութիւնները թոււմ է մուլ արժանաւոր կերպով չը գնահատւած:—Գիրքը, որպէս վկայում են հեղինակութիւն վաղելող կրթականները, մուզիկալին գրականութեան մէջ ամենալաւերից մէկն է և արժանի գովասանքի: Գրքի արտաքինը նոյնպէս գովելի է:

ՄՈՆՈ, Գ., ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ: ՄԵԹՕՂԱԿԱՆ և Ժամանակագրական ցուցակ աղբիւրների և աշխատութիւնների՝ վերաբերեալ Ֆրանսիայի պատմութեան սկզբնաւորութիւնից մինչ 1789 թւականը:—Monod, G., Bibliographie de l'histoire de France. Catalogue methodique et chronologique des sources et des ouvrages relatifs à l'histoire de France depuis les origines jusqu'en 1789. Paris, Hachette et Cie (XI+420 էրես):

Հեղինակը այս գրախօսութիւնով ուղում է ծառայել մասնաւորապէս մանկավարժական և գործնական նըպատակի: Նա ուղում է իւր երկրի պատմութեան համար, որը գործնից գրեթէ բոլորովին զուրկ էր, այն անել, ինչ արել են գերմանական պատմութեան համար՝ Գալմաննը

(Dahlmann) և նորա նորից մշակող Վալցը (Waitz) իրանց «Աղբիւրների գերմանական պատմութեան համար» երկերով: Այն է՝ այդ գիրքը միջոց է տալիս այդ առարկայի վերադ աշխատողներին, բաց մասնաւորապէս ուսանողներին և չարմար և մեթօդական րեպրետորիւմ, որը թուլ է տա-



լիս արագութեամբ գտնել, թէ ֆրանսիական պատմութեան ինդիւսերի և էպօքների համար զլիսաւորակէս ինչ գրական աշխատանքների պէտք է զիմել: Գրքի արտաքին կազմածքը միանգամայն նման է Կալմաննի գրածքին, զժրագրարար

նաև նորանով, որ ալքընական ցուցակը տալիս է միայն հեղինակների անունները, բայց ոչ նաև խորագիրը, ալնպէս որ շատ դժւար է զըտնել ալն հեղինակների անունները, որոնք մի քանի գրածքներ ունին:

ՈՌՇԵՐ, ՎԻԼՀԵԼՄ. ԿԵՍԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ: (Umriss zur naturlehre des Cäsarismus). Լայպցիգ, 1888 թ., տպ. Հիրցել, 115 էրես:

Յայտնի է, որ դարուս մէջ գերմանական նշանաւոր կրօնական Գերլինուսը տատանուած էր, թէ նա պէտք է գրէ մի պատմութիւն գերմանական բանաստեղծութեան, թէ մի քաղաքակրթութիւն պատմական հիմունքի վերաջ. նա իւր ամբողջ կեանքում մտածում էր ալն տեղականների և տեսակէտների մասին, որ պէտք է մարդս ունենալ վերջին տեսակի մի աշխատանք սկսելիս: Նա ալ չ'արաւ. բայց անկարելի է որ նա, իւր ալն գիտատրութիւններով, զրդիչ կերպով ազդած չը լինէր իւր աշակերտ Ռոշերի ուսումնասիրութիւնների ուղղութեան վերաջ: Յամենայն դէպս, ալն երկուսին էլ ընդհանուր է հեռու տեսողութիւնը պատմական կապերի համար, ամբողջաբար զատուութիւնը օրալ փոփոխող կարծիքների դմաց, ներքին հակումը՝ մասնաւոր երևոյթները բարձր տեսակէտների տակ դասաւորել: Այստարակա՛նու-

թեան բնութիւնը, որպէս Ռոշերը ներկալ գրքում դժագրում է, իսկապէս մի հատուած է «Քաղաքականութիւն պատմական հիմունքի վերաջ» գրքից, ինչպիսին Գերլինուսը կարող էր մտածած լինել զրեւո, թէ պէտ է ալն երկու անձերի հալեացքները ալն առարկայի մասին իրարից շատ տարբեր կարող էին լինել:

Կարդալով վերնագիրը, մարդս փորձեալ կարող է լինել կարծելու, թէ իւր գրքով Ռոշերը ուղեցել է ազգել ներկալ քաղաքական անցքերի վերաջ. բայց դա սխալ է արդէն ալն պատճառով, որ գրքի արմատը ներկալեալ է մի ուսումնասիրութեան մէջ, որ հեղինակը հրատարակել է, զեռ ևս 1847 թւականին, Շմիդտի «Ամսագիր պատմաբանութեան» մէջ:

Գիրքը սկսում է մի նախածանօթութիւնով, որի մէջ հեղինակը խօսում է պատմութեան ձեւերի պատմական փոփոխութիւնների մասին, վե-

սող՝ ութ զլիսում ուսումնասիրում է կեսարականութեան առանձնաշատ-կութիւնները, իսկ ութ կեսարականութեան հռովմայեցի նախակարասպետները՝ կեսարը և փտագալ կեսարները, Հելլենացոց զինւորական բռնակալները, զինւորական բռնակալութեան փորձերը կարծեցեալով, կեսարականութիւնը նորագոյն խտարականութիւնը նորագոյն խտարականութիւնը և վերջապէս՝ կրօնական և Նապօլէօն։ Մանրամասնութիւնների մէջ, մանաւանդ կեսարականութեան ծնւելու մասին և ալն եղանակը, որով սա իրան պահպանում է, հեղինակը շատ նուրբ է և հիմնւում է լայնածաւալ ուսումնասիրութիւնների վերաբերելով։ Նա ոչ միայն գծագրում է կեսարականութիւնը ընդհանուր գծերով, այլ մտնում է նաև ըստ երևութիւն մանր բաների մէջ, խօսում է կեսարների ոյժի միջոցների մասին ներքինում և արտաքինում։ Չարմանալի կը թւայ շատերին, բայց անհերքելի ապացույցներով հաստատում

է Ռոշերը, որ կեսարականութիւնը իւր հիմունքով թույլ է պատերազմական կողմից։ Հեղինակը նկարագրում է կեսարներին առանձին հիանալի կերպով և շատ բան զորա մէջ նոր է գրականութեան համար։ Տեղեր կան, սակայն, որոնք ճիշդ չեն կամ ոչ ուղիղ հասկացած, բայց դոքա վերաբերում են մի քանի օրինակներին, որոնցով հեղինակը լուսաբանում է իւր ասածը. դոքա չեն փնտրում գրքին։

Մեր ընթերցողների համար աւելորդ էլ չի լինիլ ասել, թէ Ռոշերը, որը Ներոպալի ներկայումս ապրող նշանաւոր և անուանի գիտնականներից է, քաղաքատնտեսութեան պրօֆեսոր է Լալպիլիոնում տասնեակ տարիներից ի վեր և թէ ալլ գիտութեան մէջ նա հիմնադիրներից մէկն է պատմական կոչւած ուղղութեան, որի մի ճիւղի համար նա ալթմ միակ մեծ ներկայացուցիչն է։

Ա.

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՅՈՒՆԱԿԱՆ ԵՒ ՀՌՈՎՄԵՆԱԿԱՆ ԴԻՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ (միջօղիայի), մասնակցութեամբ Թ. Բիրտի, Օ. Կրուզէուսի և ուրիշների, հրատարակութիւն Վ. Հ. Ռոշերի (W. H. Roscher, Ausführliches Lexikon der griechischen und römischen Mythologie). բազմաթիւ նկարներով. տետր 1—13, Լայպցիգ, 1887—1888 թ., 2272 սիւնեակ (երեսը 2 սիւնեակ), տպ. Teubner, գինը իւրաքանչիւր տետրի՝ 2 մարկ (մօտ 1 ռուբլի)։

Այս ձեռնարկութիւնը իւր կտրորութիւնը և կենսականութիւնը ամեն կատարածանքից վեր ցոյց աւելց

Գերմանիայում։ Հրատարակութեան առաջին նոստատակը երևում է արդէն վերնագրից՝ միջոց տալ հետաքննել



ամեն բացատրութիւն լուծական և հոռոմէական զիցարանութեան վերաբերեալ: Բայց, բացի այդ գործնական նպատակից, հրատարակութիւնը կատարում է մի դիտական կոչում, հանդէս բերելով և կամ զրդելով աշխարհի ուսումնասիրութիւններ, որոնք առանց դորան թերեւ լոյս չը տեսնէին և կամ բարձր հասարակութեան անմատչելի մնալին: Արխէօլոգիական (հնաբանական) խնդիրները մեծ հիմնութիւնով են լուսարանւած, մինչդեռ զիցարանական խնդիրները միմիայն շօշափւած են, երբի աշխարհագրութեան միջոցով, որ նոքա միջոցիւն մէջ են դեռ ևս: Կան նաև չ'աջողւած լուծածներ, օրինակ, ծառերի պաշտա-

մունքի և լուսնի ծագումների վերաբերանդութիւնների մասին զբաղւած է, առանց օգտուելու Մանհայտի կլասիկական աշխատութիւնից: Եզրագրաբանութեան և Արեւելագիտութեան վերաբերեալ մի քանի լուծածների մէջ, փոխանակ է. Մայէրից (Meyer) օգուտ քաղելու, լինւած է Իրէքսեր: Շատ աջողւած է Շտեյնհիմի լուծածը «Հեքաթ»-ի մասին (Hekate):—Վերջին 13-երորդ տարի մեծագոյն մասը բռնում է Ֆուրտվէնգլերի լուծածը Հերակլէսի մասին. ցայժմ այդ վերջին տետրը «H» տառից չի անցկացել, ասել է թէ բառարանի հետեւեալ տետրերը բաղմաթիւ են լինելու:

ԼԵՍՍԵՊՍ, ՖԵՐԴԻՆԱՆԴ, 40 ՏԱՐԻ ՅԵՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ: Հատոր I և II, Բերլին, 1888 թ.

Դարուս ալս մեծ մարդը հաւաքել է իւր բոլոր ալ և ալ բովանդակութեան զբաղւածները, որոնք որ և է լարաբերութիւն ունին իւր անձնաւորութեան հետ և որոնք իրար հետ կապւում են: Մի ամբողջութիւն կազմում է միայն երկրորդ հատորը, ուր հաւաքւած են վկայաթղթեր Սուէդի ջրանցքի պատմութեան նկատմամբ, անթիւ օրալ արձանագրութիւններ, թղթակցութիւններ և պաշտօնական թղթեր, որոնք ալ համաշխարհային նշանաւոր գործի ընթացքի մի պարզ և կենդանի պատկերն են տալիս և պարունակում են աւելի հետաքրքրական իրողութիւն-

ներ, քան այստեղ կարող է լինատակել: Մանաւանդ սուր կերպով է զուրս բերւած Անգլիայի թշնամութիւնը ջրանցքի շինելու գէմ, թշնամութիւն, որ մարմնացած էր լօրդ Պալմերստոնի մէջ. և Լեսսեպսի փոքր գործքերից չէր՝ ալ թշնամութեան գէմ լաղթող հանդիսանալ: Իւր երկար բնակութիւնը Եզրագրութեան հետ առիթ է տալիս երկիրը, որի հետազօտութիւնը նորա համար թեթեւացրած էր բարեկամութիւնով Սաւիդ և սորա ժառանգ իզմայիլ խեղիւների հետ, զանազան կողմերից նկարագրել: Շատ աւելի բաղմաղան է առաջին հատորի բովանդակու-

թիւներ. նա պարունակում է 12 ինքնուրույն լոգաւածներ, որոնցից չափերը ուրիշ տեղերում հրատարակւած էին: Սկսւում է նա մի պաշտպանողական գրւածքով իւր Հռոմ ուղարկւելու մասին 1849 թ., իբր Յղիւօն Բարբօից գեներալ Ուտինօին ուղարկւած գիպլօմատական աղենտ, որպիսի պաշտօնում նա, սակայն, գեներալի և դեսպան Ռէնֆալի հետ կուսեց, մինչև որ նա, թէ իւր գիպլօմատական անփորձութեան և թէ իշխան-

նախադասի (լատագալ Նապօլէօն III կայսրի) երկդիմի քաղաքականութեան պատճառով, չանկարծ լատկանչեց: Տհաճութիւնը իւր անաջողութեան համար տեղիք տուց նորան գիպլօմատիալից միանգամայն հեռանալ և մի ճանապարհով գնալ, որը նորան դէպի անմահութիւնը պիտի տանէր: Այդ հատորի մէջ կան ուսւածքներ իսպանական դրող Զէմ Բալմէսի վերաբերեալ:

ԳԱՍՊԱՐԻ, ԱՂՕԼՖ, ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ԻՏԱԼԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, երկրորդ հատոր, 1888 թ., Բերլին, V+704 էրես, գինը՝ 12 մարկ (5 ռուբլի):

Այս աշխատանքի առաջին հատորը լոյս տեսաւ 1886 թւականին. նա տալիս է իտալական գրականութեան պատմութիւնը սկզբից մինչև Պետրարկա: Ներկայ երկրորդ հատորը սկսւում է Բօկկաչիօ-ուի Նալս խօսւում է այդ երկու մեծ բանաստեղծների էպիգօնների մասին, գրականութեան մասին 15-րդ դարում և նոյնը 16-րդ դարուց մինչև հակա-րեֆօրմացիալի ժամանակը: Գլխաւոր հեղինակները 16-րդ դարու Տասուօ-ից առաջ, որպէս Մաքիաւելլի, Բեմբո, Արիօստօ, որպէս նաև քնարերգութիւնը (լիրիկ), վէպը (էպօս), ողբերգութիւնը և կատակերգութիւնը ունեն հատորում են խօսեցւած: Մասնաւորները վերաբերւում են այս հատորին նոյն զովառանքով, որպէս և ա-

ռաջին հատորի նկատմամբ եղաւ՝ նոյն հիմնաւոր նախապատրաստական ուսումնասիրութիւնները, քննադատական անկախութիւնը, լիւսլի օգուտ քաղելը մօնօրափիական գրականութիւնից, ճարպիկ նկարագրութիւնը, հեղինակների աջողւած բնաորոշումը և այլն: Մանաւանդ գովում են այն, որ մեծ ուշադրութիւն է դարձրած լատինական գրականութեան վերաջ, որը անքան մեծ նշանակութիւն ունէր հումանիզմի դարում, որի համար, իբր պատական օժանդակ, ծառայել են Գէորգ Ֆոլտի (Georg Voigt) երկերը: Շատ աջողւած է Գեկամբրօնի վերաբերեալ գլուխը, իսկ կատաղի Ռոլանդի մասին կան մի քանի նոր և սրամտ գիտողութիւններ: Որպէս առաջին,



նույնպէս և այս երկրորդ հատորի վերջում կ'ըլլած է «Յաւելւած գրախօսութեան և քննադատական ծանօթութիւններին»:

ԳՕԼԴՅԻՀԵՐ, ԻԳՆԱՅ. ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՈՒՍԻԱՄԲԵՐ, (Muhammedanische Studien): Առաջին մաս, Հալլէ, 1889 թ., տպ. Նիմայէր, XII+280 էրես, գինը՝ 8 մարկ (մօտ 3<sup>1</sup>/<sub>2</sub> ռուբլի):

Այս գիրքը, որպէս ձեռնհաս գիտնականները վկայում են, վերջին տարիներումս խաւամական հետազոտութիւնների ասպարիզում լայն տեսած գրքերից ամենանշանաւորներիցն է. դա մի գիրք է, որը, մասնադիտական շրջանից դուրս, պէտք է հետաքրքրէ պատմութեան, կրօնագիտութեան, մասամբ նաև մարդաբանութեան (անթրոպօլօգիայի) ներկայացուցիչներին: Կարճ ասած, նա ցոյց է տալիս արարական ազգայնութեան կապը Մահմեդի կրօնի հետ: Գիրքը սկսւում է հետազոտութիւնով, թէ արաբների ոգու ուղղութիւնը, աշխարհակոյտութիւնը և քաղաքական կազմը ի՞նչ գիրք պէտք է ստեղծէին նոր հաւատի համար և թէ այդ շրջանում գործող առանձնապատկութիւնները ի՞նչ ազդեցութիւն պէտք

է գործէին իսլամի զարգացման վերաջ խալիֆների ժամանակ:

Յայտնի է Գօլդցիհերի (որը ունգարացի է) գրեթէ անհաւատալի հարուստ ծանօթութիւնը արաբական զանազան ասպարէզների հետ, մասնաւորապէս բանաստեղծութեան, լեզուագիտութեան, մահմեդական աւանդութիւնների, կրօնի և իրաւագիտութեան հետ: Անկարելի է մի գրախօսական նկատողութեան մէջ աչք գրքի բոլոր արժանաւորութիւնների մասին խօսել, որոնց կարեւորագոյնը նորա մէջն է կալանում, որ հեղինակը, նաև բազմաթիւ մանրամասնութիւնների մէջ, չի մոռանում դրքի գլխաւոր գաղափարը:

## Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ի Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

ՀԱՅՈՌԻՄԵԱՆ ՍԻՄԷՕՆ՝ «ՄԱՆԻԿ» (Ժամանակակից վէպ), Շուշի, տպ.  
Հապոյ Հոգևոր Տեղաբեան, 1889 թ. գինն է 40 կ.:

ՄԱՐԱՂԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ՝ «ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ». անցեալից մի չիշո-  
ղութիւն, հրատարակից Յովհաննէս Ս. Գրիգորեան: Ախալցխա, տպ. Մկրտ-  
աւիչ Ղալաթբարեանի, 1889 թ., գինն է 20 կ.:

КАЛАНТАРЬ АЛЕКСАНДРЪ. «БЕСѢДЫ о МОЛОЧНОМЪ ХОЗЯЙ-  
СТВѢ». выпускъ I. Молоко о Масло, съ политипажами. Тифл. 1889 г., тип.  
Михельсона, цѣна 40 к.

EFFERTZ OTTO, ARBEIT UND BODEN. Kritik der theoreti-  
schen politischen Oeconomik. Berlin, 1889. Puttkammer und Mühlbrecht,  
Buchhandlung für Staats—und Rechtswissenschaft.

ԼԷՕ՝ «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ) արատապաժ «Մուրճ» ամսագրից, Քիֆլիս,  
տպ. Ռոսինեանցի, գինը 50 կոպ.:



## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳԼԻԱ. 13 սեպտեմբերի պարլամենտական մասնաժողովը հրատարակեց ներքնագաղթը հետադուրեւ համար իւր աշխատութիւնները: Ներքնագաղթը վերջին տարիներումս ուժեղացել է աւելի քան երբեք և իցէ առաջ, և Ռուսիայից արտաքսւած հրէաները ներկայացնում են նորա նշանաւոր մասը: Ամենից շատ գալիս են Հուլլ նաւահանգիստը: Բաւց միւսն 6—8% մնում են Հուլլ, Մանչեստր, Լիդս և Բրադֆորդ, մինչդեռ միւսները շարունակում են ճանապարհը մինչև Ամերիկա: 1888-ին Լոնդոնի նաւահանգիստը եկած են 12.062 ներքնագաղթականներ, 1887-ին— 9.155: Նոյա  $\frac{1}{3}$  ալեքան զուրկ էին միջոցներից, որ հազիւ պատշաճ հանէին. վաւաչեալի գիտորկաւոր նորա կազմում էին 1861-ին 7.7% ընդդու հանրութեան, լեհական հրէաները 1%: 1881-ին սոքա կազմում էին 4.25%: Նոյա մեծ մասը յօշկակարներ են: Լոնդոնի 23.000 հիւսնարից 4.000 օտարներ են: Հրէաները Լոնդոնում, ըստ ոմանց, 60.000 է, ըստ ուրիշների՝ 35.000: Մասնաժողովը առաջարկում է միայն, որ աւելի մեծ կօնարօլ լինի աղքատ ներքնագաղթողների վերայ, բաւց սահմանափակման կամ արգելքի մասին չէ խօսում:

ԲԱԶԵԼ. 13 սեպտեմբ. Այս շաբթին այստեղ կապացաւ Ֆիզիօլօգի ներքին միջազգային կօնգրեսը: Ամենամեծ նշանակութիւն ունեցող գիտնականներն էին ժողոված, որպէս զի թէ լուրջ գիտական հետադուրեւ թիւներին և թէ ոչկան կեանքին նպաստեն: Կոնգրեսին մասնակցում էին՝ Մեծ Բրիտանիա 20, Ֆրանսիա 19, Գերմանիա 25, Իտալիա 10, Աւստրո-Ունգարիա 8, Բելգիա 5, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներ 5, Ռուսիա 4, Շվեդիա 3, Հոլանդիա 1, Պորտուգալիա 1, Ռումինիա 1, Իսպանիա 12, միացեալ Շվեյցարիա 13, ընդամենը 127 գիտնականներ: Տեղի ունեցան միլիոնիօսական, օպտիկական և ալ ֆիզիօլօգիական դեմօնստորացիաներ:

ԼՕՆԴՈՆ. 14 սեպտեմբ. Գիտութիւնները առաջացնելու համար, Բրիտանական ընկերութեան նիստը, որ այժմ Նիւ-Աստուլում եղաւ, շատ հետաքրքիր էր: Աշխարհագրական բաժնում կարդաց ինժեներ զննողաւոր Բեւլլ մի դասախօսութիւն զինւորական ճանապարհի մասին:

սին Պեկինից մինչ Հնդկականի սահմանը: Չինաստանը, ասաց նա, առաջիկայ ժամանակներում կրկին Անգլիայի դաշնակիցն է լինելու: Քիմիական սեկցիան խօսեց ճիշդ մեթոդի մասին քիմիան դասաւանդելու, րիօլօգիական բաժինը զբաղւեց բնաւորութեան լատկութիւնների ժառանգականութեան վիճելի վարդապետութեան խնդրով: Վէօլօգիական բաժինը զեկուցում արաւ Դր. Նանսէն իւր մի կարճ ճանապարհորդութեան մասին Գրօնլանդ: Երեկոյեան պրօֆ. Բոքլատ-Առաստէն դասախօսեց պողպատի ամրացնելու մասին:

ՊԱՐԻՉ: 14 սեպտ. Սպիրիտիստների կօնգրէսը շատ չաճախւած է: «Rép. Fr.» ասելով, Grand Orient-ում 300 կամ 400 հոգի են նիստ կազմում և մեծ եռանդով. ծերերը նստած են էլեգանտ, ջահէլ դամբրի և անմօրուս պատանիների հետ: Վարչութեան տեղերը բռնած են գրասէր ժիւլ Լեմինա, մուդրիկոս Նուս, դրսուհի զը Հօմար, դերակօմս Տօրր-Սօլանօ, գնդապետ Տօրտենսեն՝ Ֆրանսիայի և Արասասահմանի միւս ներկայացուցիչների հետ: Փորձեր զւարճութեան համար չեն կատարւում: Բաւականանում են խորիմաստօրէն խօսելով:

ԲԵՐԼԻՆ: Պրուսական ժողովրդական ուսումնարանները և նոցա ներկայ զարգացումը: Դորանով զբաղւեց «Բերլինի Ուսուցիչների Ընկերութեան» վերջին նիստը: Դասախօսը, ուսուցիչ Ի. Տեսս, իւր զեկուցման հիմքում դրեց նորերս՝ հրատարակւած պաշտօնական ստատիստիկան և, համեմատութիւններ անելով առաջւայ ստատիստիկական ցուցմունքների և օտար երկիրների հանգամանքների հետ, ներկայացրեց պրուսական ժողովրդական ուսումնարանների մասին ներկայ դրութիւնը: Զեկուցման միջ առւած է հետեւեալը:—Պրուսական լուսաւորութեան մինիստրութեան ջանքերը՝ զարոցական ճանապարհները կրճատելու գործում՝ պէտք է խոստովանել: Չը նպատ, որ շատ երեխաներ իրանց մօտ եղած ուսումնարանները չեն չաճախւած, ալլ դերադասում են լաւագոյն զարոցներ կամ իրանց կրօնի համար հիմնւած զարոցները չաճախել, 1886-ին միայն 131.000 երեխաներ, ուրեմն ընդհանուր թւի միայն մի քատասունհարորդը ( $\frac{1}{40}$ ), զնում էին 3 կիլօմետր (զրեթէ 3 վերստ) ու աւելի ճանապարհ:

Պրուսիայի 1.280 քաղաքային համայնքների վերայ զալիս էին 3.718 ժողովրդական ուսումնարաններ, ամեն մի քաղաքի վերայ ուրեմն զալիս էին 3 զարոցներ: Դորա հակառակ, 37.349 գիւղական համայնքներում և 16.403 կալւածական վիճակներում ընդամենը կալին 30.300 զարոցներ, ուրեմն ամեն մի համայնքի վերայ զալիս էր միջին թւով 0.56, ուրեմն երկու համայնքի վերայ ոչ աւելի շատ քան մի զարոց: Ֆրանսիայի 36.400 հա-



մալքները ունէին 67.300 հասարակաց ժողովրդական ուսումնարաններ, ալեպէս որ աչս բոլէին Ֆրանսիան ուսումնարանների թըւով ամենահարուստ երկրներէն է ներդաշնակ:

Պրուսական ժողովրդական ուսումնարանները ունէին 1886 թւին 75.097 դաստաներ, բայց սենեակների թիւն էր միայն 67.300, ալեպէս որ 21.000 դաստաներ, որոնց մէջ ուսանում էին  $1\frac{1}{2}$  միլիոն երեխաներ, պէտք է կրկնակի դասատան սենեակների բանաջնէին: Իսկ հակառակ դեպքին մի հանգամանք է:

Ուսուցիչների բնակարանների թիւը քաղաքներում, 1871—1886 թըւերի ընթացքում, 7.200-ով պակասել է:

Պրուսական ժողովրդական ուսումնարաններում երեխաների երեք քառորդի համար ( $\frac{3}{4}$ ) դասաւանդութիւնը երկու սեռի համար միասնական է (աղալ—աղջիկ միասին): Միմիայն 20.600 դաստաներում սեռերը բաժանւած են: Փաղաքներում ուսանող երեխաների միերորդը ( $\frac{1}{3}$ ), ուրիմն կէս միլիոն երեխա, տեղաւորւած են 7.000 ընդհանուր դաստաներում (ուրիմն դոքա խառն դաստաներ են): Գիւղերում խառն դաստաներում նստած են  $\frac{10}{11}$  մասը (որ նշանակում է Յ. միլիոն) երեխաների ընդհանուր թիւի:

Ուսանող երեխաների  $\frac{1}{4}$ -ը ուսանում է միդասեան ուսումնարաններում,  $\frac{1}{4}$ -ը՝ երկդասեան,  $\frac{1}{6}$ -ը՝ երեքդասեան,  $\frac{1}{6}$ -ը՝ վեցդասեան, իսկ մնացած  $\frac{1}{6}$ -ը ուսանում է 4, 5, 7 և աւելի դաստաներ ունեցող ուսումնարաններում: Փաղաքներում երեխաների կէսը ուսանում է վեցդասեան ուսումնարաններում, գիւղերում  $\frac{2}{3}$ -ը երեխաների սովորում են միդասեան և երկդասեան ուսումնարաններում:

Զեկուցման մէջ ասւած է, թէ համարեա վրդովեցուցիչ է ուսուցիչների պակասութիւնը, դաստաների լցւած լինելը և ուսուցիչների ուժերի նւազումը.  $2\frac{1}{2}$  միլիոն երեխաներ նստած էին չափազանց լքցւած դաստաներում: 75.097 դաստաների համար սոձեռն կալին միայն 64.750 ուսուցիչներ (երկու սեռի):

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՄՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

Ամեն անգամ, ամեն տարի, երբ աշունքը մօտենում է կամ սկսում, մի, արդէն հնացած, թեմա կրկին սեղանի վերայ է դրւում հայկական շրջաններում: Գա՛ հայկական թատրոնի խնդիրն է, որ թէև հին, բայց երբէք չի ուզում թառամել և, այդ պատճառով, մնում է միշտ նոր:

Հայ հասարակութիւնը չ'ունի թատրոն և ամօթ է, որ նա այն չ'ունենայ.— ահա հայկական թատրոնի խնդրի շուրջը պատուղ բոլոր խօսակցութիւնների ծուծը և բոլոր հառաչանքների միտքը: Բայց սա ևս արժանի է ուշադրութեան, որ այդ խնդրի մասին խօսակցութիւնները չեն դադարում: Այդ ցոյց է տալիս, որ խնդիր կայ, բայց որ նա դեռ ևս օդի մէջն չ'ըջում:

Բայց խօսութիւնից չեղած կը լինինք, եթէ ստեղծ լինինք, թէ միմիայն խնդիրը կայ: Այ՛ միայն այդ կայ, այլ կան արդէն որոշ կարծիքներ, նեղամ ուղղութիւններ, որոնցով զանազան մարդիկ առաջարկում են խնդիրը լուծել: Ահա այդ ուղղութիւններն են, որոնց հետ ևս ուղում եմ իմ ընթերցողներին ծանօթացնել:

Թատրոնական խնդրի մէջ մի որոշ ուղղութիւն լիապէս պատկանում է սր. Գէորգ Չմշկեանին, որի անունը անխղճի կերպով կապւած է հայկական թատրոնի սկզբնաւորութեան և պատմութեան հետ, սկսած վաղի ստանական թւականների սկզբից մինչև աւուրւալ օրս: Նա, սր. Գէորգ Չմշկեանը, երբէք չի դադարել թէ բերանացի և թէ դրաւոր կերպով ասել ու քարոզել թէ՛ հայկական թատրոնի ապագան տեղական ոյժերի վերայ պէտք է հիմնւի և որ մենք մեր բոլոր ոյժերը պէտք է դործ դնենք՝ տեղացիների մէջ բնորոշ տաղանդաւորներին և մտցնել թատրոնական ասպարէզը: Այդ մտքի հետ զուգահեռապէս, ուրբան ևս կարողացել եմ նորան հասկանալ, նա քարոզել է միշտ, թէ միւլ հարկաւոր են ոչ ալնքան արտակարգ տաղանդներ, որքան մի ներդաշնակ խումբ, որը իրանից ներկայացնէր մի լաւ անսամբլ:



Այն տարութիւնը, որ պ. Չմշկեանը մտցնում է իւր ալդ դատի պաշտպանութեան մէջ, ունի իւր առանձին պատճառները. որովհետեւ միքաւր ինքն ըստ ինքեան շատ պարզ է և, ըստ երևութին, դատը չի պահանջում մի առանձին ջերմ պաշտպանութիւն:

Բայց ահա՛ հանդամանքը. 1879 թւականից հրաւիրւեցին Թիֆլիս Պօլսի դերատաններ, պ.պ. Աղամեան, Մնակեան և տիկիներու օրիորդներ՝ Գարաքաչեաններ, Աստղիկ, Սիրանուշ, Հրաչեալ և ալլն: Նոցա Թիֆլիս գալովը հաղկական բեմը ստացաւ մի դեռ ևս չը տեսնւած փաղ, որից աչքերը աչքեան «կուրացան», որ Թիֆլիսի նոյն իսկ ուսումնական և հաղկական բեմը երբէք ոտք չը կոխած հալընտանիքները սկսեցին լաճախել հաղկական ներկապայտները. և դեռ ոչ միայն հալընտանիքները, ալ և օտարազգիներէից շատերը և նոյն իսկ վրացի և ուրիշ դերասանները և դերատանուհիները:

Սակայն երկար չը տևեց ալ թատրոնական խրախճանքը. 1881/82 թւականին ալ խումբը դադարեց գործելուց:—Ինչո՞ւ:—Որովհետեւ էլ «փող չը մնաց» հասարակութեան զրպանումը, որ կարելի լինէր բաւարարութիւն տալ նորեկ դերատանների միշտ աւելի և աւելի աճող պահանջներին: Ալդ, որպէս և նոցա հետ միասին գործող տեղական դերասանները, ստանում էին ռոճիկներ մի հաղկական թատրոնական կոմիտեայից, որի պարագլուխն էր իշխան Նապօլէօն Ամատունի, իսկ անդամներ պ.պ. Աբգար Յովհաննիսեան, Գրիգոր Փրիդոնեան, Մովսէս Թաւադեան և ուրիշներ: Ես, ի հարկէ, չեմ մտնում ալդ մանրամասնութիւնների մէջ, վասնեալով որ իւր «թատրոնական լիշողութիւնների» մէջ պ. Չմշկեանը ինձ ստատաց չը դուրս բերէ. բայց աւսրքանը հաստատ զիտեմ, որ ռոճիկներ դերասանները ստանում էին թատրոնական կոմիտեայից, որը իւր անդամների կամ ուրիշ անհատների զրպանից պէտք է վերագրիր անէր՝ զոչացած զեֆիցիտները ծածկելու համար: Չը նապած, որ թատրոնը ինքն էր լինում և հաղկական թատրոնի անունը օդն էր թնդացնում, աչնու ամենապիւ ալ թատրոնը, իւր աչնժամանակալ դերասաններով, պէտք է զեֆիցիտներ զոչացնէր, չնորհիւ աչն բանի, որ եկովի դերասանները մեղանում անսովոր մեծ ռոճիկներ էին պահանջում: Որքան ինձ չարտնի է, պ. Աղամեանը, օրինակ, ստանում էր ամսական 400 ռուբլի և օգտւում էր մի թէ երկու բենեֆիսով: Միւսները ստանում էին 200, 250, 150 ռ. ամսական: Գոքա, ի հարկէ, չը լուած ռոճիկներ չեն դերասանների համար առհասարակ. բայց, բացի աչն որ ռոճիկներ տալը նորութիւն էր մեղանում, հաղկական հասարակութեան համար գոքա մեծ փողեր էին: Ախար չէ՞ որ, եթէ Թիֆլիսի օպերային երգիչները ստանում են ամսական մինչև 600—800 ռուբլի, ալդ հնարաւոր է միայն չնորհիւ նախ աչն մեծ օժանդակութեան, որ տալիս է տէրութիւնը, և երկրորդ՝ չնորհիւ աչն բանի, որ ալդ օպերաները լաճախողները միմիայն մի աղղի հասարակութիւնից չեն, ալ բոլոր աղղերից՝ ուսուներ, հալեր, վրացիք և ալլն:

Չը նալած դորան, չը նալած, որ հալ հասարակութիւնը զգում էր պօլսական խմբի պահպանելու ծանրութիւնը, բաղց ազգային բաւականութիւնը, ալն միտքը, թէ ահա հալական թատրոնը ստանում է քաղաքացիութիւն, և որ թատրոնից աւտ իմպուլսով հալախօսութիւնը սկսում է մուտք դործել մինչ ալն ժամանակ հալերի համար խուլ ականջներ ունեցող ընտանիքները,—աչդ չողոքորթիչ զգացմունքը մի առժամանակ մոռացնել աւեց զոհաբերութեան զգացմունքի ծանրութիւնը: Մենք էլ չենք խօսում ալն բաղմաթիւ անհատների մասին, որոնց աչդ զարճութիւնը շատ թանկ նստեց, նրանց, որոնք գերասանական շրջաններին առանձնապէս մօտիկ էին:

Բաղց աչդ դեռ ոչինչ: Ասենք, թէ դանդաւորները իսկապէս չը քանդակցին և նոքա չեն հասարակութեան մէջ միակ դեր խաղացողները թատրոնի նկատմամբ: Կար և մի ուրիշ հանգամանք, աւելի ծանրակշիւ քան առաջինը. խումբը, որ կազմւած էր պօլսեցիներից և տեղացիներից, կարծես թէ բաժանւած էր երկու կուսակցութիւնների՝ պօլսական և տեղական, մէկը՝ Աղամեանով, միւսը՝ Չմէկեանով: Տեղացիները իրանց ամեն կողմից արհամարհւած էին համարւում և ոչ ըստ արժանւոյն դնահատւած: Այսպէս, օրինակ, պ. Չմէկեանը, տիկ. Չմէկեանը, պ. Տէր-Գաւթեանը, պ. Աւալեանը, միասին առած, հաղիւ ալնքան ուժիկ էին ստանում որքան պօլսեցիներից մէկը կամ միւսը առանձին և դեռ աւելի էլ պակաս: Տեղական գերասանները, աչդպիսով, իրանց զգում էին վերասուրւած շնորհիւ, ի միջի աչդ, ալն հանգամանքի, որ պօլսեցիք ոչ մի համերաշխութիւն չէին ուզում պահպանել իրանց և տեղացիների մէջ:

Բաղց անհամերաշխութեան զգացմունքը չուտով տարածւեց և ամբողջ խմբի վերաջ, շնորհիւ ալն առանձին գիրքի, որ բռնեց պ. Աղամեանը, իւր բոլորովին արտակարգ խաղով: Պարոն Աղամեանը գպրոցի մարդ չէր և ոչ էլ դառաւ գպրոցի մարդ, գպրոցի գերասան: Նա ճանաչում էր միտալն և միմիալն իրան, իւր հետ միասին՝ իւր խաղը, իւր գերակատարութիւնը: Ուրիշ ոչ ոքի նա չէր ուզում ճանաչել բեմի վերաջ. իւր հետ միասին խաղացողները գերասաններ չը պիտի լինէին, աչ միտալն գերասանաւ մարդ ի կ. բեմի վերաջ ինքը պիտի մնար միակ գերասան: Հասարակութեան բոլոր ուշքն ու միտքը պէտք է դարձրած լինէր գէպի ինքը, Աղամեանը: Հասարակութիւնը պէտք է պար թատրոն ոչ թէ պիտեւր լաւ խաղացւած տեսնելու համար, աչ միտալն տեսնելու, թէ Աղամեանը ինչպէս է կատարելու իւր ստանձնած դերը: Պ. Աղամեանը, ստում եմ, գպրոցի մարդ չէր. գպրոցի մարդը սովոր է ոչ միտալն իւր գերը լաւ կատարելու, աչ նա ձգտում է նաեւ՝ բոլորի գերակատարութեան հետեւ և պահպանել անսամբը, ամբողջութիւնը, սրալէս գի պիտեւր լիակատար կերպով խաղացել: Ինչ խօսք, որ գերասանը, վերջ ի վերջոյ, պիտի հեղինակի կենդանի թարգմանն է և որ, ուրեմն, պիտի շահը, պիտի օգուտը,



ամենից առաջ պէտք է ի նկատի առնել: Իսկ պիտի չտանք պահանջում է, որ ամենքը իրանց զերեքը լաւ խաղան և որ ամենքի խաղերի մէջ պիտի ներքին կապը պահպանել: Այդ կարելի է առաջ բերել միայն խմբի անսամբը պահպանելով, մի պահանջ, որին պ. Աղամեանը չէր հպատակում:

Եւ չեմ կարող ինքս ստուգել, բայց եթէ զերասաններին լսելու լինէր, պ. Աղամեանը, իւր առանձին գիրքը բեմի վերայ պահպանելու համար, նոյն իսկ անտիզի շարժումներով խանգարում էր ուրիշներին, մասնաւոր, երբ սոցա լաջողում էր գրաւել հասարակութեան ուշադրութիւնը:

Այլ խօսքով, պ. Աղամեանը ներկայանում էր ոչ որպէս խմբի մարդ, այլ իբրեւ մի վիրաւոր իւր գործի մէջ. իսկ նորա բռնած գիրքը կը սաղէր մի հիւր-գերասանի, մի դատաբօլիօրի, որը զալիս է մի քաղաք մի երկու ներկայացումներ տալու, բայց ոչ թէ մշտապէս խաղալու համար:

Այդքանը, ինչ վերաբերում է պ. Աղամեանին: Բայց նորա հետ նաև միւս պօլսեցիք, որպէս այդ վկայում են բոլորեքեան, կարծես եկել էին Թիֆլիս առհասարակ իրանց շնորհները ցոյց տալու, բայց ոչ թաառոնական գործը առաջ մղելու համար:

Եւ չը գիտեմ, կու արդեօք Թիւրքիայի հագերի մէջ, մասնաւորապէս Կ. Պօլսում, հաշկական աղագային թատրոնական գործ, թէ ոչ, բայց մեղանում, մասնաւորապէս Թիֆլիսում, աղագայի մի գործ կա: Հաշկական աղագային թատրոնը դեռ այն չէ, ուր հաշկեղէնի գոյում ներկայացումներ են տալիս, այլ այդ ներկայացումների հետ պէտք է կապւած լինի մի դադափար, այն է՝ մեր միւս բոլոր հասարակական գործիչներին, ֆակտորներին հետ (զպրոցի, մամուլի և այլն) միասին նպատակ առաջդրութեան: Մեղանում ձգտում կա թատրոնը դարձնել օրգանական պահանջ հաշկասարակութեան: Այդ գործի պատմութիւնը ինձ չի պատկանում անել, բայց միայն լսելին է, որ այդ գործը արդէն իւր՝ մօտ 30 տարւալ պատմութիւնն ունի և որ այդ պատմութեան հետ կապւած են Պաօլեանի, Կարինեանի, Կարբիէլ Աստիկանեանի, պարոն և տիկին Չմէկեանների, Ամերիկեանի, Աւանգուդեանի, բժ. Տէր-Կրիզոբեանցի և ուրիշների անունները: Գոքա հանդիսանում են ոչ թէ իբր զերասաններ և գրողներ առհասարակ, այլ և իբր գործիչներ, որոնց ամեն մէկի գործունէութիւնը թատրոնական ատլարի գոյում միասին հետ կապ ունի:

Այդ, պօլսեցի զերասանները ոչ միայն չուղեցին տեղացի զերասաններին ճանաչել, այլ նոքա չուղեցին անգամ հաշկատրոնական տնայան փաղիւղած գործը ճանաչել: Նոքա չեկան գործ հիմնելու, կամ հիմնած բանը շարունակելու, թէկուզ աւելի զերազանց ներկայացումներով կատարելագործութիւն մտցնելու, ուստի մէջ նոր հոսանք մտցնելու, այլ եկան միայն ներկայացումներ տալու այն մտքով, թէ լաւ վարձատրութիւն կը տաճան: Ամեն ոք սկսեց միայն իրան ճանաչել, իւր անձը և

իւր գրպանը: Պօլսական խումբը ազդեց հասարակութեան վերաջ իւր խաղով, բայց ոչ մի բարոյական ազդեցութիւն չը թողեց՝ թատրոնական գործիչներին և դերասաններին վերաջ, նա չը խրախուսեց սիրել գործը, անձնւիրարար գործել գաղափարի համար:

Խումբը ցրւեց 1881/82-ին. հաջորդ մշտական թատրոնից մնացին միայն լիշողութիւններ, մինչև որ 1885/6-ին մի քանի խոշոր դրամատէրերի՝ Փիթօլեանի, Մանթաշեանի և Փրիդոնեանի գրաւականով կազմւեց մի խումբ, մասնակցութեամբ կրկին հրաւիրած և արդէն իւր անունը Ռուսխալում հռչակած պ. Աղամեանի, ալ և մի պօլսեցի դերասանուհու՝ Նրաշխաւորները մի տարի հաջիւ կարողացան պահպանել ալ խումբը և, կրելով մի ինչ որ 3000 բուբլու կորուստ, լեա կանգնեցին գործից:

Այդ թւականից դէսը արդէն անցել են տարիներ. հաջորդ հասարակութիւնը իրան մի տեսակ որբացած է զգում, առանց մշտական թատրոնի: Պէտք է խոստովանւած, սակայն, որ նոյն ալ դանգատաւոր հասարակութիւնը շատ էլ թատրոնական հասարակութիւն չէ. թատրոնը, մանաւանդ դրամատիկականը, նորա կեանքի հացն ու աղը չէ դարձած. բայց և այնպէս, նա շատ լաւ է զգում թատրոնի կրթիչ նշանակութիւնը և այն պակասը, որ գոյացել է ազգային կեանքի մէջ առանց հաշիւական թատրոնի: Վրաց թատրոնի մշտական բնաւորութիւն ստանալը սուելի ու աւելի դրդեց հայերին իրանց թատրոնի մասին մտածելու: Սիրողները փորձեր արին ներկայացումներ տալով ալ պակասը մի որոշ չափով լրացնել. բայց նոցա ներկայացումները այնքան սակաւ էին լինում, որ, եթէ բանը նրանց դար, խնդիրը խալաւ կը մոռացէր: Այդ անգործ տարիներումն է, որ կազմւեց Թիֆլիսում «Հաջորդ Գրամատիկական ակումբ» կոչւած ընկերութիւնը, որը գոյութիւն ունի միմիայն իւր կանոնադրութեան հաստատւած լինելու և երբեմնապէս նիստեր կազմելու ու մի քանի հազար էլ վող հաւաքած լինելու պատճառով, թէ չէ գործունէութիւն զեռ. ես չի ցոյց տւած: Այդ ընկերութիւնը ունի ինչ որ մի կոմիտէ, որին լանձնւած պէտք է լինի հաշիւական թատրոնական գործը. դորա նախագահն էր պ. Նսալի Փիթոլեանը, որը լալոնի մեկնասն է Թիֆլիսում եղած արւեստագէտների, մանաւանդ երաժշտական և թատրոնական տաղանդների: Բայց նոյն ալ մարդը հաջորդ թատրոնական գործին չը կպաւ և գուցէ ալ գաղափարը աւելի մեռցնելուն նպաստեց, քան վերակենդանաւում: Գորա գէմ բողբողը կզաւ, որքան ես լիշում եմ, նոյն պ. Գէորդ Չմշկեանը, որը հաշիւական թատրոնի գաղափարը կրողներից նշանաւորագոյնն է՝ սկսած տասնեակ տարիներից:

Այս կարճաւոր տեսութիւնը ևս արեցի այն նպատակով, որ թատրոնի խնդրի վերաբերեալ երկու տարբեր ուղղութիւնները հասկանալի լինին: Ընթերցողը ծանօթացաւ պօլսական դերասանների խմբի բնաւորութեան հետ: Արդ, հասարակութեան մեծագոյն մասը սպասում է մեր թատրոնի



վերականգնումը՝ պօլսական զերասանների վերադարձին։ Ում հետ որ խօսէք, դուք այդ կը լսէք։ Գորա հակառակ ուղղութիւն է քարոզում պ. Գէորգ ջմէկեանը, որի ասելովը, հայկական թատրոնական գործի զարգացումը կանգնացնել է նշանակում՝ եթէ մեր լուսերը դնենք պօլսեցոյ վերայ, թէկուզ այդ պօլսեցիք լինեն մի-մի Ադամեան, Մնակեան, Գարաքաշեաններ և այլն։

Որպէս անոնում է ընթերցողը, այստեղ կալ մի պրօբլեմ, մի խնդիր, որի լուծելը այնքան էլ հեշտ չէ, որովհետեւ, գոնէ այս բոլէին, առանց պօլսեցիների—թատրոնը կորցնում է իւր զիւթականութիւնը, իսկ նոցա հետ լինելով, կորչում է համերաշխ գործունէութիւնը—«պարոցի» ուղղութիւնը և վտանգւում, այսպէս ասած, թատրոնական ֆօնդը։ Պրօբլեմը դրւած է, արժէ մտածել զորա վերայ։

ԼՈՒՍԻՆԻ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՖԻՆԱՆՍԻԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

«Մուրճ»-ի անցեալ 9-րդ №-ում, սեպտեմբերի 22-ին (նոր ստիլ) կատարւած պատգամաւորական ընդհանուր ընտրութիւնների հետեւանքները հաղորդելիս, մենք խոստացանք ներկայ 10-րդ №-ում ներկայացնել մի հաշիւ, թէ ի՞նչ է արել Ֆրանսիական երրորդ հանրապետութիւնը իւր ազգի համար՝ իւր 19 տարւայ գոյութեան ընթացքում:

Ներկայ տարւայ պատգամաւորական ընտրութիւնները ունէին բացառիկ նշանակութիւն, որովհետեւ 1877 թւականից դէպք՝ Ֆրանսիական հանրապետութեան երբէք այնքան մեծ վտանգ չէր սպառնացել, որքան ներկայ թւականին: 1877-ին, մարշալ Մակ-Մահօնի նախագահութեան ներքոյ և սորա իսկ օգնութիւնով, կազմւեց մի մինիստրութիւն բաղկացած հանրապետութեան թշնամի մինիստրներից, հակառակ պատգամաւորների ժողովի հանրապետական մեծամասնութեանը: Մոնարխիական մեծամասնութիւն ստեղծելու համար, Մակ-Մահօնը, համաձայնութեամբ այն ժամանակ մեծամասնաբար մոնարխիստներից բաղկացած սենատի, արձակեց պատգամաւորների ժողովը և նոր ընտրութիւններ նշանակեց, յուսալով, որ կառավարութեան թելադրութեամբ ազգը կ'ընտրէ մոնարխիական պատգամաւորներ:

Փորձը չ'աջողւեց: Թիերը այդ ժամանակներում մեռաւ և Դամբետտան չաղթութիւնը տարաւ, փրկելով ազգը մի նոր քաղաքական յեղաշրջումից և փրկելով հանրապետութիւնը իւր զէմ լարած որովայններից:



Հանրապետութեան այդ յաղթութիւնը հիացրեց բոլոր լուսաւոր աշխարհը: Եւ դա մի յաղթութիւն էր, որը ապահովեց հանրապետութեան կեանքը աւելի քան մի տասնեակ տարով: Այդ փառաւոր յաղթութեան ազդեցութեան ներքոյ Ֆրանսիական սեփաւոր շուտով դառաւ հանրապետական. վախճանւած մոնարխիստ սենատորները տեղը ընտրեցին մեծ մասամբ հանրապետականներ: Փոխեց սահմանադրութեան յօդւածը, որով սենատորները ընտրոււմ էին ցմահ. այնուհետեւ ամեն երեք տարին մի անգամ սենատի  $\frac{1}{3}$  մասը պէտք է փոխէր: Այդպիսով սենատի հանրապետական դարձնելը հեշտացաւ ազգի համար, և սենատը շուտով դառաւ հանրապետական, որպէս էր և պատգամաւորների ժողովը:

Այդպիսով քաղաքական երեք մարմիններից՝ նախագահ, սենատ և պատգամաւորների ժողովը, — երկու վերջինները, ազգի մեծամասնութեան կամքով, դառան հանրապետական. և որովհետեւ նախագահ ընտրոււմ է ոչ թէ ազգը ուղղակի, այլ պատգամաւորների ժողովը և սենատը միասին, ուստի 1879-ին հրաժարւած Մակ-Մահօնի տեղ նախագահ ընտրեց հանրապետական նախագահ Գրեվի, որը վերընտրեց 1885-ին. իսկ 1888-ին նորա տեղը ընտրեց ներկայ նախագահ Կարնօն:

Մի տասնեակ տարի Ֆրանսիական հանրապետութիւնը իւր կեանքը ապահովեց 1877 թւականին ստացած մղումով: Բայց այդ տասնեակ տարում շարժումը՝ այսպէս ասած՝ սառեց: 1885 թւականի ընտրութիւններով մոնարխիստները աւելի զօրեղացան, նոցա պատգամաւորների թիւը աւելացաւ: Մանաւանդ ահա այդ դէպքից յետոյ, հանրապետութեան թշնամիները գլուխ բարձրացրին, յուսալով որ ահա 1889 թւականին, մոնարխիստական շարժումը աւելի ու աւելի կը ծաւալւի և այդ հանրապետութեան թշնամիները աւելի էլ կը զօրեղանան: Եթէ այդ շարժումը առաջադիմէր, հանրապետութիւնը իրօք վտանգւած կը լինէր:

Ահա այդ ժամանակն է, որ սկսեց կազմակերպւել մի նոր կուսակցութիւն՝ թշնամի այժմեան հանրապետութեան: Այդ կուսակցութեան յայտնի գլուխն է Բուլանժէն:

Այս նոր թշնամին, որին նւիրած էր «Մուրճ»-ի 3-րդ խում մի ցատուկ յօդւած, առաջ եկաւ ոչ իբր մոնարխիստ, այլ իբր հանրապե-

տուլթիւնը աւելի ամրապնդող: Նա իւր կուսակցութեան անունը  
 դրեց ճաղգալին կուսակցութիւն», որի գլուխն էր ինքը Բուլանժէն,  
 իսկ սիւները՝ ՌօշըՎօր, Դիլլօն, Լազերր և ուրիշներ: Բուլանժէն  
 դառաւ վտանգաւոր այն օրից, երբ նա, սոյն 1889 թ. յունւարի  
 (նոր ստիլով) 27-ին, ընտրեց պատգամաւոր Պարիզում, իւր անուան  
 վերայ միացնելով Պարիզի ձայնասու բնակիչների թւի կէսից ա-  
 ւելին, այն է մօտ 350.000 ձայն: Այդ ձայների մէջ խառն էին հան-  
 րապետականներ, որոնք հաւատում էին Բուլանժէի աստղին աւելի,  
 քան նորա հանրապետականութեան և յետոյ ամեն կարգի մոնար-  
 խիստներ՝ թէ թազաւորականներ, որոնց գլուխն է աքսորւած Պարիզի  
 կոմսը, անուանական ժառանգը Ֆրանսիայի նախկին թազաւորական  
 զահի և կայսերականներ, որոնց գլուխն է պրինց Փերումը և սորա  
 որդի պրինց Վիկտորը, անուանական ժառանգները Նապօլէօնների:

Վտանգը սորանումն էր, որ, հանրապետականների մի թէկուզ  
 փոքր մասը անցել էր Բուլանժէի կողմը և միևնոյն ժամանակ նոյն  
 իբր թէ հանրապետական Բուլանժէին միացած ոյժերով պաշտպա-  
 նում էին ամեն կարգի մոնարխիստներ: Եւ որովհետեւ Բուլանժէի  
 յաղթութեան առաջին հետեանքը կարող էր լինել շփոթութիւնը,  
 որից միայն մոնարխիստները սպասում են ամեն մէկը իւր Մեսսիայի դա-  
 լուսորը, ուստի բուլանժէական շարժումը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ  
 քաղաքական շփոթութեան մի շարժում, որից ինչ բան դուրս գալը  
 ոչ ոք չէր կարող գուշակել:

Վտանգը տեսնելով, տեսնելով նաև որ հազարաւոր հանրապե-  
 տականներ կան, որոնք հետևում են Բուլանժէին միմիայն սորա ան-  
 պատիժ մնալու պատճառով, և հաւատալով նորա խոստումներին, նո-  
 րա քաղաքական կոչման, — հանրապետութիւնը, իրան պաշտպանե-  
 լու և քաղաքացիների մտքերը լուսաւորելու մտքով, դատ բացեց  
 Բուլանժէի և ընկերութեան դէմ, մեղադրելով նորան քաղաքական  
 դաւադրութեան մէջ: Այդ բանի համար կառավարութիւնը  
 պահանջեց, համաձայն Առհմանադրութեան, որ սենատը իրանից  
 կազմէ բարձրագոյն Ատեան, որ և եղաւ: Գործը ամենքին չիշեցրեց  
 հռովմէական պատմութիւնից Ատալինայի դաւադրութիւնը բնդ-  
 դէմ հանրապետութեան: Այն ժամանակ Յիցերօնն էր հանրապետու-  
 թեան փառաբանը, այն անգամ՝ Փան դը Բօրլայէր: Դատի ձայնը



միայն լսելուն պէս, Բուլանժէն փախաւ, որպէս փախան նաև Բոշլիօր և Դիլլօն: Դատը եղաւ առանց մեղադրեալների, որոնք մերժեցին երևալ դատարանի առջև: Գործը վերջացաւ Բուլանժէի կատարեալ խաչատաւութիւնով թէ որպէս մարդ, թէ որպէս զինուոր, թէ որպէս նախկին մինիստր, թէ որպէս նախկին հրամանատար զօրքի և թէ որպէս քաղաքական գործիչ: Ամենը հիմնաւ՝ փաստերի և միմիայն փաստերի վերայ:

Դատի արձադանքը ահագին եղաւ և շատերի վերայ ազդեց սթափեցուցիչ կերպով: Որքան էլ աշխատեցին հանրապետութեան հակառակորդները նսեմացնել դատի նշանակութիւնը, բայց գաղտնիքների լոյս աշխարհ հանելը իւր ներգործութիւնը արաւ և զոնէ միամիտների աչքը բացեց:

Այդ երևաց այս օգոստոսին կատարեալ զաւառական ինքնավարութեան ընտրութիւնների ժամանակ: Բուլանժէն հրատարակեց, թէ 400 տեղերում, այսինքն բոլոր տեղերի երրորդ մասում, իւր կուսակցութեան մարդիկ կ'ընտրեն, իսկ զոցանից 80-ի մէջ ինքը կ'ընտրուի: Բայց դորա փոխարէն Բուլանժէն ընտրեց միմիայն 12 տեղերում: Ահագին պարտութիւն:

Դատի վատ վախճանի առաջին մեծ հետևանքն էր այդ բայց դեռ նշանաւորը պահեալ էր ներկայ սեպտեմբերի (նոր տոմարով) 22-ին, երբ կատարեցին պառզամաւորների ժողովի համար ընտրութիւններ: Մոնարխիական բոլոր կուսակցութիւնները համաձայնութիւն էին կայացրել Բուլանժէի հետ իրար թե թեի տալ և իրար օգնել՝ հանրապետութիւնը կործանելու համար:

Կուսակցութեան պրեստիժը պահելու և ամբօխի երևակայութեան վերայ ազդելու համար, Բուլանժէն, որ իբր փախտական կենում է Լոնդոնում, իրան շրջապատել էր իշխանական սարք ու կարգով: Ողևորեալ իրանց համար առեալ հանրապետութեան մտալուտ կործանման տեսարանով, մեծամեծ հարուստներ Բուլանժէին ձեռք էին կարկառել և օգնել նորան անհաշիւ գումարներով, որի ոչմով Բուլանժէին յաջողել էր պահել Պրանսիայում, բայց մանաւանդ Պարիզում, վարձկան աւերոսներ, որոնց պաշտօնն էր միշտ բղաւիլ և ողևորել Բուլանժէի անունով և սարսափ գցել հակառակորդների վերայ:

Բայց ոչինչ չ'օգնեց. սեպտ. 22-ին համազգային դատաւճիւր կարդացւեց հանրապետութեան վերայ էլ, Բուլանժէի վերայ էլ, բոլոր մանարխատների վերայ էլ: Հանրապետութիւնը դուրս եկաւ ընտրութիւններից զերծ ու ողջ, այնպէս՝ ինչպէս կար, միայն մի փոքր էլ աւելի առողջացած:

Ճշմարիտ է, հանրապետութիւնը ոչ մի նոր տեղ ձեռք չը բերեց, բայց այսքան կատաղի և հզօր ընդդիմադրութեան առջև մնալ զրեթէ բոլորովին չը մնասւած՝ զորա համար հարկաւոր էր ունենալ մեծ բարոյական ոյժ, պէտք էր ունենալ խորը արմատներ ժողովրդի մէջ:

Ընտրութիւնները 22-ին սեպտեմբերի (նոր տոմարով) և լրացուցիչ ընտրութիւնները 6-ին հոկտեմբերի աւելցին հանրապետութեան պաշտպան մօտ 365 պատգամաւոր, իսկ հակառակորդներին, հանրապետութեան թշնամի կուսակցութիւններին՝ շուրջ 210 պատգամաւոր, ասել է թէ թշնամիները, չը նայած իրանց բոլոր գործադրած ջանքերին, առաջւանից մի քաջ առաջ չը գնացին:

Յաւալի է, որ հանրապետութիւնը նմանապէս նոր հող չը գրաւեց և մինչև անգամ մի երկու տեղ էլ կորցրեց. ցաւալի է, որ հանրապետութիւնը կորցրեց իւր մի քանի ականաւոր և հռչակած պաշտպաններին, որպէս փիւլ Ֆերրին և որ շատ ուրիշները միմիայն երկրորդ անգամաւ ընտրութիւններին կարողացան վերընտրուել: Բայց այն ահագին և լաւ դիտցիպլինսած կօալիցիալի դիմաց ունեցած տեղերը պահպանելն էլ—մեծ քաջագործութիւն էր:

Հանրապետութիւնը դրականապէս վատասկեց միայն մի բան—Ալժմեան հանրապետական պատգամաւորների մէջ արմատականները աւելի քիչ են թւով, քան մինչ այսօր նոքա էին: Դոցա պարազլուխները՝ Կլեմանսօ, Ֆլօքէ քաղաքական հեռատեսութիւնից զուրկ մարդիկ են. իրանց նեղ ծրագիրը առաջ մղելու նպատակով, նոքա միշտ միացել են հանրապետութեան թշնամիների հետ՝ մինիստրութիւնները վայր գլորելու համար, որի շնորհիւ հանրապետութիւնը վատասկեց անհաստատ կառավարութեան անունը: Ազգի հանրապետական մեծամասնութիւնը այս անգամ ուզեց դոցա պատժել և պատժեց աւելի քիչ թւով արմատականներ ուղարկելով պատգամաւորների ժողովը և զօրեղացնելով չափաւորականների կուսակցութիւնը:



Այս յօդաձի ծրագրի մէջ, սակայն, չի մտնում հանրապետական կուսակցութիւնների իրար հետ ունեցած յարաբերութիւնների խնդիրը: Սեզ այս անգամ զբաղեցնողը սա է, թէ ինչով յաղթեց հանրապետութիւնը, իւր ինչ գործքերով նա վաստակել է Ֆրանսիական ազգի մեծամասնութեան և միևնոյն ժամանակ բոլոր լուսաւոր ազգերի համակրութիւնը:—Դորա համար մեզ հարկ կը լինի զիմեւ հանրապետութեան 19 տարեայ գործունէութեան՝ բոլոր ասպարէզներում: Այդ շատ ծանր գործ է, բայց մենք խոստացել ենք կատարելու և այս յօդաձով էլ կը տանք:

Մի երկրի հարստութիւնը, որպէս յայտնի է, բաղկացած է հողի դանձերից և այն խեղճիցու եռանդից, որով նորա բնակիչները զիտեն բնութեան այն պարզեւներից օգտուել: Արդ, Ֆրանսիան այս մեծ բաղձն ունի—և այդ է զլիսաւոր պատճառը նորա առաջնակարգ հարստութեան, որ նա ունի մի մեծ գիւղացիական ազգաբնակչութիւն հողը մշակելու համար: Ներկայ թւականին նա ունէր ճիշդ 18.219.000 գիւղացի բնակիչ: Այդ երկրում հողը մի քանի հարիւր ընտանիքների սեպհականութիւն չէ, որպէս Անգլիայում, Իրլանդիայում, ուր նոքա կապալառու մշակողներին հարստահարում են: Ֆրանսիայում հողերի կտորների թիւը շուրջ 6 միլլիօն է: Այդ 6 միլլիօն կալաճներից 5 միլլիօնը մանր կալաճներ են, ամեն մէկը 10 հեկտարից (այսինքն մօտ 25 դեսետինից) պակաս: Այդ թւերից արդէն երևում է, որ գիւղացիները մանր կալաճատերեր են և իրանց կալաճները մշակողներ: Ի՞նչ է արել հանրապետութիւնը գիւղացիական այդ ամենաբազմաթիւ դասակարգի համար:

1885 և 1887 թւականների օրէնքներով Ֆրանսիական կառավարութիւնը գծարացրեց օտար երկիրներից եկած զարու և հաճարի ներմուծումը Ֆրանսիա, բարձրացնելով մաքսը, որ 60 ասնտիւմ էր, մինչ 3 Ֆրանկի, իսկ ալիւրի և օտար ցորենների համար, որ Ամերիկայից, Օդեսայից, Ունգարիայից և անգամ Հնդկաստանից ահազին քանակութեամբ ներմուծւում էին, 5 Ֆրանկի հասցնելով մաքսը:

Նոյն ձևով, մաքսը բարձրացնելով, պահպանեց Ֆրանսիական

անասնապահութիւնը (եղան համար՝ 38 ֆրանկ մաքս, կովի համար՝ 20 ֆր., հորթի համար՝ 8 ֆր. և այլն):

Երկրագործութիւնը առաջացնելու ղլխաւոր միջոցներից մէկն է՝ ճանապարհներ շինելը: Արդ, 1869 թւականին, Նապօլէօն III-ի կայսերութեան վերջնութեւ տարում, երկաթուղիներ կային 16.000 կիլոմետրի (մօտնոյնքան վերստ), մինչդեռ այժմ նոքա կազմում են 32.000 կիլոմետր, — երկու անգամ աւելի: Ո՞վ շինեց: — Հանրապետութիւնը:

Նաւազնաց զետերի տարածութիւնը 1870 թւին 7.300 կիլոմետր էր, այժմ՝ 11.855. ջրանցքների տարածութիւնը էր 3.369, այժմ՝ 4789 կիլ.: Գիւղական կառքի ճանապարհները լրացնելու համար կայսերութիւնը որոշած էր մօխել 841 միլլիօն ֆրանկ. հանրապետութիւնը այդ գումարը բարձրացրեց մինչ 1.444 միլլիօնի, որ գումարի մեծագոյն մասը հանրապետութիւնը ծածկեց: Այդպիսով Ֆրանսիան ունի այժմ գաւառական-համայնքային ճանապարհներ 560.000 կիլոմետրի:

Բազարները, շաբաթական կամ այլ տօնաւաճառների վերայ կարգադրութիւն անողները, նոցա նշանակութիւնը որոշողները կայսերութեան ժամանակ նահանգապետներն էին, իսկ այժմ հանրազգային ընտրութիւններից բղխած ֆրանսիական զեմստւօնները, նահանգական խորհուրդները:

Ո՞վ էի յիշում այն զարհուրելի ասպատակութիւնները, որոնց զոհ գնաց ֆրանսիական վազապահութիւնը ֆիլիստերայի պատճառով. այդ ֆիլիստերայի պատճառով էր, որ, փոխանակ 56 միլլիօն հեկտոլիտր գինու 1877 թւականին, 1886 թւականում հնձեց միմիայն 25 միլլիօն հեկտոլիտր. այսինքն 1,128 միլլիօն ֆրանկի տեղ ստացւեց միայն 501 միլլիօն տեղական գինի:

Ֆիլիստերայից առաջացած չքաւորութեան դէմն առնելու համար և վազապահութիւնը կրկին խրախուսելու մօքով, մի խելացի օրէնքի զօրութեամբ, ֆիլիստերայից աւերած տեղերում նոր անկած հողերը չորս տարով ազատւեցին հողահարկից և, Գերմանիայի ու Զւիցերիայի օրինակներով, կաղմեցին սեպհական խորհուրդներ (սինդիկատներ), որոնք 1876 թւականից սկսած ամեն տարի մի-մի միլլիօն ֆրանկ տէրութիւնից օգնութիւն են ստանում տեղական վազապահութիւնը խրախուսելու համար:



Շաքարի վերայ մաքսը պակասացրեց 80 ֆրանկի տեղ՝ 50 ֆրանկ. շաքարի զինք իջաւ ժողովրդի օգտին: Շնորհիւ դորան՝ 100 կիլոգրամ ճակնդեղից, փոխանակ առաջւայ 6 կամ 7 կիլոգրամի, այժմ սխեցին ստանալ 9.75 կիլոգրամ մաքրած, այսինքն բաժնի-նադի շաքար:

Բայց երրորդ հանրապետութիւնը շատ դործ կատարեց երկրագործական գործողների համար: 16 յունիսի 1879 թւականի օրէնքով հիմնեց նահանգական և համայնքային երկրագործական ուսուցումն. այդ տեղերից պրօֆեսսորները շրջում են՝ ժողովրդական ուսումնարանների ուսուցիչներին և զիւղացիներին դասախօսութիւններ կարգաւում համար զիւղատնտեսութեան մասին:

Գիւղատնտեսական ուսուցիչների և պրօֆեսսորների ուժիկը կացսերութեան վերջին տարիներում, 1869 թ.-ին, 33,000 ֆրանկ էր: Իսկ այժմ — Այժմ 12 անգամ աւելի՝ 736,000 ֆրանկ:

1876 թւականին հաստատուեց երկրագործական ինստիտուտը, իսկ յետոյ բացւեցին երկրագործական բարձր գործողներ Գրիյնօնում, Գրան-ժուանում, Մանպլլիէում, 25 գործնական ուրիշ գործողներ, այդեգործական գործը Վերսայլում և 46 ագրօնօմիական կաշարաններ — բոլորն էլ տէրութեան հաշւով:

Այս կազմակերպութիւնով ֆրանսիական կառավարութիւնը հետեւեց առաջին երկու հանրապետութիւններին, որոնցից առաջինը զիւղացիներին յետ դարձրեց հողը, իսկ երկրորդը, 1848 թւականին, զինական երկրագործական ուսուցման ինիցիատիւը տւեց: Նապօլէօն III-ը, ընդհակառակը, կազմակերպեց մի տեսակ արիստօկրատական երկրագործութիւն, իւր ձեռքը զցեց բազմութիւ մեծ հողեր, որ նա իւր արքանեակներին պարգեւեց: Ներկայ հանրապետութիւնը Նապօլէօնի սխալը դրստեց և մանաւանդ մեծ ծառայութիւն արաւ ֆրանսիական երկրագործութեան՝ 20 օգոստ. 1881 թւականի դաշտահին օրինադրքով (Code Rural):

Ներկայ հանրապետութիւնն է, որ ֆրանսիայում մտցրել է համայնական ինքնավարութիւնը, ինչպէս որ այժմ կայ մեր մի քանի քաղաքներում քաղաքային ինքնավարութիւն: Համայնքի գլուխը և նորա օգնականները ընտրւում են չորս տարով համայնքի խորհուրդից (մեր դուման). նիստերը հրապարակական են, նիս-

տերի արձանագրութիւնները տպւում են. քաղաքապետը կամ համայնքի գլուխը կարող է ընդունելութեան ծախքերը պահանջել. նա իւր մօտն ունի մի բանալիք զանգակատան և եկեղեցու. նա է նշանակում զիւղական ոստիկանութիւնը: Համայնքի խորհուրդը կարող է արձակել միմիայն մինիստրների խորհուրդով, հանրապետութեան նախագահի ստորագրութեամբ՝ «Պաշտօնական Թերթում» հրատարակած որոշման համաձայն. նոր ընտրութիւնները հետեւեալ երկու ամիսներում պէտք է կատարւեն: Պետութիւնը շատ հազիւ է միջամտում համայնքի իրաւունքների մէջ, որը իւր ինքնավարութիւնը և իւր յատուկ բիւջետը ունի: Նահանգական խորհուրդները, վերջապէս, կարող են իրանց վիճակների սահմանների մէջ երկաթուղիների և ձիաքարչների համար կոնցեսսիաներ տալ և իրանք են ըստուգում իրանց անդամների ընտրութիւնը:

«Համայնքների պաշտօնական Թերթը» բոլոր զիւղական համայնքների վարչութիւններում ստացւում է, պարունակում է, բացի օրէնքներից և դեկրետներից, նաև պարլամենտի նիստերի արձանագրութիւնները. դորանով ամեն մի զիւղացի ձրիապէս կարող է ծանօթանալ իւր վիճակի պատգամաւորի գործունէութեան հետ:

Ահա ա՛յս է Ֆրանսիական ինքնավարութիւնը, որի տեղ ի՞նչ ունէր կայսերութիւնը: — Դորա տեղ կայսերութիւնը ունէր 7-ին յուլիսի 1852 թւականի օրէնքը, որը համայնքի վերայ ամբողջ իշխանութիւնը կայսերական նահանգապետների ձեռքն էր տւել...

Գլխացուն վերաբերեալ յօդածը մենք չը վերջացրինք: 1869 թւականին երկրագործական մինիստրութեան բիւջետը միայն 4 միլիոն ֆրանկ էր, իսկ այժմայդ բիւջետը հասնում է 36 միլիոնի:

Վերջապէս չիշենք մի դեռ ևս չը վճուած օրինադիժը, որի զօրութեամբ ամեն մի հողագուրկ զիւղացի՝ 55-երորդ տարիքից սկսած՝ պէտք է տարեկան 300 ֆրանկ պենսիա ստանայ:

Գրողներից մէկը համեմատում է այժմեան հանրապետականներին այն հին երբայեցիների հետ, որոնք, սամարացիներից սպառնացած, իրանց տաճարը կարողանում էին վերանորոգել միմիայն ծեփիչը մի ձեռքում բռնելով և սուրը միւս ձեռքում: Որ զեներալ Բուլանժէն կանգնեց հանրապետութեան թշնամիների գլուխ — այդ երբէք Ֆրանսիան նորան չը պիտի ներէ: Կորիւնն էլ անցաւ վոլտ-



կացոց բանակը, զրգուած իւր դէմ արւած յանդիմանութիւնից. բայց նա գոնէ զիջանեց հռովմայեցի կանանց խնդիրքին և յետ կանգնեց իւր ոճիրացին պլանից իւր հայրենիքի դէմ: Բուլանժէն էլ ուզում է իւր քէնը հանել իւր թշնամիներից: Ֆլօքէից մի ազնիւ մենամարտութեան մէջ ստացած վէրքը, զօրքի ցուցակներից դուրս գցելը իւր նախկին զինակիցների ձեռքով, պետական աւագ դատախազից արձակած ձերբակալման հրամանը, պետական դատարանի վճիռը, — այդ բոլորը նորան հանդիսա չեն թողնում: Նւ նա չի քաշոււմ իւր հայրենիքի թշնամիների փողերով իւր քսակները լքցնել, որ մի օրինական կառավարութիւն ամեն միջոցներով յաղթահարէ: Եմաւայի է, տաւում է այդ զրոյը, որ մի ընդունակ և գործունեաց զենեքալ կարող էր այդքան ընկնել և որ առաջին հանրապետութեան փառաւոր զենեքալների օրինակները՝ Կարնօյի, Մարսօյի, Հօշի՝ անհետք անցան Ֆրանսիական զօրքի նախկին պետի մօտից:

Ֆրանսիացում երկրորդ նշանաւոր դասակարգը կազմում են բանւորները: Ֆրանսիական ձայնատուների երեք քաւորը զիւղական դասակարգին են պատկանում: Այդ երեւում է արդէն նորանից, որ այդ երկրում կան 36.000 համայնք, որոնցից 27.000-ը այնքան փոքր են, որ նոցանից իւրաքանչիւրում բնակիչների թիւը 1.000-ի չի հասնում: Մնացած 9.000 տեղերում և քաղաքներում բանւորները կազմում են մեծ տոկոս:

Խնդիրը սա է, թէ ներկայ հանրապետութիւնը ի՞նչ է շինել բանւոր դասակարգի վիճակը բարւոքելու համար:

Ֆրանսիացում, մինչ վերջին ժամանակներս, զօրութեան մէջ էր քաղաքացիական օրինադրքի մի յօդւածը, որը ծագում էր 1781 թւականից, որի զօրութեամբ դատարանի առջև, բանւորի հակառակ վիպրութեան դէպքում, վարձի խնդիրներում գործատիրոջը անպայման հաւատք պիտի ընծայէր: Բանւորների համար այդ վիրաւորիչ և վնասակար յօդւածը ջնջեց հանրապետութեան օրէնքով 8-ին յուլիսի 1880 թ.:

Բոլոր նոքա, որոնք հետևում են սօցիալական օրէնադրութեան

եւրոպական երկիրներում, պիտի զիտենան նաեւ թէ ի՛նչ մեծ սօցիալական խնդիր է բանւոր դասակարգի պաշտպանների պահանջը, որ գործարաններում աշխատանքի տեղաւորութիւնը որոշ չափից չը պիտի անցնէ: Այդ բանի համար մի օրէնք տեղ երկրորդ կարճատեւ հանրապետութիւնը 1848 թւականի. բայց օրէնքի զօրութիւն ստացաւ նա միմիայն այժմեան երրորդ հանրապետութեան ժամանակ, որը մոռցրեց Ֆրանսիայում գործարանների վերայ հսկող տեղական մասնաժողովների և բանւորական տեսուչների հաստատութիւնները: Այդ օգտաւէտ և անհրաժեշտ հաստատութեան, այն է բանւորների տեսուչների համար, ներկայ 1889 թւականի բիւջետում նշանակւած է 176.000 ֆրանկ: Այդ տեսուչների պարտականութիւնն է հոգալ, որ կանայք և երեխաները գործարաններում ծանր աշխատանքներ միայն սահմանափակ չափով կատարեն:

Ներկայ երրորդ հանրապետութիւնը մի դարուց դէսը առաջին քայլը համարձակեց անել՝ բանւորներին էմանցիպացիա տալու համար: 1884 թւականի օրէնքով, ներկայ մինիստր-նախագահ Տիրարի օրինագծի համաձայն, բանւոր դասակարգը չափահասութեան իրաւունքները ստացաւ: Այդ օրէնքի համաձայն, բանւորները կարող են դասակարգային ընկերութիւններ, այն է՝ սինդիկատներ կազմել՝ բոլորովին ազատ, առանց կառավարութիւնից նախապէս թույլտուութիւն ստանալու. նոքա պարտաւոր են միայն իրանց կանոնադրութիւնը քաղաքային վարչութեանը հաղորդել—ուրիշ ոչինչ: Այդ բանւորական սինդիկատները ունին իրաւական անձնաւորութեան իրաւունքները, կարող են իրանց անդամների համար փոխատու-իննպոզական գանձարաններ և գրադարաններ հիմնել, մասնագիտական կուրսեր հիմնել և այլն: Նահանգապետներին ուղղած ներքին գործերի մինիստրի մի շրջաբերականում այդ սինդիկատների մասին, ի միջի ալլոց, ասւած է. «Նոքա վայելում են կառավարութեան բոլոր համակրութիւնը և նոցա հիմնողները ամեն անհրաժեշտ տեղեկութիւնները կը ստանան»:

Ահա այդ սինդիկատներն են, որոնց թիւը 1877 թւին 700 էր, իսկ այսօր 2.200:

Եւրոպայում կան բանւորների ընկերութիւններ շահադիտական նպատակով հիմնած: Նոյն տեսակ ընկերութիւններ Ռուսիայում կոչ-



ւում են արտել: Նախկին կառավարութիւնները, որոնք բանւորների խմբումներից վախենում էին, չ'խրախուսող օրէնքներ էին տաւ: Անցեալ 6-ն յունիսի 1888 թւականի դեկտեմբ, բանւորական ընկերութիւնների կանոնադրութիւնները փոխեցին բանւորների շահերին նպաստող մտքով: Այս բոլորին Ֆրանսիայում կան 80 այդ տեսակ բանւորական, այսպէս կոչւած, կօօպերատիւ ընկերութիւններ, որոնց կէսը այս վերջին 15 տարւումն են հիմնւած: Վերը յիշւած դեկտեմբ ամսին հեշտութիւններ է տալիս բանւորական ընկերութիւններին, որ սոքա իրանց, ի հարկէ, աւելի սուղ միջոցներով քան կապիտալիստները, կարողանան տէրունական շահաւէտ չանձնարարութիւնները կատարել: Ի միջի այլոց աշխարհահանդիսի շինութիւնները կառուցանելու և այլ գործքերի մէջ մասնակցում են բանւորական կօօպերատիւ ընկերութիւններ:

Գործատերերից և բանւորներից բաղկացած ժողովներ կան Ֆրանսիայում, որոնք մեծ դեր են խաղում անտեսական խնդիրներ վճռելու համար: Այդ ժողովները կոչւում են «բանխմացների խորհուրդներ» (Conseils de Prud'hommes): Նոցա ստեղծողն էր առաջին կայսերութիւնը, իւր մի օրէնքով 1806 թւականի: Այդ օրէնքով, խորհուրդների մէջ պէտք է մասնակցէին աւելի գործատերեր, քան բանւորներ: Նրկրորդ հանրապետութեան օրէնքով, 1848 թւականի, այդ խորհուրդները պէտք է կազմէին հաւասար թւով գործատէր և բանւոր անդամներից: Նրկրորդ կայսերութիւնը, Նապոլէօն III-ի իշխանութեան ժամանակ, բառ առ բառ արտադրեց առաջին կայսերութեան օրէնքը, որպէս զի գործատէրերի շատութեան պատճառով, խորհուրդների նախագահութեան և քարտուղարութեան պաշտօնները միշտ գործատէրերի ձեռքում մնան: Այժմեան երրորդ հանրապետութիւնը, ընդհակառակը, կրկին մտցրեց 1848-ի օրէնքը, որի զօրութեամբ գործատէր և բանւոր անդամները հաւասար թւով պիտի լինին. այդ օրէնքը որոշեց, որ եթէ նախագահը գործատէրերից ընտրէր, քարտուղարը պէտք է բանւորներից լինէր և ընդհակառակը: Բանւորական գրքերը պարտաւորիչ են, ազատ են հարկերից և ծառայում են իբր անձնական վկայութիւններ և պէտք է պաշտպանեն ֆրանսիական բանւորներին օտարների մրցումից: Անցեալ տարւայ Ֆլօքէի, այսպէս կոչւած, օտար-

ների օրէնքը, որ այնքան աղմուկ հանեց Արուստահմանում, իսկապէս նոյն նպատակն ունի՝ օտար բանւորների ներկայութիւնը Ֆրանսիայում պաշտօնապէս վիայել և դորա միջոցով պաշտպանել Ֆրանսիական բանւորին արդէն չափից դուրս շատ օտար բանւորներից, որոնք իրանց ապրուստը Ֆրանսիայումն են դնում:

Սօցիալական օրէնսդրութեան նկատմամբ գերմանականը, որպէս «Մուրճ»-ի ընթերցողներին պէտք է յայտնի լինի, հռչակած է: Վլխաւորապէս Բիսմարկի, այսպէս կոչւած, պետական սօցիալիզմի շընորհիւ, Գերմանիան ստացաւ օրէնքներ, որոնց զօրութեամբ ծերացած բանւորները և գործարաններում թշւառացած բանւորները ապահովոււմ են մասամբ տէրութեան, մասամբ գործարանատէրերի հաշուով: Այդ օրէնքները հռչակ ստացան բոլոր լուսաւորւած երկրներում և մեծ շարժում առաջացրին յօգուտ բանւոր դասակարգի:

Արդ, գերմանականի հետ արժանաւոր կերպով կարող են կանգնել Ֆրանսիական օրէնքները նոյն առարկաների մասին:

Մեր բանւորներին ապահովող գերմանական Altersversorgungs-gesetz օրէնքի նման հանրապետութիւնը աւելց 20 յուլ. 1886 թււի նշանաւոր օրէնքը, որով հաստատուեց, այսպէս կոչւած՝ Caisse nationale des retraites pour la vieillesse, այսինքն՝ ծերութեան համար հրաժարւածների ազգային զանձարան: Այդ օրէնքը որոշում է, որ ամեն մարդ կարող է ամենաքիչը մի ֆրանկ պահ տալ բոլոր տէրունական ֆինանսական և պատային բիւրօներում, որ ծննդեան վկայական ներկայացնելը չի կապւած ոչ մի ծախքերի հետ և որ ամեն բանւոր կարող է ինքը որոշել, թէ 50 տարեկան դառած օրից յետոյ ո՛ր ժամանակից սկսած նա ուզում է իւր սովորները ստանալ: Եթէ բանւորի հետ որ և է դժբաղդութիւն հանդիպէ, նա կարող է ժամանակից առաջ ստանալ իւր պէնսիան: 9 ապր. 1881 թւի մի օրէնքով երեսները կարող են՝ առանց թոյլտուութեան խնամակալների և կոնայք՝ առանց զիտութեան իրանց ամուսինների, իրանց փողերը պատային խնայողական զանձարաններում պահ տալ: Խնայւած գումարները տալիս են 3 տոկոս:

Դժբաղդութիւնների համար ապահովող օրէնքը, որի երկու ինիցիատօրներից մէկը նախկին մինիստր, այժմ հանրապետութեան



նախագահ Սաղի Կարնոն է, հոգում է վիրաւորւած բանւորների համար խելացի և սիրալիր կերպով:

Բանւորների համար կան մասնագիտական ուսումնարաններ, որոնք 17 մայիսի 1888 թւականի ղեկրետով գտնւում են երկու մինիստրութիւնների իշխանութեան ներքո՝ վաճառականութեան մինիստրութեան և լուսաւորութեան մինիստրութեան: Նահանգական բանւորական-մասնագիտական ուսումնարանների ուսուցիչներին նշանակւում են նահանգապետները, համայնքներին՝ համայնքապետները կամ ալլապէս՝ քաղաքապետները: Այդ բանւորական մասնագիտական ուսումնարանների համար ուսուցիչներ է պատրաստում Սէն-Վլու քաղաքում 1884-ին հիմնւած Ecole normale supérieure բարձրագոյն դպրոցը: Երեք մասնագիտական և շատ լաւ ղեկավարող ուսումնարաններ հիմնւած են Վիէրզոն, Վուարոն և Արմանտիէր քաղաքներում: 1881 թւականին հաստատուեց Նեւերում «Դպրոց կաթսայադործութեան և երկաթէ մեծ շինութիւնների»։ 1883 թւականին հաստատուեցին Օբիւսոն, Լիւֆօ, Նիցցա և Ալժիրայի Դելլիս քաղաքներում զարդ-արւեստների մի մի դպրոց (Ecole d'arts décoratifs)։ Նոյնաժամանակ ստացաւ Բուրժ քաղաքը մի գեղարւեստների ուսումնարան (Ecole des beaux-arts), Ռուբէ քաղաքը՝ ինդուստրիալի արւեստների ուսումնարանը (Ecole des arts industriels), Հիլ քաղաքը արհեստաւորաց Ecole d'arts et métiers դպրոցը: Ժամագործական դպրոցը Կլիւզէում, հանքային դպրոցը Ալէում, ինդուստրիալի զըպրոցները Անժեր, Նալօն Մարնի վերայ և Եքս քաղաքներում, որոնցից խրաքանչիւրում մօտ 300 աշակերտներ են ուսանում և որոնք վերջին տարիներում բոլորովին նոր կազմակերպւեցին:

Բայց դեռ շարունակենք: 8 օգոստ. 1885 թւի օրէնքով ամեն մի աղքատ հայր, որ 7 որդի ունի, իրաւունք ունի նոցանից մէկի համար ձրի տեղ պահանջել մի առւտրական կամ երկրագործական դպրոցում: Մի օրէնքով՝ 26 փետր. 1887 թւականին բիւժետի մէջ մտաւ 640,000 Ֆրանկի գումարը այդպիսի ձրի աշակերտների ծախքերը հոգալու և բազմազաւակ աղքատ զերդաստաններին պաշտպանելու համար:

Ահա այսքանը, ինչ վերաբերում է բանւոր դասակարգի վիճակի բարւոքման խնդրին:

Հետեւեալ անգամ մենք կը շարունակենք այս ուսումնասիրութիւնը, ցոյց տալու համար, թէ ի՞նչ է շինել ներկայ երրորդ հանրապետութիւնը վաճառականութեան համար, դպրոցական գործի համար, զօրքի համար և այլն:

Z.



## ՄՈՒՐՃ-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Ներկայ 10-րդ №-ով մենք ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին «Մուրճ»-ի բոլոր 10 համարների բովանդակութիւնը հինգ-հինգ հատ ամեն մէկին: Նոցանից մէկը նշանակւած է բաժանորդի մօտ մնալու, իսկ մնացած չորսը ոչ-բաժանորդներին բաժանելու համար: Գորա համար հարկաւոր է, որ մեր ալժմեան բաժանորդները մի լաւտնի նեղութիւն կրեն: Մենք խնդրում ենք մեր բաժանորդներին չը զրանալ ալդ նեղութիւնը իրանց վերաջ առնել: «Մուրճ» ի անցած համարների բովանդակութեան հետ մեր ոչ-բաժանորդներին ծանօթացնելը մենք համարում ենք միակ իրօք վալել միջոց՝ նոցա մէջ պրօպագանդ անել չօղուտ «Մուրճ»-ի պալ 1890 թըւականի բաժանորդագրութեան: Ալդ նաև միակ լաւ միջոցն է «Մուրճ»-ի ներկայ բաժանորդների վիշդութեան մէջ միշտ վաւ պահել «Մուրճ»-ի անցեալ գործունէութիւնը: Այն ամենքը, որոնք «Մուրճ»-ի ներկայ տարւալ ցոլց տւած գործունէութիւնը բաւականաչափ մեծ գրաւական են համարում մեր հաստատ կամքի՝ «Մուրճ»-ը պահպանել մի ամսագրին վալել բարձրութեան վերալ, ալն ամենքը, որոնց մենք, մեր ցալժմեան գործունէութիւնով, կարողացել ենք ներշնչել հաւատ ղէպի «Մուրճ»-ի ապագան, ալն ամենքը, վերջապէս, որոնք ուրախ են «Մուրճ»-ի գոլութեան համար և նորա մէջ տեսնում են կարևոր գործիչ մեր գրական կեանքի—նոքա ուրախութեամբ պիտի լանձն առնեն «Մուրճ»-ի բաժանորդագրութեան համար աշխատել: «Մուրճ»-ի գոլութիւնը պէտք է պահպանել միայն և միմիայն բաժանորդներով: Շատ բաժանորդներ ունենալը կախւած է նաև ալն օգնութիւնից, որ հրատարակութեան համակրողները տրամադիր են անելու խմբագրութեան: «Մուրճ»-ի ընթերցողների թիւը շատ մեծ է, անհամեմատ աւելի մեծ, քան նա բաժանորդներ ունի: Հարկաւոր է, որ ալդ ոչ-բաժանորդ ընթերցողները չը զլանան իսկական բաժանորդ գրելու: «Մուրճ»-ի

բաժանորդագրութեան աջողութիւնից կախած է թէ նորանոր բաժիններ բացելը և թէ ամսագրի ծաւալի ընդարձակելը: Միացնելով մեր աշխարհի բաժանորդների թիւի հետ նոցա, որոնք «Մուրճ»-ի միայն ընթերցողներ են, մենք կը ստանանք բաժանորդների այն թիւը, որով մենք աւելի ևս մեծ աջողութեամբ կը հետևենք մեր առաջադրած նպատակին: Այդ միջոցների ձեռք բերելը կախած է մասամբ «Մուրճ»-ի գնահատողների ջանքերից, և մենք չենք կասկածում, որ դոքա իրանց այդ ջանքերը չեն խնայիլ: Օգուտը—մեր գրականութեանն է, օգուտը—մեր ազգինն է:

ԳՐԱԽՍՍՈՒԹԻՒՆԸ՝ Ներկայ 10-րդ համարում ամբողջապէս նւիրւած է օտար գրականութեան: Զբաղւել միայն հակախան գրականութիւնով և հաշիւ տալ միայն ընթացիկ հակախան գրքերի,—այդ կը նշանակէր չափազանց նեղ հասկացողութիւն ունենալ հայ ինտելիգենտ ընթերցողների մտաւոր պահանջների մասին: Հարկաւոր է, որ հայ ընթերցողի աչքի առջև մի պատուհան բացւէր, որտեղից նա կարողանար իւր տեսողութիւնը տարածել նաև օտար, մեզինից շատ և շատ աւելի լուսաւոր և առաջադէմ ազգերի մտքի և ոգու արդիւնքների վերայ: «Մուրճ»-ը, ներկայ համարով, փորձում է մի աղբյուրի պատուհան բանալ հայ ընթերցող հասարակութեան աչքի առջև: Բոլոր խնդիրը նորանումն է, թէ «Մուրճ»-ը ի՞նչ գրքերի պէտք է գերադասութիւն տալ գրախօսութեան համար, որովհետև օտար լեզուներով լոյս տեսնող գրքերի, նոյն իսկ նշանաւոր գրքերի, թիւը անազիւն է:

Պատասխանը գրեթէ տւած է:—«Մուրճ»-ը կը տալ տեղեկութիւններ օտար գրականութիւնից միմիայն այնպիսի գրքերի մասին, որոնք շատ թէ քիչ ընդհանուր հետաքրքրութիւն են ներկայացնում: Այդպիսի գրքեր կարող են վերաբերւել զանազան մասնադիտութիւնների՝ և՛ գեղեցիկ գրականութեան և՛ բանաստեղծութեան և՛ կրօնագիտութեան և՛ բնական գիտութիւններին և՛ պատմութեան և՛ իրաւաբանութեան և՛ քաղաքատնտեսութեան և քաղաքականութեան և այլն:

Օտար լեզուներով լոյս տեսնող գրքերի վերաբերեալ գրախօսութիւնից «Մուրճ»-ի ընթերցողները կը ծանօթանան, թէ ի՞նչ նիւթերի վերայ են ուշադրութիւն դարձնում լուսաւոր երկիրներում, կ'իմանան թէ մի որոշ խնդրի ի՞նչ կողմերով են հետաքրքրւում առաջադէմ ազգերը, կ'ընտելանան այն մեթոդների հետ, թէ ի՞նչպէս են ուսումնասիրւում խնդիրները և այլն և այլն: Այդ անմիջական արդիւնքով մենք օգնած կը լինենք



«Մուրճ»-ի նպատակներից մէկի հասնելուն, այն է՝ ընդարձակել հաշ հասարակութեան մտաւոր հորիզոնը առհասարակ:

Ասելով՝ թէ ահազին քանակութեամբ լոյս տեսնող օտար գրքերից մենք պէտք է ընտրենք, գրախօսութեան համար, միայն նոցա, որոնք ընդհանուր հետաքրքրութիւն են ներկալացնում, մենք հեռու ենք կարծելուց, թէ նոյն իսկ միայն այդ տեսակ գրքերի նկատմամբ, «Մուրճ»-ը կարող է լիակատար կերպով ընթերցողներին բաւարարութիւն տալ: Այդ հաւակնութիւնը առ աւել մենք չ'ունինք, բայց միայն կարող ենք խոստանալ, որ կ'աշխատենք, որքան միայն հնարաւոր է, այդ կատարելութեանը հասնել:

Բայց ահա նաև մի երկրորդ խնդիր. ի՞նչ միջոցներ կարող է ունենալ մի հակական հրատարակութիւն—այդքան բաղմաթիւ և բազմադան գրքերի մասին գրախօսական լօղւածներ տալու: Չէ թէ հաշ հասարակութեան՝ նորա ամենաուսումնական մասի մէջ անպամ՝ չը կազ գրողների այն կոնտինգենտը, որը խմբագրութեանը մատակարարէր այդքան լօղւածներ՝ կոմպլիտենտ ձեռքով գրած: Իսկ միւս կողմից խմբագրութիւնն էլ չի կարող այդքան գրքեր ձեռք բերել: Ուրեմն ի՞նչ միջոցով խմբագրութիւնը պէտք է և կարող է իւր խոստումը կատարել:

Պատասխանը հեշտ է գուշակել. քանի որ մեր ոչժը չի պատում մեր սեպհական միջոցներով այդ օտար գրքերը ստանալ և չատուկ գրախօսների ձեռքով նոցա մասին քննադատական նկատողութիւնների տալ, բնական է և խելացի՝ օգտուել չալանի հրատարակութիւններից, դէպի որոնք «Մուրճ»-ի խմբագրութիւնը սածում է լիակատար հաւատ: Այդ հանգամանքում ևս մենք մեր անկախութիւնը ձեռքից բաց չենք թողնում և չենք պարտաւորում մեզ նիւթ ծառայող գրախօսութիւնները բառ առ բառ թարգմանել. մենք միմիայն օգուտ կը քաղենք, ծառայեցնելով նոցա որպէս նիւթ:

Այս բոլորը ասելուց չետու, մենք պիմում ենք մեր համար սարանական բարեկամներին, թէ Ռուսաստանի և թէ Արտասահմանի, օգնել մեզ այդ գործում, ուղարկելով մեզ գրախօսական լօղւածներ՝ թէ բոլորովին անկախ կերպով կաղմած և թէ օգտւելով իրանց մատչելի հրատարակութիւններից:

Ասելն անգամ ասելորդ է, որ օտար գրքերի մասին գրախօսութիւնը ոչ մի կերպով չը պիտի կատարւի ի հաշիւ հաշկական գրքերի, որոնց մասին հաշիւ ստլը մեր այդ բաժնի առաջին նպատակն է:

## Վ Ր Ի Պ Ա Կ

«Մուրճ»-ի անցկալ 9-րդ №-ում, ներքին տնտեսական մէջ,  
երես 1470, պէտք է կարդալ «գեներալ Աննենկովը, չինեւրով Ան-  
դրէրկասպեան երկաթուղին», մինչդեռ սխալմամբ տպւած  
է «գեներալ Աննենկովը, չինեւրով Անդրէրկասպեան եր-  
կաթուղին»:

---

Խմբագիր-Հրատարակիչ՝ Ա.ԻՆՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

---



## "ՄՈՒՐՃ" ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՇՏԱՅՐԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Ուսուցիչների, վարժուհիների և բարձրագույն դպրոցների ուսանողների համար:**

**ԹԻՖԼԻՍՈՒՄ վճարում են կամ միանգամ 8 թուրքի տարւայ սկզբին  
և կամ տարեկան 10 թուրքի այսպէս՝**

|                            |      |
|----------------------------|------|
| Յունւարի 1-ին . . . . .    | 2 ռ. |
| Փետրւարի 1-ին . . . . .    | 2    |
| Մարտի 1-ին . . . . .       | 2    |
| Մայիսի 1-ին . . . . .      | 2    |
| Սեպտեմբերի 20-ին . . . . . | 2    |

**ԳԱԻԱՌՆԵՐԻՅ ռեզարկում են տարեկան 9 թուրքի այսպէս՝**

|                         |      |
|-------------------------|------|
| Յունւարի 1-ին . . . . . | 3 ռ. |
| Փետրւարի 1-ին . . . . . | 3    |
| Մարտի 1-ին . . . . .    | 3    |

**Բարձրագույն դպրոցներում ուսանողները վճարում են տարեկան 8  
թուրքի այսպէս՝**

|                         |      |
|-------------------------|------|
| Յունւարի 1-ին . . . . . | 3 ռ. |
| Փետրւարի 1-ին . . . . . | 3    |
| Մարտի 1-ին . . . . .    | 2    |

Հասցէ՝ Тифлисъ. Редація журн. МУРЧЪ.

«ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐԻՆԵՐԸ.

|                                                                                   |    |    |
|-----------------------------------------------------------------------------------|----|----|
|                                                                                   | Բ. | Կ. |
| «ՄՈՒՐՃ» ամսագիր, առաջին քառամեակ՝ № 1. 2. 3.                                      |    |    |
| 4 — փառակազմ . . . . .                                                            | 6  | —  |
| «ՄՈՒՐՃ» » երկրորդ քառամեակ՝ № 5. 6. 7.                                            |    |    |
| 8 — փառակազմ . . . . .                                                            | 6  | —  |
| «ՄՈՒՐՃ» » առաջին կիսամեակ՝ № 1. 2. 3.                                             |    |    |
| 4. 5. 6 — փառակազմ . . . . .                                                      | 8  | —  |
| ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԻ. — «Ազգաբնակութիւնը և ազգաբնակչական շարժումները» . . . . .         | —  | 40 |
| ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿ. — «Հողատիրութիւնը և հասարակութիւնը» . . . . .                       | —  | 40 |
| ԲՕԿ ԲԺԻՂԿ. — «Ֆիզիքական և մտաւոր զարգացման մասին» . . . . .                       | —  | 30 |
| АРАСХАНИАНЦЪ А. — „Закавказская хлебная торговля“ . . . . .                       | —  | 75 |
| » » — „Закавказские шелкометаллические заводы“ . . . . .                          | —  | 80 |
| ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՅ ՏԻԳՐԱՆ. — «Ժողովրդական հէքիաթներ», 4-րդ զիրք . . . . .               | —  | 50 |
| « » — «Ժողովրդական հէքիաթներ», 5-րդ զիրք . . . . .                                | —  | 50 |
| ՊՈՇԵԱՆՅ ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» — (վէպ) . . . . .                                         | 1  | —  |
| ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (Ղալարցի)՝ Մանկատաժութիւն . . . . .                 | —  | 50 |
| ԱՏՐՊԵՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ. — «ԽԵԻ-ԿԱՐԱՊԵՏ» — վէպ հայկաթօլիկներէ կեանքից . . . . .          | 1  | —  |
| ԼԷՅՈ. — «ԿՈՐԱՄՆԵՐ» — (վէպ) . . . . .                                              | —  | 50 |
| Ճանապարհածախսը խմբադրութեան վերայ է: Դրամի տեղ կարելի է ուղարկել պօստի մարկաններ: |    |    |



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼԷՕԻ

# „ԿՈՐԱԾՆԵՐ“

(ՊԵՊ)

1889 թ., տպարան Ռօտինեանցի.

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ

Մտնում է Թիֆլիսի գրախճառների մօտ և Վոլերձի խմբագրա-  
տանը:

ՀԱՅՍ ՏԵՍԱԻ

# Տ Ա Ն Տ Ի Կ Ի Ն

ԵՒ

## Խ Ո Հ Ա Ն Ո Յ

ԵՐԿՈՒ ՄԱՍԻՅ ԲԱՂԿԱՅԱԾ ԳԻՐԲԸ

*մասն առաջին*

400-ի չափ տեղական և եւրոպական՝ աժան, համեղ  
և անվնաս կերակուրներ պատրաստելու եղանակ:

*մասն երկրորդ*

200-ից աւելի տնտեսական գիտելիք՝ քաղցրաւենիք,  
թթուեղէն, պտուղների, բանջարեղէնի և կանանչեղէնի  
պահպանելը և չորացնելը, կաթնատնտեսութիւն և զա-  
նազան գիտելիք:

Կազմեց Յ. ՄԵԼԻԲ-ԲԱԽՏԱՄԵԱՆՅ

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Վաճառւում է բոլոր յայտնի գրավաճառանոցներում և Մարտիրո-  
սեանի տպարանում: Վերջնոյս մօտ 10-ից աւելի գնողին 10 տոկոս  
զիջումն կը լինի:



**ԳԵՂԱՐԻՆԵՍԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱՐԱՆԱԿԱՆ**

**ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱՆԴԷՍ**

Կը հրատարակել Թիֆլիզում առաջիկայ յունեարի մէկից մեր յայտ-  
նի հեղինակների, նկարիչների մասնակցութեամբ ամիսը մի անգամ,  
զիրքը 39×28 սանտ., քառաձալ, մօտաւորապէս ռուսաց «Живопис-  
ное Общество» հանդիսի զիրքով: «ՏԱՐԱԶ» նպատակն է հայ անդա-  
տանում ցանկէլ գեղեցիկի և բարւոյ սերմեր ու արմատախիլ անեւ տը-  
գեղ և չար որոմն:

ԳԵՂԱՐԻՆԵՍԱԿԱՆ, լինի նա արտադրուած բանաստեղծի վառ շրթունքով,  
հրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ տրոփացնող վիպագրի գրչով՝ «ՏԱ-  
ՐԱԶՈՒՄ» առաջին տեղը պիտի բռնէ:

Կանանց խնդիրը, լուսաւոր և մեր աշխարհի կնոջ վիճակը, դրութիւ-  
նը, արդի ընդհանուր գրականութեան մէջ տիրապետող այդ խնդրի վերա-  
բերեալ վիճաբանութիւնների հետեանքը պարբերաբար կ'արձանագրուին  
«ՏԱՐԱԶՈՒՄ»: Բնագրատութիւն մեր առօրեայ կեանքի, լինի նա արտա-  
դրուած վէպով, պատմածով, ֆելիէտօնով թէ կատակով՝ «ՏԱՐԱԶ» գրա-  
կան մասը պիտի կազմեն:

«ՏԱՐԱԶ» մի երրորդական մասը կը կազմեն պատկերներ, նկար-  
ներ, տեսարաններ, թէ արգի և թէ անցած դնացած, գլխաւորա-  
պէս մեր կեանքի: Հայ կիներ ամեն ամիս «ՏԱՐԱԶՈՒՄ» կը գտնէ եւ-  
րոպական նորագոյն կար ու ձևի, ձեռագործի վերաբերեալ բա-  
ցատրութիւն, համարեա այն չափով, որքան տալիս է «Нива» ռու-  
սաց շաբաթաթերթը:

**ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ**

I. Գեղարուեստ և Գիտութիւն. II. Պատմական և Ժամանակակից վէպեր,  
պատկերներ, թատրոնական գրւածներ. III. Բանաստեղծութիւն. IV. Բն-  
ագրատութիւն և Կենսագրութիւն. V. Կար, ձև, ձեռագործ և ամեն նորու-  
թիւն արհեստների վերաբերեալ. VI. Տնային արդիւնաբերութիւն և տնտե-  
սութիւն. VII. Հանապարհորդութիւն և Արկածք. VIII. Նրաժշտութիւն և  
Թատրոն. IX. Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, չօղւածներ և  
այլն. X. Ֆելիէտօն, Ծաղր, Առած, Կատակ, XI. Շախմատի և այլ խաղեր,  
Բերուս, Հարցեր, Խորհուրդներ, Այլեպէս, Պատասխաններ. XII. Յայտարա-  
րութիւններ:

«ՏԱՐԱԶ» ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ 3 Բ. Է.

«Տարազին» և «Աղբիւրին» միանալով բաժանորդ գրւողը մի և նոյն  
հասցէով, մինչև առաջիկայ դեկտեմբերի 1-ը, փոխանակ 3 ր. պիտի  
վճարէ 2 ր., այսինքն «Տարազ» և «Աղբիւր» միասին փոխանակ 6  
րուբլու 5 ր. և 28 կ. փոստի մարկա «Աղբիւրի» պրէմիա «ՅԻՍՈՒՄ  
ԽԱԶՄԻՐ» պատկերի ճանապարհածախս:

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՌԷԻՑ ՉԻ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакция иллюстриров. Журнала «ТАРАЗЪ», իսկ  
Արտատնամանից. Tiflis, (Caucase) Rédaction du journal illustré «TARAZ».  
Թմբագիր-հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՄԻԱՍՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

Կը հրատարակւի Նոյն ուղղութեամբ և Նոյն աշխատակիցների մասնակցութեամբ, զիրքն աւելի մեծացրած, չքեղ թղթի վերայ և նորագոյն տառերով:

ԱՌԱՋԻՆ ՊՐԵՄԻԱՆ Է ՄԻ ԳԵՂԵՅԻԿ ԳՐԱՎԻԻՐ

ՅԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ

Մէկ ու կէս անգամ աւելի մեծ, քան այս 1889 թ. «Արշալոյս» պատկերը.

\* Մինչև ղեկտեմբերի 1-ը բաժանորդ գրուողը կը ստանայ պրէմիան աւելի շուտ քան № 1-ը, իսկ այնուհետև բաժանորդ գրուողը վճարը մեզ հասած օրից մինչև մի ամիս: ՅԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ պրէմիան 3000 օրինակ արդէն ստացուել է թիֆլիզում:

Բ. ՊՐԵՄԻԱՆ՝ 1) Յովսէփ Գեղեցիկի վաճառումը, 2) Յիսուս Սինա լեռան վրայ աղօթելիս, 3) Մովսէս մարդարէի տասը պատգամ ստանալը, վերին աստիճանի չքեղ պատկերները, 100 Բ. ԳՐԲԵՐ, 50 Բ. ԳՐԱՍԵՂԱՆԻ ԶԱՐԿԻՐԵՆՆԵՐ Վիճակ կը գցին սեպտեմբեր ամսին բաժանորդներին մէջ:

Գ. ՊՐԵՄԻԱՆ պատի-տախտակ օրացոյց կ'ուղարկուի բաժանորդներին ղեկտեմբերի 15-ի հետ:

Բացի դրանցից տարւայ ընթացքում կ'առաջարկին հանելուկներ եւ թեքումներ, որոնց ԱՌԱՋԻՆ վճռողները կը ստանան մի ց ան ա կ ն ե ռ — զրքեր, պատկերներ, ալբոմներ, գրասենեակի զարդեր եւ այլն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, պոէզներ, առակներ, հէքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ: II) Բանաստեղծութիւններ: III) Գիտութիւն և արւեստ: IV) Նոր լուրեր: V) Այլեալք:

Զ Ի Ա Ր Ճ Ա Ն Ի Ք

VI) Մանկական, ֆրեթլէիան, չախմատի և այլ խաղեր: Բերումներ, թւարանական խնդիրներ: Անեկդոտներ, հանելուկներ, շուտասեղաններ: VII) Երգեր՝ ձայնագրած (նոտաներով):

ՄԱՍՆ ԵՐԱՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դատարարական վերաբերեալ յօդածներ և տեղեկութիւններ: IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ: X) Մատենախօսութիւն և նոր գրքեր: XI) Խառն լուրեր: XII) Պատասխաններ: Յայտարարութիւններ:

«ԱՂԲԻԻԻ» տարեկան բաժանորդագինը 3 ր. է, և պրէմիայի ճանապարհածախս պէտք է ուղարկել 28 կ. փոստի մարկա:

ԱՊԱՌԻԿ ՈԶ ՈՔԻՑ ԶԻ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ:

Հասցէն՝ Тифлисъ, Редакция «АГБИУРЪ», իսկ Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction de la Revue «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ-ՈՒԽՏԻ,

աշխատասիրութիւն Սահակ քահանայ Սահակեանցի: Գինն է 35 կ.

Նոյն անձի աշխատասիրութեամբ լոյս են տեսել՝

2) ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ՝ Հին ուխտի, գինն է 30 կ.

3) ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ՝ Հին-ուխտի, գինն է 1—75 կ.

4) ՄԻ ՔԱՆԻ ԽՅՍԻ Հայ կրօնուսուցիչներին, գինն է 10 կոպ.

Դիմել Թիֆլիսի Կենդրոնական գրադաճառանոցը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Յ Ե Յ Ե Ր

ՎԷՊ

ՊԵՐՃ ՊԹՕՀԵԱՆՅԻ

արտատպած «ՄՈՒՐՃ» ամսագրից

Գինն է 1 ռ.

Կարելի է ստանալ Թիֆլիսի գրախանութներում, «Մուրճ»-ի խմբադրամանր և հեղինակի մօտ՝ Тифлисъ, Армянская семинарія. Перчь Прошлянцъ.

# Մ Ա Ս Ի Ս<sup>66</sup>

## Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

«Մասիս»-ը հրատարակում է Կ. Պօլիս՝ ամեն ամսի  
1-ին և 15-ին:

Հասցէ՝ Կ. Պօլիս, Ղալաթիա, Նորստունկեան խան:  
Բաժանորդագինն է տարեկան 2 բուբլի (կամ 6 ֆրանկ):

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱՂԻՐ-ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ Յ. ԻԶՄԻՐԵԱՆՅ ԿՏԱԿԻՆ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ Գործադիր-Մնա-  
յուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու  
բանասէրներն՝ որ Ազգային Դպրութեան և Պատմութեան վերաբե-  
րեալ ո՛ր և է աշխատութեամբ կը փափագին մասնակցել Սահակ-Մես-  
րոպեան Գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատու-  
թիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1890 տարուոյ Յունւարի վերջ  
առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, Յանձնաժողովոյս հասցէին.

ի Պատրիարքարանի Հայոց, Կ. Պօլիս:

1 լուլիս 1889.

ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պօլիս.



# ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

## ԱՐԺԱՆԱՅԱԾ

աշխարհի մէջ կարեւորեցանք թուր ցուցանանքներում

## ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

կարծիր ընկերներ տան արկիւնների և սղնիս ողնականներ  
բոլոր արհեստավարների համար

## ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում: Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում: Գո-  
թիֆլիսի պրոսպեկտի վերայ, Միլիմանովի տան և նրա բաժանմունք-  
ների մէջ:


Բազում: Մեքայեղանի փողոցում,  
Մերզա Աւագեանի տ.  
Քոթայեղում: Բալլաբի դէմ,  
Չերեկովի տ.

Բաթումում: Պոլեցիական փողո-  
ցում, Թէրզի օղլու տ.  
Թէհրանում: Մալա-Մէյդանի  
դէմ, բուլվարի վերայ:

և նրանց ճանապարհորդող գործաւորներին հոգ


ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.  
ԳԼԽԱՌՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

արտօնութիւն ստացած



առևտրական դրոշմը.

Գ. ՆԵՑԳԻԼԻՆԳԵՐ



Գնողները կարող են, եթէ կամենում են, զրամբ հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է՝ չարաթով կամ  
ամուտի և կամ ժամանակամիջոց ստանալ զրաւակաւով զրամբ վճարելու համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են.  
ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաշափաւոր գներով:

THE UNIVERSITY OF CHICAGO

DEPARTMENT OF CHEMISTRY

LABORATORY OF PHYSICAL CHEMISTRY

REPORT OF THE



by

DR. J. H. KATZ

and

DR. R. M. MAYER


CHICAGO, ILLINOIS

1954



THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY  
CHICAGO, ILL. 60637







# Մ Ո Ւ Ր Ճ

## ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԿԱԳԻՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է:

|                                    |            |
|------------------------------------|------------|
| Տարեկան բաժանորդագրւիւնը . . . . . | 10 ռ.      |
| Կէս տարւանը . . . . .              | 6 ռ.       |
| Երեք ամսանը . . . . .              | 4 ռ.       |
| Մի գրքովը . . . . .                | 1 ռ. 50 Կ. |

Աւագիւնները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վաղելում են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

Մուրճի ամէն մի համարը, որպէս առաջին «Հրաւեր»-ի մէջ առւած էր, ունենալու է 8—10 տպագրական թերթ, կամ որ նոյնն է՝ 128 մինչ 160 երես: Մուրճը ցայժմ աւած է 228 երես աւելի, քան միջին թւով խոստացածը: Ամբողջ տարին Մուրճը կազմելու է 12 զիրք, երեք մեծ հատորներ, շուրջ 1800 երեսով:

Նոր բաժանորդները կը ստանան նախորդ համարները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԷՆ

|                                  |       |
|----------------------------------|-------|
| Ամսական մի երեսի համար . . . . . | 10 ռ. |
| „ կէս երեսի համար . . . . .      | 6 ռ.  |
| „ քառորդ երեսի համար . . . . .   | 4 ռ.  |

Գրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել ուսկ յայտարարւած գրքերով՝ սոցա գների համաձայն:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРՇԻ“. Խմբագրութիւնը, դասնում է՝ Գանձեան փողոց, տուն Յովհաննիսեանի, (Гановская уллица, домъ Іоаннисіани). բոլորովին մօտ Երևանեան հրապարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue „MOURTI“.